

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

## Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

III

Հեղինակն իր սրբարուին երախտագիրությունն է հայրնում  
ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոր ՂՈՒՅՑԱՆԻՆ՝  
սույն հայորյակի հրադարակությանն օժանդակելու համար,  
այն ընդունելով որպես մարդկային բարոյականության  
ու խոճի վեմ արքահայրություն



ԱՐՄԵՆԻԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Երևան  
Հողովածու  
Երկու հաջորդ

ԱՏԵՓԱՆԱԿԵՐԸ 2012

ԱՐՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Երևան  
Հայաստան  
Հայաստան

ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԷՍՍԵՆԵՐ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՏԵՓԱՆԱԿԵՐԸ 2012

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան  
ԳՄԴ 84Հ  
Հ 854

Խմբագիր՝ Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հովհաննիսյան Արմեն  
Հ 854 Երկերի ժողովածու 2 հատորով: Բանաստեղծություններ, էսսեներ,  
քարզմանություններ / Ա. Հովհաննիսյան. - Ստեփանակերտ:  
«Դիզակ Պլյուս», 2012. Հ. 2.- 320 էջ:

Երկերի ժողովածուի երկրորդ հագործում ամփոփված են Արմեն Հովհաննիսյանի վաղ շրջանի բանաստեղծությունները, որոնք օրգանական շարունակությունն են առաջին հագործում լրիդ գրած «Վաղ շրջան» շարքի:

Հագործում ընդգրկված են նաև հեղինակի գեղարվեստական քարզմանությունները և «Քարավ» Էսսեների գիրքը:

Հագործը եղբակավում է Արմեն Հովհաննիսյանի մասին լրաբեր հեղինակների կողմից գրված հոդվածներով:

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան  
ԳՄԴ 84Հ

ISBN 978-99941-2-645-3

© Ա. Հովհաննիսյան, 2012

ԲԱՆԱՍՏԵՂՋՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱԴ ՇՐՋԱԲ

**ԵՐԳԸ**

Երգը,

Որ բրթում է իմ շուրթերի վրա,  
Պատրաստ է կաքելու իմ ժայիտի հետ,  
Դաշտերում հոսող լրության մեջ՝  
Լցնելով օրերը երազներով...

Երգը,

Որ բրթում է իմ շուրթերի վրա,  
Լցված է օրերի շնչառությամբ,  
Եվ արելի նվազն է  
Պայթող բողբոջների մեջ...

Երգը,

Որ բրթում է իմ շուրթերի վրա,  
Պարզկա ակունքների ցոլքն է,  
Հեռավոր աստղերի փայլով,  
Երկունքի ու լույսի ճիշը  
Տարածության մեջ,  
Որտեղ ապրում են իմ խոհերը:



Օրն իրիկնանում,  
Խամրում էր դանդաղ,  
Խտանում էին  
Մուժ ու շամանդաղ:

Ստվերներն իջնում  
Հովհան ու հանդով,  
Քուն էին մտնում  
Լեռներն անդորր:

Եվ իրիկնային  
Շղարշում մարմանդ,  
Մտորում էին  
Արահետ ու հանդ:



Տուր ինձ բույրերդ արքշիո,  
Երանգներդ չխամրող,  
Տուր ցոլքերդ շիթ առ շիթ,  
Կրակներդ չմարող:  
Տուր ժպիտդ առինքնող,  
Տուր եւ...ցավդ հրակեզ,  
Հետո առ ինձ օփրկը քո,  
Ամբողջովին քոնն եմ ես:



Այզիներ թափուր ու մերկ,  
Սիգանած, անթափանց օր,  
Բացատում լրված հոլիկ՝  
Մոքերի մեջ իր մոլոր...



Լորերի կարստ ու կանչ,  
Հուշերի երամ խրտնած,-  
Ո՞ւր գնաս այս ուշ աշնան  
Կածանի փեշը բռնած...



Տուր արեւի մեն մի շող,  
Սի աստղ քո երկնքից,  
Տուր քո հերկից մի բուռ հող,-  
Ալեկոծվեմ բերկրանքից:



Տուր ինձ աղբյուր մի մաքուր,  
Տուր ինձ ոլոր մի կածան,  
Եվ ինձ կզգամ իմ հոգում  
Տերն աշխարհի ծայրից ծայր:

**ՊԱՏԿԵՐ**

Վրնջում է զամբիկի պես  
Արեւլ հովտում,  
Ծվարել են քիերի մեջ  
Լոր ու արտույտ:

Օքը լի է դաղձի բույրով  
Եվ առվույտի,  
Օրորում է հովն իր ձեռքով  
Հասուն արտին:

Կաղնու շուրում հոգեպարար՝  
Եզրին արտի,  
Հանգչում է պոշն արեւահար  
Արահետի:

## ՀԱՅՐԵՆԻ ԴԱՇ

### 1.

Հայրենի դաշտ,  
Դու մտախոհ, անեղքական  
Դաշտ իմ անգին,  
Լեցուն հոգսով առօրեական  
Եվ արեւով լի ցնծագին,  
Փռված կապույտ երկնի ներքո,  
Կոռունկների թեւերի տակ,  
Ծղրիդների անուշ երգով,  
Դաղձի բույրով նվիրական,  
Դաշտ իմ անգին:  
Ամպի բարակ ծվենն ահա  
Հարսանեկան քողի նման  
Ծածկում է քո դեմքն անդորր,  
Եվ մի խորունկ գաղտնիք պահած,  
Սարի հովը գարնանարույր  
Ծշնչում է սիրո խոսքեր  
Կակաչներին քո խալավոր:  
Քո հարթության վրա խոկուն  
Երազներդ՝ վարսակարույր,  
Թրթում են  
Լուսնի շողի պես թափանցիկ...  
Երազներդ,  
Աստղիկների պաղ սարսուներ՝  
Երկնքի տակ հնամենի,  
Դաշտ հայրենի:

2.

Հայրենի դաշտ,  
Անդավաճան հիշողությամբ  
Քո հուշերն ես պահում միշտ քարմ,  
Քո հուշերը՝  
Լեցուն հասկի իմաստությամբ:  
Օրերում այս՝ խաղաղ ու հաշտ,  
Դու ժպտում ես երանությամբ՝  
Աչքի հառած քիլ անհունին:  
Ոչինչ, ոչինչ, ոչինչ հիմա  
Չի վրդովում անդորրը քո,  
Եվ քո լայնքով ու երկայնքով  
Ալիքվում է արտղ քեհեզ  
Համապարփակ խաղաղությամբ:  
Բայց մի ուրիշ արտ եմ հիշում,  
Որ կծղում էր արեւի տակ  
Ու չէր խշշում:  
Եվ... հնչում էր սարալանջին  
Վլնջոցը անարձագանք,  
Անտիրական մի զամբիկի...  
Պաղ ստվերներ էին սահում  
Դեմքով ծերուկ սայլապանի  
Ու թախիծն էր ծորում նրա  
Հոգմած եզան լանջի վրա...  
Ծանրանում էր կապարի պես  
Խեղբուկ տորը, դաշտ իմ, վրադ,  
Մինչեւ օրը կրոլորի  
Կուտ էր գնում հասկը լորին...  
Իսկ արտեզորի արահետին  
Նստում էր լուս մանջուկ մի քուխ,  
Թալրուում էր սիրտն, ինչպես լոր,  
Հացի համար, նշխար հացի

Ու շուրթերն էր սեղմում ամուր,  
Որ չլացի:

**3.**

Հայրենի դաշտ,  
Դու մտախոհ, անեզրական  
Դաշտ իմ, աճգին,  
Իմ խոհերի բոյլը ահա  
Գիրկդ է թեւում երամի պես,  
Եվ տագնապներ չունեն հիմա  
Երազներն իմ ոսկեղենիկ...  
Եվ իմ հոգին, արտույտի պես,  
Միարձվում է երկինքը քո,  
Օրիներգելով  
Առավոտդ արեգնափայլ՝  
Բացվող օրվա ներշնչանքով:  
Բարձրանում է արեգակը,  
Ծննդաղներ է զարկում վրադ՝  
Մեղեղիներ արարելով:  
Օշինդրի բոյրն է ելնում,  
Ալիքվում է արտը վետ-վետ,  
Բուրվառելով երազ ու սեր՝  
Երկնքի տակ հնամենի,  
Դաշտ հայրենի:

### ՔԵԶՆԻՑ ՀԵՏՈ

Երբ դու հեռացար՝  
Ինքնազդության վլուգում եղավ,  
Եղավ այնպես, որ իրեն այր կարծող  
Հպարտություն  
Կոչ եկավ ճիշտ այն որբուկի նման,  
Որից խլել են նշխարը հացի...  
Տան տանիք էին պահում ուսերս  
Եվ չէին զգում ծանրությունն իրենց,-  
Տան ու տանիքի,  
Աստղոտ երկնիքի,  
Եվ պիրկ ուսերի  
Վիլուգում եղավ...  
Ավերակների վրա եմ քայլում,  
Եվ... փշրանքներն իմ նշխարների  
Կրունկներս են անընդհատ խոցում...



Ինչ իմանաս՝ քեզ համար  
Ում սիրտն է լացել,  
Ինչ իմանաս՝ վշտահար  
Ում սիրտն ես խոցել:

Ինչ իմանաս, թե որտեղ  
Քեզ ով է դավում,  
Ինչ իմանաս, թե քո տեղ  
Ով է մեղքդ քավում...



Դու քաց նամակներ հղիր ինձ հեռվից,  
Բացիկներ, թեկուզ փոքրիկ, անծրար,  
Ոչինչ մի՛ թաքցրու կյանքում, մի՛ քաշվիր,  
Թող ողջն իմանա աշխարհն արար:  
Հանցանք չէ սիրո մասին խոսելը,  
Կարոտի մասին ու եղանակի,  
Արցունքի մասին, որ լուռ հոսել է,  
Համբույրի մասին ու ժամանակի:  
Գրիր անսկիզբ, անվերջ, անդադար,  
Տարածությունը լցրու քեզանով,  
Գիշերն ինչպե՞ս է անցնում քեզ համար,  
Քե՞զ էլ է պատում թախիծն ինձ ծանոք:  
Արշալույսների մասին գրիր ինձ,  
Իրենց իսկ ծագմանք թող որ հիանան,  
Հավք ու հովերի, ծաղկունքի մասին,  
Թող որ ավելի քեզնով քննչանան:  
Դու մատնիր բոլոր գաղտնիքները քո  
Աղբյուրին վճիռ, առվին շատախոս,  
Ամպերին՝ սահող կապույտ երկնքով,  
Քաց արս հոգուդ ընդերքները խոր...

Գուցե քե նրանք, խոլ ու համրորեն,  
Իրենց իսկ անհայտ վիճակում անել,  
Կուզեին հրաշք գաղտնիքներն իրենց  
Սեր արարչական սիրով վերծանել:  
Սենք ի՞նչ իմանանք, քե ուր է անցնում  
Անըմբռնելի այս սիրո ուղին,  
Արդյոք քեզնով նոր շերտեր չի՞ բացում  
Աշխարհը, որ միշտ նորո՞վ է հղի...



Վաղ առավոտյան կարքնանամ քնից,  
Ընդառաջ կելնեմ արեւածագին,  
Կիրապուրեն կախարդանքով ինձ  
Քարափն, անտառը, հովը քնքշազին:  
Քո երազների խորհուրդը խորին  
Կտանեմ ես մեր լեռներն արեւկա,  
Եվ եղնկաչյա մեր աղբյուրներին  
Կրողնեմ ես քո հայացքը պարզկա:  
Սիրահարի պես եւ ուխտավորի,  
Մի անեզրական կարոտով անանց  
Քո նվիրական անունից եւ իմ  
Կառաքեմ սիրո խոսքերս նրանց:  
Թափառումներից հոգնած տունդարձիս  
Գետակի երգը կրերեմ ես քեզ,  
Բույրը շուշանի ու խոռնխոտի,-  
Իմ աչքերի մեջ եւ հոգում հրկեզ՝  
Հրճվանքի ցոլքերն այս առավոտի:

**ՀԵՌԱՑՈՒՄԻ ԵՐԳ**

Ողջը գնում են,  
Հեռանում մեկ-մեկ,  
Եվ խլանում են  
Զայները քեկ-քեկ:

Դժգունանում են  
Գույներն ու խամրում,  
Աղոտանում են  
Լույսերն ու մարում:

Այն տունը հեռու,  
Այն ճիշը մանկան,  
Այն ցնորդ առուն,  
Այն ուղին լալկան:

Այն ժպիտը մոր,  
Օրինանքը տատի,  
Լուսնի մեղմօրոր  
Ծողը տան պատին...

Այն երազ բարդին,  
Ջրաղացը հին,  
Բառաչը հորբի  
Իրիկնապահին...

Ընկած քարեքար,  
Քնքուշ, ինչպես հով,  
Աղջիկն այն թխաչ  
Ու բարակ մեջքով...

Այն եղերքը մով,  
Արտը վարսակի,-  
Ուրցի բուրմուճքով  
Ու խլածաղկի...

Ամտակ հուշերի  
Ծովի գիրկն ընկած,  
Ողջը սուզվում են,-  
Փրկություն չկա...

## **ԻՆՉ ԷԼ ԱՆԵՆ**

Ինչ էլ անեն, չանեն,  
Բայց էլ ինձ չեն բեկի,  
Պատեպատ էլ զարկեն,-  
Էլ չեն ահաբեկի:

Խորճ են խրվել արդեն  
Արմատներս հողում  
Եվ հասակս պարթեւ  
Բնավ էլ չի դողում...

Կայծակներ էլ բախվեն,  
Ու խաչվեն էլ շանթեր,-  
Մեկ է, քո ո՞ տժն ունեմ,  
Առասպեկական Անթեյ:

□

Կա՞ մի մոլորակ,  
Ուր ես՝ մի Ադամ,  
Եվ դու՝ մի Եվա,  
Հանովակնք իրար,  
Արարչին անգամ, որ խորք չբվա  
Սերը մեր արբշին,  
Եվ հաշտ լինի մեր արարքների հետ,  
Եթե նույնիսկ մենք  
Հանկարծ վայելենք  
Պտուղն արգելված...  
Կա՞ մի մոլորակ,  
Ուր տառապանքին ու ցավին անգետ  
Սեր բախտը հավետ  
Պտտվի անվերջ շուրջն արելի,  
Ուր որ տագնապի,  
Խանդի ու դավի ուղեծրից դուրս  
Հետամուտ լինենք դրախտի պարզելին...

**ՀԱՅՏԱՊԻԹՅՈՒՆ**

Թե իմանայի,  
Որ սա էր բախտը,  
Ես շուր կտայի  
Այն, ինչ անխախտ էր...

Անցածն անդարձ է,  
Էլ մի նվա, խիղճ,  
Ուզածդ՝ գանձ էր,  
Գտածդ՝ խիճ...

Բայց դու որտեղի՞ց  
Հայտնվեցիր այսպես,  
Ուշացած սեր իմ,  
Անհայտ աստղի պես...

Որ կյանքս դառնա  
(Վերջ ու ավարտին)  
Տանով տված խաղ  
Ու... շահած մարտն իմ:

**ՔՌ ԶԵՌԱԳՈՐԾ  
ԹԱՇԿԻՆԱԿԲ**

Ես իմ կյանքում չեմ մոռանա  
Չեր բարդենու խիտ շվաքը,  
Որտեղ սիրով քեզնից առա  
Քո ձեռագործ թաշկինակը:

Ու պահում եմ միշտ խնամքով  
Սեր սիրո այդ հիշատակը,  
Օ՛, ինչ լավ է վարդանկար  
Քո ձեռագործ թաշկինակը:

Եվ նրանով ես մարում եմ  
Իմ շուրբերի ջերմ պապակը,  
Երբ կարոսով համբուրում եմ  
Քո ձեռագործ թաշկինակը:

**ԽՍՌ**

Վաղն առավոտյան  
Իմ սիրտը որպես արձակված թոշուն,  
Ճախրելով դեպի եթերն անհուն,  
Կօրհնի ցնծությամբ  
Խաղաղությունը լուս տանիքների,  
Կօրհներզի ցնծուն,  
Պահելով, սակայն,  
Հուշն այն հեռավոր հունիսյան օրվա,  
Գնդակահարված այն առավոտի,  
Որ ճայթեց մանուկ մեր հոգու վրա...  
Սեր ունկերի մեջ մրմնջում է դեռ  
Թախծոտ մեղեղին հեռավոր դաշտի,  
Սեր հուշերի մեջ կծրում է արտը,  
Անդունդի նման բացվում է մեր դեմ  
Դատարկությունը ներքնատան տաշտի...  
Եվ օրորվում է մեր ոտքերի տակ  
Հանդի կածանը,  
Մշուշվո՞ւմ են մեր աչքերը, թե սեւ  
Փեշերն է փոռում գիշերը ծանր...  
Վաղն առավոտյան  
Իմ սիրտը որպես արձակված թոշուն,  
Կօրհներզի խնդուն  
Խաղաղությունը հեռաստանների,  
Ես կարթնացնեմ հուշն անցած օրվա,  
Սերս կանձրենի լուս սպիներին...  
Ողջո՞ւյն, Պիկասոն,  
Ցնծուն օրհներզու առավոտների,  
Ոչ ոք իմ աշքում չսպանեց քեզ պես  
Պատերազմը բիրտ...

Վաղն առավոտյան ես արշալույսող  
Փողը կդառնամ անտառ ու ձորի,  
Կրնկացնեմ եւ՝ հոգի, եւ՝ սիրտ:  
Զեփյուրի նման կանցնեմ դաշտերով,  
Համբուրելով լուռ նահատակների  
Շիրիմները սուրբ,  
Եվ ապրողների աչքերը խոնավ:  
Հուշը թեւածում իմ հոգու վրա,  
Բորբոքում է լուռ հուրն ատելաճի,  
Մատներ է ամուր բռունցքում իրար,  
Չարիքի հանդեպ ու արհավիրքի,  
Սրտեր է բերում ի մի, իրար մոտ,  
Որ էլ չսպանվի ո՞չ մի առավոտ...

**ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԵՆՔ  
ՄԵՆՔ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ**

Սիրահարված ենք մենք այս աշխարհին,  
Թե մեր աչքերը լցվեն թափիծով,  
Կարոտով լցվեն,  
Եվ ոչ թե ծխով,  
Մեր աչքերի դեմ քող մնա մաքուր  
Հորիզոնն անձայր,  
Թեպետ աշխարհի օվկիանոսների  
Պատկերը չկա մեր աչքերի մեջ,  
Թեպետ եւ նրա մայրցամաքներին  
Դեռ անձանոք ենք,  
Սիրահարված ենք մենք այս աշխարհին,  
Սիրում ենք նրան,  
Ինչպես սիրում են սիրած աղջկան...  
Դրա համար էլ ուզում ենք նրան  
Տեսնել անթերի:  
Լի է հին ու նոր աշխարհն այս փոքրիկ  
Հեքիաթներով ու երազանքներով,  
Աշխարհի վրա  
Գերեզմանները շատ են, քան մարդիկ,  
Մեռած դանքեներն ավելի շատ են,  
Քան թե կենդանի,  
Եվ դեռ հայտնի չէ  
Քանի Մոցարտ է աշխարհը տալու...  
Ինչ-որ ժամանակ ապրել են այստեղ  
Մեր նախորդները,  
Սիրել են աշխարհն ավելի ուժգին  
Եվ տառապանք ու տանջանք է բերել  
Այդ սերը նրանց,

Եվ փշրվել են ուսերը նրանց  
Աշխարհի ծանր ուղբերգության տակ:  
Սիրահարված ենք, սակայն, աշխարհին,  
Թեպետ այն նեղ է շատերի համար,  
Այստեղ է նաև երկիրը մեր հին՝  
Նահատակներով, սրբություններով,  
Ուր մեռածներն էլ ապրողների պէս  
Մտահոգված են աշխարհի բախտով  
Հավասարապէս...  
Ոչ-ոք չի սիրում աշխարհն այնպէս,  
Ինչպէս մենք նրան,  
Սեր համբույրներից կծնվեն վաղվա  
Մարտիրոսները,  
Սեր երազներից ու կարոտներից  
Աստղեր կկարեն աշխարհի վրա  
Եվ արշալույսներ կծագեն այնտեղ...

**ԲԱԼԼԱԳ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ**

*Նրանց, ովքեր քսամ գտարեկամ են*

Սի փմտրեք շիրիմ, հուշ ու հիշատակ,  
Սենք՝ ընկածներս, ապրում ենք ու կանք:  
Զայլում ենք ձեզ հետ՝ իջնող ձյունի տակ,  
Ընկնում ենք, ելնում, ծիծաղում անզուսայ:  
Սեր թարթիչներին, ինչպես նաև ձեզ,  
Գիշերվա պես սեւ ու սաք մազերին,  
Սեր ժախտներից ու շնչից մեր տաք  
Հալզում են ձյունի փաթիները սառ:  
Սիրո նամակ ենք ծրարում ձեզ հետ՝  
Սեղեղիներով, երազով հարբած,  
Դահլիճների լուս կամարների տակ  
Սենք ժախտներ ենք որսում շարունակ՝  
Խորունկ աշքերով թուխ աղջիկներից,  
Շեկ աղջիկներից կապույտ աշքերով:  
...Այո՛, հողմներ են եկել ու անցել,  
Եվ քսանամյա հասակում հազիվ  
Կտրվել է մեր երազի թեւը,  
Երբ խոցել է մեզ գնդակն արձակված...  
Բայց, այնուհանդերձ՝  
Հարցրեք անտառից, դաշտից ու ճամփից,  
Կասեն՝ ապրում են,  
Սերերից հարցրեք,  
Կասեն՝ սիրում են,  
Հարցրեք մայրերից,  
Քույրերից հարցրեք,  
(Բայց լավ է հանգիստ թողենք մայրերին),  
Կրծքներին կիշնեն նրանց ձեռքերը,  
Լոին կխաչվեն,

Կիսնավաճան հոգնած աչքերը...  
Սի փնտրեք շիրիմ,  
Փնտրեցեք դուք մեզ, փնտրեցեք երկար,  
Առանց հոգնելու ու վարանելու,  
Փնտրեցեք նոյյնիսկ,  
Երբ վերջանում են հորիզոնները,  
Որտեղից ելնում երամն ամպերի  
Եվ արարելով ամպրոպը գարնան,-  
Երկնքի կուրծքն է խարանում հրով...  
Փնտրեցեք դուք մեզ ձեր բախիծի մեջ  
Եվ ձեր ծիծաղի արձագանքներում,  
Տաք ժայռների ալիքների մեջ,  
Փնտրեցեք դուք մեզ՝  
Առանց հոգնելու ու վարանելու:  
Ուր էլ որ լինենք՝ ի հայտ ենք զալու  
Աղբյուրից առած մի բուռ ջրի մեջ,  
Պատի մեջ դրվող շաղախում կավի,  
Ի հայտ ենք զալու խոճի պատկերով  
Կամ որպես ժայռ՝  
Ծնվելով դանդաղ նահանջող ցավից...

**ԲԱԼԼԱԳ ՄԻՐՈ ՄԱՍԻՆ**

Բաժաննան պահին նա ասաց,- կգամ,  
Սպասիր,- ասաց ու նայեց լրին...  
Սեղմիկ ու տխուր փարվեց աղջկան  
Հովն անտառի:

Տղան էլ ոչինչ, էլ ոչինչ չասաց,  
Սիայն լրելյայն գրկեց աղջկան,  
Համբուրեց նրա սեւ աչքերը քաց  
Ու մեկնեց ճակատ:

Ասում են ցասմամբ, վրեժով անմար,-  
Սրտում պատկերն իր սիրած աղջկա,  
Ոստիսի հանդեպ ելավ նա անահ,-  
Կովեց ու ընկավ...

Կովեց ու ընկավ, ու մահվան պահին,  
Նորից կարոտով հիշեց աղջկան,  
Ու վերջին անգամ շշնչաց,- անզի՞ն,  
Սպասի՛ր, կգամ...

Տարիներ անցան... կրկին անուշիկ  
Թեւածեց խաղաղ կյանքի երգն ուրախ,  
Չսիրեց երբեք աղջիկն ուրիշի,  
Սպասեց նրան:

Տարիք են անցնում: Հերոսն անմահ  
Ապրում է սրտում սիրած աղջկա,  
Ու սրտի խորքից շշնջում նրան,-  
Սպասի՛ր, կգամ...



Ինչպես ճամփորդին, որ ետ է նայում  
Իր հազարերորդ հեռավոր վերստից,-  
Գալիքն այնպես է դեռ քեզ հնայում,  
Որ չես կարուում հոգեհանգստի...  
Եվ այնպես ես դեռ վստահում նրան,  
Ինչպես արեւը իր այգաբացին,  
Որ նախախնամ քո բախտի վրա,  
Ճակատագրին նա քա՞ր չի օցի...



Քեզ համար բնավ դժվար չի՝ եղել,  
Բայց այնուհանդերձ ոչ էլ այնքան հեշտ,  
Եվ քամահարել, եւ քմծիծաղել  
Սնապարծության դեմքին անպարկեշտ...

Ինքդ միշտ քեզ հետ, եւ չելա՞ծ հունից,  
Կորուստների մեջ եւ հաջողության,-  
Լիցքավորվում ես փոխըմբռնումից  
Ժամանակի հետ ու տարածության.

Դեռ հոգնածության ու դեռ եռանդի  
Ոչ պակա՞ս ուսմես, ոչ սկի՞զբ ու վերջ,-  
Դու քեզ փնտրում ես սիրո՞ւց էլ անդին,  
Հրկիկումների մոխիրների մեջ:



Այն օրից, ինչ դու հեռացար այնպես,  
Հուսախարվել են ճամփեքը դարձի,  
Կյանքը անցնում է իմ կողքով ինչպես  
Առեանգված հարս՝ կառում եռածի...

Եվ մինչեւ ե՞րբ է շարունակվելու  
Տարանջատումը այս աղետավոր...  
Կառչած իր ցավից՝ ո՞վ է լսելու  
Ջո հեկեկանքը հեռու-հեռավոր:



Հիշողության դաշտ, ուր ահա կրկին՝  
Կակաչներ ալվան, իիրիկներ կապույտ,  
Եվ ես՝ շփոթած երկիր ու երկինք,  
Եվ դու՝ զրնգուն ծիծաղով անփոյք...  
Զեփյուռը անուշ բուրմունք էր բերում,  
Գարու արտ հասուն ու տարեկանի,  
Երանությունը տրված էր վերուստ,  
Սեզ վրա Տիրոջ ձեռքն էր հովանի...  
Ճակատագիրը բարի էր ու հաշտ,  
Խնամակալ էր բախտը եւ արթուն...  
Օ՛, անդավաճան հիշողության դաշտ,  
Սիրո աղբյուրն է դեռ այնտեղ հորդում:



Նախաստեղծ սեր էր՝ աստղու երկնքով,  
Մանկան պես անմեղ իր արթնության մեջ,  
Հետո չիմացա, թե ո՞ւմ մեղքով էր,  
Որ հայտնվեցի ամայության մեջ...

Դու ինձ խարեցիր ինչպես այն գնչուն,  
Որ իր գաղտնիքը չի բացահայտի...  
Եվ հիմա հոգիս՝ որպես Ռուկ թռչուն,  
Ծախրում է դեպի գիրկը անհայտի:



Իմ հղացումը չբնակալվեց,  
Մշուշ իջավ իմ երազի վրա...

Իմ տառապանքի ճիշը չընկալվեց,  
Արցունքն իմ ընկավ ավագի՝ վրա...

Այս, այս աշխարհից բան չհասկացա,  
Գնամ ու լամ ես... Շիրազի՝ վրա:



Քեզ հետ՝ զարկված եմ ձյան մեջ ասես,  
Քեզ հետ՝ նետված եմ սառույցի վրա,  
Սուանց իմ շնչի՝ համկարծ կմրսես,  
Սուանց ինձ օրդ՝ միգոտ, անուրախ:

Քեզ հետ՝ կարծես թե երա՞կ եմ բացված,  
Տապից շնչահեղճ սաղարք եմ ու հավք,  
Դու էլ առանց ինձ՝ օծից հալածված,  
Մարդիխն կորցրած, բնահան միրիհավ:

Քեզ հետ՝ շնչերակ եմ ես խցանված,  
Եվ Աստված շանի՝ չբացվեմ համկարծ,  
Եվ դու, առանց ինձ՝ տիեզերք հանված  
Հրթիոն, որ ավա՞ղ, չունի վերադարձ:



Ես դատարկվել եմ կապույտներից,  
Բույրերից անուշ, հարբեցնող,  
Գույներից նրբին, երազներից,  
Սեղեղիներից խելացնոր...  
Թափուրված՝ ինչպես զավը ըմպած,  
Զայնալար՝ խզված հնչյունների...  
Ես անհուսալի բեկված, բեկված  
Անխուսափելի կորուստներից...



Ապաշխարանքի խոսքեր անսուտ,  
Սեղսաքավության մորմոք ու ցավ,-  
Քեզ, թեպետ, ինչ-որ չես եղել սուրբ  
Եվ ինչ-որ տեղ էլ...անհուշացած:  
Անարատության արցունք անքառ՝  
Դատապարտվածիդ հանիրավի...  
Դու, անձրեւներից՝ տեւած երկար,  
Ինքնամաքրված երկինք ծավի...



Ունկնդիր վերջին տերեւաթափին՝  
Ես դուքս եմ նայում փակ լուսամուտից,  
Պատել է չքնաղ դեմքը քարափի  
Մքնշաղն աշնան իրիկնամուտի:  
Արքնացած արդեն խորունկ մրափից՝  
Ցուրտ նոյեմբերն է նայում սրահից,  
Սիրիավը էլ չի կանչի քարափից,  
Ուր պահ է մտել եղնիկը ահից...  
Թող թախիծ իջնի իմ սրտի վրա՝  
Մատնելով հոգիս գիրկը անհունի,  
Բայց այնուհանդերձ՝ երանի՛ նրան,  
Ով այս աշունից հեռանալ չունի...»



Երբ աշնան վերջին սաղարքի վրա  
Եղյամ կղնի, սառույց-ապակի,  
Երկինքը կիտի հոնքերը իրար,-  
Չեզ հեռու մի օր կերեվակվի:  
Բաց կապույտ եթեր կգնգա վրադ,  
Կճզի քո դեմ մի նեղ արահետ,  
Դու հարսնացուիդ նուրբ ձեռքը բռնած,  
Ալ կակաչների միջով բուրավետ,  
Հրճվանքի ճիշ ու գրկախառնումով  
Եվ սավառնումով սիրո թեւերին՝  
Կրոչես գիրկը հրաշալիքների...  
Սիրտդ ու հոգիդ լցված բերկրանքով,  
Ներքեւում թողած հոգս, կարիք ու ցավ,  
Երկրային բոլոր տանջանքները քո:



Ես խոցված էի, ամենքից լրված,  
Եվ նետված էի աշխարհից անդին,  
Սի կանչ հասավ ինձ երազում հանկարծ,  
Ինչպես հոգեմաշ երգ ու մեղեղի:  
Սիսիթարվե՞ս դու՝ արցունք հրածին,  
Որ իմ աչքերում նորից լճացար,-  
Խզումն ընկերոջ հետ ու սիրածի՝  
Ցավալի՞ էր խիստ, անբուժելի՞ ցավ...



Անընդունելի վեճեր ու վճիռ...  
Չափելով հոգուս տագնապն ու դողը՝  
Սուափա սարի բարձունքից վճիռ  
Ես քեզ ասում եմ՝ իմն է այս հողը:

Ահ չունեմ քնավ սրի դեմ, մահի,  
Կովում այս ինձ հետ ինչ էլ պատահի,  
Դաշույն խրելով իմ շարյաց կողը,  
Ես կասեմ էլի՝ ի՞մն է այս հողը:

**ԿԱՐԵԿՑԱՆՔ**

Ամենախորունկ իմ կարեկցանքը՝  
Բողոքին, որին կարկուտն է խոցել,  
Խեղված ժպիտը՝ որպես հանցանք է  
Գլաքարի պես սրտիս ծանրացել...

Ամենախորունկ իմ կարեկցանքը՝  
Անվանը անբիծ, որ տե՞ղ չի հասել,  
Զրպարտությունը՝ որպես զառանցանք,  
Նրա շուրջը խիտ մի ցանց է հյուսել...

Ամենախորունկ իմ կարեկցանքը՝  
Այն կնոջը, որ բախտից շլացել,  
Ընկել էր ոսկու, հակինքի ցանցը  
Եվ...առաջին սեր-գա՞նձն է մոռացել:

Բայց կարեկցում եմ ամենից խորունկ  
Սիզիֆին՝ քափ ու քրտինքում կորած,  
Որ դեպի գագար քա՞րն է շալակում,  
Որ այնուհետեւ գլորի այն ցած...

### ՆՎԻՐՈՒՄՆ

Մարինա Յվելյանիսյանի հւ  
Աննա Ախմատովայի հիշարժակին

Ինչ էլ որ լինի՝ տոկա եւ հուսա,  
Եվ քող ներարկեն քեզ կորով ու կամք  
Այդ զարմանալի պոետներն ոռուսաց,  
Որ դարասկզբին լույս աշխարհ եկան:

Ամեն ինչ երգ էր դառնում ու ներուժ  
Եվ մեղրահացի հյուսվածք նրբորեն,  
Թեալետ անամոք տվայտանքներում  
Բզկտվում էին հոգիներն իրենց...

Եվ ո՞ւմ էր, ավաղ, շոյում բախստն անմիտ,  
Քնքշաճքով լեցուն սափոր ու սինի  
Հեզ Մարինայի՞ն, որ զամված էր միշտ  
Սլավոնական հին խղճի՝ սյունին...

Որպես երկվորյակ տիրամոր մի սուրբ  
Աննայի՞ն ցավի հետ իր անփարատ,  
Որի դեմ անվերջ ճոճում էին սուր,  
Բայց նա որպես ճիշ չէ՝ բացում երակ...

Բլոկի շունչն է թեածում վրաղ  
Ու խորունկ հոգիդ հուզում է թելին,  
Եվ եսենինյան բացված մի երակ  
Հատում է սիրտդ ինչպես ածելի...

Քո երազանքն ու ցավն է անամոք  
Մի բրյուտվյան բանքար ու քնար,

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

---

Եվ բացել ամեն գաղտնիք ու հնար  
Մանդելտամի պես՝ հայեցի՝ մորմոք...

Ինչ էլ որ լինի՝ տոկա եւ հուսա,  
Եվ բող ներարկեն քեզ կորով ու կամք  
Այդ զարմանալի պոետներն ոռւսաց,  
Որ դարասկզբին լույս աշխարհ եկան:

**ՊԱՍՏԵՌՆԱԿ**

Երաժշտության ռիթմեր ներդաշնակ,  
Կտավի վրա երանգներ նրբին,  
Ահա ինչի է ձեռքը ընդունակ՝  
Երգի արքայի արարիչ հոգին:

Եվ համբերությամբ Ժիր մեղուների  
Նս մեղրահացն էր լցնում իր երգի,  
Որ ժամանակի անտաղանդների  
Կեղծիքի հեղեղն ու սու՝ տը հերքի:

Ի՞նչ հայացք եւ ի՞նչ դիմագիծ ու դեմք,  
Ի՞նչ համառություն, խիղճ ու խղճմտանք,-  
Նս ծառանու՞ն էր այն ամենի դեմ,  
Ինչ մեղեղի չէր դառնում ու կտավ:

Ամեն ինչ արել, հասցրել ավարտին,  
Թեպես լցրել են հոգին դառնությամբ...  
Բայց չի՞ նայում մեզ որպես նախատինք  
Եվ կուոք դառնալու հավակնոտությամբ:

**ՍԱՀՅԱՆԱԿԱՆ**

Ես առավոտ էի,  
Երկինք էի, երեր,  
Ամպշող-շաղոտ էի՝  
Որպես վարդի թերթեր,  
Պատրանքներով հարուստ,  
Երազանքոտ էի,  
Եվ առաքված վերուստ  
Աստծո աղո՛քը էի,-  
Վայր նետեցին ծավի  
Երկինքներից անծիր,  
Ինձ դարձրին ցավի  
Մաշող գունդ ու կծիկ...

## ՔՌ ՑԱՎԿԻ ԱՌԱՋ

Ինձ թվում եր, թե մայր էիր միայն դեռատի ու շիկ,  
Խիստի ծփանք էր հարսնաքողը լոկ քո դեմքին քարի,  
Դու գորովանքով փարփում էիր ինձ, հետեւում ուշիմ,  
Որ հանկարծ ոտքը քո մինուճարի դեմ չառնի քարի:

Ինձ թվում եր, թե տիրուիի էիր ճակատազրի,  
Հպատակ էր քեզ քախտը քմահաճ՝ տրված էն զիսից,  
Եվ կրակ պիտի տանեին մարդիկ օջախիդ հրից՝  
Վառելու իրենց բռնիքը հացի բույրով զգիսիչ:

Ինձ թվում եր, թե տրված էր քեզ զինջ մի երկնակամար,  
Երջանկությունը քո մթազնող ամպեր շունի նա,  
Աստղերը պիտի քո երդիկից ներս հոսեին մարմանդ,  
Որպես Աստծո շնորի ու պարգեւ, որպես մանանա:

Բայց երբ պատրանքի քողը ետ տարա ես իմ աչքերից,  
Եվ պարզ ընդգծվեց հասակդ անտիկ, այնպես ընտանի,  
Դու տառապանքի սյուն էիր շրեղ, որի ուսերին  
Հազիկ էր մնում հոգսերով լեցուն մի տուն ու տանիք:

Ներիր, օ, մայր իմ, պատրանքու էի ու երազանքու,  
Գուցե եւ հոգիս՝ հնարքու մի քիչ ու երես առած,-  
Ներծծվեց իմ մեջ քեկելով հոգիս տառապանքը քո,  
Ու ես երկյուղած ծնկաշոք իջա քո ցավի առաջ:



Քողարկում էր լուսի,  
Հույսի քողարկում էր,  
Ամեն արշալույսի  
Մանկան հուղարկում էր...

Սովի, մահի ահից,  
Մայրս նեղն էր, նեղը,  
Ու չէր համբուրում ինձ,  
Որ...չմատներ տե՛ղս:



Մանկության փողոցում՝ փոշի,  
Թնդում էր խաղը ջջախտի,  
Թե հիմա կարող ես՝ հիշիր՝  
Ո՞վ էր սիրեցյալը բախտի...

Տաճելն ու տարվելը, ինչ խոսք,  
Խա՞ն էր սոսկ, կախված չէր բախտից,  
Ոտքերիս մնում են մինչ այսօր  
Կապտուկներ՝ հետքերը լախտի...



Ես այնտեղ եմ, ուր անձիւ է ու թռն,  
Ուր մառախուղ է՝ թանձր, անողորմ,  
Ուր որ ընկնում են թռչուններն անթեւ,  
Ուր որ քամի կա ու պտտահողմ...

Եվ ես այնտեղ եմ, ուր երազում է  
Անապատը՝ ջուր, ու երաշտը՝ զով,  
Սեր ու հավատքի միջեւ խզու՞մ է,  
Եվ...Տիրոջ կամքը դառնում է անզոր:



Ես հիմա ուրիշ տեսակ եմ նայում  
Իմ շուրջը ու քեզ, տարաբախտ իմ կին,  
Քո տեսքն այլուս ինձ չի հմայում,  
Քեզ ո՞վ մատնեց այդ խղճուկ վիճակին...

Քո դեմքը՝ գունատ ու տառապագին,  
Չի ճառագայթում էլ ժայխ ու լույս,  
Սաշել ես արդեն զգեստներդ հին,  
Նորը գնելու չկա ո՞չ մի հույս...

Եվ ո՞րն է ելքը այս կացությունից,  
Կարծես թե չկա ոչ հնար, ոչ ճար,  
Պատեպատ զարկվում անզորությունից՝  
Նվաստանում ենք ցավի աստիճան...

Ոչ հանելուկ ենք, ոչ էլ առեղծված,  
Եվ մեր մեղքով չեն, որ երես առած  
Ու մի անողոք բախտից հալածված՝  
Սենք հայտնվել ենք այս վիհի՝ առաջ...



Հոգնած ու նկուն՝ խոսքերից մաշված,  
Եվ հայացքներից՝ քեզ ոչինչ չասող,  
Ոչինչ չսպասող օրերից հաշված՝  
Դու՝ իմ դեմ, ահա, որպես ոգու սով...

Ստի, կեղծիքի երամներ վայրի,  
Քամիներ, բքեր եւ սերեր չայրող,  
Եվ խոնավ, ինչպես շունչը քարայրի,-  
Ինչե՞ր չանցան քո զլսի վրայով...



Ոչ ամպրոպ, ոչ ամպ, ոչ հեղեղ-սելավ,  
Ոչ օրն է հետում իր տապի շնչով,  
Հոսում է կյանքը գետ՝ հունից չելած,  
Այս առօրյայի տաղտուկի միջով...

Ոչ խոհ, ոչ խոկում, ճիգեր անհամար  
Այս խոլ փակուղում ելք էլ չունեցող,  
Եվ դու տանում ես ձեռքդ ականա  
Սեւակնած հոգուդ, սրտիդ նվացող...

**ԵՐԿԻՐ**

Փականքի տակ էր եւ՝ լեզու, եւ՝ բախս,  
Ճակատագիրը՝ յոթը փակի տակ,  
Եվ մի անօրեն օրենք էր անխախտ,  
Որ բռնությանը լինենք հպատակ...

Մատնություն ու դավ, կասկածանք ու ահ,  
Տագնապը շե՞ղը էր ու սուր, երեւեի,  
Գիշերվա մուտք ու ելքին, ամեն պահ,  
Արյոք, չե՞ն գալու եւ քո հետեւից...

Բակունցն ինչո՞ւ էր այդքան սիրելի,  
Չարենցը չափից շատ չէ՞ր նվիրված,  
Ամրոխնե՞ր, Սոնա՛, Լենի՛ն, ու Ալի՛...  
Սի տուր, հա, կտաս, ա՛յ թե դու դրանց...

Իսկ այդ Զոշշենկոն, այդ Ախմատովան՝  
Կրակի մեջ՝ ցավ, ցավի մեջ՝ կրակ...  
Այն ինչ երկիր էր, օ՛, տեր իմ, Աստված,  
Որ սու՞ր էր ճոճում...եւ կնո՞ց վրա...

Իսկ դու, Եսենինին, բացեցիր երակ,  
Թե՞...մի ուրիշը առեղծվածային,  
Գաղտնիքը՝ անձիր գիշեր խավարակ,  
Եվ... Գորկու մահով ո՞վ կվկայի:

Նեղ էր երկիրը մեծերի համար,  
Սախարո՞վ, Քրողսկի...Ո՞վ Սոլժենիցին,  
Թե այս Երկիրը դարձյալ չի հարմար,  
Տայգան աչքի տա՞կ էլի ունեցիր...

Փականքի տակ էր եւ բախտ, եւ լեզու,  
Եվ չկար, ավաղ, ոչ մի փրկագին,  
Սակայն մի ուրիշ հա՞ց է ինձ հուզում,  
Եվ երկի՞ր մի այլ ու ճակատագի՞ր...



Ես անծիր ցավի գալարման մեջ եմ,  
Եվ անդունդ դավի խորխորատի մեջ,  
Տվայտանքներս բուռն ու անվերջ եմ՝  
Արդար վճռի տեսչ ու կարոտի մեջ...

Մեզ խաղաքարտ են դարձրել, խաղաղաշտ  
Եվ խաղագնդակ՝ սիրտը իմ երկրի,  
Աշխարհին հիմա ինչպե՞ս նայեմ հաշտ  
Հեսանվա՞ծ սրի ու թրի ծայրին...

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ**

Կզան օրերն ու կանցնեն,  
Ու ինձ ոչի՞նչ չի մնա,  
Սաղարթներս կկացնեն,  
Ու ինձ ոչի՞նչ չի մնա...  
Եվ մրգաբափ կանեն ինձ,  
Տերեւաբափ անխնա,  
Կսղոցեն քու՞նս հին,  
Ու ել ոչի՞նչ չի մնա...



Ժամանակները սահեցին արագ,  
Մեզ համար չկար ներկա եւ անցյալ,  
Դու կարո՞ղ էիր, թեալես եւ ունա՞կ՝  
Չեր լինում ու չէ՞ր տրվում կայանալ...

Ոչինչ չի փոխվել, կփոխվի՞ միքե՝  
Նույն հարվածներն են վզիդ, ծոծրակիդ,  
Էլի նույն խաչի վրա քառարեւ  
Գամկած ես խառնակ այս ժամանակին...

Ինչ մտայնություն՝ հեգնանք է կարծր,  
Գնալ հոսանքի հետ կամ ընդառաջ,  
Կեցության խարկանք, դավադիր խայծ է,  
Կարմրախայտ որսող եւ...ո՞չ թե քառափ:

Իմ դիրքից երեր ու անապահով,  
Հայացքս հառած պղտոր ջրերին՝  
Ես ձեզ եմ դիմում տագնապի ահով՝  
Կարմրախայտեր իմ, զգույշ կարթերից...



Ահա երեկոն իջալ դալկաղիս,  
Դողահար՝ ինչպես լճափի եղեգ...  
Ես ինչո՞ւ այսքան անզոր եմ քո դեմ,  
Եվ ինչո՞ւ այսպես թեւահատ եմ, հեզ...

Կարոտի, սիրո, կրքի մոխրացում,  
Եվ քիչ է մնում մինչեւ իսկ անգամ  
Շգնավորի պես քաշվեմ խուզը իմ,  
Իմ օջախի մոտ՝ կրակը հանգած...

Հիշողության դաշտ ու...սերեր լրված,  
Անտիրականին՝ երկինք հովանի,  
Ուղիներ մոլոր ու քայլեր երեր՝  
Առանց իշեւան ու ապաստանի...

Եվ ելած հանկարծ ու միանգամից,  
Առանց առիթի ու առանց հարցմունք,  
Հուշերի պարս է գլորում քամին,  
Սրտի մեջ՝ մրրիկ, խիղճը՝ անարցունք...



Հետադարձ հայացք, հուշերի երամ,  
Ու...փու լ են գալիս պատեր ու որմեր,  
Խփում է ուժգին մկան ու երակ,  
Կարծես հղե լ է մեկը հրավեր...

Մարտավկայի պատվախնդրությամբ  
Կամ թե բռնադիր հարսնահանդեսի...  
Հանդիպման, տոնի, ժամադրության,  
Սուրբ հաղորդության, օծման ու ծեսի...

Եվ դու գնում ես վազքով ու արագ,  
Պատվի փրկության ոգեւորությամբ,  
Նշանդրեքի կամ թե...պատարա՞գ  
Մի գաղտնախորհուրդ մտավախությամբ...

...Եղել է, այս, եւ՝ անուն, եւ՝ փառք,  
Զոհասեղան կար, տաճար ու խորան...  
Ի՞նչ է մնացել՝ հոգի մի ներփակ,  
Հետադարձ հայացք, հուշերի երամ:



Մայրամուտի դրող ու սարառու կեչու,  
Եվ հունվարյան մի ցուրտ սրաշեղք,  
Չկա այլեւս տերեւների չուն...  
Փողոցն է լրում հազած ձյունաշերտ:

Մի հանդիսավոր ու խոր լռություն,  
Շողարձակումով ճերմակ լրտոսի...  
Ծննդյան տո՞ն էր օրը, հայտնությու՞ն,  
Սկրտությու՞ն էր Սուրբ Քրիստոսի:



Օ՞, ձեր աչքերը՝ լճակներ երկու,  
Ուր լողանում է գնչուիի մի թուխ,  
Այնպե՞ս են նրանք իմ սուտը հերքում,  
Որ ես դառնում եմ անզորի՝ պես թույլ...  
Սուտ է՝ նրանցում թե չեմ սուզվի ես,  
Չեմ գայթակղվի նրանց աստղերով,  
Թե կհամառի, որպես Ողիսեւս,  
Հպարտությունս ազնվարարո...

### ՆՎԻՐՈՒՄԻ ԵՐԳ

Աղբյուրիդ երգն եմ մքան քողի տակ,  
Արտացոլանքն եմ վճիռ աստղերիդ,  
Քո դաշտն եմ խոհուն ու համապարփակ,  
Խորունկ խորհուրդն եմ խորունկ ձորերիդ:

Խաղողի որթն եմ քո երկնագալար,  
Եվ հուրն եմ ըմպում քո հողի արբշիոն,  
Քո ավիշն եմ ես ու զինին խելառ,  
Որ գավիդ մեջ է լցվում շիթ առ շիթ:

Քո Զիարաքն ու Մոռվ սարն եմ վես,  
Դժվար վերելքդ ու քարդ կապան,  
Մատղաշ թափուտի քո սարսուն եմ ես՝  
Զմռան արծաքի ու մեզի մեջ պաղ:

Եվ քո արծիվն եմ, բազեն սրատես,  
Բարդուդ պացքը եթերագնաց,  
Ժայռաբուխ վայրի ծիրանիդ եմ ես,  
Արտեզորիդ կածանն ու հերկերդ թաց:

Երկնքիդ ակն եմ, դու՝ իմ աչքի քիք,  
Քո հայացքն եմ զինջ, ժպիտն անսքող,  
Քո հեռաստանն եմ՝ թափանցիկ ու քիլ,  
Ու արարչածին առավոտը քո:

**ՎԵՐ ԿԵՆԱԾ ԳՆԱԾ**

Վեր կենամ գնամ դեպի այն ձորս,  
Ուր պահ է մտել վախսվորած լորս:

Վեր կենամ գնամ շաղոտ կածանով  
Քարափն իմ մամոռու ու ծիածանու:

Գ-նամ ոտքերը ընկնեմ սարերիս,  
Ասեմ՝ տիրություն արեք սերերիս:

Փայեք, փայփայեք եղմիկիս լավիկ,  
Քարափիս պատկերն աչքերում ծավի:

Պահպանեք պարզկա ակը աղբյուրիս,  
Որ ջի՞նց է ինչպես ցողը համբույրիս,

Վեր կենամ ու ետ գնամ այս պահից,  
Ինձ հետ ով զիտե՝ ի՞նչ կպատահի:

### **ՏԱՐ ԻՆՉ**

Տար ինձ հիմա, հաշտեցրու  
Մոլոր կանգնած ուռենու հետ,  
Մանկութ խոռվ իմ սիրո հետ,  
Տա՞ր ինձ հիմա, հաշտեցրու:

Մեր դաշտերի ծղրիդների  
Երգն է նորից իմ ունկերում,  
Մտամոլոր կածաններին,  
Տա՞ր ինձ հիմա, հաշտեցրու:

Պաղ աղբյուրն է զնզում այնտեղ՝  
Իրիկնային շղարշի տակ,  
Բլրին կրված հոլիկի հետ,  
Տա՞ր ինձ հիմա, հաշտեցրու:

**ՍԻՐՏՍ ՓՈՒԼ ԵԿԱՎ**

Հովը շկշնկաց.

- Լքե՞լ ես դու ինձ...

Առուն մրմնջաց.

- Լքե՞լ ես դու ինձ...

Սի փշատենի,

Փոշոտված նորից,

Շշնջաց դեմից,

- Լքե՞լ ես դու ինձ...

Մեկը ծիկրակեց

Քարի թիկունքից,

Ասես մսրակեց.

- Լքե՞լ ես դու ինձ...

Մեկը մորմոքեց,

- Ճերմակե՞լ է ճա...

Մյուսը՝ չլքեր,

Չեր է՞ լ ծերանա...

Քարափը խոժող

Նետեց խստորեն.

- Եղեք հանդուրժող,

Եկել է... ներե՞նք:

Երկիր ու երկինք

Իրարու եկան,-

Փղձկաց հոգին,

Սիրտը փո՞ւ եկավ:

**ԴԱՍԵՐ ԱՌԱ**

Թռունուհնս՝ ԼԻԼԻԹԻՆ

Ծունը իջա  
Լեռան առաջ  
Ու վեհության  
Դասեր առա:

Ծունը իջա  
Հովի առաջ  
Ու քնքության  
Դասեր առա:

Ծունը իջա  
Աղբի առաջ  
Ու մաքրության  
Դասեր առա:

Ծունը իջա  
Չորի առաջ  
Ու լրության  
Դասեր առա:

Ծունը իջա  
Հասկի առաջ  
Ու...հարության  
Դասեր առա:

**ԵՎ ԵՐԱԶ Է ԹՎՈՒՄ**

Մանուկները խնդուն,  
Աշիկներով վառման,  
Ալիքներն են նետվում  
Կարմրախայտի նման:

Շեկ ժայռերի միջով  
Գետն է հոսում հեռու,  
Եվ իր կապույտ շնչով  
Պատրանքներ է վառում:

Մտորում է ժայռը,  
Քարափ ու անձավ,  
Եվ երազ է թվում  
Կըանքը հազարաձայն:

**ՉՈՐՈՒՄ**

Ստվերները ընկան  
Խոնավ գիրկը ձորի,  
Ու գունատվեց լեռան  
Տեսքը շնաշխարհիկ:

Հավքը թեմին տվեց  
Ժայռի խոռոչներում,  
Առուն ծունկը ծալեց  
Մարգ ու ածուներում:

Փշատենին, որպես  
Արծարահեր ծերուկ,  
Մի հեքիաթ է մանում  
Հոնի կապույտ ձորում:

**ՀԱՍԿԻ ՄԱՀՔ**

Երաշտահավը ծվարել է լուռ  
Թափուտի մեջ խիտ,  
Ոսկի է մաղում աշունը բուռ-բուռ,  
Կաղին ու տխիլ:

Չորսն ի վար կախված կածանի եզրին  
Խամրում է մի դեպ՝  
Հիշելով ծփանքն իր ալիքների,  
Գարունն իր բեհեզ...

Թաց ակոսի մեջ մոռացված մի հասկ  
Մարմանդ ժայխոռվ,  
Իր երազներն է հողին պահ տալիս,  
Սեռն՝ ամ խլիքտոռվ...

### ՄԻՔԱՎԻ ԵՐԱՄ

Իմ խոնավ աչքերում հիմա  
Մշուշն է քո խորունկ մորերի,  
Սի անտակ կարոս է խորիմաստ  
Եվ հուշն է իմ անցած օրերի:

Ունկերում իմ լարված, զգայուն՝  
Կանչն է քո կաքավի ու լորի,  
Սխացող մրժո՞ւնջը թախծավուն  
Մանկության հեռավոր օրերի:

Իմ հոգին երկինք է աստղամոտ,  
Իմ սիրտը՝ քարափ է քարահատ,  
Խոհերն իմ՝ խճճված մացառուտ,  
Սիրիավի երա՞մ է տեղահան...

**ԱՐՃԱԼՈՒՅԹԻ ՇԵՄԻՆ**

Արշալույսի շեմին  
Խտանում է մի պահ մուրզ ահից  
Եվ լույսի տեմչանքից  
Բողբոջներն են պայքում  
Արշալույսի շեմին,  
Ու հնչում է դաշտում  
Խրխինջը զամբիկ օրվա  
Եվ արեւը աշխարհում  
Նոր երազնե՞ր է վառում...

**ՆՍՏԵՄ ՀՈՎԳՈՎ  
ԴԱՌՆԱՑԱԾ**

Չյուն է մաղում մեղմաբար  
Ու ծածկում անտես  
Այն վայրերը, որը երկար  
Թափառել եմ ես:

Նստեմ հոգով դառնացած,  
Սեկ-մեկ հիշելու  
Այն օրերը, որ անցան  
Ու չե՞ն դառնալու...

Չեն տամ, ու թե ձեն չարին  
Հեռվից անուրախ,  
Գուցե բուքը ինձ բերի  
Կանչե՞ ըլ նրանց...

**ՀՈԼԻԿԻ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ**

Լեռների մեջ երկնաքեր,  
Երկնքի տակ հեռավոր,  
Ծակատը բաց, աստղաքեմ,  
Սի ժա՛յո ունեմ մենավոր:

Ժայռի խոժոռ հոնքի տակ  
Խոնավ աչքեր ուղիկի,  
Զորում կարու մի անտակ  
Ու տրտմությո՞ւն հոլիկի:

**ԻՉՆԵՄ ԱՊԲՅՈՒԹ**

Փշուր-փշուր հավաքեմ  
Աստղացոլքերը մաքուր,  
Որպես սրսու առաքեմ  
Երազներին իմ անքուն...

Իջնեմ աղբյուր մաքրաջինչ,  
Թեքվեմ ջրի վրա պաղ,  
Թռող հովերի հով շնչից  
Չովանա սիրտս մի պահ...

### ԹՌՆ Է ԿԱՅԹՈՒՄ

Դողահար են դեղնած  
Տերեւները վերջին,  
Թռն է կաքում աշնան  
Օրվա ունքամիջից:

Ծաղ է շաղում հողին,  
Մարում գույն ու կրակ,  
Ուլունքաշար ցողի  
Թռղած խոտի վրա:

### ԲԱՅՑ ՈՆՑ ԼՈՒՄ

Լոռությունն էլ իմաստավոր  
Ունի սահմանն իր տերության,  
Բայց ի՞նչ պիտի անեմ, հենց որ  
Լցվի բաժակն համբերության:  
Լոռությունն էլ ունի պատիվ,  
Բայց ո՞նց լրեմ պահին լացին,  
Երբ ձեռքերը՝ նենգ ու պատիր,  
Երկարվեն քո մեղրահացին...

**ԻՐԻԿՆԱՄՈՒՏ**

Վերջին շառագույն եւ իրիկնամուտ,  
Ծովի մեջ սուզվեց արեգակը ջինջ,  
Հոգեվարք ապրող օրվա շեմին մութ  
Վառում ես ահա մոմերդ վերջին...

Արդեն անցյալ է դառնում ողջը, հուշ,  
Աղոտանում են դիմագիծ ու դեմք,-  
Սակայն սարերը, հագած մեգ-մշուշ,  
Վեր են խոյանում իջնող մութի դեմ:

### ՈՐՈՇՈՒՄ

Ո՞ւմ եմ այսքան որոնում,  
Իմ օրերի ճամփերին,  
Ի՞նչ եմ արդյոք որոնում,  
Ի՞նչ է ուզում իմ հոգին:

Քե՞զ, արդյոք, քեզ, մի՞թե քեզ,  
Քնքուշ աղջիկ անուշակ,  
Որ ժպտացիր մի օր հեզ,  
Ինչպես կապույտ մանուշակ...

Կամ՝ քեզ, մի՞թե, մի՞թե քեզ,  
Իմ մանկություն դեգերուն,  
Որ լեռն ի վեր ելա ես՝  
Քեզ թողնելով ձորերում...

Գուցե, անզին, գուցե քե՞զ,  
Գալիք երգ իմ անանուն,  
Ամենալավ ու համեստ...  
Այո, քե՞զ եմ որոնում:

**ՑԱՎԻ ՆԱՀԱՆՁ**

Գիշերը հալվեց լուսաբացի մեջ,  
Օրը արեւի ցոլքերով լվաց  
Երեսս,  
Ապա իմ հոգու խորքում մեղեղիացավ...  
Շուրթերիս վրա զգացի համը արեւածագի  
Ու բույրը հողի,  
Երկինքը բացվեց վրաս անեզը բափանցիկությամբ  
Ու ես երազի մարմինը տեսա...  
Ցավը քննչացավ,  
Նայեց աչքերիս մեղավորի պես,  
Համը հեռացավ:

## ԻՄ ԶԵՌՔԵՐԸ

Իմ ձեռքերը,  
Որ հանգչում են ճերմակ բարձին զիշերն ամբողջ,  
Արշալույսներ են խոստանում  
Ձեր անվրդով քնից հետո,  
Եվ ձեր բարի երազներին՝  
Առագաստներ են խոստանում:  
Իմ ձեռքերը  
(Երբ անխնա մտրակում է բուքը նրանց).  
Ես տանում եմ իմ շորքերին ու տաք շնչին,  
Որ վերստին վերընճյուղվեն հասկի նման...  
Որ մատներս մոմեր դառնան  
Վերջալոյսի հրով օծված,  
Եվ բուրվառն ն  
Ցայգալոյսի շքամուտքին:  
Իմ ձեռքերը,  
Որ հանգչում են ճերմակ բարձին,  
Կարծես երկու կոշտուկներ են սեւահողի,-  
Թեպետ իհմա հանգչում են լուռ բարձիս վրա,  
Վաղը կիշնեն արեւգալի ծնծղաներին  
Եվ կլցնեն օրը ցնծուն նվազներով...

**ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԱԿԱՇԸ**

Իմ սառնության մեջ  
Ես խրճիքների  
Լույսերն եմ վառում,  
Եվ ոլորում եմ  
Ծովսն օջախների:  
Իմ լռության մեջ  
Ես հնչեցնում եմ  
Սովորը բքի  
Ու ձնափոշին  
Երկինք եմ հանում:  
Շերմակության մեջ՝  
Ես հեքիաքներ եմ  
Մանում երկնքից  
Ու երազներ եմ  
Տանում ընդերքի  
Մազարմատներին:  
Անդորրության մեջ  
Շնչառությունն եմ  
Քնած անտառի,  
Հարատեսության  
Խորիրդանիշը՝  
Ժամանակի եւ  
Տարածության մեջ:

### ՄԻԱԿ ՄԽԻԹԱՐԱՆՔԸ

Անշոշափելի, նաև անթափանց  
Ծղարշի տակից բառեր եմ քաշում,  
Նրբերանգներ եմ հանում իմ հոգու  
Խորունկ ծալքերից...  
Ինքս էլ չգիտեմ, ինչպես է ծնվում  
Երզը՝ իմ միակ մխիթարանքը  
Ու թեթեւ նստում իմ հոգու վրա:



Զյուն է մաղում մեղմաբար  
Ու ծածկում անտես  
Այն վայրերը, որ երկար  
Թափառել եմ ես:

Նստեմ՝ հոգով դառնացած,  
Սեկ-մեկ հիշելու  
Այն օրերը, որ անցան  
Ու չե՞ն դառնալու...

Զեն տամ, ու թե ձեն չարին  
Հեռվից անորախ,  
Գուցե բո՞լը ինձ բերի  
Կանչերը նրանց...



Ես մնում եմ այստեղ՝  
Քո օջախում, տանը,  
Որ քո ցավը տանեմ,  
Ու երկունքը ծանր...

Ոչ մոայլիր դեմքդ,  
Ոչ ումքդ փոք գցիր,-  
Ես մնում եմ երգդ  
Ու երկինքդ անծիր...



Ես խոտ լինեի,  
Խոտը ճանփեզրի,  
Նարինջ զամբիկս  
Գար ինձ արածեր:

Եվ հոտ լինեի  
Ծաղկի մի հիրիկ,  
Փշեր հովիկը,  
Բույրս տարածեր:

Մեղում ինձ մոտ գար  
Վաղ այզաքացին,  
Առներ նեկտարս,  
Տաներ իր հացին:



Թվաց՝ կանչեցին ու... ետ եմ նայում,  
Եվ իմ թիկունքում ամռան օրն է տապ,  
Եվ իմ եզերքն է հոգիս հմայում,  
Լեռ ու առապար, լանջ ու զարդարի:

Թվաց կանչեցին ու... ետ եմ նայում,  
Սի լուս կածան է կախվում ձորն ի վար,  
Սի մոշահավ է թփում ծվարում  
Եվ վերջալույսն է շիկնում հրավառ:

Թվաց կանչեցին ու... ետ եմ նայում,  
Հոնքերն է կիտում քարափը անհաս,  
Սի անիրական գառնուկ է մայում,  
Աստղոտվում է երկինքը վրաս...



Էլ դու այն գիծ հովիկը չես,  
Ամպը ճեղքած շողիկը չես,  
Գոհար ու զինդ ցողիկը չես՝  
Մանուշակի թաղի վրա...

Էլ դու այն պարզ տաղիկը չես,  
Ծիծաղ ու լաց շաղիկը չես,  
Անուշաբույր ծաղիկս չես՝  
Ոտքը շող ու շաղի վրա...



Կանչելին հեռու-հեռվից,  
Տագնապեր սիրտս կրկին,  
Իմ հոգին թովեր նորից  
Մի անզարդ ու լուրք երկինք:

Արեւը սարից հաշներ,  
Հայտնվելինք, իմ հեռավոր,-  
Մեզ դարձյալ իր գիրկն առներ  
Մողական մի առավոտ:

**ՊԱՏՐԱՆՔ ՄԱՅՐԱԿԱՆ  
(Որպես լեգենդ)**

*Քրոջս՝ Զինային*

Մղձավանջներից զիշերվա քնի  
Արքնացավ մայրը առավոտ ծեզին  
Ու զնաց դեպի դաշտը հայրենի,  
Աչքերում արցունք ու խոռվ՝ հոգին:  
Մի՞թե չի լոել ցավը անիրավ,  
Եվ չի ամոքվել սիրտը վիրավոր,-  
Դե, ո՞վ կարող է ըմբռնել, իրավ,  
Խուլ տագնաապները որդեկորույս մոր...  
Ավա՞ն, ճախրում է դեռ հոգին անթեւ  
Դեպի չորս ծագերն այս հին աշխարհի,  
Մի՞թե կարծում եք հոգնել է արդեն  
Որոնումներից իր մինուճարի:  
Գուշակել է նա երազի մեջ խոր,  
Թե կիանդիափի որդուն այս անզամ,-  
Դե, ե՞րբ է խարել կյանքում սիրտը մոր,  
Թեայետ սիրտը այդ խարվել է այնքան...  
Ահա արտերի ծովն ալեկոծվեց,  
Երկինք ու երկիր իրար ձուլելով,  
Դարձի ալիքի միջից հայտնվեց  
Մեկը՝ հասկերը տարութերելով:  
Այս ի՞նչ հրաշք է կատարվում իր հետ,-  
Մղվեց դեպի ծով ճշալով՝ որդի՞ս,-  
Սակայն ալիքը պահեց նրան հետ:

-Մայրիկ, կաց, մի գա...հեռվից...հենց այդպես...  
-Ախր գիտեի, որ կզաս, որդիս:  
-Բայց քեզ հետ ի՞նչ է եղել այդ, մայր իմ,  
Դու բոլորովին սեւերի մեջ ես...

-Փույթ չէ...քե հողմ է եղել, միակս,  
Եվ...ձյուն է մաղել այսպես մազերիս:  
-Ի՞նչ հողմ է, ինչ ձյուն, այդ ի՞նչ ես ասում...  
-Ախ, դու չե՞ս հիշում, որդիս սիրասուն...  
-Հիշում եմ...Արտն եմ հիշում մեր ծփուն...  
Տես ինչ ճուլածու հասկեր են ծփուն...  
-Ախ, որդիս, մոտ եկ, համբուրեմ նորից...  
Տես, արտի եզրին բուրում է վարդը...  
-Մայրիկ, կաց, մի գա...հենց այդպես, հեռվից...  
Իմ ու քո միջեւ թող ծփա արտը:  
-Տես արտում ոնց է արտույտը շրջում,  
Հիմա կելնի ու երկնից կկախվի...  
-Բայց ես մի ուրիշ արտ էլ եմ հիշում...  
Այն շիկացել էր քոցի մեջ, ծխի...  
Դու չե՞ս կարծում, թե ինչ որ եղել է...  
-Ոչինչ չի եղել, չէ, իմ մտերիմ...  
-Եվ այնուհանդերձ...  
-Տուն գնանք, որդի՝ ս:  
-Տուն գնանք, մա՛յր իմ:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## **ՆԻԿՈԼԱՅ ԳՈՒՄԻԼՅՈՎ**

### **ՊՈԵՏԻՆ**

Թող երգդ լինի ճկում առավել,  
Ինչպես կանաչող հովտում բարդին ձիգ,  
Ինչպես հողի կուրծք, ուր խոփն է խրվել,  
Ինչպես կոյս աղջիկ:

Դու խնդությունդ պահիր հմայիչ,  
Երգդ չպիտի տեղից տեղ ճախրի,  
Թեթեւ է թեպետ քայլքը մուսայի,  
Աստվածուիհ է՝ ոչ թե պարուիի:

Ուրախ աղմուկը անկանոն հանգի,  
Դյութական խայծը հեշտ շեղումների,  
Թող ներկված պարող ծաղրածուներին  
Ժողովրդական հրապարակի:

Ոսքդ դնելով սուրբ կածաններին,  
Հղիր նզովքդ դու երգայնությանն,  
Քանզի հարծն է նա խոլ ամբոխների,  
Սուրացկանուիին գրկախառնության:

□

Այնպես երկար է սիրոս մաքառել,  
Ու ասես ծեփվել հոգնած կոպերս,  
Որ ինձ թվում է՝ ձայնս կորել է,  
Իմ հնչեղ ծայնը՝ ընդմիշտ ու հավերժ:

Ես բերիք սակայն դուք նրան եւ արդ  
Այն նորից է իմ հարստությունը,  
Հիշողության մեջ ճերմակ շուշանաց  
Եվ ցոլցլանքի լուրք աշխարհներում:

Ճամփաներն ամեն լավ են հայտնի ինձ  
Այս հողի վրա լայն ու սրտամոտ,  
Բայց ձեր ոտքերը սիրուն ու նրբին,  
Արյունոտ են եւ փախչելն է ցավոտ:

Ինչ-որ ճոճանակ ոխակալ ու չար  
Տնօրինում է մեր բախտը անվերջ,  
Ճոճվում-ճոճվում է սրի պես սուրսայր՝  
Սեր ուրախության ու կարոտի մեջ:

Այն պահը, երբ ես իմ երգից հասուն  
Գոհ եմ՝ ձեզ համար տանջանք է ու ցավ,  
Դուք հրճվում եք, իսկ ես ափսոսում  
Սի օր լույս աշխարհ իմ գալու համար:



Ես ելել էի կյանքի ճեղքվածքից,  
Կյանքից հասարակ ու ողորմելի,  
Եվ հրաշալի, եւ տառապալից  
Քո գեղեցկությամբ մի անդառնալի:

Ու մեռա՝, երբ որ ես հուրը տեսա  
Երբեք չտեսնված,  
Եվ ճառագայթեց աստղը կապույտ  
Իմ այս աչքերի առջեւ շլացած:

Վերածնելով մարմին ու ոզի՝  
Ելավ մեղեղին ու ընկավ հենքով...  
Քո արյունն էր այդ դողանջում ուժգին,  
Քո անզապելի արյունը երգող:

Եվ հանկարծ ինչ-որ խորշից լուսավոր  
Հառնեց երկիրը ու մարմին առավ,  
Եվ մեկեն, ասես թռչուն վիրավոր՝  
Դու թփրտացիր իմ աչքի առաջ:

Ու շշնչացիր. «Տառապում եմ ես», -  
Ի՞նչ կարող էի անել եւ սակայն,  
Երբ այնքան անուշ գիտակցում եմ ես,  
Որ դու մի կապույտ աստղ ես միայն:

## ԴՐԱԽՏ

Պետրոս առաքյալ, վերցրու բանալին,  
Դրախտի դրուն է ծեծում արժանին:

Հոգեւոր այրքը կվկայեն հար,  
Որ դավանանքում եղել եմ համառ:

Թող Գետրզն այնտեղ պատմի իմ մասին՝  
Ինչպես էր ինձնից սարսում թշնամին:

Սուրբ Անտոնիոսն էլ կարող է փաստել,  
Որ չեր հաջողվում լինել մարմնիս տեր:

Սուրբ Ցիցիլիան էլ շուրբերով իր տաք  
Կշշնջա, որ մաքուր եմ, հստակ:

Երազում էի դրախտի ծառեր,  
Սաղարթների մեջ՝ շիկահաս մրգեր,

Շողեր ու ձայներ հրեշտակային,  
Բնության հրաշքն անդրերկրային:

Կանխանշան են, գիտե՞ս, տրվում մեզ  
Երազանքները վաղորդյան ու վես:

Պետրոս առաքյալ, թե հեռանամ ես  
Մերժված՝ ի՞նչ անեմ Դժոխքում հրկեզ:

Կհալեցնի սառույցը սերս,  
Կմարեմ հուրը արտասուրքներս:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

---

Քո դեմ Սերովիքն թխադեմ, արի -  
Կհայտնվի միջնորդն իմ հավատարիմ:

Էլ մի հապաղիր, վերցրու բանալին,  
Դրախտի դրուն է ծեծում արժանին:



Երբ որ անդունից կյանքի մթամած  
Իմ հպարտ հոգին սավառնեց անդին,  
Սինչ հոգեհացը հուղարկավորման  
Հնչեց թախծավուն-անուշ մեղեդին:

Եվ այդ մեղեդու հնչյունների մեջ,  
Թեքված մարմարե դագաղիս՝ վհատ  
Աղջիկներն էին համբուրում անվերջ  
Իմ շրթունքներն ու ճակատը գունատ:

Եվ ես լուսավոր ու զինջ եթերից,  
Խնդություններս վերահիշելով,  
Վերադարձա այս աշխարհը նորից՝  
Սիրո կարոտախտ կանչը լսելով:

Ես փարաբեցի բորբ ծաղիկներով,  
Հնչեղ լարերի փայերով անանց,  
Որ բուրումնավետ իմ շրթունքներով  
Վերադարձնեմ համբույրը նրանց:

**ԶՐԱԴԱՇԻ ԵՐԳԸ**

Պատանի, լուսավոր եղբայրներ՝  
Ուժերի, հիացման, տենչանքի,  
Բացում եմ զիրկս անձնվեր,  
Որդյակս կապուտակ երկնքի:

Ստվերներ, խաչեր ու շիրիմներ,  
Հանելուկ մեզի մեջ թաքնված,  
Հարության ուժերի լույսը ջերմ  
Իշխում է աշխարհին տիրացած:

Թռչում է օղակը փառահեղ,  
Ի՞նչ պայծառ հիացում բարձրերի,-  
Մենք ընդմիշտ կտեսնվենք իրար հետ  
Հավերժում երջանիկ տենչերի:

Պոետի սիրտը բորբ, իրավառ,  
Ցոլում է ոնց պողպատ զիլ-հնչեղ,-  
Կակիծը՝ լույսի պես անընտել,  
Կակիծը՝ թախծի հետ գոկախառն:

### ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅՅԱՐԱՆ

Չընալ է մեր մեջ զինին սիրահար,  
Եվ հացը բարի, ել ինչի՞ նատել,  
Եվ կինն առաջուց այնպես տանջահար,  
Որ տրված է մեզ՝ հաճույք վայելել:

Սակայն ի՞նչ անենք մենք այս վարդագույն  
Առավոտի հետ՝ երկնի սառնությամբ,  
Ուր լրություն է, երկնային անդորր,-  
Ի՞նչ անենք անմահ բանաստեղծությամբ:

Չնստել-շնմել, ոչ էլ համբուրել,  
Ակնթարթները թռչում են տենդոտ,  
Մենք կոտրասում ենք մատներ ու կրկին  
Դատում ենք՝ էլի գնալ մոտ ու մոտ:

Ինչպես երեխա, խաղն իր մոռացած,  
Տարված աղջկա լողով գեղանի,  
Դեռ սիրո մասին ոչինչ չինացած,  
Տանջվում է, սակայն, ցանկությամբ գաղտնի:

Ինչպես դեռ չաճած ձիապոչի տակ,  
Գիտակցությունից խեղանդամ ելած,  
Սի փուչ արարած, լարծում էակ՝  
Ուսերի վրա դեռ թեւեր չառած...

Այսպես դարեղա՞ն, թե շուտո՞վ, Աստված,-  
Հերձադանակի տակ բանարվեստի  
Հոգին է ճշում մեր անուժ, քրտնած,  
Որ զգայարան ծնի վեցերորդ:



Ես միջանցքներով քայլեցի երկար,  
Շուրջս, քանց ոսղիս, թաքուն մի անդորր,  
Դիմավորեցին ինձ թշնամաբար  
Որմնախորշերից արձաններ խոժոռ:

Մոայլ երազում՝ իրեր սառնագույն,  
Եվ մի կողմ մղված կիսամթան մեջ,  
Ինչպես ճոճանակ մի դաժանագույն,-  
Իմ քայլքը հնչեց առանձնության մեջ:

Այնտեղ՝ խորքում, ուր կիսամութն էր գորշ,  
Հիասքափ եղավ հայացքիս իրից  
Սի լուս կերպարանք՝ հազիվ նշմարվող  
Ստվերների մեջ խմբված սյուների:

Մոտեցա ես ու ահա մի կարճ պահ,  
Սարսափն ինձ ճանկեց ինչպես գազանիկ,-  
Հանկարծ բորենու մի գուլիս տեսա  
Ուսերի վրա աղջկա մի շիկ:

Սոսկալի էր սուր մոռութն արյունոտ,  
Դատարկություն էր աչքերում կարծես,  
Եվ նա նողկալի շշնջաց խռպոտ.  
«Դու ինքդ եկար այստեղ, Դու իմն ես»:

Ակնթարքները փախան սոսկալի,  
Եվ տեղի տված կիսախավարում  
Դժգույն սարսափը կրկնվեց էլի  
Անքիվ, անհամար հայելիներում:



Ապաստարանը իմ այս գեղեցիկ՝  
Հնչյունների վայր, զիծ ու ամպերի,  
Ուր չի թափանցում քամին միջանցիկ,  
Չշրջագայված այլ աշխարհներից:

Չէ՞ որ այս կյանքը բազմատեսակ է,  
Բնավ այդ մասին չմտորելով,-  
Որպես մեծագույն տոն եմ ես տոնում,  
Ընդում երկրային նեկտարն ինչպես օդ,  
Եվ քայլում այսպես  
Ժամանակի ու տարածության մեջ:  
Որդիս գալիս է իմ իսկ հետքերով,  
Աշխատանքային ցեղերի հետ հաշտ,  
Քամիների եւ ջրի ու հրի:

Եվ դատավորը բոցավառ երկնի՝  
Մեզ թելադրող իր օրենքը խիստ,  
Ես հավատում եմ՝ կիսուտովանի,  
Որ ճիշտ եմ անցել երկրային ուղիս:

ՆԱ

Գիտեմ կնոջն այդ՝ լուրջուն անձես,  
Եվ հոգմածություն դառն խոսքերից,  
Որ խորհրդավոր ապրում է անտես  
Առկայծումներում իր լայն բիբերի:

Եվ ազահարար բաց է իր հոգին  
Բանաստեղծության մեղեդու առջեւ,  
Եվ կյանքի առջեւ՝ հովտյա, հաճելի,-  
Մեծամիտ է նա, բարձրամիտ ու խուլ...

Անլսելի է եւ հույժ անշտապ  
Եվ տարօրինակ լողքը քայլերի,  
Նրան գեղեցիկ չես էլ անվանի,  
Բայց նա իմ ամբողջ երջանկությունն է:

Ու երբ ինքնակամ փափազում եմ ես,  
Գնում եմ նրա անկյունը հպարտ՝  
Ըմբռշխնելու լուր ցավն իր իմաստուն՝  
Հոգմածության ու զառանցանքի մեջ:

Նա լրւեղեն է անձկության պահին  
Եվ կայծակներ է պահում ձեռքերում,  
Երազմեր ստույգ՝ ինչպես ստվերներ  
Դրախտի հրե ավազուտներում:

### **ՀԱՐԱՎ**

Եվ այն, որ հիմա խաղաղված եմ ես,  
Եվ սպանված է ազատությունս,-  
Վեհ ու վսեմի մասին է ահա  
Հանգիստ զրուցում բնությունն ինձ հետ:

Հեռուն խիստ շոգից անկենդան, գումատ,  
Ինձ ու արելի համար հաճելի,-  
Վեհության մասին ու լուսեղենի  
Մասին է սկյուռն անվերջ շշնչում:

Կլսե՞մ արդյոք արծաթազօծուն  
Ծածանումների տրտունջն ափամերձ,-  
Նրբության մասին ու ճերմակության  
Մասին է երգում հիշողությունս:

Ահա զիշերն է առազաստ պարզում  
Ու դեպի երկինք միտվում լուսությամբ,  
Ամենից նրբին, մտերիմ մարդու  
Մասին կտեսնեմ երազ խայտարել:

**ԵՍ ԵՎ ՊՈՒՔ**

Այս, ես զիտեմ, որ զույգ չեմ քեզ հետ,  
Ես եկել էի մի այլ աշխարհից,  
Ինձ դուք է զայիս ոչ թե կիթառը,  
Այլ զիլ մեղեղին վայրի զուռնայի:

Ոչ թե դահլիճի կամ թե սալոնի  
Սեւ զգեստներին ու բաճկոններին,  
Այլ վիշապներին երգեր կկարդամ,  
Չը վեժներին ու բարձր ամպերին:

Սիրում եմ՝ ինչպես շոգ անապատում  
Արարն է մղվում ջուրը ըմպելու,  
Ոչ թե նկարի ասպետի նման  
Աստղերին նայում, սպասում անզոր:

Կմեռնեմ մի օր ոչ թե անկողնում  
Եվ ներկայությամբ նոտար-քժշկի,  
Այլ ինչ-որ վիհի վայրենի ճեղքում,  
Որ փաթաքված է խիտ պատատուկով:

Չեմ մտնի երբեք ամենքին ի տես  
Բողոքականի դրախտն արարած,  
Այլ ուր հրոսակն ու տանջահարն է,  
Անառակ կինն է ճշում - արքնացիր...



Ես՝ լավագույնը պրետների մեջ,  
Կիրառից ճայնեղ կամ վարդից ճերմակ,-  
Վերածվել եմ, արդ, կյանքում ոչնչի,  
Ապրում եմ, սակայն ոչինչ չեմ անում...

Հաճախ ցավալի, ծանր է ինձ համար,  
Նույնիսկ ցավս էլ նման չէ ցավի,  
Կրակոտ ծիու հեծյալ չեմ անգամ,  
Հոգմածություն եմ, իզու՞ր չարչարանք:

Ոչինչ այս կյանքից ես չեմ հասկանա,  
Լոկ շնչում եմ. «Թող որ վատրարն է  
Իմ զլսին զալիս,  
Ավելին եղավ իմ Աստծո հետ,  
Վատրարագույնը՝ Աստվածածնի...»

**ՓՂԻԿ**

Իմ սերը հիմա քո հանդեպ - փղիկ,  
Ծնված Բեռլինում կամ թե Փարիզում,  
Որ դոփդոփում է գազանանցի  
Տիրոջ սենյակի աստիճաններին:

Մի առաջարկիր նրան ֆրանսիական  
Բլիթներ, կամ էլ՝ մի գլուխ կաղամբ,-  
Հերիք է նրան նարնջի մի շեղք,  
Մի կտոր շաքար կամ մի հատ կոնֆետ:

Մի տրտմիր, անգին, թե փակված է նա  
Նեղիկ վանդակում՝  
Շինված փղիկիդ ծաղրելու համար,  
Որ ծխախոտի ծուխը բաց քողնի  
Գործակատարը՝ նրա քրի տակ:

Մի նեղվիր, իմ լավ, դեռ կգա մի օր՝  
Կկատաղի նա, կփշրի շղթան,  
Եվ փողոցներով, ինչպես ավտորուս,  
Կսուրա ուժգին բախվելով մարդկանց:

Թող նա քեզ հայտնվի արեւածագին՝  
Նախշած դիպակում, ոգեհարցման մեջ,  
Ինչպես շքեղն այն, որ մի ժամանակ  
Սեզ հաննիքալյան Հռոմը տարավ:

## ԽՈՍՔԸ

Այն պահին, երբ նոր աշխարհի վրա  
Աստված խոնարհեց հայացքը՝ այնժամ  
Անշարժեցրին արեւին խոսքով  
Եվ ավերեցին խոսքով քաղաքներ:

Թեւերն արծիվը չբափահարեց,  
Աստղերը ահով խղճացին լուսնին,  
Եթե վարդագույն հրդեհ էր իրավ,  
Խոսքը լողալով ելել էր երկինք:

Իսկ ներքեւ, երկրում կային հաշվարկներ,  
Ինչպես ընտանի անատունների,  
Քանի որ մտքի նրերանգները  
Տալիս են միայն հաշվարկները ստույգ:

Օ՛, ձերմակահեր հովվասպետ, միայն  
Դու զիտես սանձել բարուն ու չարին,  
Չորոշելով դիմել հնչյունին,  
Նա գավազանով ավագի վրա  
Հաշվարկն իր դաջեց:

Մոռացել էինք, որ խոսքը միայն  
Ճառագայթում է երկրի տագնապից,  
Եվ սրբոց զրքում Հովհանի կողմից  
Ասված է, որ այդ խոսքը - Աստված է:  
*<1921>*



Երագում տեսա՝ իբր Երկուսով  
Մահացել էինք,  
Պառկած էինք մենք խաղաղ հայացքով,  
Երկու սպիտակ դագաղներ էին կողք-կողքի դրված:  
Ե՞րբ էինք ասել, թե «բավական է»,  
Մի՞թե վաղուց էր  
Եվ ի՞նչ էր, արդյոք, դա նշանակում,-  
Զարմանալի էր, սիրտը չէր ցավում,  
Չեր լալիս սիրտը:  
Տարօրինակ է զգացումն անզոր,  
Հասկանալի է միտքը կարծրացած,  
Անտանելի են շրթունքները քո,  
Թեպետ եւ նրանք գեղեցիկ են շատ:  
Իրականացավ,-  
Մենք մահացել ենք արդեն երկուսով.  
Պառկած ենք ահա խաղաղ հայացքով,  
Եվ իրար կողքի  
Դրված են երկու դագաղներ ճերմակ:

<1907>

## ԵՐԵԿՈ

Ահա եւ նորից անհարկի մի օր՝  
Հոյակապություն եւ անհարկավոր,  
Եկ, ստվեր, շոյիր  
Եվ աղոտացող հոգուս հազգրու  
Մարգարտահատիկ շուրջառ ոսկեկար:

Ահա եւ եկար... հեռու ես քշում  
Թոշուններին չար՝ տրտմություններիս:  
Օ՛, հրամայող զիշեր անթափանց,  
Ոչ ոք զորու չէ հաղթահարելու  
Արագավազքը քո սանդալների:

Եվ լոռությունն է քոչում աստղերից,  
Լուսինն է շողում - ապարանջանդ,  
Եվ ինձ երազում տրվում է նորից  
Երկիրն Ավետյաց-  
Վաղուց ողբացած երջանկությունս:  
*Նոյեմբեր, 1908, Յարսկոյե Սելո*

## ԸՆՉՈՒՂՏԸ

Այսօր տեսնում եմ, որ քո հայացքը տխոր է անչափ,  
Եվ առանձնապես ձեռքերդ բարակ, գրկած ծնկմերդ,  
Լսիր ինձ, լսիր, հեռու, շատ հեռու Չաղ լճի ափին  
Հրաշք ընձուղտն է քափառում այնպես նազելիորեն:

Նրան տրված է նրբագեղություն վայելուշ տեսրով,  
Եվ մաշկի վրա զարդանկար կա մի կախարդական,  
Սիայն լուսինը կհամարձակվի ննանվել նրան՝  
Օրորվելով ու կոտորատվելով խոնավության մեջ:

Հեռվից նման է նա նավի գունեղ ձիգ առագաստի,  
Եվ վազքը նրա լողալ է՝ ինչպես թռչնակի թռիչք,  
Ես գիտեմ, որ նա տեսնում է իրոք հրաշքներ անթիվ,  
Երբ մայրամուտին պահ է մտնում մի քարանձավի մեջ:

Եվ գիտեմ անթիվ հերիաքներ ուրախ  
Առեղծվածային այն հեռու երկրի Սեւ Դեւի մասին  
Եվ կրքի մասին այն քաջ ասպետի...  
Բայց դու չափազանց ծանր ես շնչում մառախուղը պաղ,  
Եվ ոչ մի բանի չես ել հավատում անձրեւից բացի:  
Ես քեզ կպատմեմ այզու մասին այն հասարակածի,  
Արմավենների մասին պացիկ եւ անխոհ խոտի,-  
Դու լա՞ց ես լինում, լսիր... Հեռավոր Չաղ լճի ափին,  
Տես, քափառում է ընձուղտը նրբին:

*Սիպրինը, 1907, Փարիզ*



Դեռ մի անգամ չէ, որ ինձ կհիշեք,  
Աշխարհը իմ ողջ՝ հուզիչ, անսովոր,  
Անմիտ աշխարհն իմ երգի ու հրի,  
Բայց այլոց շարքում՝ միակն ու անխար:

Կարող էր դառնալ ձերն այն, չդարձավ,  
Զեզ համար քիչ էր կամ ել անչափ շատ,  
Կարող է՝ ես վաս երգեր եմ զրել,  
Կամ քեզ անարդար աղերսել Աստծուց:

Բայց կիսնարհվես դու ամեն անգամ  
Եվ կասես, որ «Չեմ փորձի քեզ հիշել,  
Չէ՞ որ աշխարհն ինձ այլ կերպ է դյութել,  
Հասարակ, կոպիտ իր Գրավչորյամբ»:  
*<1917>*



Նիրիել է հոգին մի կույրի նման,  
Հայելիներն են քնել փոշեծածկ,  
Սակայն դրախտի հրշեց ամպերով  
Դու ներս ես մտել սիրտս սեւակնած:

Դու չգիտեիր, որ սրտում անթիվ  
Աստղաբույլեր կան վառ, հրապուրիչ,  
Օր երջանկություն աղերսեմ Աստծուց  
Կիսամանկական շուրթերիդ համար:

Ես ուրախ եմ, որ հարուստ է սիրտդ,  
Չե՞ որ մարմինդ ծնունդ է հրի,  
Եվ թեւավոր է հոգիդ դիվային,  
Դու երգեցիկ ես դարձել ինձ համար:



Ինձ մոտ ծաղիկներ չեն աճում բնավ,  
Ես գեղեցկությամբ նրանց հարբած եմ,  
Ապրում են մի օր, թռչնում, թառամում,  
Ծաղիկներն ինձ մոտ չեն ապրում հարկավ:

Եվ թռչուններ ել չեն ապրում ինձ մոտ,  
Բմբլվում են լոկ սգավոր ու խոլ,  
Իսկ լուսաբացին... Փետուրների գունդ...  
Թռչուններն անզամ չեն ապրում այստեղ:

Միայն Գրքերն են՝ ութը շարքերով,  
Այնպես լուակյաց, հատորների բեռ,  
Վերահսկում են մունջը դարերի,  
Ինչպես ատամներ՝ ութը շարքերով:

Հնավաճառը հնոտիացած,-  
Հիշում եմ կուզ էր եւ անշափ աղքատ...  
Անեծք շիրմատան մոտակայքում էր  
Հնավաճառն ինձ Գրքեր վաճառում:

<1910>

**ԿԱՅԵՆԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ**

Նա չի ստել մեզ, հոգին խիստ քախծոտ,  
Կրելով անունն աստղի վաղորդյան,  
Երբ ասաց՝ «Վերջին պատժից մի վախեք,  
Պտուղն համտեսեք՝ կլինեք աստված»:

Պատանու համար բաց են դռները,  
Ծերերին՝ բոլոր գործերն արգելված,  
Իսկ աղջիկներին՝ պտուղներ սարեն,  
Եվ ճերմակ, ինչպես եղջյուրավոր ձյուն:

Սակայն ինչո՞ւ ենք խոնարհվում անուժ,  
Թվում է՝ մեկը մոռացել է մեզ,  
Մեզ համար պարզ է սարսափն հնօրյա:

Ե՞րբ պատահաբար ձեռքն ինչ-որ մեկի,  
Երկու ձող, երկու խոտ ու երկու տունկ  
Կմիացնի իրար խաչաձեւ...

<1909>

### ԿԱՍԿԱԾԱՆՔ

Ահա մենակ եմ իրիկնամուտի այս տարաժամին,  
Եվ խորհում եմ ես միայն քո մասին, միայն քո մասին:

Չեռքս եմ առնում զիրքը կարդալու, սակայն ահա՝ Դուք,  
Նորից ու նորից հարբած է հոգիս ու խոռվահույզ:

Եվ ես նետվում եմ ջութակահնչուն անկողնու վրա,  
Բարձր այրում է... քնել չի լինում՝ սպասել միայն:

Եվ սրտատրովի ես մոտենում եմ քաց լուսամուտին,  
Մարգագետնին եմ նայում ամպամած, նայում եմ լուսնին:

Ահա Դուք այնտեղ՝ ծաղկեթմբի մոտ ասացիք՝ «Այո»  
Եվ Ձեր այդ «Այոն» ինձ հետ կմնա հար ու հավիտյան:

Բայց ահա սրակի միտքս նետում է իբրևս պատասխան՝  
Ձեզնից հնազանդ ու խոնարհ ոչ ոք չի եղել, չկա...

Եվ որ Ձեր «Այոն», Ձեր դոդրոջունը, սոճիների տակ  
Համբույրները Ձեր զառանցանք էին գարնան ու երազ:

<1912>



Դա պատահել է ոչ թե մի անգամ,  
Ոչ էլ մի անգամ այն կպատահի  
Ծակատանարտում մեր խոլո ու համառ,-  
Այժմ էլ նորից մոռացել ես ինձ,  
Բայց զիտեմ՝ խոնարի կվերադառնա:

Եվ չդիվուտվես, դու, իմ նենգ ընկեր,  
Ախոյան՝ իմ խենք սիրով բռնկված,  
Եթե հառաջը սիրո՝ փոխարկվի  
Ցավի հառաջի,  
Եվ համբույրները... ներկվեն արյունով:  
*<1910>*

### ԵՐԿՈՒ ՎԱՐԴ

Շիկ դարպասների շեմին եղեմի  
Աճում են ահա երկու փարթամ վարդ,  
Խորհրդանիշ են վարդերը կրքի,  
Կրքերը՝ երկրի երեխաներ են:

Եվ մեկը անչափ քննուշ է շիկնում՝  
Ինչպես աղջիկը սիրած տղայից,  
Ծիրանագույն է մյուսը դառնում՝  
Վառվելով անզուսպ սիրո հրդեհից:

Նրանք՝ երկուսով, արթնության շեմին...  
Սի՞թե երկնայինն այդպես է դատել,  
Եվ զաղտնիքները կրքի արարման,  
Հաղորդակի՞ց են երկնայինի վեհ  
Գաղտնիքների հետ...

<1912>

**ՀԵՌ-ՎԽՈՒ**

Անսպասելի, նաեւ համարձակ  
Կանացի մի ձայն լսափողի մեջ.-  
Եվ ի՞նչ հաճելի ներդաշնակություն  
Այդ եթերային ձայնում լուսեղեն:

Երջանկություն իմ, քայլքդ բարեհաճ  
Հաճախակի չէ անցնում իմ կողքով.  
Եվ Սերովբեի տավղից հնչեղ է  
Քո ձայնը, դու ել՝ լսափողի մեջ:

## ԵՐԱԶ

Վեր թռա հանկարծ քնից խելագար,  
Եվ ուշքի եկա ծանր շնչելով,-  
Իբր սիրում ես դու մեկ ուրիշի  
Եվ նա վարվել է քեզ հետ տմարդի:  
Ես դուրս եկա իմ անկողնաշորից,  
Ինչպես մարդասպան՝ կառափնատեղից,  
Եվ տեսա, թե ոնց փայլեցին պղտոր  
Լապտերներն՝ ինչպես գազանի աչքեր:  
Այս, երեխ թե ոչ մի մարդ տնանկ  
Չի հածել այսպես, թափառել երկար  
Մթին զիշերվա խոլ փողոցներով,  
Ինչպես հունն ի վեր ցամաքած գետի:  
Ահա կանգնել եմ քո դռան առջեւ,  
Մի այլ ճանապարհ ինձ չի վիճակված,  
Թեպետ զիտեմ, որ չեմ համարձակվի  
Երբեք ներս մտնել քո տունն այդ դռնով:  
Ես զիտեմ՝ նա քեզ վիրավորել է,  
Թեպետ դա միայն երազ էր մի սին,  
Բայց, այնուհանդերձ, ես կմահանամ  
Քո պատուհանի առջեւ ընդմիշտ փակ:

### ԿԱԽԱՐԴՈՒՀԻ

Նա կախարդում է գիշերում խաղաղ,  
Լուս աղոտացող պատուհանի մոտ,  
Նա ափաշկարա ուզում է սաստիկ,  
Որ տեսանելի գաղտնիքը լինի:  
Աղոթքն անկապ է, ինչպես զառանցանք,  
Բայց միտքը նրա հպարտ է, համառ,  
Նա կախարդում է հրապուրելով  
Եվ բոլորովին ետ չի նահանջի:  
Այնտեղ, ներքեւում քաղաքն է նիրհում,  
Եվ ինչ-որ մեկը լսում է, սպասում,  
Ինքնավստահ է սուրբ երկսայրի,  
Եվ զիտե երբ է իր հերթը գալու:  
Հրապարակում անկյանք, ուր որ գորշ  
Ցողը իշնում է քննկոտ վիճակում,  
Եվ չտեսնված հավատն է աճում  
Իր գիշերային հրաշքների մեջ:  
Բայց ապարդյուն է իր կանչը թախծոտ,  
Նույնն է աշխարհը՝ ինչպես եղել է,  
Արեւը կելնի օվկիանի խորքից  
Եվ զմբերները կոսկեզօծվեն:  
Կչքվեն արդեն ստվերներն աղոտ,  
Կլինի աղմուկ, ջրերի ճողփյուն,  
Թարմաշունչ քամին քննկոտ քաղաքին  
Կրերի ծովի զովությունը սառն:  
Սուրբ կշողա, մեկը կճշա,  
Եվ լրությունը կընդունի մեկին,  
Երբ որ հոգնածը ընկնի վախվորած  
Արեւից շիկնած պատուհանի տակ:

Նոյեմբեր, 1908



Դու չհասցրիր կամ չցանկացար  
Իմ բուլությունն ու խոնջանքը զգալ,-  
Քո շշմեցուցիչ մարմինն ու սիրտը  
Պահպանում էիր ուրիշի համար:  
Բայց, այնուհանդերձ, երբ փորձանքի մեջ  
Ես ատամներս սեղմած սպառվեմ,  
Դու հավանաբար չես գալու պապակ  
Իմ շրբունքները ջրով ցողելու:  
Եվ իմ վերջնական ճիզերի պահին,  
Երբ թեւեն ինձ մոտ հրեշտակները,  
Չեն թալրտալու քո շլացուցիչ թեւերն ինձ վրա  
Կամ հաղթանակիս պատվին ընդառաջ,  
Նվազախմբի քայլերգի ներքո,  
Դու փողփողացող դրոշս փառքի  
Չես ծածանելու քո նուրբ ձեռքերով:  
Դու ինձ կհանես մտքիցդ շուտով,  
Եվ ես այլեւս չեմ խորիի ազատ  
Իմ այն սիրելի աղջկա մասին,  
Ով ինձ ահավոր ցավ է պատճառել:

<1917>



Անջնջելի է բախտիս վրայից  
Մանկան բերանդ եւ աղջկական  
Նայվածքդ խիզախ,  
Ահա թե ինչու քեզ անրջելով՝  
Ես մտածում ու խորհում եմ ազատ:  
Եվ ես տեսնում եմ մի անձայր ծովի  
Տարուրերվելը լուսնի ձգումով,  
Եվ քննկոտ աստղեր դարերից ի վեր՝  
Նախասահմանված իրենց շարժումով:  
Օ՛, եթե ընդմիշտ լինեիր ինձ հետ,  
Ես կհասնեի աստղերին ոտքով,  
Կհամբուրեի վառվող արեւին  
Իմ ջերմ շուրթերով:

<1917>

### ԶԲՈՍԱԿՆՔ

Սենք թռանք լուսէ ծառուղիներով,  
Ջրերի մոտով բոչեցինք, անցանք,  
Տերեւներ էին ընկնում ոսկեգույն  
Կապույտ ու քնիկոտ լճակի վրա:

Նա ինձ վստահեց իր քմայքները,  
Տրոնունջները եւ մտքերը բոլոր,  
Այն ամենն ինչ-որ աղջիկն է տեսչում  
Տեսնել սիրո մեջ անիմանալի:

Նա ասաց. «Այո, սերը ազատ է,  
Ազատ է մարդը եւ սիրո հարցում,  
Սիամ թե սիրտը վեհանձն լինի,  
Ընդունակ լինի սիրելու ընդմիշտ»:

Նայեցի նրա աչքերին խոշոր  
Եվ տեսա դեմքը՝ մոտ ու սիրելի,  
Ծառերի ոսկյա այն շրջանակում,  
Ուր ջուրն է լցվում մի օղակի մեջ:

Եվ մտածեցի. «Ոչ, դա չէ սերը,  
Բախտի մեջ սերը՝ հրդեհ անտառում,  
Եվ առանց նոյնիսկ քո պատասխանի՝  
Դատապարտված ենք արդեն իրարու»:  
*<1917>*

**ՇԱՍԻՔԱՅԻ**

*Ի. Ֆ. Անենսկու հիշալրակիա*

Այնքան էլ նախաճածելի չէ իմ վիճակը  
Առաջին տիրակալների համար,  
Այնքան էլ հպարտ չեն Աստվածները:  
Հրացայտ երկնքի մարմարե սյուներին  
Տեղադրված են իմ այգիները:  
Այնտեղ պուրակներ են վարդագույն ցիստեռներով՝  
Խոնավության համար,  
Կապույտ, քնքշաբով ճանձեր,  
Ստրուկներ ու պարուիխներ, մարգարեներ վսեմ,  
Տիրակալներ չորս տարածքների:  
Բոլորն աչքով են անում, ամեն ինչ պարզ է ու մոտիկ,  
Ամեն ինչ հալչում է լոռության հիացքից,  
Բայց ամեն կեսզիշեր սարսափելի է այնպես,  
Երբ ցած է խոնարհում լուսինն իր դեմքը:  
Մշուշված լուսնի հայացքից սարսուռ  
Եվ նրա կպչուն ցանցից սարսափած՝  
Ուզում եմ վար ցատկել իմ երկնային այգուց՝  
Յորանասուն արշինանց բարձունքից այդ:

*<1909>*

### ՀԻՆԱՎՈՒԹՅ ՆՎԱճՈՂԸ

Խրվելով խորհրդավոր լեռան ծալքերի մեջ՝  
Սոլորվեց հինավորց նվաճողը,  
Ամպամած երկնքում անգղեր էին լողում,  
Զյունի զանգվածներ էին ճերմակափառ կախված:  
Ութ օր նա թափառեց առանց ուտելիքի,  
Զին սատկեց: Ոչ բարձր սանդղակի խորշում  
Նա գտավ հարմարավետ մի կացարան,  
Նա ապրեց այնտեղ, ժանտաքենու տակ,  
Վերհիշում էր ճակատամարտեր ու սիրուիիներ,  
Մեկ նիզակներ էր անսնում, մեկ՝ քննանորներ:  
Ինչպես միշտ՝ եղել է հանգիստ ու հանդուգն,  
Նա ոչ ահ զիտեր, ոչ ատելություն,  
Պահը եկավ եւ զինվորն առաջարկեց  
Նվագել փշրված ոսկորների վրա:

*Մայիս, 1908*

**ՊԱՐՍԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ**

Երբ ես ավարտեմ սասիե-սասիե խաղը  
Սոայլ մահվան հետ,  
Արարիչը ինձնից հարկավ կստեղծի  
Պարսկական խճանկար:  
Եվ երկինքը՝ ուղղակի փիրուզ,  
Արքայազնը հազիվհազ կելնի,  
Նշանեւ աչքերը հառած  
Աղջկական ճոճուն ճորթուն...  
Արնաշաղախ շահը ցցի հետ  
Անհուսալի ճամփով կձգտի  
Հասնել քարքարոտ բարձունքին՝  
Սուրացող քարայծի հետեւից:  
Ոչ երազում եւ ոչ արթմնի՝  
Չտեսնված բրաբիոններ սիրուն,  
Եվ իրիկնային խոտերի մեջ հենց նոր  
Խոնարհված վազեր:  
Իսկ հակառակ կողմում,  
Ինչպես Տիբերի սպիտակափառ ամպ,  
Ուրախալի կիմներ իմած համար  
Կրել կրծքանշանն արտիստի մեծ:  
Քաղցրաբարո այն ծերունին՝ լինի  
Վաճառական, թե պալատական,  
Նայելով ինձ՝ հաստատ կսիրի ընդմիշտ  
Սիրով խորագույն, ջերմ ու համառ:  
Նրա միօրինակ օրերին ես  
Ուղեցույց աստղ կդառնամ հստակ,  
Գիմի, սիրեկան ու ընկերներ լավ  
Ես կմատուցեմ նրան հերքով:

Եվ ապա, երբ որ հոգնեմ վերջապես  
Առանց հարբեցման ու սպանիչ ցավի,  
Կերկրպազվի ամենուր անդառն  
Իմ տառապանքը վաղնջական:

<1919>

### **ՀԱՐՔԱԾ ԴԵՐՎԵՇԸ**

Սոխակներ՝ նոճիներին, ծովհատակին՝ լուսին,  
Սեւ քար, սպիտակ քար, ես շատ եմ գինի խմել,-  
Հիմա խմել է ինձ շիշը՝ իմ սրտից էլ հնչեղ,-  
«Աշխարհը ընկերոջ շողք է միայն,-  
Այլ է ամեն ինչ - ստվերը նրա»:

Մատովակին չեմ սիրի ոչ այսօր, ոչ վաղը,  
Ոչ երեկ, ոչ այսօր, ես հարբած եմ կանուխ,  
Քայլում եմ, փառաբանում, որ տեսա հանդեսը,-  
«Աշխարհն ընկերոջ շողք է միայն,  
Այլ է ամեն ինչ - ստվերը նրա»:

Շրջմոլիկ եմ ես, ետնախորշից, իսկը՝ անուղի մարդ,  
Այն, ինչ սովորել եմ, մոռացել եմ ընդմիշտ,  
Հանուն վարդագույն քմծիծաղի ու զինջ եղանակի,-  
«Աշխարհն ընկերոջ շողք է միայն,  
Ամեն ինչ այլ է - ստվերը նրա»:

Ահա գնում եմ շիրիմների միջով,  
Ուր պառկած են իմ ընկերները քաջ,  
Սի՞թե չի կարելի սիրո նասին հարցնել  
Հանգուցյալներից,-  
Փոսից գանգոսկրն է ճշում դագաղի գաղտնիքի մասին,-  
«Աշխարհն ընկերոջ շողք է միայն,  
Այլ է ամեն ինչ - ստվերը նրա»:

Լուսնի տակ ցայտեցին ծովի շիթերը պաղ,  
Բարձր նոճիներին լրեցին սոխակները,  
Սիայն մեկը երգեց, որ չէր երգել բնավ,-  
«Աշխարհն ընկերոջ շողք է միայն,  
Ամեն ինչ այլ է - ստվերը նրա»:

### ՔԱՐՏԱՇՆԵՐԻ ԱՂՋԹՔԸ

Հիշում եմ վաղեմի աղոթքը քարտաշների,-  
Պահպանիր մեզ, Աստված, աշակերտներից այն,  
Ովքեր ասում եմ՝ մեր հանճարը խղճուկ  
Սրբավիղծ փնտրել է նոր հայտնություններ:

Մեզ կարող է դուր գալ ազնիվ թշնամին,  
Բայց հետապնդում է նա մեր քայլը ամեն:  
Նրանց ուրախացնում է, որ մարտի մեջ կրկին  
Պետրոսը խուսափում է, մատնում Հուդային:  
Երկնքին է հայտնի սահմանը մեր ուժի,  
Սերունդներով է չափվում՝ ով ինչքան է առել:  
Ինչ-որ ստեղծենք, նրանն է իշխանությունը տիրոջ,  
Բայց ինչ ստեղծել ենք՝ այն մեզ հետ է այսօր:  
Բոլոր հայինյանքներին մենք ասում ենք - ողջույն,  
Գերմեծարանքներին մենք ասում ենք - ոչ:  
Նախատինքը կեղծ, դրիդը համբավի  
Ուղղակի անվայելուզ է սրբավայրի համար:  
Ամո՞թ ձեզ, վարպետներ, զժվեցնում եք մեզ,  
Ինչպես կարթագենյան փոլին՝ մարտից առաջ...



Յասամանի մի ամբողջական փետջից  
Ինձ բաժին ընկավ մի յասաման լոկ,  
Ես ողջ գիշերը խորհեցի անքախտ Ելենայի մասին,  
Ես տառապեցի ես մի ամբողջ օր:

Թվաց ինձ՝ ճերմակ փրփուրների մեջ  
Անհետացել է երկիրը անգին,-  
Յասամանները ծաղկավորվեցին  
Նավախելի հետքով հսկա նավի:

Երկնակամարից հրաշեկ՝ անդին  
Իմ մասին կրկին մտորում է նա,  
Ամենասիրելի աղջիկն այն նրբին՝  
Գաղելի նման հնչուն աշքերով:

Սիրտս վեր թռավ խաղագնդակ ոնց,  
Ես, ինչպես եղբոր, հավատացի նավին,  
Նրա համար, որ այլ կերպ չեմ կարող,  
Ամենի համար, որ սիրում եմ նրան:

<1917>



Հավանաբար ես նախընթաց կյանքում  
Սպանել եմ անգին հորս ու մորս,-  
Թե Աստվածն ինքը տեղյակ է դրան,  
Դատապարտված եմ անհուն տաճաճիքի:  
Ամեն մի օրս հանգիստ է մեռած ժամանակի պես,  
Բոլոր գործերս օտար են սաստիկ,  
Սիայն տաճաճը վայել չէ բնավ,  
Պլատոնական չէ սերն ամենեւին:  
Այս, փախչեի ու քաքնվեի հանց գող,  
Աֆրիկայում՝ ինչպես եղավ նախկինում,  
Պառկեի մեծողի թզենու ներքո,  
Եվ վեր չկենայի ես ամենեւին:-  
Երեկոն ինձ մեղմ կծածկեր քավիշով,  
Լուսինը արծար լույսով կհազցներ,-  
Կարող է լինել՝ քամին չիիշի,  
Թե ծառայել եմ ինչ-որ բյուրոյում:

<1917>

**C R E D O**

Ես չգիտեմ, թե որտեղից եմ եկել  
Եվ հայտնի չէ՝ որ եմ զնալու հիմա,  
Երբ ես հաղթական, ազատ կշռամ  
Իմ փայլատակող այգում:  
Երբ կամրողանամ ես գեղեցկությամբ,  
Երբ կծանծրանամ վարդի շոյանքից,  
Երբ իմ ցավ-հոգին հանգիստ կտենչա՝  
Չառանցանքից հոգնած:  
Բայց ես ապրում եմ հանց ստվերի պար,  
Հիվանդ սեւ օրվա մահամերձ ժամին,  
Ես լեցուն եմ պահի զաղտնիքներով վառ  
Եվ դյուրանքներով հրշեց կրակի:  
Ինձ համար պարզ է աշխարհում արար  
Եվ ստվերը նուրիի, եւ լույսն արելի,  
Հանդիսավորությունը անգույն երերի,  
Երկրի առկայծումը քնքշաբով ու պարզ:  
Չեմ վնտրում վաղուց գիտելիք ցավոտ,  
Թե ինչպես, ինչու, որտեղից եմ զալիս,  
Ես գիտեմ ուժգին փայլատակում եղավ,  
Երբ աստղը համբուրել է աստղին:  
Եվ գիտեմ հնչել է երգը կարօղին  
Գեղեցկության վեհ զահի դեմ-դիմաց,  
Երբ բամբասել են, ինչպես տեսիլք,  
Սրբազն ծաղիկները ճերմակ:  
Ես բոց պրտով եմ հրաշքն ընդունում,  
Հասկանում երկնի անծիրն օդեղեն,-  
Ինչ տարածությամբ անցնեմ, անպայման  
Երազս կնետեմ ամեն ինչի վրա:

Ընդմիշտ կենդանի, ընդմիշտ զորավոր,  
Լուրք գեղեցկությամբ հմայված խորին-  
չավերժ ծիածան կկապի անմար  
Ունայնության հին կախարդանքի վրա:  
*<1917>*

### ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ

Եվ իհմա էլ, արդ, մարգարեներ կան,  
Թեպետ տապալված է զրիարանը լայն,  
Նրանց աչքերը պարզ են ու խորունկ՝  
Լեցուն ապագա արշալույսներով:  
Քայց նրանց խորթ են կոչերն հաղթանակի,  
Նրանց ճնշում է բառակույտերի իշխանությունը,  
Նրանք վախվորած են, գունատված անչափ  
Քարե զանգվածեղ տներում փակ:  
Ու երբեմն բուռն տխրության ծիրում,  
Մարգարեները՝ օտարված մեզնից,  
Հառում են լազուրաչ երկնքին երկար  
Պարզկա հայացքն իրենց, աչքերը ցոլում:-  
Նա ասում է, թե ինքը խելառ է,  
Սակայն սուրբ է իր հոգին լուսավոր,  
Որ ինքը տխրության խոհում ոլորուն  
Տեսել է պայծառ դեմքը Հիսուսի:  
Լազուրաչ են խոր տենչերը տիրոջ,  
Ձեռքերը՝ հրաշք ու կյանք արարող,  
Եվ կան այդալիսի այլ մարգարեներ՝  
Ինչպես բարության ասպետներ մաքուր:  
Ասում է՝ աշխարհն ահավոր չէ, ոչ,  
Ինքը ապագա իշխանն է այգի...  
Սակայն ողիներն աշտարակի մութ  
Լսում են նրան, ծիծաղում անզուսպ:

Աշում, 1905

## ԽԱՂՋ

Այնպես երկար են խարել ինձ՝ խաղաքարտից-խաղաքարտ,  
Որ ես այլես չկարողացա շհարբել զինուց,  
Անհանգիստ մարտի աստղերն ցրտաշունչ  
Պատուհանից այն կողմ գունատվեցին հերքով:

Խելառության մեջ ու տագմապահար,  
Ինձ թվաց, թե այդ խաղը երազ է,-  
«Ողջ բանկը,- ճշացի ես,- ծածկում եմ ահա»,,-  
Խփված է խաղաքարտը, եւ ես հաղթել եմ:

Եվ դուրս եկա ես մաքոր օդ, որտեղ  
Լուսայգի շողբն էր փափուկ ձյան վրա,  
Ինքս էլ չեմ հիշում՝ ոնց ծնկի եկա՝  
Իմ ոսկե խաչը հպած շուրթերիս:

«Դառնալ ազատ, մաքոր, հանց աստղոտ երկինք,  
Առնել քո ցուպը, օ, քոյր աղքատության,  
Թափառել փողոցներով, հաց մուրալ անվախ՝  
Անիծելով մարդկանց խաչի սրբությամբ»:

Հանկարծահաս... ուրախ, աղմկոտ դահլիճում  
Բոլորը լռեցին, ոտքի ելան ահով,  
Երբ ներս մտա ես ցրտահար ու խելառ  
Եւ խաչս լուռ դրի խաղաքարտի վրա:

*Հովհաննիսյան, 1906*

### ՀՈԳՈՒ ԱՅՋԻՆԵՐԸ

Այգիներն հոգու՝ ընդմիշտ զարդարուն,  
Քամիներն այնտեղ՝ թարմ ու մեղմօրոր,  
Նրանցում ոսկե ավազ, սեւ մարմար,  
Զրավազաններ թափանցիկ ու խոր:

Նրանց մեջ բույսերն՝ ինչպես անսովոր երազ ու քաղձանք,  
Վաղողյան ջրերն ու թռչուններն են դառնում վարդագույն,  
Ո՞վ կհասկանա ակնարկը նրանց հին գաղտնիքների,  
Որոնց պսակում՝ աղջիկը ինչպես չքնաղ քրնուիի:

Նրա աչքերը՝ վարդագույն, մաքուր փայլով արծաթի,  
Ճակատը նրբին, հովտի շուշանից ավելի ճերմակ,  
Շուրբերը, որ չեն համրուրվել երբեք  
Եվ ոչ ոքի հետ չեն խոսել բնավ:

Մարգարիտներ են աչքերը նրա, վարդագույն փայլով,  
Գանձարաններ են անըմբռնեխ ֆանտազիաների,  
Զեորբերը, որոնք շոյել են միայն մեկը մյուսին,  
Խաչվել են, սակայն, զմայլանքների մեջ աղոքների:

Ոտքերի ներքո՝ երկու սեւ հովազ,  
Որոնց մորթիներն ունեն շողշողուն մետաղական փայլ,  
Թռած վարդերից քարանձավային մի խորհրդավոր,  
Վարդաքերբերը փայլում են երկնի խաղաղ լազուրում:

Վաղուց գծերի միջով չեմ նայում ես այս աշխարհին,  
Իմ երազները հավերժությանն են միայն հպատակ,-  
Թռող որ խորշակը անապատի մեջ կատաղի ընդմիշտ,  
Այգիներն հոգուս զարդարուն են միշտ:

*Նոյեմբեր, 1907, Փարիզ*

## ՄՎՆԼԻ

Մանկին ընկած է, եւ փառք Հռոմին,  
Իշխանությունը՝ նույն անփոփոխ է,  
Դարեր շարունակ անխախտ վերստին,  
Ինչպես քարաժայո ու խոր աներեր:

Ալեկոծվել է Հռոմն ինչպես ծով,  
Մութը ճեղքվել է հառաջից ահի,  
Բայց ժպտացել է խաղաղ, անվրդով,  
Չգահավիժած երբեք իր գահից:

Սակայն ինչո՞ւ է կեսօրվա մուժում,  
Շառազայթների փայլերով օծված,  
Հայտնվում հանկարծ դժնադեմ Մարին՝  
Ափի մեջ թուրը արյունով ներկված:

*Հունվար, 1907, Փարիզ*

**ԿԱՅՍԹԻՆ**

Ուրվական ինչ-որ անհայտ ուժերի,  
Դու ես՝ ցուցանող օրենքներ բախտի,  
Այդ դու ես, կայսր, խավարում շիրմի,  
Ուզում ես, որ ես խոսեմ քո մասին:

Ես տրիբուն չեմ, ոչ էլ սենատոր,  
Ես՝ միայն աղքատ երգիչ ավարա,  
Եվ ինչի՞ համար, ինչո՞ ես, կայսր,  
Պսակներ դնում իմ շիրմի վրա:

Փակ է իմ առջեւ դրուն հարստության,  
Խեղճ ու կրակ են հերիաք-երգերս,  
Որոնք լսում են զազանները սոսկ  
Եվ հովիվները բարձր լեռների:

Իմ իին հազուառը մաշվել, խունացել,  
Սուր չեն աչքերս եւ թույլ է ձայնս,  
Բայց ինձ ասացիր՝ նվաճված ես դու,-  
Ես հավատարիմ քո ճորտն եմ, կայսր:

*Հոկտեմբեր, 1906*



Երբ ուժասպառ եմ տառապանքներից,  
Այլեւս նրան չեմ սիրում հարկավ,  
Ինչ-որ ձեռքեր են գունատ ու նվաղ  
Իջնում տառապած իմ հոգու վրա:

Եվ ինչ-որ մեկի աչքերը տխուր  
Ինձ հետ են կանչում թախիծով համակ,  
Սառչող զիշերվա խավարի միջից  
Մի այլ աղերսով փայլում շարունակ:

Եվ հեկեկալով ցավագին, վհատ,  
Անիծելով իմ բախտը անիրավ,  
Ես համրուրում եմ ձեռքերը գունատ  
Եվ լոին, տխուր աչքերը նրա:

<1904>



Դու դատարկ խոսքեր արտաքրեցիր,  
Խսկ աղջիկն, ահա, բացվեց ծաղկի պես,  
Ծոյելով ոսկե խոպապներն իր  
Տնական ո խենթ ուրախության մեջ:

Եվ հիմա ամեն մատուռ ու խորան  
Նա քեզ համար է գնում աղոքքի,  
Դու երկինք դարձար, արեւ իր համար  
Եվ շոյող անձրեւ:

Աչքերը մթնում բքի հոտն առնում՝  
Անհանգիստ է իր հոգոցը հստակ,  
Նա քեզ առայժմ բերում է վարդեր,  
Բայց քեւ ցանկանաս՝ իր կյանքն էլ կտա:  
*<1904>*



Արմավի պուրակ, մացառուտ վայրի,  
Արծաթե, անփայլ առուներ անթիվ,  
Երկինքն անսահման, կապույտ ու անծիր,  
Ուկեգույն հազա՞ծ՝ շողերից հուռթի:

Էլ ի՞նչ ես, ասա, սիրտ իմ, ցանկանում,  
Երջանկությունը սու՞տ է կամ հերխա՞ք,  
Ինչի՞ համար ես սնահավատին  
Դու անվերապահ տրվում կուրորեն:

Սի՞թե դու նորից ուզում ես քունոս  
Զառանցումներով զարկվել հրի հետ,  
Չե՞ս ուզում, արդյոք, ապրել ինչպես խոտ  
Այս սքանչելի այգում բուրավետ:

*Նոյեմբեր, 1908, Յարսկոյի Սելո*

**OՍԻՊ ՄԱՆԴԵԼՃԱՎՄ**



Ծովահարսեր, դուք իմ ծովահարսեր,  
Հեկեկանքը ձեզ համար՝ հաց ու ջուր,  
Սիցերկրականի դուստրերիդ անսեր  
Իմ կարեկցանքն եմ ափսոսում իգուր:

**ԱՎՓՈՐ**

Այրվող ծարավի պարտապան մեղսոտ,  
Զրի ու զինու կավատ իմաստուն,-  
Կողերիդ վրա՝ այծիկներ հրճվում,  
Եվ մեղեդու տակ մրգեր են հասնում:

Սրինգն է սուլում, բամբասում, ճչում,  
Որ քո սեւ-կարմիր օղակներում խիտ  
Դժբախտություն կա, եւ մեկը չունես՝  
Խելքի բերի քեզ՝ չարիքը կանխի:



Ծառերից պոկվող պտղի  
Զգույշ ու խոլ հնչյուն-  
Մեղեղիներում անլուռ,  
Անդորրում անտառի...



Նրբաթերթ ոսկով են վառվում  
Անտառի եղենիները ծննդյան,  
Ծյուղերին՝ գայլեր-խաղալիք,  
Նայում են ահազդու աչքերով:

Օ՛, գուշակող իմ տիսրություն,  
Օ՛, ազատություն իմ լոին,  
Եվ մուգ անկենդան եթերներից  
Ընդմիշտ ծիծաղող բյուրեղապակի...



Կարդալ միմիայն մանկական գրքեր,  
Մանկական խոհեր լոկ օրորեւ,  
Բոլոր մեծերին հեռուները ցրեւ,  
Ընդպատ անհուն թախիծից խորունկ:

Ես հոգնել եմ այս կյանքից մահացու,  
Նրանից ոչինչ չեմ ընդունի,  
Սիրում եմ սակայն աղքատ երկիրն իմ,  
Զանի որ չեմ տեսել այլ երկիր:

Ճոճվել եմ հեռավոր այն այգում,  
Ճոճքի մեջ հասարակ ու փայտե,  
Եվ եղեւնիներին՝ վսեմ ու մուգ,  
Հիշում եմ մշուշոտ ցնորքում:



Քնիքանքից քնիքուշ  
Քո դեմքը,  
Ճերմակից ճերմակ  
Քո ձեռքը,  
Դու հեռու ես  
Աշխարհից ամբողջ  
Եվ ամեն ինչ քո մեջ  
Գալիս է անխուսափելիից:

Անկասելիից է  
Քո տիսրությունը,  
Եվ մատները քո չսառչող,  
Եվ հնչյունը մեղմ  
Քո խոսքերի,  
Եվ հեռաստանը քո աշքերի:



Կս մի խորիմաստ կախարդանք,  
Եվ բարձր ափ, անհուն աշխարհ,  
Հեռու եթերային քնարից՝  
Արկղեր՝ դրված ձեռքով իմ:

Խնամքով լվացված խորշերից,  
Մայրամուտի ժամերին ուշադիր  
Ես լսում եմ իմ օջախների  
Խոր լռությունը խանդավառ:

Ինչպիսի խաղալիքային բախս,  
Ինչպիսի օրենքներ են վեհերոտ  
Հրամայում մարմնիդ շրջատաշ  
Եվ սառնությանը քո իրանի:

Պետք չէ փառաբանել այլ կուռքերի,  
Նրանք այնպես հավասար են քեզ  
Եվ զգուշավոր քո ձեռքերով  
Կարող ես տեղերը փոխել:



Անարտահայտիչ քախիծը խուլ  
Բացել է երկու աչք խոշոր,  
Արթնացել է ահա ծաղկամանը  
Եվ դուրս նետել իր բյուրեղապակին:  
Ողողված է սենյակն ամբողջ  
Խոնջանքով, որ քաղցր դեղ է,  
Այդպիսի փոքրիկ քագավորություն,  
Այդքան շատ երազներ կուլ տվող:

Եվ մի քիչ կարմիր գինի,  
Սի քիչ արեւային մայիս,  
Եվ քաղցր հրուշակ կտրտող  
Շերմակություն բարալիկ մատների:



Ինչ դանդաղ են հեռանում ձիերը,  
Ինչ քիչ են կրակները ճրագներում,  
Օտար մարդիկ են, ճիշտ է, իմանում,  
Թե այդպես ինձ ուր են տանում:

Եվ հավատում եմ նրանց խնամքին,  
Ցուրտ է, ուզում եմ քնել նորից-  
Նետված դարպասի ետնամուտքին,  
Հնդառաջ ցոլքին աստղերի:

Տաք գլուխներ ճոճվողների,  
Օտար ձեռքերի սառույց անքիծ,  
Եվ սպեղանու մի ուրվագիծ  
Դեռ չնկատված իմ աչքերով:

**«ԼԵՇՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ  
ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ԿՈՒՌՔԸ...»**

Լեռների ներսում չի գործում կուռքը՝  
Սեւ սալորներով մանկանց զոհությամբ,  
Մանյակված ճարպ է կաթում ուսերից,  
Զերծ մնալով իր խառն երազների  
Վարարումից ու ետհորդումներից:

Երբ մանուկ էր նա  
Եվ սիրանարգն էր խաղում նրա հետ,  
Ծիածանով էին սնում հնդկական,  
Վարդագույն կավի կաթ էին տալիս  
Եվ ներկում էին որդան կարմիրով:

Անսովոր խաշված-կապկապած է նա  
Զիգ հանգույցներով ամոթի, սիրո,  
Անզգայնության ու ոսկորների,  
Ժպտում է իր լայն բացված բերանով,  
Եվ սկսում է ապրել նա վերստին,  
Երբ որ հյուրեր են գալիս նրա մոտ:

**ՔՈՐԻՍ ՊԱՍՏԵՌՆԱԿ**

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԸ**

Երբ Դեզդեմոնան պիտի որ երգեր,-  
Իսկ նրան քիչ էր մնում ապրելու,-  
Նա ոչ թե սիրո, այլ հեկեկում էր  
Իր աստղի համար եւ իր ուտենու:

Երբ Դեզդեմոնան պիտի երգ ասեր,  
Գոտեպնդվելով՝ իր ձայնը լարեց,-  
Նրան սեւ օրվա համար դեւը սեւ  
Լալկան սաղմոսի հուն ապահովեց:

Երբ Օֆելյային երգել վիճակվեց,-  
Իսկ նրան քիչ էր մնում ապրելու,-  
Չորուրյունն հոգու քշեց ու ցրեց,  
Ինչպես քամին է դեզից խոտ ցրու:

Երբ Օֆելյային վիճակվեց երգել,  
Եվ նորկալի էր ցնորքն անքուն,-  
Բայց նա ինչպիսի ավար էր գրկել,  
Ինչպիսի ուռի ու մարմին մաքուր:

Նետած վրայից երկու կիրք-քրջեր,  
Դուրս եկան նրանք սրտով թալկացող,  
Դեպի տիեզերք՝ վայրը սիրո ջերմ,  
Աստղացոլվելու հանգստացնող:

## ՀԱՍՏԵՏ

Աղմուկը լրեց: Եվ քեմ ելա ես,  
Եվ կողափայտին խոնարհված հլու՝  
Որսում եմ ահա փոխվանչից այնպէս,  
Թե իմ այս դարում ինչ է լինելու:

Հառված են վրաս ստվերում մութի  
Լուսարձակները բյուր ու անհամար,  
Եթե կարող ես, դու հանուն գութի,  
Մոտեցրու ինձ բաժակը հարմար:

Ես սիրում եմ քո միտքը կամակոր,  
Եվ համաձայն եմ այդ դերը տանել,  
Բայց ողբերգությունն ուրիշ է այսօր,  
Խնդրում եմ՝ հիմա այդ դերը հանել:

Բայց գործողության կարգն է յուրովի,  
Եվ ճանապարհի վերջը չունի դարձ,  
Վախենամ ողջը կեղծիքում սուզվի,-  
Կյանքը ապրելը-շրջանցել չէ դաշտ:

**ՄԱՐՏ**

Տաքացնում է արեւը մինչեւ յոթերորդ քրտինք,  
Եվ մրգկում է ապուշացած հեղեղատն անվերջ,  
Ոնց անասնապահ մարդկանց աշխատանք,  
Գարնան գործերն են եփում ափի մեջ:  
Փլում է ձյունը եւ հիվանդ է նա  
Արյունից սակավ,  
Կապույտ երակներ՝ անուժ շյուղերին,  
Կյանքը ծխում է փարախներն ի վեր,  
Եվ ատամներն են թմբիկանում  
Առողջ ցլերի:  
Այդ գիշերները, այդ ցերեկներն  
Ու գիշերները խոլ,  
Այդ կաթոցների կոտորակները  
Կեսօրվա ժամին,-  
Սաղցալեզվակներ թիթեղյա, հյուծված,  
Շատախոսություն անքուն առվակի...  
Կրնկի վրա՝ բաց ձիանցներ  
Ու կովանցներ,  
Աղավնիներն են ձյուների միջից  
Կտցում հատիկներ,  
Եվ ընդամենը այստեղ մեղավոր,  
Եվ թե որոճող  
Բուրում են օդի թարմությամբ աճող:



Նրանք պետք է որ ծաղկեն գարնանը,  
Ամռանը նաեւ երկնագույն թռչուն,  
Ամպի մեջ անգամ՝ մինչ այդ գոռացող,-  
Բարձր ու սուր ձայն ու ճաքած հնչյուն:

Ամպերը, լացած բոցենու վերից,  
Քշվել են դեպի հեռաստան ու սար,  
Ծաղկանցն, ինչպես սառած հախճասալ,  
Քաղաքն է հազում ծխից ու մրից:

Նոսր է ցնցուղում կեչուտ հարավը,  
Չերմնցն է պաղել ցրտից անխնա,  
Քարացել, պարզ է, ինչպես մարմարը,  
Օղը կարծրացել՝ ոնց ձայն անխնամ:

Մնաք բարով, իմ երգեր, իմ մոլուցք,  
Մենք կհանդիպենք վեսպի արձակում,  
Եվ, պարողիայից հեռու, ինչպես միշտ,  
Կտեսնվենք իրար բնության գրկում:



Այդ դերը խաղացիր դու այնպես,  
Մոռացա, որ ինքս եմ ինձ հուշաբար,  
Թվաց, թե երկրորդն էլ դու կերգես,  
Ում չեր հաջողվել երգել երգն առաջին:

Ամպերի միջով նավակն անցավ,-  
Անցավ նա մարգերը հնձելով,-  
Դու այնպես խաղացիր դերը այդ,  
Ինչպես խուց ծեփեն նավախելով:

Եվ ցած թեքելով կայմը դեկին,  
Ծիծառի մասին իմ թեւաբաց  
Դու բոլոր դերերից անմեկին  
Այդ դերը խաղացիր զերազանց:

## ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ

### ՆԱՍԱԿԱՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

*Հետնա Սկրիպտուանին*

Հեռվից են գալիս հետքերն արյունոտ,  
Եվ իին սարսափն է մոխրի մեջ հառնում  
Անցած օրերի: Եվ գույներից չէ արշալույսների  
Արցախում ձյունը արնագույն դառնում:

Խելառությունը դիմում է սրին,  
Ատելությունը սահմանն է հատում,  
Անցյալն է պարզում իր իսկ ափերի  
Արդարությամբ լի էջերը հատու:

Եվ սքափ միտքն է նորից բարբառում,  
Ծշմարտության դեմ, խտացված բառում,  
Արյուն ընդ արյուն՝ արյուն է ծնում,  
Մարդկային ցեղը՝ սատանայանում:

Ոչ թե արյունը,  
Իմաստությունը կհաղթանակի,  
Լոկ նա է արդար, հասու անմերին,  
Նա է հասկանում, տեսնում կենդանի  
Հեռանկարը շենշող գալիքի:

Լսիր դու նրա խոսքը կենդանի  
Խռովության ու վեճի փոշու մեջ  
...Ով առաջինը իր սուրբ հանի՝  
Նա տխուր վախճան կունենա ու վերջ:



Միլիա Կապուրիկյանին

Արարատից վեր էլի երկնի ճեղք,  
Ժամանակները խառնելով իրար՝  
Մուր ամպից, որպես յաթաղանի շեղք,  
Լուսինն է ելնում սրածայր ու սառ:

Մեկ անգամ չեղ մատնել փորձանքի,  
Սուազին անգամ շես թախծում այդպես,  
Նայելով բախտի քո հեռաստանին՝  
Քեզ հետ միասին լալիս եմ եւս:

Նույնն է ամեն ինչ, առաջվա նման,  
Գիշերն է սգում գալիքն անուրախ,  
Եվ սումզայիթյան արյունն է շշմած  
Սարսում ինչպես ցուրտ՝ մաշկի վրա:

Հուշն է ծվատում հոգին, սերը զինջ,  
Երկրային կիրք՝ հավիտյան ջահել,  
Բայց կյանքը թռչում, ճզմում ամեն ինչ,  
Հաշվի չի նստում դժբախտության հետ:

Իսկ մենք փայփայում մեր հոգու այգին,  
Եվ դեռ վիճում ենք կարստով վճիտ,  
Հույսն՝ ու ենք կապում եղբայրության հետ  
Եվ ալարզության հետ մարդկային խղճի:



**Հեմիկ Անդրեյի Պողոսյանին**

Սարսափն ու սուտն են երկար դարերով  
Տնօրինել կյանքն այս հողի վրա,  
Չես խեղդի բնավ կոկորդը նրանց  
Բանաստեղծությամբ ու մերկ ձեռքերով:

Քաղցրախոսությամբ փրուն ճառերի  
Այս համընդհանուր կյանքում հացկատակ  
Շողոքորթներն են կերտում շարունակ  
Բոնակալներին ու դահիճներին:

Եվ ամեն մեկը իր մեղքով անլուր  
Հրում է կյանքը դեպի կործանում,  
Մի՛ կեղծիր ինքդ քեզ, ոչ էլ անուժ  
Անձնատուր եղիր սարսափին հլու:

Ծշմարիտ եղիր ինքդ մարդկանց մեջ,  
Որ սուտը նսեմ, կեղծիքն ահի հետ,  
Մեր այս օրերի քոհ ու քոհի մեջ  
Մոխրի, փոշու մեջ ցնդեն առհավետ:

**ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Հյուծվել է հոգին, մարմինն է հոգնել  
Երգի սահմանի վերջին հատվածին,  
Տեմչանքն այրվել է, խինդը՝ հիվանդացել,  
Եվ կյանքը վաղուց ծափահարված է:

Արդյունքը նրա, ծանր վնասից,  
Անցած ճամփեքի վրա հավաստված,  
Ո՞ւր գնալ հիմա՝ լրում է Աստված,  
Նոր առաջնորդն էլ ստույգ չի՝ ասի...

Ժամանակի ու խղճի հետ անհաշտ՝  
Փլվում է աշխարհն՝ ուր էլ որ նայես,  
Փառքի լրոշի ծփանքը իրաշը<sup>2</sup>  
Մնաց հետեւում,  
Աղջեւում մեզ է, խլություն ասես:

Կարոտների մեջ կասկածներ չարի,  
Ո՞վ է հոգալու զալիքի ճարը,  
Իմ ժողովրդին, հողին, դարերին  
Վաղը ի՞նչ կասի  
Բռնակալը բիրտ կամ թե հանձարը:

Եվ ժողովրդի բախտի վրա բանկ,  
Արյան ու ցավին  
Վաղն ի՞նչ կնստի՝  
Բանականությո՞ւն վեհ ազատության,  
Թե՞ մի քմահաճ ինքնակա՞մ սաստիկ:

Իմ ունկերի մեջ՝ քամիների սույլ,  
Եվ նավակայմս մրրիկն է ջարդել,  
Որ ինձ սիրել եմ՝ ես գիտեմ ստույգ,  
Եվ սիրողներին ես սիրում եմ դեռ:

Մարգարեի խոսքն՝ ասված ջանասեր,  
Զահելներին եմ փոխանցում ուշիմ.  
...«Ես ձեզ սիրել եմ այնպես նուրբ ու ջերմ,  
Տա Աստված՝ այդպես սիրվեք ուրիշից»:

## **LԵՍՅԱ ՈՒԿՐԱԻՆԿԱ**

### **ՀՈՒՍԱԼՈՎ ԱՆԳԱՄ**

Հեռացե՛ք, խոհեր՝ մութ ամպեր աշնան,  
Չէ՞ որ ոսկեհեր զարուն է հիմա,  
Սի՞թե վշտի մեջ, հեծեծանքներում  
Կանցնեն տարիներն իմ ջահելության:

Ո՛չ, ես ուզում եմ արցունքի միջից ծիծաղել անհոգ,  
Եվ վշտի միջից երգել երգերն իմ,  
Հուսալով անգամ անհուսությունից՝  
Ապրել եմ ուզում,  
Հեռացեք մի կողմ, իմ թախծոս խոհեր:

Մոռացված, մոայլ անապատներում  
Ես հազարերանգ ծաղկունք կցանեմ,  
Ծաղկունք կցանեմ սառույցի վրա,  
Դառն արցունքով նրանց կցողեմ:

Կիալի իմ այդ տաք արցունքներից  
Սաոցի կեղեւը հաստաքեստ ու բիրտ,  
Գուցե ծաղիկներն այդ կենդանան  
Եվ ինձ համար էլ զարունը բացվի:

Սինչե դարիվեր լեռը քարեղեն  
Կրաքճրացնեմ քարը ծանրազույն,  
Ահավոր բեռն այդ կհաղթահարեմ,  
Եվ կերգեմ երգեր զվարք ու խնդուն:

Երկար, անքափանց գիշերում մթին  
Երբեք, ոչ մի պահ աչքս չեմ թարթի,  
Ես միշտ կփնտրեմ աստղն ուղեցույց,  
Պարզ տիրակալին մութ գիշերների:

Կծիծաղեմ ես արցունքի միջից,  
Տառապանքի մեջ կերգեմ երգերն իմ,  
Հուսալով անգամ անհուսությունից,  
Կապրեմ, հեռացե՛ք, թախծոտ խոհեր իմ:

**ԷԳՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՑՏԻՄ  
(Լիպլա)**

**ՍՊՈԿԱԼԻՊՏԻԿ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

...Մղձավանցերը վրա են հասնում քնի ժամանակ...  
Քունը սեւ արյամբ սպառվեց գունատ լուսաբացի մեջ  
Եվ մեկը ճաց.

-Պատերա՞զմ, պատերա՞զմ:  
-Ո՞չ,- պատասխանեց մյուսն ընդերկար,  
Պատասխանեց՝ո՞չ:  
-Ոչ, ոչ...

Գոռացին՝ փլչում՝ երջանկությունդ,  
Պատասխանեցին՝ անհնարին է:  
-Կիսեմ բույնդ, տունդ՝ գոռացին...  
Եվ լսեցի ես.

-Ահա թեզ քնար, պաշտպանիր դրանք:  
Աղաղակեցին՝ քաղաքն հեղեղվե՞ց...  
Պատասխանն հնչեց՝ ոսկի արեւով,  
Աղաղակեցին՝

Թունավորված է ջուրը օվկիանի...  
Պատասխանեցին՝ ծաղկունք ենք ուզում:

Աղաղակեցին՝  
Արյունոտված է յասամանն ամբողջ,  
Պատասխանեցին՝ լուս է ճառագում:  
Աղաղակեցին՝

Թեւավորներն ընկնում են անշունչ,  
Պատասխանեցին՝ թոշունք են նրանք:  
Աղաղակեցին՝

-Գնդակն է աճում, ոչ թե հատիկը...  
-Ապրեցեք հացով, -պատասխանեցին:

Ծացին.

-Մարմինն արյամք է ներկված...

Եվ պատասխանեց ինչ-որ մեկը.

-Ո՛չ...

Պատասխանեց՝ ո՛չ:

-Այո...

...Ես սայթաքելով փախա դաշտերով,

-Զգույշ,- կատակով աղաղակեցին:

Իմ դիմաց գարու ծիլը դրդողաց,

Ընկա, մանկան պես հեկեկացի ես:

Իմ արցունքների միջով բյուրեղյա՝

Ծայրից ծայր լեցուն արելի հրով,

Ես կախարդական մի կղզի տեսա՝

Ֆանտաստիկական ծաղկունքով հյուսված:

Ծաղկել է այստեղ սերը վարդագույն,

Եվ կանաչել է հույսը գարնան պես,

Բանաստեղծներից բախիծն անբաժան

Լցված է եղել լոյսով երկնագույն:

Եվ կարող էին կորացնել այդ գեղեցկությունը...

Ու արթնացա ես մռայլված, խոժոռ,

Պատրաստվում էի լողալ դեպի ափ,

Լսեցի հանկարծ ինչ-որ ծանոթ ձայն...

Աղաղակեցին՝

-Սեւ ալիքն արյան կընդգրկի կղզին...

Կմբագնի...

Աղաղակեցին.

-Զեռքերդ անզոր, անուժ են ու չեն կարող վարել նավ.

-Ո՛չ:

Եվ պարսպի պես հառնում են կրկին մեռածները լուռ,

Նահատակներն են լույսի դեմ կանգնում...

Սակայն իմ դիմաց հայտնվում է կղզին,

Ու ես կրկնում եմ՝ ո՛չ, ո՛չ, ո՛չ:

...Ուումբերի ոռնոց,

Եվ հրթիռները տիեզերական

Նշան են բռնել դարձյալ ինձ վրա...

Բայց իմ մեջ զարթնող պոետը կրկին,

Շարունակում է հայտարարել՝

-Ո՛չ...

...Արցունքի միջով լողացի դեպի կղզին,

Լողացի քնի մշուշով՝

Արյամք սպառվող լուսաբացի մեջ:

-Դեպի պատերազմ, դեպի պատերազմ լողալ,-գոռացին,  
Ես կրկնեցի

-Ո՛չ,

-Ո՛չ

## ՌԻՄԱ ԿԱԶԱԿՈՎԱ



Բարիկադների վրա սիրո  
Պետք չեն թշվառներ,  
Կամ փերեզակներ:  
Գլաքարեր են բռչում, աղյուսներ...  
Նրանք անզոր են հրի և սրի,  
Եվ զրահի դեմ:  
Բարիկադների վրա սիրո  
Մեզ վիճակված է կովել իրար դեմ:  
Մի զայրացեք, տեր,-  
Ինչքան զինվորներ դուրս եկան շարքից,  
Ինչքան մեզնից էլ խիզախ ջարդվեցին  
Բարիկադների վրա սիրո:

Բարիկադների վրա սիրո  
Պարտությո՞ւն եղավ, թե՞ հաղթանակ,-  
Ժամն է, հասկանաս, իմ ոխերիմ:  
Կնետե՞ս զենքդ, թե՞ կկրակես,  
Տանջված իմ արտում ցավից կեղծվե՞ս,  
Թե՞ դեռ հարություն կառնես նորից:  
Բարիկադների վրա սիրո  
Գիշանգդներ են զրոհում կրկին,  
Նույնիսկ երկինքը արյամբ է ներկված:  
Բայց որն է հրաշքն անսպասելի,-  
Մարտնչում ենք մենք իրար դեմ ելած  
Բարիկադների վրա սիրո:  
Քի՞չ տառապանք ենք արդյոք կուլ տվել,  
Խլիր մեզ ցավից:  
Ինչպես Մառուի,  
Վեր բարձրացրու իմ ձեռքերը մերկ,  
Նրանցով ահա հիմա թեզ զրկիր...  
Բարիկադների վրա սիրո:

## ԱՆԱՏՈԼԻ ԿՐԱՍՆՈՎ

□

Ի՞նչ առավոտ է,  
Վարդագոյն անդրբ,  
Հասմիկն ինչպես ամպ  
Խառն ու թափանցիկ,-  
Մեզ ընդառաջ է  
Մեկնում թեւերն իր՝  
Մանկան պես անկեղծ  
Եվ բարեհոգի:

Անտառն առաջվա  
Նման կանաչում  
Արեւածագին,  
Եվ հետզհետե  
Տաքանում է նա:  
Նրանից վերեւ՝  
Գունատվող երկնում,  
Աղոտանում են  
Աստղերն ու հալցում:

Արեւը այնտեղ  
Շողերն է ցրում,  
Թանձր մշուշն է  
Նոսրանում խոնավ  
Խոտերի վրա:  
Երեխայի պես  
Պարզ է, սրտաբաց  
Աշխարհն անարատ,-  
Վստահությունը  
Մի կորցրեք նրա...



Նա մեռավ արդեն,  
Սակայն քիչ առաջ  
Ապրում էր մեզ հետ՝  
Կենդանի ու ջերմ,  
Ընկավ աստղը  
Մարգարիտի պես  
Եվ մի այրի էլ  
Կյանքում արտասվեց:

Իսկ մենք լուս ենք,  
Ի՞նչ պետք է անել,  
Չէ՞ որ մենք զիտենք,  
Որ միասին են  
Քայլում կյանք ու մահ,-  
Փորձիր բաժանել  
Նրանց իրարից:  
Սակայն ծանր է  
Ընկնել վաղահաս,  
Գրիչը ձեռքիդ  
Կամ ինքնաբիուս,  
Երբ դեռ առջեւում  
Թոփչը կա ու թեւ,  
Եվ ամբողջովին  
Թոփչի մեջ ես:

**ԶԵՌ-ՔԵՐԸ**

Ես համբուրեցի  
Ձեռքերն աղջկա,  
Չափսոսալով ու  
Չնմանվելով  
Երբեք ոչ որի,  
Ձեռքերն աղջկա  
Ծերմակ ու նրբին,  
Որպես լույս՝ նետված  
Գիրկը խավարի:

Ես առա նրանց  
Բույրն այզաբացին,  
Վստահելով այն  
Սիայն գեփյուտին:  
Ես հինա էլ եմ  
Համբուրում նրանց  
Քնքշության համար  
Եվ իմ զավակի:

Եվ գիտակցելով  
Անցած օրերի  
Ու տարիների  
Զգացումը խիստ,-  
Հինա էլ եմ լուռ  
Համբուրում սրտանց  
Ձեռքերն այդ արդեն  
Մաշված ու հոգնած:

**ԱՆԴՐԵՅ ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ  
(Մուկովա)**

**ՄԱՅՐ**

Հուղարկավորումը քո, մայր իմ, չեղյալ հայտարարեցի,  
Անհնարին է քեզ վերածնել այս էպոխայում:

Մայր իմ, ներիր ինձ իմ այս կրկնակի հավաքի համար,  
Ի՞նչ եղավ քեզ հետ, ձյուն իջավ դեմքիդ,  
Ես քեզ խլեցի դիակիզարանից,  
Որ տեղավորեմ քեզ հորս կողքին:

Նովոդեմիչյան գերեզմանոցին  
Թափվում են գարնան գուղձեր ահալի,  
Քնած են այստեղ Վոզնեսենսկին,  
Վոզնեսենկայան-  
Քնած մի կյանքով՝ հողով բարախված:

Այն, ինչ կապված էր քեզ հետ, մայր իմ, արդ,  
Դարձել է մասունք,  
Նստարանները կանաչ պուրակի եւ մեր թիկունքում  
Օրդինկան ահա դարձած սրբություն,  
Եկատերինյան կեչիներից վեր  
Լույս է մայրական:

Ապրել ես, քայել այս հողի վոա, իմ Անտոնինա,  
Սինչ ականջներդ խիստ սիրահարված հովտաշուշանին,  
Մտավորական՝ Ռաբքրինի լաշակով,  
Եվ երմոլովյան թիկունքով լայնշի:

Կրծոցի մեջ արդյունաբերության  
Նավթավառների

Եվ աշխարհում այս՝ խառնված արյան մեջ,  
Դու միշտ եղել ես սիրո մաքրություն,  
Առանց խառնուրդի,  
Խտուտ-խատուտիկ սիրով առլեցուն:

Դու մի աննկատ ու թանկ Ռուսաստան,  
Որ պահպանել է եւ օջախ, եւ շեն,  
Դժբախտություններ ու ջահելության  
Վարսեր՝ ինչպես խուրձ ափիդ մեջ սեղմած:

Ինչպե՞ս կարող ես այս մենության մեջ  
Ապրել դու առանց հարազատների,  
Իմ ծիծաղաշարժ քիքը այլեւս դու չես կնճռուի,  
Եվ իմ օճիքը չես ուղղի երբեք:

Ո՞ւմ կարթնացնես գիշերն անանուն,  
Ինքնին կրերթվի գիրքն ախմատովյան,  
Ինչ է քեզ տանջում, Անտոնինա, Տոնյա...

Անձրեւն է ծեծում քեզ, բայց չես մրսի,  
Ես տանը զգում եմ ներկայությունդ,-  
Սուրբ տարերքի մեջ պահապանն ես մեր,  
Մայր Անտոնինա...

Ահա բաժակդ հոգեհանգստի,  
Սի շեղք հացի հետ՝ քառսունքիդ համար,  
Գոլորշիացա՞ծ է արդեն կիսով շափ,  
Թե՞՝, իրոք, ձեռք ես մեկնել դու դրանց:

Ոիրմը ոիրմի հետ էլ չի համընկնում,  
Եվ սա իմ վերջին կապն է քեզ հետ,  
Խզվել է քելը,  
Եվ ես հայտնվել եմ մի ճեղքածքի մեջ,  
Որ փոքր մասն է երկրային կյանքիդ:

«Գոհ եմ քեզանից, որ ծնել ես ինձ,  
Ծանոթացրել այդպիսով քեզ հետ,  
Փակ ներկայությամբ այն գաղափարի,  
Որ սովորաբար անվանում են սեր:

Ծնորհակալ եմ,  
Որ ապրել ենք մենք իրար կողք-կողքի,  
Սիի մեջ օրվա կամ թե խնդության,-  
Երկշու մի սիրով հպած ճակատիդ՝  
Սինչ հազար տարի մտապահիր ինձ»:

Ես այս խոսքերը ասի անվնաս,  
Ո՞վ է կարդալու...քայց ավելի շուտ  
Հովտաշուշաններ քերեք մայրիկին,  
Իմն արդեն ուշ է, քերեք ձերն, անշուշտ:



Մենք հարուստ էինք քեզ հետ միասին՝  
Կարծես ոսկեղեն գուլպաներում փակ,  
Փոշով փաթաթված շողերը լույսի  
Ծոճվում էին մեր ձեղնահարկի տակ:



Յածրածայն, կամաց: Լսվում է հստակ,  
Թե ոնց են հոսում վայրկյաններն օրվա,  
Ավագի նման անձայն ծորացող,  
Թափվում են, շիթվում ոնց ապարանջան  
Քո պարանոցի վրա շնչացող...

**ԹԱԺԱՆԵԳՐՎՈՒԹՅՈՒՆ**

Բաժնեգրվում եմ հազվագյուտ, ընտիր  
Ընթերցողներին,  
Բաժնեգրվում եմ որպես դավանանք  
Ես չերտանովցի մտածողներին:  
Բաժնեգրեցեք հատընտիրների՝  
Տիրակալներին մտքի բանական,  
Ընկեր Վիզքորից,  
Ես՝ իրարանցում ընթերցողական:  
Լի են շուկաներն հոլովակներով,  
Հեղինակների մեջ՝ խցկվելն անհնար,  
Հատընտիրներին չեմ բաժնեգրվում,  
Բաժնեգրվում եմ ամբողջի համար:  
Բաժնեգրվում եմ շիկ գործակազմով  
Երկհատորյակի սիրահարներին,  
Առասպելներում դուք կխորտակվեք  
Եվ չեք ընթերցի մինչեւ առավոտ:  
Բաժնեգրվում եմ դափնեկիրներին,  
Գյուղանձարություն սերտելու համար:  
Բաժնեգրվում եմ այն պաստառներին,  
Որտեղ հատորը ներկով է դաշված,  
Ես կյանք եմ տվել բաժնեգրվելուն  
Եվ իմ հետեւից քաղաքն էր կանգնած:  
Բաժնեգրեցեք ինձ ընթերցողների  
Այն նամակների ընտիր մասերին,  
Ուր թերթատված են գլուխները լավ,  
Բայց ինչ-որ մեկի տաղանդն է անկախ:

Բաժնեգրեցեք ինձ ոռոսական  
Ծանապարհներին իմ իսկ ընտրությամբ,

Բաժնեգրվում եմ սպեկոլյանտական  
Լի խրճիթների ծանրաբեռնությանն:

Բաժնեգրվում եմ առանց լիմիտի  
Իմ ժողովրդին՝ խորհող ու վեհսիրտ,  
Վաղիմիրին, նաև Վելմիրին,  
Օսիալին, ինչպես նաև Բորիսին:  
Բաժնեգրեցեք ինձ այն վիպակին,  
Որ ընթերցվում է գիշերն ակնակիր,  
Եվ դարակներում ընդհանուր գնացքի  
Էջանշան է կախված սանդղակից:  
Բաժնեգրեցեք Պետրոզավոդսկու  
Բուժետապանի բողոքի գրքին,  
Որ դառնալու է «Երգոցը երգի»  
Եվ ձեռքերից ձեռք չեն տալու կրկին:  
Ընթերցողներին եւ այն պատաճի  
Արգելվածներին մանխորի կողմից,  
Որ ճերմակի մեջ սեւը չեն տեսնի,  
Բայց հո ծիածան կտեսնեն նորից:  
Գրառումներին խելազարների,  
Որ լոյս տեսնելու համար չեն լալիս,  
Երգեր են գրում թեփածալերին  
Եվ ապա դրանց լվացքատուն տալիս:  
Ընթերցողուիհներ անդավանացեղ,  
Ելած ու պտկված կեղտից շուկայի,  
Որ Ախմատովային չէիք սգացել,  
Անգիտակ էիք Ցվետաեւային:  
Տղամարդիկ, քաջ ու վճռական,  
Արդ, ոչ այնքան էլ ախմատովական,  
Զեր բախտի համար մտահոգվելով՝  
Փրկելու են ձեզ չաքլորանալով:



Վալենինա Ալեքսանդրովնա  
Նեսկայային

Ընթերցողուհի օրինակելի,  
Ծառագունումը ձեր մոսկարեչյան  
Վառ-կարմրավուն է դառնում ավելի:

Այս տողերի տակ դուք կշփոթվեք,  
Երբ որ կահույքի վրա լրակազմ  
Ձեր անունները ընթերցեք հանկարծ,-  
Առանց Վալենտինա Նեսկայայի  
Գրականություն չկա ռուսական:

Եսենինն ահա ձեր իսկ սնարին,  
Շրջանակի մեջ,  
Ի՞նչ ընթերցողի վառ օրինակ էր,  
Ծարվածքասյուներ ձեր սեղաններին,  
Ինչպես վառարան հախճասալիկներ:  
Երգերն այրել են մատները նրա  
Սուր կերպով եւ հուր,-  
Զեռնոցների մեջ  
Գրականություն չի՝ ծնվում բնավ:  
Գրքերն ընթերցեք Նեսկայայի՝  
Հրատարակչության մեծ իշխանութու:

Գերմանիան մեծ է զորեղ Լյութերով,  
Քսանականները՝ Ռաթլինով հզոր,  
Նահանգները՝ բյուր համակարգիչներով,  
Իսկ Ռուսաստան՝ իր ընթերցողներով:

Նա միտք ու խիղճ է արքնացնելու,-  
Հոլովակները լարված են արդեն,  
Գուցե զալիքում գրքեր չծնվեն,  
Բայց ընթերցողներ, անշուշտ, կլինեն:

**ԹԱՅԻԿ**

Փարիզից ես ի՞նչ քերեմ քեզ համար,  
Բացի լաբերից եւ այլն, եւ ի՞նչ՝  
Աֆիշից բացի մեր այս դեղնամած,  
Քո նկատմամբ իմ կարոտից մի քիչ:

Այդ նվերները հարուստ չեն ինչոր,  
Ես քեզ վրա եմ փորձում իմ մտքով-  
Հաղթակամարը ճերմակ, փառավոր՝  
Որպես շրջազգեստ լանջաբացվածքով:

## ԱՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ



Դու մուրացկանի համար աղոթիր,  
Նաեւ կենդանի իմ հոգու համար,  
Դու՝ ինքնավստահ ճամփին քո երթի,  
Եվ քո քողտիկում՝ լույսը միշտ անմար:

Եվ քեզ՝ թախծավուն ու շնորհակալ,  
Այդ մասին հետո դեռ կպատմեմ ես՝  
Ոնց է ինձ տանջում գիշերն ածխակալ,  
Ինչպես է այզը շնչում սառցի պես:

Ես իմ այս կյանքում քիչ բան եմ գտել,  
Լոկ սպասել ու երգել եմ ողջը,  
Եվ իմ եղբորը, գիտեմ, չեմ մատնել,  
Չեմ դավաճանել եւ իմ քրոջը:

Ինչի՞ համար է Տերն ինձ խարանում,  
Ամեն օր անվերջ եւ ամենայն ժամ,-  
Այդ հրեշտա՞կն է մատնացոյց անուն  
Աննկատ լույսը ինձ հոժարակամ:



Ես հազվադեպ եմ հիշում քո մասին,  
Եվ բնավ էլ քո բախտին չեմ գերի,  
Սակայն մնում է հետքը անբասիր  
Քեզ հետ աննշան հանդիպումների:

Ես շրջանցում եմ քո տունը դիտմամբ,  
Կարմիր քո տունը՝ պղտոր գետի մոտ,  
Գիտեմ՝ հուզում եմ հոգիդ դառնությամբ,  
Վրդովում եմ քո հանգիստն արեւոտ:

Թող որ դու չէիր շուրթերիս հակված՝  
Շշնջացել զերմ ու սեր աղերսել,  
Թող որ դու չէիր երգերով վառված՝  
Հավերժացրել տառապանքս սեւ:

Թաքրոն դյութում եմ երկնքին էիի,  
Եթե երեկոն կապոյս է այնքան,  
Եվ նախազգում եմ անխուսափելի  
Հանդիպումը մեր մի երկրորդ անգամ:



Ես սովորել եմ իմաստում ապրել,  
Նայել երկնքին, Աստծուն աղոթել,  
Իրիկնաժամին երկար թափառել,  
Որ լոեցնեմ տագնապս անել:

Երբ կուտուկը շրջում ձորակում,  
Թոշնում է լաջվարդ ողկույզն արոսի,  
Ես հորինում եմ երգերն իմ խոկուն՝  
Կյանքի մասին այս գեղեցիկ ու սին:

Վերադառնում եմ: Իմ ափն է լիզում  
Փափկանազ կատուն, մռում քնքշավետ,  
Եվ փայլուն բոցն է երկինք հրկիզում  
Սղոցարանի աշտարակից վեր:

Երբեմն միայն անդորրն է խախտում  
Ծիչն արագիլի՝ իջած տանիքին,  
Եվ եթե հանկարծ իմ դուռը ծեծես,  
Նույնիսկ կրվա, թե չեմ լսում ես:



Սիրելին այնքա՞ն խնդրանքներ ունի,  
Խնդրանքներ չունի, ով սիրել է վաղ,  
Ուրախ եմ այնպես, որ ջուրը ձյունի  
Խամրում է անգույն սառույցի տակ պաղ:

Եվ ես ելնում եմ-Քրիստոս, օգնիր,  
Թաղանքի տակից բեկրեկուն լույսի...  
Իմ նամակները դու դեռ պահպանիր,  
Որ սերունդները դատեն մեր մասին:

Որ հասկանալի, հստակ, պարզորշ  
Երեւան նրանց խիզախ, խոհական,  
Չպետք է, որ քո կյանքում փառավոր  
Խնդիրներ քողնեն կենսագրական:

Երկրային խմիչքն անուշ է բուրում,  
Սերտ են սիրային կապերն անդավ,  
Թող որ երբեւէ դասագրքերում  
Երեխաները անունս կարդան:

Եվ սիրուս ասքին տեղյակ լինելով՝  
Թող որ խորամանկ ժպտան, բայց անշառ...  
Կյանքում ինձ սեր ու հանգիստ չտալով՝  
Գոնե նվիրի՝ դասնագին մի փառք:



Այնպես է թվում, թե ձայնը մարդու  
Ոչ մի ժամանակ աստ չի հնչելու,  
Որ քարեդարյան հողմերն են անդուլ  
Այս սեւ դարպասը ընդմիշտ ծեծելու:

Եվ թվում է ինձ՝ լոկ ես եմ փրկվել  
Այս երկնքի տակ պարզ ու անարցունք,  
Հենց նրա համար, որ առաջինն եմ  
Ցանկացել ըմպել զինին մահացու:



**ԲՈՐՈՏԸ ՄՎՈԹՈՒՄԷ...**  
Վ. ԲՐՅՈՒՏՈՎ

Այն, ինչ անում եմ, բոլորը, անշուշտ, կարող են անել,  
Զրում չեմ խեղդվել, ծարավից նույնպես ես չեմ տոչորվել,  
Եվ ֆինլանդական դուռ չեմ գրավել լեռնականի պես,  
Փոքորկի պահին նույնիսկ եւ ոչ մի նավ չեմ փրկել ես:  
Պառկել ու քնել, վերկենալ, ապա աղքատ ճաշ ուտել,  
Եվ քարի վրա ճամփեզրին ընկած տրտմությամբ նստել,  
Ու դիմավորել հանկարծ վայր ընկնող աստղին երկնային,  
Կամ խոնավացող լեռնոտ բարձրության ամպաշդրային,  
Ժպտալով նրանց՝ զնալ այնտեղ, ուր գահավիժո՞ւմ են,  
Մանավանդ, որ իմ դժվարին բախսի համար գժվո՞ւմ եմ...

Որ, համարվելով, ինձ չի հաջողվում հարմարվել նրան,  
Ինչպես աննահանջ ու նենգ թշնամո՛ զգոն, անվարան,  
Որ սովետական այդ երկու հարյուր միլիոն մարդկանցից,  
Ովքեր ապրում են երկրի օրենքով ու բարեկեցիկ,  
Կճարվի՞ մեկը, որ իր երջանիկ ժա՞մը իսկապես,  
Փոխի իմ դա՞ռն ժամանակի հետ,-  
Ես հարցնում եմ ձեզ:  
Դեն չի՞ շպրտի, արդյոք, ժպիտով հեգնոտ, հավակնոտ,  
Իմ մականունը՝ ինչպես մի օտար ու արմատ քունոտ:  
Օ՛, Տեր իմ Աստված, վերածնիր ինձ մի ա՞յլ հաղթությամբ,  
Եվ ուղեկցիր ինձ տունն իմ կատարյալ ու խաղաղությամբ:



Երբ որ մեկմեկու խոցում, այսպանում  
Մաքրության հասնող կրքով խելահեղ,  
Սենք դեռ տակավին չէինք հասկանում,  
Որ երկու մարդու համար աշխարհը  
Փոքք է ու նեղ...

Եվ որ հիշելը տաճաճնք է սաստիկ,  
Ցավն ուժեղների հրեղեն մի ցավ,  
Գիշերվա մեջ այն հուշում է սրտին  
Հարցնել որտե՞ղ է ընկերն հեռացած...

Իսկ երբ խնկարկման այաց վրայով  
Խմբերգն է թնդում, սպառնում էլի,-  
Նայում են հոգուս համառ, հմայող  
Այն նույն աչքերը անխուսափելի...



Ներս ընկած շողին աղոթում եմ ես,  
Այն շատ է գունատ, նրբին ու ձգված,  
Վաղ առավոտից լրում եմ այնպես,  
Սիրտս-երկփեղկված:  
Լվացարանիս մեջ ալյումինն է  
Կանաչապատվել,  
Շողքը այնպես է խաղում նրա մեջ,  
Որ նայելն անշափ դառնում է ուրախ,  
Այնքան անմեղ ու այնքան հասարակ  
Իրիկնամուտի խաղաղության մեջ:  
Սակայն այդ դատարկ խորանում իմ սուրբ,  
Բառացիորեն տո՞ն է ոսկեվառ  
Եվ ափսոսանք է դառնում ինձ համար...

## ՄԱՐԻՆԱ ՑՎԵՏԱՆԵՎԱ



Աննա Ախմակովային

Օ՛, լացի մուսա, գեղեցկագույնը մուսաների մեջ,  
Օ՛, դու խենք ծնունդ շինչ գիշերների սպիտակափառ,  
Դու սեւ ձյունահողմ ու բուք ես փշում Ռուսիայի վրա,  
Եվ եղեռնական քո ողբն է շաշում մեր մեջ նետի պես:

Եվ մենք խուսափում, խուլ ենք ձեւանում, ափսոս ու ավա՞ղ,-  
Հարյուրավորներ, բյուրավորներ են երդվում քեզ, Աննա,  
Ո՞վ Ախմատովա - մի անուն - ինչպես ի խորոց հոգոց,  
Որ ընկղմվում է մեր ներսն ու խորքը՝ անուն չունեցող:

Թագաղրված ենք մենք վերուստ այնպես, քեզ հետ միասին  
Հողն ենք կոխսկրտում եւ նույն երկինքն է մեր գլխավերեւ,  
Նա, ով մահացու խոցված է քո այդ բախտից վիրավոր,  
Չի շփոթելու մահկանացուին անմահների հետ:

Վառվում է ահա հրով գմբեթն իմ կարկտից երգաձայն,  
Թափառող կույրը փառաբանում է լույսը Սպասսկու...  
-Ես նվիրում եմ քեզ այս կարկուտը իմ զանգակատան,  
Ո՞վ Ախմատովա - եւ սիրտս անբիծ՝ որպես հավելում:



Մահացու զրքերում հաստափոր  
Գայթակղություն չկա իրոք  
Կանանց համար,  
Կանանց՝ երկրագունդն ամբողջ:

Սրտին սիրային հմայադեղ,  
Հմայիչ ամենից հավաստի,  
Կանայք օրորոցից մեկնն  
Մահացու մեղք են սաստիկ:

Այս, հեռու է երկինքը մինչեւ,  
Շուրթերը մոտիկ են մեզի մեջ...  
Սի դատիր, Աստված, ինձ-  
Երկրում այս դու չես եղել իբրեւ կին:



Իմ քննչությունը անսահման – նրանց,  
Որոնցից շուտով պիտի հեռանամ,-  
Կշռադատում եմ ինքս ինձ սրտանց՝  
Գայլի իմ գեղմին ո՞վ կտիրանա...

Ո՞ւմ է հասնելու ծածկոցաշալս,  
Իմ բարակ զուար եւ իմ քերծենին,  
Եվ ում՝ արծաթե ապարանջանս,  
Որ ամբողջովին փիրուզապատ է...

Բոլոր նոթերս, ծաղկունքս բոլոր,  
Որոնց ես անզոր եղա պահպանել...  
Իմ վերջնահանգը նվազուն - եւ դու՝  
Ամենավերջին գիշեր իմ անել:



Չեմ խորհում, վիճում կամ էլ բողոքում,  
Չեմ քնում քնավ,  
Արեւ չեմ տենչում, լուսին կամ թե ծով,  
Ոչ էլ անգամ նավ:

Չեմ զգում տապը այս չորս պատերի,  
Ոչ կանաչն այգու,  
Վաղուց սպասված ու թանկ նվերի  
Չեմ երկրպագում:

Խինդ չի բերում ինձ ոչ առավոտը,  
Ոչ տրամփայի վազքը միալար,-  
Ապրել՝ չտեսած օր ու մոռացած  
Ամսաթիվ ու դար:

## ԱԼՅԱՅԻՆ

Դու լինելու ես անմեղ, նրբազգաց,  
Ոմանց անծանոթ մի գեղեցկուիի,  
Ամազոնուի մի արազընքաց  
Եվ հրապուրիչ մի իշխանուիի:

Եվ շեկ վարսերդ, որ, ահավասիկ,  
Կրելու ես դու որպես սաղավարտ,  
Դու թագուիի ես լինելու պարի  
Եվ ջահելության պոե՞մ անավարտ...

Դու խոցելու ես ոմանց, թագուիի,  
Ծաղրող ծիծաղով՝ սրաշեղը ու սուր,  
Եվ այն ամենը, ինչ թվում է դեռ՝  
Ունենալու ես ոտքերիդ տակ նոսք:

Քեզ հնազանդ են միշտ էլ լինելու  
Եվ լրելու են քո ներկայությամբ,  
Ի՞նձ ես քաշելու քո ողջ եռթյամբ,  
Եվ ինձնից լավ ես երգ հորինելու...

Կկարողանա՞ս, սակայն ով զիտե,  
Հուա տալ, ներս մղել մահացու վիսկին,  
Ինչպես իինա է, ահա, հուա տալիս  
Քո երիտասարդ մայրն առանց խոսրի:



Ոչ ոքի համար հաճելի չինել,  
-Օ՛, սառցի նման լինել անզգա,  
Եվ շիշել այն, թե ինչ է եղել  
Կամ ինչ պիտի զա...

Մոռանալ՝ ինչպես սիրտը փշրվեց,  
Սերտածեց նորից,  
Խոսքերդ, ձայնդ ու երանավետ  
Փայլը վարսերիդ...

Ապարանջան՝ փիրուզյա ու հին,  
Շողշողուն, հրատ,  
Իմ այս լայն, անբիծ եւ իմ այս նրբին  
Բազուկի վրա,

Թե ինչպես հեռվում ուրվանկարվող  
Ամալիկի հրից  
Հանկարծ հայտնվեց ափիս մեջ հանգչող  
Սաղափե զրիչ:

Չիշել ինչպես ցանցի վրայով  
Անցան ոտքերդ,  
Ինչպես էր ինձ հետ համընթաց ճամփով  
Փախչում ստվերդ:

Մոռանալ երկնի կապույտը լազուր,  
Խաղաղ օրերս,  
Չարություններս, հուզումներս զուր,  
Բոլոր երգերս...

Թե իմ կայացած հրաշքը ինչպես  
Քշեց ծիծաղը,-  
Ես՝ վարդագույնս, կլինեմ բոլորից  
Դժգույնն ու պաղը...

Էլ չեմ բացվելու-այդպես էլ պետք է,  
-Օ, հավանաբար,-  
Ոչ մայրամուտի, ոչ էլ հայացքի,  
Ոչ դարի համար...

Ծաղկի համար չեր ձեռքից բաց թողած  
Դարս անսովոր,-  
Ներիր ինձ, հո՞ն իմ, ների՞ր ինձ, Աստված,  
Դարերում բոլոր:

Այդպես էլ պետք է հալչի լուսինն էլ,  
Եվ ձյունը ճաճանչ,  
Երբ որ սլանա այս դարը ջահել,  
Դարը հիասքանչ:



Դե արի, դե եկ-իմ ձայնը՝ համր,  
Մաշվել են նաեւ խոսքերս անլուր,  
Եվ գիտեմ հաստատ՝ ոչ ոքի առջեւ  
Ես արդարացի չեմ էլ լինելու...

Գիտեմ՝ մարտում այս, գրողը տանի,  
Ես չեմ ընկնելու-հիասքա՞նչ վախկոտ,  
Մարտնչելու եմ, իմ լավ պատանի,  
Բայց չե՞մ դառնալու զահի հավակնորդ...

Գուցե քեզ կյանքում չի էլ վիճակվի  
Վեհածնունի իմ երգերն հասկանալ,-  
Կարող ես ինչ-որ մեկի պատճառով  
Նույնիսկ աչքերիս շնայն՝ լ բնավ...

Եվ չկորանալ կրակից իմ վառ,  
Չզգալ ուժերն իմ, ինձ չընդդիմանալ,-  
Այնպիսի դեւ՝ ես խցել իմ մեջ հար,  
Օ, այնպիսի դեւ կամ էլ սատանա...

Բայց ի՞նչ դատաստան կլինի արդարեւ,  
Հոշոտող՝ ինչպես արձակված մի նետ,  
Երբ փայլատակի քո զիսավերեւ  
Երկու հրեղեն թեւեր լուսակերտ...



Աստված անջատվեց ծանր հոգսերից,  
Հանգիստ խաղաղվեց,  
Ահա եւ ժպտաց,  
Ապա՝ արարեց

Հրեշտակներ սուրբ՝ իրենց լուսաշող  
Մարմիններով շիկ,  
Թեւերով խոշոր,-  
Լինում է նաև հրեշտակ անթեւ...

Նրա համար եմ լացել անընդհատ,  
Լալի՛ս եմ էլի,  
Որ սիրում եմ ես Տիրոջի՛ց էլ շատ,  
Հրեշտակներին նրա սիրելի...

**ԴՐԱԽԱՏՈՒՄ**

Հիշողոթյուններն ուսեր են ցնցում չափից ավելի,  
Ես երկրայինի համար եմ լախս դրախտում շքեղ,  
Եվ հին խոսքեր չեմ պահում տակավին մեր ամեն մի նոր  
Հանդիպման համար:

Որտե՞ղ են խմբով հրեշտակները թռչում գեղաշար,  
Ո՞ւր է տավիղը, ո՞ւր է քնարը, խմբերզը մանկանց,  
Ո՞ւր է հանգիստը, ես ամբողջովին պիտի անհանգիստ  
Հայացըդ որսամ:

Եվ քմծիծաղով ճանապարհելով տեսիլքը դրախտի՝  
Մենումիայնակ, անմեղ-պահանջկոտ դեւերի միջեւ  
Ես պիտի երգեմ եւ՝ երկրայինը, եւ՝ երկնայինը՝  
Երգն՝ վ երկրային:

Հիշողոթյուններն ուսեր են ցնցում չափից ավելի,  
Ոչ մի ակնքարք ես արցունքներս չեմ թարցնելու,  
Այստեղ կամ այլուր ո՞չ մի հանդիպում պե՞տք չի այլեւ,  
Եվ դրախտում ել հանդիպման համար չե՞նք արթնանալու:

**ԱՌԱՋԻՆ ԱՐԵԳԱԿ**

Օ՝, դու՝ առաջին արեգակ բացվող բողբոջներից վեր,  
Դրանք-արեւի ներքո-ուղղակի  
Երկու միսացող ու սեւ խառնարան-  
Աղամի երկու աչքերը խոշոր...

Օ՝, առաջին խանդ, օ՝, քոյն առաջին,  
Օձի խայր՝ խրված ձախ կողմից կրծքի,  
Բարձր երկնքից երաշխավորված  
Աղամի հայացք-Եվային հղված...

Վեհ հոգիների ի ծնե խոր վերք,  
Օ՝, դու իմ նախանձ, խանդ իմ վիրավոր,  
Օ՝, Աղամներին դու մքագնող-ամուսին իմ հեզ,  
Դու իմ վաղեմի արեւ թեւավոր...



Սիրելի ընկեր, հեռացած հեռու ծովից էլ անդին,  
-Ահա քեզ վարդեր, խոնարհվիր նրանց,-  
Սիրելի ընկեր, տարած ամենից թանկն ու անգինը  
Երկրի գանձերից:

Հուսախարված եմ, կողոպտված եմ ես,  
Ոչ նամակ ունեմ, ոչ մատանի՝ քեզ հիշելու համար,  
Ի՞նչ անմոռաց է քո թեթևակի աշքաճափչը,  
Չո ապշեցուցիչ դեմքը դարերում:

Ի՞նչ անմոռաց է քո աղաչական, ուշադիր հառած  
Հայացքը, որ ես ավելի մոտիկ նստեմ քո կողքին,  
Եվ քո ժպիտը՝ Մեծ հեռաստանից,-  
Շողոքորբույրուն մեռնող հայացքի...

Սիրելի ընկեր, դու ելած հավերժ մի նավարկության,  
-Կանաչ բլուրներ, խութերի միջեւ բլուրներ ուրիշ,-  
Աղոքիր ինձ համար դրախտի շքեղ նավահանգստում,  
Այնպես աղոքիր, ուր նավաստիներ չինեն ուրիշ...



Ախոյան դու իմ, ինչ-որ ժամանակ  
Կզամ քեզ մոտ մի գիշեր լուսնավետ,  
Երբ որ գորտերը ճահճում կռկուան,  
Եվ կարեկցանքից կանայք խելառվեն:

Եվ զորովագութ դարի բարախով,  
Քո բարթիշների հմայրով խնդրուն,  
Ասելու եմ քեզ՝ ո՞չ թե մարդ եմ ես,  
Այլ երազ, որ քիչ առաջ տեսար դու...

Սփոփիր, կասեմ, ինձ միանգամից,  
Իմ սրտում մեկը խփում է մեխեր,  
Եվ ասելու եմ, որ թա՛րմ է քամին,  
Որ վա՛ռ են աստղերն իմ գլխավերեւ...



Իմ ինչին է պետք ամպ ու տափաստան՝  
Այս արեւի տակ իրենց լայնությամբ,-  
Ես ճորտ եմ, եւ իմ շփրած շղթան՝  
Հեռու Սիրիի բարեհաճությամբ...

Է՞յ, դուք, որ նորից ձեզ բրիսկացնել,  
Խոնարհությունս՝ մեծ քաղաքներին,-  
Չեմ վաճառի այս տանջարանն անել  
Հանուն իմ բոլոր ազատ օրերի...

Ողջու՞յն քեզ, Կիեւ՝ աստծո քաղաք,  
Ողջույնս եւ քեզ՝ Մոսկվա զահանիստ,  
Խոնարհությունս՝ գործերիս խաղաղ,  
Չեր արյունակից զավակն եմ հանգիստ:

Չի զարքնի, դյութվի ձեր կախարդանքով  
Հանգուցյալը իր դագաղի հանգույն,-  
Հմայել է իր լույսի դյութանքով  
Ինձ հանքահատը՝ վեհ ու գերագույն:

**ԴՄԻՏՐԻ ՉԻՍՅԱԿ**  
*(Ուկրաինա)*



Ծովահարսի երեկոյան գետախորշ-  
Վերադարձրու, վերադարձի՞ր-  
Սեղուները, խճանքենին երկնահար  
Քեզ արցունքով են ծաղկել:

Ինչ-որ մեկի երգը կարապի  
Կանհետանա ու չի անհետանա-  
Մթնժոռում կմոռացվի  
Ճերմակ թեւաբախումով:

Կիյուսվի մանվածքը ստվերների-  
Կրոնվի ու չի բռնվի-  
Շուտով լույսի կվերածվի  
Եվ դռնակը կճռու:

Հեշտ է քոչել երգի հետքով՝  
Սինչեւ տունը սպիտակ,-  
Վերջին անգամ կապույտների հետ  
Քնքշանքով զրկախառնվիր...



Իմ լրակյաց ընկերող կվերադառնա իր մոտ՝ օտար ու հեռավոր ավան,  
Իզուր եմ որոնում նրա հայացքը փողոցներում եւ իզուր  
Տերեւներ եմ պոկտում, որ ամառն ավարտվի շուտ,-  
Խաղաղ նստում է համբ սառնամանիքը միգամած քաղաքի վրա,  
Խաղաղ կուրացել է լրակյաց ամռան խոսքը,

Հանգիստ քայլել ամայության մեջ՝ ժպիտով մեղմ ու դառն,-  
Լրակյաց իմ ընկերը վերադարձավ իր մոտ՝ օտար ու հեռավոր ավան:

## ՄՈՏԻՎ

Դու գալիս ես ակացիաների ծաղկումի հետ:  
Մայիսյան գիշերը չի լսվում, չի լսվում-  
Նրին ձեռքերդ կրակով են հրապուրում:

Դու գալիս ես ծաղկող ակացիաների հետքով՝  
Մայիսյան գիշերվա արձագանքներ առած:-  
Խոսեցին կրակները բեժ մոմերով:

Քամին կլովի, բայց սոխակներն են անհանգիստ,  
Պարզվում են ճերմակ ձեռքերդ սպիտակ կիսալուսնին,  
Եվ ծաղկումը ակացիաների անցնում է քո միջով...

## ՎԵՐԱԴԱՐՁ

Ընկավ կաթիլ՝ ինչպես ճառագայթ գիշերվա մեջ-  
Քաղաքների վրա՝ գորշությունից էլ գորշ,  
Սառնաղող փայլ-աղից ու խավարից...  
Ըն աչքերի մեջ կարդացի՝ վերադարձ:

Երբ անկման մեջ այգիները երեւակվեն,  
Երբ արարչական հասմիկը բուրի,  
Երբ կույրերը մեր ետեսից հոգեհաց մատուցեն,  
Իսկ մենք ձեռքերով քարը հեռու վանենք  
Եվ տարրալուծվենք ամռան երեկոներում-  
Ըն աչքերի մեջ կկարդամ՝ վերադարձ:



Խաղողի վազը հասել է արահետը,-  
Մտիր ոսկերիզ վազերի մեջ,  
Քեզ համար հավերժ է օրը մաքուր,-  
Հեշտ է նայել Դնեալի փայլուն աչքերին  
Եվ արեւով լացել թիլ քամիներում,-  
Եվ արյունը կվերածվի շաքարի:



Դու նորից կվերադառնաս սիրելի այգին,  
Կարծես՝ դարձ շրջանս յուր, ասես՝ տուն այցի,  
Եվ նորից քո հետքից աննահանջ՝  
Բյուրեղապակյա ձայն, խաղաղ տերեւաթափ:

Ջրերը խմել են ստվերները ոսկի,  
Եվ ոսկե ստվերով դու ջուրն ես ըմպել,-  
Բյուրեղապակյա ձայն՝ ասես տերեւաթափ,  
Արարագործում է սառը լուրջուն:

Դեռեւս ոչ բոլոր մոմերն են այրվում,  
Դեռեւս ոչ բոլոր փողերն են դադրել որոտալուց:  
Իսկ Օրը կզա: Բայց վաղ լուսաբացին  
Քեզնով կծաղկեմ ու կլուսավորվեմ,  
Եվ ձայնս ասես տերեւաթափ է լուս:



Երեկոն՝ խաղաղ ու անուշ,  
Բայց շտապում է ինձ մոտ  
Ճերմակ-ճերմակ քայլով,  
Կապույտ լրության մեջ...

Եվ չզգալ, չտեսնել-  
Որտեղ է կողոպտիչը:  
Շողարձակում է ջուրը-  
Ուկի, ջահել:  
Իսկ դու մի ողբա-  
Սիրիր, սիրիր  
Կցոլցլա ջուրը  
Ջահել ու ջահել...

**ԵԼԵՆԱ ԻՍԱԿԵՎԱ**  
*(Մուկլա)*



Դու ինձ հիրավի կարող ես պատժել,  
Եթե որոշես մեղքիս չափը ճիշտ,-  
Սովորել էի էն զլխից ստել,  
Եվ միայն հետո հավատալ ընդմիշտ:

Իսկ մինչ այդ քանի-քանի տարիներ,  
Հեշտ ու անշտապ ապրել եմ այնպես,  
Չեի հավատում Աստծուն իմ տեր,  
Քանի որ երբեք մե՞նք չունեի ես...



Ոնց պատասխան տամ ես այդ դարձվածքին՝  
Սի համազարկով նետված վերջապես,  
«Դու կքայլեի՞ր մինչ ծայրն աշխարհի,  
Թե հանկարծակի կանչեի ես քեզ»:

Հիմա, սիրելիս, ո՞նց բացատրել,  
Որ չնայես ինձ դու մռայլադեմ,-  
Որ զնացել եմ այնտեղ ես արդեն,  
Կանգնել եմ երկար ու վերադարձել...



Մոռացած քոլոր իրողություններն՝  
Ես լսում էի իմ դասախոսին,-  
Ողիսեւսին եմ ոչ թե սիրում ես,  
Այլ հեճաց Հեկտորին:  
Եվ...որովհետեւ կործանվում է նա,  
Ունի կին, որդի,  
Եվ ոչ թե այնտեղ՝ ինչ-որ Կալիպսա...  
Կանանց ետեւից ճիմով քայլելիս՝  
Չես խեղդվի ջրում,  
Ողիսեւսն անշուշտ դուրս է լողալու,  
Նա դուրս կարծնի, կվերադառնա  
Ոչ այն պատճառով,  
Որ նրա համար թաճկ է իրակեն,  
Այլ որովհետեւ իմաստը քոլոր դիակառքերի,-  
Վերադառնալու մեջ է միմիայն:  
Եվ ես դուրս գալով իմ լսարանից՝  
Իջնող ձյան տակ ինձ դիմավորող  
Տղային ոտից-զլուխ չափեցի մի հիացմոնքով:  
Նա բոլորովին Հեկտոր չէր,  
Այլ մի իրակցի տղա,  
Որին գիտեի ես իրականում պատանությունից:  
Կյանքն առկայծում է պատկերիկներով-ինչպես առազաստ,  
Ոչինչ մշտական՝ հետաքրքիր չէ,  
Հետաքրքիր է այն, ինչ կորցնում ես, գտնում վերստին...  
Ես հիմար էի եւ իմ վեկտորը չէի պահպանում:  
Չգիտեի, որ ինչքան էլ տանջվես, տառապես ինչքան,  
Կկորցնես ընդմիշտ միայն Հեկտորին,  
Իսկ Ողիսեւսին՝ ինչքան էլ փորձես,  
Ինչքան էլ ձգտես՝ չե՞ս կորցնելու...



Կանգնել եմ, ահա, Նիդա կղզու  
Ամենից բարձր բլրի գագաթին:  
Զախից-քաղցրահամ ծովածոցի ջուր,  
Աջից-ծովային ջուր է աղահամ:  
Զախից – մի ուրիշ ափ է երեւում,  
Աջից- Բալթիկ ծով՝ մինչեւ հորիզոն:  
Զգում է՝ վազել, նետվել ծովի մեջ:-  
Ինչո՞ւ է մեզ միշտ ձգում ոչ այնտեղ,  
Ուր հագենում է ծարավը եւ ուր՝  
Ափն է երեւում,-  
Այլ ուր ծարավը անհազուրդ է միշտ  
Եվ չունի սահման…



Պատաճի էի ու անհարկավոր:  
Աղոթում էի «Տուր ինձ նրան, Տեր»:  
Զյունը իջնում էր դանդաղ, լողալով՝  
Դեպի ապագան, պատուհանից ներս…  
Սակայն չէ՞ որ մի քամահրանք էր դա:  
Եվ տղամարդը քմծիծաղում էր  
Տիրակալությամբ իր ինքննավստահ,  
Շարժումը նրա դանդաղ էր, հանգիստ:  
Այժմ էլ, ահա, ձյունը խենքորեն տեղում է նորից:  
Որ չես կասկածի,  
Թե նվաճել ես մարտերը բոլոր,-  
Ես նրա կյանքի նվերն եմ միակ…  
Սակայն կորսված վաղո՞ւց, շատ վաղուց:



Ես մոռացել եմ հնչյուններն իսպառ,  
Չի լինում խոսքերն իրարու հյուսել,  
Անջատման այսքան տարիներ հետո  
Ես ի՞նչ կարող եմ հիմա քեզ ասել:

Պտտվո՞ւմ է իմ գլուխը, արդյոք,  
Ինչպես այսուհետ նայես ինձ սրտանց  
Այս դառն կյանքի ու ցավից հետո  
Եվ տարիներ անց...

Այլեւս ներում մի հայցիր ինձնից,  
Ես քեզ հեշտությամբ կարող եմ ներել,  
Քանի որ ես իմ այս ապրումներից  
Եվ հուզումներից ետ եմ սովորել:

Սրտիս մեջ՝ ոչ մի այրում ու դողոց,  
Տողերիս միջեւ-այլարանություն,  
Գլխապտույտ է միայն անողոք  
Եվ մեկ էլ ինչ-որ սրտախառնություն:

Բայց անջատման մեջ-դիմացկուն ես դու,  
Տարրալուծվելով ծեզի մեջ մշուշ,  
Այս երկրի վրա մեր կյանքից հետո  
Մենք այդ ամենը կպարզենք անշուշ:



Չեմ փորձում քնավ նայել իմ բախտին  
Աստղերի միջով ու երազների,  
Գիտեմ, որ ինչ էլ լինի՝ երբեւէ  
Ամեն ինչ լավ է լինելու եւ ջինջ:  
Եվ ես կտեսնեմ լույսը հեռավոր,  
Եվ տուն, եւ ծիծառ՝ սալորենոց վեր,  
Կըմբոնեմ, որ ցավ գոյություն չունի,  
Այլ ընդունակ չենք ուրախ լինելու:  
Եվ տերեւներին ցողը կպարի:  
Ներելու են ինձ, ոնց ես եմ ներել,  
Բոլորը ինձ հետ կմեկնեն այնտեղ,  
Ովքեր որ այստեղ չեն տեղավորվում...

Եվ արցունքներս՝ ոնց անձրեւ հնչուն,  
Կհոսեն դեպի դաշտ ու ջրատար,  
Եվ Դուք, որ այնպես սիրում էիք ինձ,  
Այդպես էլ դաժան չեք վարվի ինձ հետ:

## ՎԱՌԼԱՄ ՇԱԼԱՎՈՎ



Քարանձավային փոշով, բորբոսով  
Կեղտոտված են իմ քանաստեղծությունները  
Նրանք օծված են հարության լույսով  
Քչախոս են եւ մեղմ ու ցածրածայն:

Գազանների պես աճեցին արագ  
Եվ ջրօրինների ձյունով օծվեցին  
Սառնաշունչ միզոս, խոնավ ճահիճում,  
Բայց այնուհանդերձ նրանք ապրեցին:

Նախնիններով չեն պարծենում բնավ,  
Գործ չունեն նոյնինսկ սերունդների հետ,  
Եվ վանդակներում իրենց քարեղեն  
Գոհ են ապրելու տարիներ ի վեր:

Այժմ արթնացած ճնճղուկների  
Ոչ սոխակային ճռվողյուններում,  
Ճշում են եւ միշտ թվում է նրանց՝  
Հարմարակյաց են քարանձավներում:

Համեմատության համար կմերի  
Նա, ով լավ գիտի կյանքս անողորմ՝  
Վերցրած կյանքից կենդանիների,  
Ողջախոհության սահմանից այն կողմ:



Ես միայնակ եմ, աղքատ ու տկլոր,  
Զրկված կրակից,  
Մանուշակագույն մուժ է բեւենի  
Շուրջ ուղղակի:

Ես վստահում եմ գունատ մշուշին  
Բոլոր երգերս,  
Հազիվ թե, հազիվ հիշում են նրանք  
Անթիվ մեղքերս:

Սառնամանիքն է խուժում թոքերս,  
Գոցում քերանս,  
Շիթերն արցունքիս ուղղակի քարեր,  
Քրտինքս սառն:

Եվ ես ասում եմ՝ ահա երգերն իմ,  
Գոչում եմ նրանց,  
Մինչդեռ ծառերը մերկ են, խլականց,  
Քիշ-ինչ ահավոր:

Լոկ արձագանքն է հնչում լեռների  
Ունկերիս մեջ սառ,  
Եվ նորից հեշտ է դառնում ողջ կրծքով  
Շնչելն ինձ համար:



Դու մի դաստիր մեզ այրքան խստաբար,  
Լավ է, որ լինես դու ներող ու մեղմ,  
Մենք գտնելու ենք ճանապարհը մեր,  
Գտնելու ենք մեր արահետը նեղ:

Հետապնդելով քարայծամներին,  
Մենք հասնելու ենք ամպերին ճերմակ,  
Սակայն ձեռք տալու համար ամպերին  
Կամրջակ է պետք բանաստեղծական:

Մենք այն կկերտենք բանաստեղծությամբ,  
Այնպես հուսալի եւ այնքան ամուր,  
Նրանք այնքան են թերեւ ծանրությամբ,  
Որ հեշտությամբ էլ ճոճվում են քամուց:

Եվ քայլ անելով ճոճվող կամրջով՝  
Մենք երդվելու ենք միայն այն մասին,  
Որ ոչ մի նախանձ, ոչ մի քեն թունոտ,  
Մենք չենք տանելու երկինք անբասիր:



Կլրեն վերջին ձյունաբքերը,  
Եվ, գարնան առջեւ ճամփա բացելով,  
Հարավի հրով շիկնած ձեռքերդ  
Դու մեկնելու ես ինձ մինչեւ հյուսիս:

Քո ամբողջովին հոգացող տեսքից,  
Որ երեւում է հատկապես երկրից,  
Կարապները պարզ ֆոնին երկնքի  
Գծագրում են նկարներն Էվկլիդի:

Խոնավ ամպերով արդեն մաքրելով  
Գծագրերը հեռուներ չվող,  
Ամրող երկինքն է ծայրից ծայր ձգում  
Անձրեւը ողողող:



Լուսինը՝ ասես ձյունաքույր մի ճայ,  
Ներս թռավ ինձ մոտ բաց պատուհանով,  
Թեւաբախեց իմ մահճակալից վեր,  
Ճանկոտեց պատերն իր մագիսներով:

Եվ թիրտաց իմ ճերմակ էջերում  
Ահից մարդկային իմ կացարանի,  
Կեսզիշերային թռչնակս փոքրիկ,  
Շքեղությունս՝ անտուն ու անտեր:



Դու պահպանվում ես, ճերմակ իմ կարապ,  
Իմ ծնողների զորեղ քեւերում,  
Թռիր երկինքներ, թռիր վեհերոտ,  
Դու դեռ չես եղել երբեք Հարավում:

Գովերգիր այնտեղ գույներն հյուսիսի,  
Հայրենիքը քո ճերմակ, սաղցապատ,  
Ուր ոչ մի ծաղիկ, մոլախոտ նույնիսկ  
Չի աճում բնավ հողում հարազատ:

Եվ շփոթելով իմաստն ամիսների,  
Անցիր հունվարին կրակահարույց,  
Դու չգիտես թե ում լրաբերն ես,  
Թոշող օրացույց:

Դու մի թռչո՞ւն ես, թե՞ լեռ սաղցային,  
Սակայն թռչելով երկիր ցանկացած  
Խոստանում ես դու մի կարապային  
Ու գարնանային ցնծուն խրախճանք:

Եվ հետեւելով թռիչքներին քո,  
Գուշակելով որ մոտ է աշունը,  
Սի անձրեւային հոգոսվ ծանրաբեռ,  
Ամպերն են պատում երկինքը վազքով:



Ես եղանակն եմ մոռացել մանկութ,  
Տաք քամիները ու փափուկ ձյունը,  
Աշխարհում չկա էլ ոչ մի միջոց  
Վերադարձնելու իմ մանկությունը:

Ավաղ, այնքան քիչ բան է մնացել  
Հիշողության մեջ իմ խեղճ ու կրակ,  
Տերեփուկների ճանապարհները՝  
Մանկութ օրերի արեւում հրակ:

Եվ համը թթվաշ հատապտուղի,  
Եվ զիհիների թփուկները ցից,  
Թառամող ծաղկանց բուրմունքը տհաճ  
Ինչպես անդուր հոտ հիվանդանոցի:

Ես այս ամենը ինձ հետ կտանեմ,  
Ուր եր որ լինեմ՝ կսիրեմ նրանց,  
Եվ նրանցով իմ սիրտը կսփոփեմ,  
Երբ հոգիս լցվի դառնությամբ անանց:



Ե՞յ, գեղեցկուիհի, լսիր ինձ, կանգ առ,  
Այլեւս չանցնես թփերով այս խառն:

Այս թփուտներում անանց ցեխս է, տես,  
Նույնիսկ իշխանն էլ կիսրվի այստեղ:

Գուցե ինչ-ոք տեղ, թեպետ լուր չունեմ,  
Դեռ թագավորներ գոյություն ունեն:

Գուցե աղջիկ ես դու թագավորի,  
Գուցե եւ ունես օգնության կարիք:

Ինձ չի կարելի մի կողմ քաշվելը,  
Երբ հանդիպել եք դու եւ զիշերը:

Գուցե աղքատ ես, հատկապես՝ քաղցած,  
Եվ զինուց չես դու օրորվում այդպես:

Գուցե եւ ոչ մի հարազատ չունես  
Կամ նրանք ոչ մի խոճնտանք չունեն:

Որ քողել են քեզ մեն ու միայնակ  
Այս լուսիքյան մեջ ահեղ, դժմուակ:

Խորունկ է խորքը մեր ծմակների,  
Ծանոթ չեմ նրանց մուր կածաներին:



Ոտնահետքերդ այս տայգայական կածանի վրա  
Չեմ թողնի քամին ավլի ու տանի,  
Կպահապանի ավազն աննշան, սակայն կենդանի  
Դրոշմը նրանց իմ ճամփի վրա:

Ինչ-որ ժամանակ կվերահիշեմ քայլվածքդ թեթև,  
Ժպիտդ հիվանդ,  
Կփառաբանեմ հիշողությանս՝ հայտնության համար  
Այս հեռու երկրի՝ վաղուց մոռացված...



Տան հոտն առնելով՝ փոնչում է ձին,  
Ուրբերը հազիվ-հազիվ քարշ տալով,  
Կարծես թե ճամփին նկարել են մեզ  
Նկարահանող «Ուարիդ» խցիկով:

Քայլում ենք հոգնած, քայլում լուռումունջ,  
Խուլ ու համր ենք մենք ամբողջովին,  
Գլխով հրում ենք մեկմեկու մեջրին,  
Քանի տակավին կենդանի ենք մենք...

Անհնարին է հայացքս թեքել  
Պատուհաներին տաք կացարանի,  
Ավելի լավ է՝ մեռած լինեի  
Սանդղամուտքով ինձ ներս տանեին  
Երբեմնի ինչ-որ մի ծանոթի մոտ...



Դու կարձակես շիկ եղջերուներին  
Եվ քո ափերը կառնես կրակին,  
Ծունկի իջնելով խարույկի առջեւ,  
Դու երգեր կերպես նվիրված նրան:

Եվ դու կաղորթես խորունկ լռությամբ,  
Սառնամանիքներ տեսած մարդու պես,  
Եվ ոչ ոք այստեղ քո ներկայությամբ  
Դիտողություններ չի անելու քեզ:



Ես պահպանում եմ ոնց այրված կտավ  
Նկարագիրս, փայլս արտաքին,  
Ապրում մարդկանց մեջ խիղճս չեմ պղծում,  
Եվ պահպանում եմ ուղեղս հստակ:

Այն, ինչ թվում էր այնքան հոյակապ,  
Վաղուց թել առ թել կրակն է այրել,  
Զեռք մեկնիր դու ինձ-կթափվեմ մոխրի պես,  
Անձեւ, անհմաստ, ամորֆ փոշու պես:

ρ υ ρ ψ Φ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԳՅՈՒՂԻՑ

Վերջերս գյուղից նամակներ եմ ստանում «Դոն-Կիխոտ» սպորտագրությամբ: Չարմանալին ոչ այնքան դրանց բովանդակությունն է, որքան այդ գրաքրինակ պոտրազությունը: Կաևկած չունեն, որ այն կեղծանուն է, որի դրակ քաքնվում է ինչ-որ մեկը՝ հավանաբար նպակակալ ունենալով շմարձնել իր խկական անուն-ազգանունը: Ինչքան հայրնի է՝ Արցախում ոչ ոք իր երեխային այդ անվամբ չի կնքել ու չի էլ կնքի: Ինչեւէ, իր գործն է, Տերև իր հենք: Կարեւորն այն է, որ այդ նամակներն ինչ հուզում են իրենց անկեղծությամբ, անմիշականությամբ ու ճշմարգությամբ: Դրանք համեմված են նաեւ մի այնպիսի հումորով, որ խածելուց ոչ թե ցավ, այլ մի հաճելի մրմուռ են պատճառում եւ սրիպում մրածել ինչ-ինչ բաների մասին: Հեղինակը դրանք, անձնական քննուրով հանդերձ, միաժամանակ համարում է «քաց նամակներ» եւ զրնում, որ անզամ են կարող եմ դրանք հրապարակել: Եվ այսպիս...

## ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Հարգելի բարեկամ, անունդ էլ մոռացել եմ, ուստի խնդրում եմ քո ներողամսությունը՝ հույս ունենալով, որ առաջին խև նամակիս պատասխանում այն կրաշխես ինձ: Յանկալի է, իհարկե, բայց հոգ չէ, հակառակ դեպքում կշարունակեմ դիմել այնպես, ինչպես սկսել եմ այս նամակը: Դրանից ոչինչ չի տուժի, պարզապես կարող է տարօրինակ քվալ, թե ինչ գործ ունեմ քեզ հետ եւ ինչու եմ խցկվում քո կյանքի մեջ: Բանը նրանում է, որ ես հետեւում եմ քեզ, ծանոք եմ քո «Գյուղական էսքիզներին»: Տեղյակ եմ նաեւ, որ դրանց համար անզամ մրցանակ ես շահել: Քարով վայելես: Երեւի այսքանից հետո էլ կցանկանայիր իմանալ կարծիքս «էսքիզների» մասին: Ինչու չէ՝ խնդրում եմ միայն հավակնոտության մեջ չմեղադրես ինձ: Զո էսքիզներն ընդամենը ընթերցվում են, հասկան՞ո՞ւմ ես՝ ընդամենը... եւ

անգամ ուշադրություն են հրավիրում քո ստորագրության վրա: Ինձ դուք է գալիս, որ դու այն հարգում ես: Ափսոսում եմ միայն, որ դու ընդամենը խայրում ես, ոչ թե կծում, ինչպես պատանության տարիներին մի օր մեր Բողար շունն այնպիս կծեց քո ազդրից, ջիներն այնքան խրեց ջլերիդ մեջ, որ տատդ մի ամիս շարունակ լորու հատիկներ դնելով շան ժանիքների տեղը՝ հազիկ հասցրեց բուժել քեզ: Երեսի հիշում ես, որ կատաղության դեմ էլ սրսկում արին՝ ենքաղություվ, թե մեր Բողարը կարող է կատաղած լինել...

Իմիջայլոց, չգիտեմ՝ բուժման այդ միջոցի մասին այսօր որեւէ մեկը պատկերացում ունի<sup>7</sup>, թե՝<sup>8</sup> տատդ այդ գաղտնիքն իր հետ տարավ էն աշխարհը: Ողորմի՝ նրան:

Սակայն այս ամենը մի կողմ բողնենք՝ անցնենք բուն նյութին: Զգում եմ, որ գյուղական թեման ծանոք է քեզ, հուզում է, բայց եւ պատկերացնելով, որ այն ննան է անձայր ու անհատակ ծովի, բվում է, թե դու լորում ես մակերեսին: Խի՞ստ եմ վնաս չունի: Ախր ներկայիս գյուղատնտեսությունը, գյուղ ու գյուղացին խնդիրներ ու հոգսեր ունեն: Անթիվ են դրանց ստորգետնյա խոր ու խորշերը: Չեմ կարծում, թե դրանք ավելի պարզ ու խորությամբ պատկերացնելու չի օգնի գյուղնախարարի հայտնի հեռուտահարցագրույցը, եթե լսել ես: Ասեմ՝ ինձ շատ դուք է եկել, երեսում է՝ մարդը մտավորական է, մտածել գիտե, բայց մի այնպիսի քեզ է վերցնում ուսերին՝ վախենամ՝ շիմանա...»

Գյուղնախարարը գտնում է, որ գյուղատնտեսության ներկայիս անմիջիքար վիճակը բարելավելու համար պետք է սկսել՝ տնտեսությունների խոշորացումից: Կարծես չգիտե, որ նախկինում, ախր, այդ տնտեսությունները խոշոր էին, հարուստ: Գիտե եւ ցավով էլ նշում է, թե ոնց քանդեցին, քարատակ արին, փոշեցրին: Այսինքն, իհմա մնում է ամեն ինչ սկսել զրոյից: Դե, դու հու հասկանում ես, որ դժվար է լինելու, անասելի դժվար... Ստացվում է՝ շենք ու շնորհքով շինած տունդ քանդեն, հողահատակ անեն, եղած-չեղածը տանեն՝ տակին բան չքողնելով, եւ սկսես նույն տունը նորից կառուցել: Կասուցե՞ս, ինչպես չէ. Միջոցներ՝ որտեղի՞ց: Իսկ քանդողը գնա առորդիառոք քեֆ անի ու մեկը չինի, ծեռքը զարկի մռութին, ասի՝ ախաբեր, եղ ո՞նց է, որ ստամոքսի խանգարում չես ունենում, ախր, կերածդ

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

աղի ու լեղի է... Է՞հ, լավ է՝, հետքը քշո՞ղն ով է, հեռու չգնանք, դառնանք մեր դարդ ու ցավին...

Երեկ վերեւներից մի քանի հոգի էին եկել զյուղ: Այլոց թվում ինձ էլ կանչեցին համայնքապետարան: Ներս մտնելուն պես նրանք գրեթե գրոհեցին վրաս:

-Սի ասա՝ տեսնենք՝ ինչո՞ւ հողի հարկը, տուրքերդ, վարկդ չես մարում:

Մտածեցի՝ ինչ ասեմ, որ լավ լինի: Ժամանակ շահելու նպատակով խոսքս կտուրը զցեցի.

-Ներեցեք, բայց ձեր մեջ ո՞վ է մեծավորը:

Մեկը թե՝

-Ես... բայց ի՞նչ նշանակություն ունի, պարտքերդ պիտի տա՞ն, թե ոչ...  
-Որտեղի՞ց...

-Ինչպե՞ս թե: Վար ու ցանք չե՞ս արել...

-Վարել եմ, ցանել ու... չեմ հնձել: Երաշտը՝ մի կողմից, կրծողները՝ մյուս...

-Ուրեմն՝ ի՞նչ...

-Գիտե՞ք՝ ինչ, ընկեր մեծավոր,- ասում եմ,- մեր զյուղում մի Աննիբար կար, ողորմի հոգուն, նման դեպքերում ասում էր՝ մեռնեմ օրենքին, օրենքից չես փախչի, կոմենանք՝ կտանք:

«Մեծավորները» նայեցին իրար երեսի ու ծիծաղեցին: Կատակը՝ կատակ, ամա դե էս անգամ լավ պրծա: Ասում եմ՝ «Էս անգամ», որովհետեւ պարտքից արծումն չի լինի, մինչեւ տակից դրւոս չգաս: Պարտքը նման է շան հաշողի, կհաչի այնքան, մինչեւ չհաչելը... Հույս ունեմ էս տարի ձենք կկտրի: Հրե՞ն, արտերս լավ թփականել են, կարծես սանրած լինեն: Էդ ինչից է՝ նրանից, որ իմ սերմացուն տեղական էր ու սեփական: Ժամանակին ցանել էի, տեղումներն էլ, օրինյալ լինի Աստված, ժամանակին էին: Էլ վախ չունեմ: Ամա դե՝ ասում եմ, երկյուղով նայում երկնքին՝ վա՞յ թե էն անտերը... Երեսի կրահում ես, որ խոսքս կարկուտի մասին է: Տերը մի արասցե, թե չեկավ՝ պարտքի հերը կանիծեմ... Ավելորդ շիամարեն ու նաեւ նկատել տամ, որ իմ արտերի հարեւանությամբ Հրայրի, Բենիկի, Մարտիկի ու այլոց արտերը լդար են, տեղ-տեղ՝ քոսակ: Հոգուս մեղք չանեմ»

ցավու՞մ եմ, տակ եմ տալիս, զլոյն ու հանգում էն մտքին, թե ուս հավանաբար սերմացուից եր: Բանը նրանում է, որ անցյալ տարի մկնանման կրծողները տոննաներով հացահատիկ էին փչացրել: Որպես բերքի կորսադի հատուցում՝ պետությունը մի-մի պարկ սերմացու էր բաժանել: Ես այդ սերմացուն շցանեցի, որիշները ցանեցին, եւ՝ ահա արդյունքը...

Խելքի պտուկնե՞ր, ե՞րբ եք զիսի ընկնելու, որ արտասահմաններից ներմուծած սերմացուն մեր հողերը դժկամությամբ են ընդունում: Դրանից բացի էլ՝ նրանք սովոր չեն ողորմության...

Եսախի բանե՞ր, հարգելի բարեկամ, զլովստ էլ ցավեցնում եմ: Բան չկա, կցավի, կցավի, ու ցավը մի հետք կրողնի... Են էի ուզում ասել՝ պարտքերս մարելու մի ուրիշ հույս էլ ունեմ՝ խաղողը: Դրանից տասնմեկ արին ունեմ, ամեն մեկը ութուն մետք երկարությամբ, հազար հարյուր վազ: Վազից՝ միջինը երեք կիլոգրամ, թե հաշվենք՝ մի տոննայից ավել: Հաշվարկ է էլի, անում եմ, թեպես ճտերն աշնանն են հաշվում: Կարծում եմ՝ հուսախար չեմ լինի: Ժամանակին վիսրեցրել եմ, էտել կորակապն արել, անս դեռ չեմ ոռոգել: Ասում են՝ հերթդ գա, ջուր կտանք, կոռոգես, բայց թե հերքս երք է զալո՛ հայտնի չէ: Իմ հաշվով՝ անցել է: Գիտե՞ս ինչ, մեր գյուղում իման նորագույն հապավում է՝ ԽԾԲ: Վերծանե՞ն, թե՞ պետք չէ: Կիսականաս, չեմ կարծում, թե հայոց լեզվին չես տիրապետում... Թե ջուրը տան, ոռոգեմ՝ բարձր բերք կստանամ: Մնում է այժմվանից մտածեմ սրսկումների համար թունաքիմիկատներ ծերք բերելու մասին: Ինձ այնոք կինի մի տասը հազար դրամ: Հավանաբար, պարտք անեմ, բան չկա, պարտքի վրա՝ պարտք: Մեկ է, տալու եմ, չէ՞ իհարկե՛ աշնանը... երք ճտերը հաշվեմ: Հույս ունեմ լակ ձվեր չեն լինի... Առայժմ՝ այսքանը:

**Հարգանքներով  
Դռն-Կիխով  
2002թ.**

### ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Հարգելի բարեկամ, ստացա առաջին նամակիս պատասխանոյ: Չես կարող պատկերացնել, թե ինչքան եմ շոյված նվաստիս նկատմամբ քո ուշադրությունից: Ինչ էլ լինի՝ մեր մանկության եւ պատանության մտերմությունից մի բան մնացել է մեջոյ, ինչպես աշակերտական մեր դասագրքերում մնացած անմոռուկների չորացած թերթիկների՝ տակավին պահպանվող բուրմունք: Ուրախ եմ, որ քո «էսքիզների» մասին իմ դիտողություններից չես նեղացել, քո ասելով՝ նոյնիսկ, «գոհունակությամբ» ես ընդունել: Մի քանի անգամ կարդացի հումորով բրորացող նամակդ, եւ շտեսնված հրճվաճք պատճառեց ինձ մանավանդ անունդ՝ Սանչո: Սանչո Պանսա: Այ թե նոկաստ էր հա՛, ա՛յ թե ինչպիսի ծաղրասերն ես եղել: Ուրեմն, եթե ես Դոն-Կիխոտն եմ եղել, դու էլ որոշել ես հանդես գալ որպես Սանչո<sup>8</sup>: Ես, իրոք, Դոն-Կիխոտն եմ, դա իմ իսկական անունն է: Բայց դու ինչո՞ւ ես բարձրում Սանչոյի թիկունքում... Ինչեւ, ընդունենք, որ դու Սանչոն ես, ես՝ Դոն-Կիխոտը, ես ... մեր հաշիվը դարձավ մեկ-զրո՝ հոգուտ Սանչոյի:

Եվ այսպես, սիրելի Սանչո, ես նոր հասկացա, թե ինչպես այլեւս չպետք է գրես կամ այսուհետեւ ինչպես կարելի է գրել, երբ հանկարծ տեսա մոշե ցանկապատից վեր խոյացող ծաղկած սալորենին: Շերմակ, կարնաթյուր ծաղիկների բուք էր ցանկապատի վրա, բվկում էր սալորենին մեղուների պարսից ու կարծես ձյան փաթիլներ էին տեղում մոշի մուգ կանաչ տերեւներին, որ խոցուտվում են ապակեփայլ ու սուր փշերից: Սալորենու բունք չէր երեւում, կորել էր մոշուտի մեջ եւ միայն զմբերաձեւ, ներմակափառ գլուխն էր, որպես մի հսկայական ծաղկեփունջ, դրել ցանկապատի վրա: Ինչքան էլ մոշուտը փորձում է խեղդել նրան, այնուամենայնիվ՝ բռնկել է ծաղկունքով՝ հաշվի չառնելով ոչ մի անակնեկալ, նոյնիսկ՝ վաղ գարնանային ցուրտ ու անգամ ուշացած ձյունը: Գիտե, որ ինչ էլ լինի՝ կպտղաբերի ու թե մարդու ձեռքն էլ չհասնի իրեն, մոշու մազիկների ու սուր փշերի վրայով՝ դեղին, արեւահամ զնդերով կարուկ կտա մացառի մեջ, միայն թե պահպանի ինքնությունը, բնության արարածի իր տեսակը... Ես աչք

չի կտրում սալորենուց, թեպիս մտածում էի Արեւիկի հետ առաջիկա հանդիպման մասին, երբ հանկարծ, տարօրինակ բան, մտքովս անցավ զուգահեռ անցկացնել սալորենու եւ Արեւիկի միջեւ, թե ինչ կապ ունեն իրար հետ՝ ինքս էլ դժվար թե կարողանամ բացատրել...

Յանկապատի վրայից նայեցի տան բակին: Ջրի ծորակի տակ Արեւիկը դույլն էր ողողում, որ տանի կովը կրի: Բակի թթենուց կապած հորբուկը զինքն ուտում էր, փորձում կապն արձակել, ու չէր հաջողվում: Պարանը հարում էր հորբի վիզը, ու ցավից մզզում էր՝ դժկամությամբ նայելով Արեւիկի կողմը, չալպտուրիկ ոտքերը երեխայի նման գետնին դոփելով: Սիրուն հորը է, ճակատին՝ նորալուսին, ներսից տաք շունչ էր փշում նորագեղ ոռունգերից: Մայր մտնող արեւի վերջին շողերը ոսկուն էին տալիս տանիքին, թթենու բաց կանաչ սաղարթների վրա, հորբի բարակ լանջին, բակի սալահատակին, հորիրատում լուսամուտների մաքրամաքուր ու թափանցիկ ապակիներում:

Արեւիկի տեսքը ներքին լարվածություն էր պարունակում: Թուխ, ածխագույն, կարծ կտրած մազափունջը կախվել էր ճակատն ի վար ու ծածկել մտախոն դեմքը: Արեւիկը, տակավին այն դեռահասը, որ քաններեք տարեկան էլ չկար, երբ այրիացավ, դարձավ երկու մանկահասակ աղջիկների եղերամայր: Այն ժամանակ աղջիկներից ավագը՝ Անուշը, հազիվ չորս, կրտսերը՝ Սրբուհին, մեկ տարեկան էր: Անուշը, իսկապես անուշ աղջիկ, տասներեք տարու մեջ, երեսը լուսնի նման բռնորած, ինչպես հայտնի երգում է ասված, նորաքիթ, շուրթերն ուռուցիկ, աչքերը՝ բաց կապույտ՝ քանց կեսօրվա երկինք, մարմինը՝ լիքը-լիքը, որ ասես մի նախանձելի առողջությամբ է բուրում: Սրբուհին՝ հոր նման պուճուր-մուճուր, շիկահեր, բախծոտ աչքերով, որ բվում է, թե այդ բախիծը մթնաշաղի նման հիմնովին բնակվելու է նորա խելացի աչքերում ու մտամփոփ հայացքի մեջ: Ամուսինը՝ Հովհակը, դե էն Հովհիկը, որի մասին Ավոն ասում էր՝ էղ պուճուրին մուղայիդ կացեք, մեր հաղբանակի կեսը թշնամու նկատմամբ նա է շահելու, ոսխի տանկերի դեմ տեղադրած իր հազարավոր հակատանկային ականներով, հենց էն Հովհիկը, նույն ինքը՝ Հովհաննես Սողոննյանը, զոհ գնաց իր իսկ տեղադրած ականները գերծելիս, իննսուներեքի ապրիլի քսաններեին, այսինքն՝ եղեննի օրվա նախօրյակին:

## ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սիրելի Սանչո, առիթը եկավ եւ չեմ կարող զսպել վլորվմունքս, թե ինչու Հովհակի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Պարգեւներ են տրվում ողջերին ու մեռածներին՝ հետմահու թե կենդանի, իսկ նրա մասին՝ ոչ մի խոսք: Մինչդեռ ասում ենք՝ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Բայց Հովհակը... մի՞թե Ավոյի խոսքերը նրա մասին ոչինչ շարժեն... Ել չեմ խոսում Արեւիկի եղբոր՝ Արտակի մասին, որ նույնապես հերոսարար զոհվեց Մարզիկուն գրավելիս, հենց այնտեղ, որը ընկավ լեզենդար Ավոն: Արտակն էլ զոհվեց՝ որբ քողմերով մանկահասակ, ջուխտակ տղաներին ու միամորիկ աղջկան:

Սի՞թե որեւէ մեկի մտքով չի անցնում, լինի հրամանատար, թե մարտական ընկեր, որ նրանց հիշատակի օգտին որեւէ բան մտածի...

Սիրելի Սանչո, ես աննկատելի հեռացա ցանկապատից՝ երկա՝ թ մտորելով Արեւիկի մասին: Շահած-պահած հարս էր, ամուսինը՝ գլխավերեւը, թիկունքին՝ սկեսուրն ու կերայրը: Երջանկության բանալիները գրավանում էին, եւ ինքն էլ տեղովը մեկ սեր էր բուրում: Տունն արդեն ճանաչում էր իրեն, ձեռքն էլ գիտեր մառանի տեղը եւ ձեռքն այդ իր դրոշմն էր քողնում տաշտ ու խոնչայի վրա, ժպիտը՝ թոնրից հանած հացերին: Տան ներսում օրորոց էր գնում ու զայխ ու մանկան բույր էին շնչում տան պատերը, քունջ ու պուճախ: Տան տանիքից վեր, բա՝ րձի-բարձր ու կապոյտ-բափանցիկ էր երկինքը, որ մի օր սեւակնեց, որոտաց, փուլ եկավ տան ու տանիքի վրա: Սկեսուրը շփմացավ որդու կորստին, նվազեց, մարեց-մարմրեց: Կեսրայրը հանկարծակի, ասես կայծակնահար եղավ ուրի վրա՝ ինչպես ծառերն են կանգնած մահանում: Կեսրայրը՝ Կըռունց Գիրիշը, որին «Կես կոլխող» փոք անունն էին տվել, որ իբր կոլտնտեսության եկամուտների կեսն ինքն էր բերում: Ուրիշ բան որ չասեք՝ տարեկան 100 տոննան խաղող էր արտադրում, շիաշված, որ հրաշալի որմնադիր էր, հմուտ հացագործ: Տոն ու հանդիսավոր օրերին նրան էին ամբիոն տրամադրում, խոսելում էլ մի հաս էր, սաք-սաք, տեղը-տեղին, եւ խոսքն էլ՝ իր բռնած գործի պես վարակիչ: Գոնե ապրեր ու թիկունք լիներ Արեւիկին, տակը տակ բռղեց, գլուխը՝ գլուխ ու ամեն ինչ՝ Արեւիկի վզին:

Հիմա Արեւիկը գիտե զոմի հոտը: Հանդից դարձող նախրի մեջ անսխալ ջոկում է իր կովի բառաչը, որ առաջինն է մտնում գյուղ, շտապե-

լով, վագրով հորի վրա, որ նոր է ծնես: Հիշում է՝ ոնց էր կեսրայը ցախավել կապում, որի կունքուում թողել էր գոմի մի քունջում, իր մշտական տեղը: Սի օր ձեռքը առավ, երկար տնտղեց շուտումուռ տալով, փորձեց ինքն էլ կապել ու առաջին փորձը վաս չստացվեց: Գիտե եղան ու պարանի տեղը, կեսրայը ցակատը գոմի որ գերանի տակ էր խորում, որ աչքի առաջ լինի, կիրից առաջ հորին մսուրի որ կենցի էր կապում: Սովորել էր հնաձած խոտից կիա անել, կրել, կիապերը կիտել գոմի տանիքի տակ, որ անձրեւ ու ձյուն չքակի, փրի, փշանա, ու երբ ձմունն օրական մի կիա է իջեցնում, տանում ախտո, ցվցվելիս խոտի միջից խամրած խնձորածաղկի բույրից ցնդում է գոմի տիաճ հոտը: Ընտելացել է հող մշակելուն, գիտե վազի լեզուն, էտը, կորակապը, անդալիս անելլ, շալը ետ տալն ու բջատելլ: Միայն թե՝ իր բաժին երկու հեկտար հողը, սեփականաշնորհումից հետո, մի երկու տարի օգտագործեց, առաջին տարին՝ որպես խոտահարք, երկրորդ տարին ցորեն ցանեց, որ երաշտի բաժին դարձավ: Տեսավ, որ ուժը չի պատում՝ սերմացու էր պետք, դիզանելիք, հերկի, հնձի վարձ ու վճար, տվեց վարձակալության՝ տարեկան չորս հարյուր կիլոգրամ հացահատիկի պայմանով: Հոգնում է, շատ է հոգնում, եփել-բափել կա, լվացը ու խմոր անել, ապս գնալ դպրոց՝ հավաք-տեղակ անելու, մինչեւ դասերն սկսելլ: Ամբողջ օրը վազք է, հայրենի հող կոչվող այս հողի համար ընկած ամուսնու հայրենիքը, օջախն ու տունն այլպես է պահում, տուն, որ միաժամանակ քանզարան է դարձել՝ պատերից կախված մեծադիր նկարներով, սեւ շրջանակների մեջ, որ լուս ու խորիդավոր, բազմանշանակ հայացքներով, անձեն-անձպտուն խոտում են իր հետ, խորհուրդներ տալիս, խոսք ու խրատ, հետո անմեղ-մեղավոր ժպտում, կարծես ասելիս լինեմ՝ Արեւիկ ջան, ինչ արած, մի նեղանա, դիմացիր, դեմ կաց: Դեմ չկենա, չդիմանա՝ ինչ պիտի անի, լուծն ընկել է վզին, պիտի ձգի, քաշի: Սի դիմանավ է մնում, ուրիշ ի՞նչ՝ տառապանքի ուղիներով տանել իր բեռը, պահել-պահպանել որբեւայրու կանացի իր տեսակը...

Սանչո ջան, այսպիսի բանե՞ր, Սանչո՞:

Առայժմ:

**Քարի մաղրանքներով  
Դռն - Կիհուով  
2002թ.**

## ՆԱՍԱԿ ԵՐՐՈՐԴ

Սիրելի Սանչո:

Այս անգամ, ահա, թե ինչի մասին:

Երեք օր առաջ Զինայի ունքամիջից աղուն կարում էր, հոնքամեցը ետ չէր գնում, ու Գրիշան պատճառը զիտեր: Կինը սրտինը թափել էր գլխին, մարդը բրուն խմել եւ ձեն ու ծառուտ չէր հանում: Մտածել էր, թե մեր Զինահինան է էլի՝ մայիսյան երկինք, որոտաց՝ իմացիր, որ կարկուտ էլ կտեղա: Տղա ես՝ մի կարպես առ գլխիդ: Փորձել էր կատակով մեղմել կնոջ զայրույթը՝ կատակը չէր անցել:

Ասել էր.

-Զինահինա, որ ձի ունենամ, որտեղից կապեմ:

Զինահինան թե.

-Դու ձի չես ունենալու, քոնք էշն է: Բայց թե ձի ունեցար՝ լեզվիցդ կկապես:

Գրիշան լախ-լախ ծիծաղել էր ու ծիծաղից ուսերը ցնցվել էին:

-Արա, իմ սրտից արյուն է կարում, դու խնդմնդու՞ն ես: Ասացիր՝ երեք հեկտար աշնանացան ես արել, կեսը՝ ցորեն, կեսը՝ գարի, Զինահինա, առնվազն՝ 4 տոննա... Դե իհմա ինձ տուր՝ քեզ տամ: Բերուածդ էս չի՝, երկու տոննա: Հեկտարից քանի՞ց ցենտներ է անում, հաշվե՞լ ես, նախկին համբավավոր բրիգադավար... որ ասում էի՝ ձիդ պահիր, էլի: Ամսվա բռշակս էն գլխից խլում էիր, թե վարի համար դիզանելիք պիտի գնեն, մայիսի բռշակն էլ, թե հնձավարձ պիտի տամ: Գոնե խարջածդ ետ բերեիր...

Երեք օր առաջ Զինայի ունքամիջից աղուն կարում էր, դանակ տայիր՝ արյուն չէր կարի: Խսկ Գրիշան համբերույթյամբ սպասում էր «Երկնիք» բացվելուն: Երբեմն խոր էր զցում Աստված տվածը շատ շհամարի: Ասում էր իբր ինքն իր համար, բայց՝ ի ականց կնոշ: Մտածում էր՝ պակասը բրից կլուացնի: Բայց դե բրի առաջին թափն էլ քամին տարավ: Կինը նախազգուշացրել էր, ասելով՝ թափենք: Գրիշան թե՝ վաղը: Ի՞նչ աներ, նախիրն արոտի տանելու իր հերթն էր:

-Արա, Լենինն ի՞նչ է ասել...

-Լենինը հնարել է,- Գրիշան նորից էր կատակել,- իբր էսօրվա

գործը վարդան չեն թողի:

-Դե, հիմա քո էն քաշած ցորտ-ցորտ արադից մի բաժակ խմիր, վրան էլ մի կանաչ ու շաղը վրան վարունգ հուալ տուր...

-Ի շահ, խուվա՞յ...

Թթի երկրորդ բափից օդի թորեց ու կնոջը շասաց՝ քանի լիտր: Քանիսը կար:

Աստծո տվածը չեն հաշվում: Ինքը՝ խմիչքի մոտ մարդ, եկող-գնացողն էլ՝ դրան տեղյակ: Չի հերիքի, իրեն խաղողը հասնում է: Անցյալ տարի երեք տոննան չէ՞ր, թորեց, օդին՝ օդի, զինին՝ զինի: Էս տարի երեք... էլի՞ նախնական հաշվարկ. թոյլ մի ժայխտ կարեց մազակալած դեմքից, երբ վերջին մտքի վրա հիշեց կնոջը...

Երեք օր առաջ Զինայի ունքամիջից աղուն կարում էր, հունքամեցը ետ-ետ չէր զնում: Բայց այդ օրվա իրիկնամուտին, երբ Գրիշան անասունը հանդից բերել, տեղափակ էր արեւ, կաթով լի դոյլն առած, մտավ նախսարահ, կինը դիմավորեց նրան՝ մեղմ մի ժպիտ խաղացնելով դեմքին:

-Արա, զիտես չէ՞ր, որ հունիսի 29-ը երեխաների ծնված օրն է....

-Ըիր...

-Ի՞նչ...

-Հեշ... «երկինքը» բացվում է....

-Ի՞նչ երկինք...

-Զինադիտա, երկնքի հետ գործ չունես, դու ասելիքդ ասա: Ինձանից ի՞նչ է կախված:

-Պատրաստվել է պետք:

-Գինին, օդին՝ ինձնից, մնացածը ձեր գործն է....

Երեխաները թռոներն են, Արցախյան գոյամարտում նահատակված որդունք՝ Արտակինը: Երկվորյակ, երկու տղա՝ Կարեն ու Արեն, միամորիկ աղջիկ՝ Կարինե: 1992 թվականին, Մարզիլուի գրոհից առաջ եկել էր տուն՝ երկվորյակների ծնունդը նշելու: Որոշեց նրանց ծննդին միացնել նաև հազիվ վեց ամսական աղջկա ծնունդը /երեխաները նոյն ամսում էին ծնվել/: Եկել էր ընկերների հետ, զինավառ ու զինվորական հագուստի մեջ: Ավտոմատները կախել էին սրահի սյունից, թեք արել մինչեւ կեսզիշեր: Առավոտյան, գնալուց առաջ, դարձել էր հորը.

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

-Հարությունյան /այդպես էր ովհնում նրան/, դե, ես գնացի, երեխաներին..., էն ասելն էր, որ չասաց: Թուխու ու բարակ բեղը եզրող վերին շուրջը սեղմեց ատամներով, սրահի սյունից իջեցրեց ավտոմատը, զցեց ուսով ու գնաց: Էղ գնալն էր, երեկոյան դեմ՝ ես բերին, ու... հայրը փլվեց ցինկե դագաղի վրա: Մարզիլուն գրավված էր... Որդու մահը երկրորդ ողբերգությունն էր. նրանից առաջ զոհվել էր փեսան՝ Հովհիկը՝ ականանից՝ ականազերծման ժամանակ, որբեայրի բողնելով կնոջը՝ Արեւիկին, ու որք՝ իր երկու «ձյունանուշիկներին»՝ Անուշին ու Սրբուհուն: Աչքի սեն ու սպիտակը մնաց Արարատը: Փառք աստծո, կովեց, հաղթեց ու մնաց ողջ, որ ձեռքի մեկը՝ Արտակի, մյուսը՝ Արեւիկի տաճ վրա պահի, հորն էլ տեղն ընկած տեղը օգնի ու միաժամանակ շվաքի տակ պահի նաեւ իր չորս արու-արիներին:

Անցել է ուր տարի՝ առանց Արտակի՝ բերդաշենցի 75-ամյա գրիշա Հարությունյանը յոթ անգամ նշեց իր ուր թռուների ծնննողը, ութերորդը նշելուց առաջ առավոտյան տնեցիներին պատվիրեց պատրաստ լինել երեկոյան ու ինքը նախիրը տարակ հանդ: Ի՞նչ աներ՝ իր հերթի վերջին օրն էր: Նախիրը արեց Սմղոտի ձորն ի վար, ինքը նստեց ձորալանջի մի ցից ժայռի վրա, որ տավարն աչքի առաջ ունենա ու սուզվեց մտորումների մեջ: Կիանիրին մեջ էր, թե ինչ, թվաց ունկերի մեջ հնչեց հարազան ու պաղատագին մի ձայն.

-Հարությունյան... երեխաներին...

Ապա ձորից սարալանջն ի վեր մլուլ եկող զեխյուռն առավ այդ թանկ ձայնը ու տարակ հեռու-հեռուները: Զորում մնաց խոլ ու խորհրդավոր մի լոռություն եւ այդ լոռության մեջ իմքը՝ փողովկից ցնցվող ուսերով: Բայց ոչ այն ուսերով, որ ցնցվում էին իր լախ-լախ ծիծաղի ժամանակ...

Երեկոյան, տուն դառնալուց, տանն արդեն ամեն ինչ պատրաստ էր: Երեխաների սեղանն առանձին էր, ավելի ճոխ ու մեծ, քան մեծերինը: Երբ համախմբվել էին սեղանի շուրջ, քաղաքից ժամանած աներձագին Գրիշան ասաց:

-Դե, ղեկավարիր... գիտեմ, փխրուն ես... բայց դե տանել չեմ կարողանում, երբ խոսելիս աչքերդ լճանում են...

Տղամարդ ես, չէ՞:

... Ծննդյան օր էր, կերուխում, երգ, երաժշտություն ու պար: Պա-

լում էին Գրիշայի ուր թոռները, զոյզ հարսների ու աղջկա հետ միասին: Պարում էին, ո՞նց էին պարում, ասես հավերժական մի պար՝ ի հեճուկս դաժան ճակատագրի: Գրիշան ձեռքը դրեց կնոջ ծնկանն ու ականջին շշնչաց.

-Զինախդա...

-Արա, հի՞նչա...

-«Հինչան» դու ես, համ էլ՝ ես «արա» չեմ:

-Արա չես, բա ի՞նչ ես, քեֆիդ ինչու՞ է դիմում.

Գիտե՞ս, թե Արան ով է...

-Զգիտեմ: Ես հո քեզ նման արարատյան դիցաբանության գիտակ չեմ...

-Որ զգիտես, մի խանգարի, բռող մի տեսնեմ, թե էս երեխաները ոնց են գժույքուններ անում,- ասաց ու դարձավ պարախմբին, աչքերում՝ ոչ այն է խնդրության, ոչ այն է՝ արցունքի փայլ: Գրիշան թե.

-Աղջի, կեր է՝, կեր, ծլանգվել ես, սեղանից օգտվիր. Դատարկ պարկը ոտքի վրա չի կարող կանգնել:

Սինչդեռ Արենն անընդհատ կանչում էր.

-Դեղո, հե՛ դեղո, եկ մեզ հետ պարիք:

-Դեղոն թե մատադ, Արեն, դեղոն հանդում է պարում, որ մարդ չտեսնի...

-Խի՞՝, դեղո, վաստ ես պարում, դրա համա՞ր...

-Հա՛...հա՛...հա՛...

Հարեւան Բորիկն ասաց.

-Չեմ հասկանում, թե էս գեղեցիկ ընտանիքի համերաշխության գաղտնիքն ինչումն է. Արտակի կնոջ՝ Սվետայի մեծ սրտի ու հոգու հավատարմությա՞ն ու համբերությա՞ն, Արարատի կնոջ՝ Կատյայի նրբանկատությա՞ն, թե՞ որբեայրի Արեւիկի անսահման նվիրվածության. երեւի այդ ամենի միասնության մեջ,- եզրափակում է նա:

Այնուամենայնիվ, սխալ չէր լինի ասել նաեւ.

-Ցավի ու այդ ցավի հետ մաքառող Զինայի ու Գրիշայի անսպառ հումորի մեջ:

Եվ ի՞նչ... Ծննդյան օր էր:

Սնամ՝

**Քո «Դոմ-Կիխոտ»  
2002թ.**

### ՆԱՄԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Հարգելի բարեկամ, սիրելի Սանչո, վերջապես ստացա երկրորդ նամակիս պատաժանդ, որին սպասում էի անհամբեր: Երեխ երրորդ նամակս էլ ստացած կլինես: Բանը դրանում չէ: Զարմանալին այն է, թե ինչու ես նեղացել ինձանից: Մի քիչ կաք ու մածուն ու մի քիչ էլ պանիր էի ուղարկել՝ դրա համար, իբր «դիպել» եմ ինքնասիրությանդ: Ինչ մի մեծ բան է արածու, ախալեր, ինչ մի վիրավորվելու առիշ...»

Ծառ չե՞ս հպարտ: Սոցիալական քո վիճակում քեզ օգնելու խնդիր չունեի: Հնարավոր է՝ վատ չես ապրում, բայց հազիվ թե... քո վատ ու լավ ապրուստը մտքովս չեր էլ անցնում, այսինքն՝ ինչպե՞ս թե չեր անցնում: Պարզապես սրտուզելիք էր՝ ուղարկեցի: Ընկերներ ենք, չե՞: Հանկարծ ինչ-ինչ բաներ շանցնեն մտքովդ... Քեզնից պակաս հպարտը չեմ: Հակառակ դեպքում, գիտե՞ս՝ ինչ: Լսել եմ՝ նամակներս տպագրում ես: Որպես իմ ուղարկած «յուղ ու բրինձի» փոխսհատուցում եղ թերթից մի-մի համար ուղարկիր ինձ: Իմիջիայլոց, եղ որ նամակներս տպագրում ես, բան-ման կտա՞ն, թե չէ: Ինձ համար չեմ ասում է՝... Ի սեր Աստծո, խոր-խոր տեղեր չընկնես, զիտեմ՝ նամակներիս դիմաց ոչ դու մի գրոշի օգուտ ունես, ոչ ես: Խիկարծում ես տեղյակ չե՞մ եղ թերթի վիճակին...»

«Են, մի թերթ, որ տասը տարի առաջ մեր զյուղում հարյուր բաժանորդ ուներ, հիմա մեկն էլ չունի, վիճակն ինչպիսի՞ն կլինի...»

Տեղը եկավ՝ մատնեմ: Սանչո, մտքովս մի տարօրինակ բան անցավ, ի՞նչ կլիներ վեր կենաս գաս, տեղափոխվես գյուղ: Գիտե՞ս ինչ՝ իրար մոտ կլինենք, նամակ-բան գրելու հարկ էլ չի լինի: Քեզ համար հողամաս կվերցնենք, մի հարմար տեղ, տնից-բանից էլ ձեռաց կսարքենք, առայժմ՝ մի «վրեմյանկա» էլի, կողքին՝ գոմ, մի կով ու մի էշ էլ կառնենք, ի՞նչ կա որ: Հետո գործը գործ ցույց կտա: Հաջողություն լինի՝ տան ու տնտեսության տեր կդառնաս: Անա դե հանկարծ մտքովդ շանցնի եղ ամենը մենակ ինձ վրա վերցնեմ... Սիասին կանենք՝ մաշկդ հո բոշ չի: Գիտեմ չե՞», քեզ՝ անող-թողող մարդ ես: Իսկ

իմ մասին... հանկարծ խելքիդ չփշի՝ թե որ անունս Դոն-Կիխոտ է, են բափառական ասպետոն եմ, են արկածախնդիրը, են «տխուր պատկերի Ասպետը», գլուխը՝ ասպետական «ցնորամտություններով» լիքը... Թեպետ, այնուամենայնիվ, նա հանճարեղ «խելազար» էր, մարդու լավագույն տեսակը: Համոզվելու համար խորհուրդ կտայի փորձես Սերվանտեսի էղ ստեղծագործության տակը մտնել: Չեմ կարծում չես մտել, տակ էլ տվել ու... երբեք էլ տակից դուրս չես գա:

Հա, էլի, Սանչո, գյուղ գայիր, ի՞նչ մի վատ բան կլիմեր: Այսր ի՞նչ ունես, է, էղ քաղաքում, ինչ ես կորցրել, ինչ գտնես: Գյուղ գայիր, ինձ համար չեմ ասում՝ քո օգտին: Առաջինը՝ տնտեսական, էկոլոգիական տեսակետից, երկրորդը՝ իմանալով, որ դու սկի էլ Սանչոն չես, իզուր էլ քանակն ես անցել, ոչ թե «Գյուղական էսքիզներ» կորեիր՝ մանր-մունք բաներ, այլ... լեզուս չի էլ պատում ասեմ՝ վեպեր: Չէ՞ որ, պարզ խոսենք, դու ոչ Տուստոյ ես, ոչ էլ Շոլիխով, թեպետ կասկած չունեմ ձիքքիդ ու շնորհքիդ: Սեծամիտ էլ չես՝ վերեւից նայես, արհամարիես, չհարմարվես գյուղական կյանքին-կենցաղին, նիստ ու կացին: Երեւակայում եմ, թե ինչ համով-հոտով բաներ կգրեի՞ր: Ստորով չանցնի՝ չեղած, չինելու, շմտածված բաներ եմ ասում: Սեղոս ինչ բացցնեմ՝ մեկ-մեկ իմ մտքով էլ է անցնում... Հանկարծ խելքիդ փշեց՝ վեր կացար եկար ու... Գյուղն էլ՝ սահմանան՝ թձ: Ինչ է, սիրտդ ահ ընկա՞վ: Բա մենք ո՞նց ենք անում, մեզ մայր չի բերե՞լ: Հրե՞ն սահմանը քբներիս տակ, մատդ մեկնես՝ թուրքի աչքը կխորթես:

Բա՞րձ-բարձր սարալանջի մեր տան բակից տափաստանի կողմը նայելիս, մանավանդ գիշերը՝ սահմանը լույսերով ողող, թվում է՝ Աստված չարած, հնտեղից ոչ թե արկ, պարսատիկով էլ քար նետեն՝ կհասնի: Ամա դե, իմը՝ չեմ... Տեր նորընծայի տանձը կուտեն: Թող փորձե՞ն...

Սիրեի Սանչո, վերն արված խորհրդածություններս մի կողմ քողնենք, անցնենք հետեւյալին: Վերջերս մի այնպիսի մեղք եմ գործել, որի համար նույնիսկ արդարադատության աստվածուիի Ֆեմիդան ինձ չի ների՝ ուր մնաց թե՝ դու: Փորձեն բացատրվել՝ բոլորովին էլ ոչ որպես քավություն կամ ապաշխարհանք /օգուտ չի/ եւ ոչ էլ իսիդս հանգստացնելու միտում ունեմ: Սեկ է՝ տանջելու է ինձ: Ահա թե ին-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

չումն էր բանը: Նորիկին զիտես՝ իմ հարեւանին: Եկավ թե՝ ցախը կտրել վերջացրել եմ, զմանք տեղափոխենք: Ասում էր խնդրելու պես, խեղճ-խեղճ, քաշվելով, մի տեսակ անհարմար զգալով: Ի՞նչ աներ խեղճը՝ ձեռքը բռնող չունի, ո՞ւմ ուռը զմար: Սարի պես թիկունք երկու տղաները՝ Նելսոնն ու Վիլսոնը, մատաղ գնացին Արցախյան ազատամարտին: Շիկահեր ու սիրուն աղջիկը՝ լուսնի նման բոլորած՝ հրետակոծության զնի: Այդքանը հերիք չէր՝ դեռ տունն էլ խիստ վմասված: Ու՞ն էր ինչ արել, քար հո չէ՞ր կծել ու նետել երկինք, որ Աստված նեղանար...

Սի խոսքով: Զախ թեւատակիս՝ սրտիս մոտ, մի անողորմ ծակոց կար, մրսելուց, թե ինչից՝ ուղղակի սպանում էր: Սպանե՞ր՝ վերջացներ... Զկարողացա ձեռք հասցնել հարեւանին: Սեքենան՝ փողոցում, ինքը՝ կողքին թեւարափ ու շվար: Սպասում էր: Որտեղից որտեղ հայտնվեցին մեր Բենիկի երկու տղանները, որոնց հայրը նոյնապես զրիվել էր մեր ազատամարտում: Տղաներ էլ ասում եմ՝ ի՞նչ տղաներ, արքունքին դեռ շիասած, աղվամազը երեսներին: Ինանալով՝ բանն ինչումն է, վազեցին տուն, մի-մի եղան առած վերադարձան, բարձրացան բեռնատարի բափը ու թե՝ Նորիկ ապա, քշիր: Նորիկն անխոս գլուխն օրորեց, որ կնշանակեր՝ Աստված, բա սրանք մեղք չե՞ն, ճարահատյալ մտավ մեքենայի խցիկը, ու գնացին:

Են որ ասում են՝ ցավը տվին սարին, սարը չտարավ, տվին մարդուն՝ մարդը տարավ, եղ հենց Նորիկի մասին է ասված: Մարդը ոչ գիշերը քուն ունի, ոչ ցերեկը՝ հանգիստ: Սեկը լիներ, ասի՝ եղ ինչի՞ վրա ես, տնաշեն, աչքերդ բաց են մնացել, քյանդիրդ ծմակովն ես արել, ախր ուտողդ ով է, ո՞վ ... Տանի շեմից մինչեւ Ալի խութ ցանկապատել ես, մեջն արտ արել, եւ ի՞նչ արտ, ասես հովի բերանն ընկած հարսների պես հերանց են զնում: Արա, արտն էլ կցանկապատե՞ն, ո՞վ է տեսել՝ ոչ ճոնդ ունի, ոչ պուճախ: Ամա ասում ենք է՝, բա ի՞նչ անի, էծ ու ոչխար մտնի, տավարի կոխան դառնա՞: Դրանք էլ էնքան շատացել են՝ հանդ ու անդաստան չեն հերիքում: Սենակ իրենը թե հաշվես, հաշիվը կկորցնես՝ էլ խոշոր, էլ մանր, էլ հավ ու ճիվ, բադ ու հնդրուհավ, խոզերի հաշվառքն էլ՝ հեշ, բաց բողնես՝ արտերը մի օրում տակնուվրա կանեն:

Ասում են՝ Նորիկի պառը պառ չի, կոշտ է, կոպիտ, թամահն էլ՝ շատ. Աշխարհը կլոլած բերի՝ աչքը չի կշտանա: Ասում են, էլի, ին ասելով չի: Նախանձում են՝ որիշ ոչինչ: Նախանձն ինչ իմանա, որ սեւը ներս է անում, սպիտակը՝ դուրս, գլուխը կախ՝ իր բանուզործին: Մի օր տաճը նստի՝ սիրտը կպայթի: Ցավը ներս անող մարդուն հասկանալը հեշտ չի, ներսում ճար է տալիս, ո՛չ ճարդ է մնում, ո՛չ ջիղ: Գիշեր ու տիվ պիտի բանի, ծեզից ոտքի վրա, աշխարհից ու ցավից վերացած, ուշըն ու միտքը հանդում մնացող հորք ու գառան հետեւից, վար ու ցանքի, արտ ու խոտհարքի, տավարը պահելու իր հերքի, որ տանում-անում է Սմբուտի ճորն ի վար ու մինչեւ ժմաժենը եղ արանքում երեք իշաբեռ փայտ անում ու բերում, վերջին բեռը՝ նախարի ետեւից, ինըն էլ հարյուր անգամ գլխաքանակը հաշվելով, հարյուր անգամ էլ սիսակելով, կասկածը սրտում հանդում հո տավար չի մնացել: Աստված շանի, տիրոջն ի՞նչ պատախան պիտի տա: Հետ դառնաս ասես՝ տո նախանձ շան որդի, դու Նորիկի ինչը կդառնաս, նրա մի օրվա արածը դու մի անսում էլ շես անի, շունչը կփշես: Են քոն աշքիդ առաջ չէ՞ր, որ երկու օրում տկլոր ռամայի վրա մի ամբողջ բեռնատար հավաքեց, անիվից ու անվաղողերից սկսած, բուֆերից, մոտորից, մոստից, խցիկից, ղեկից, արգելակման սիստեմով, թափքով, վերջին ամրակ ու պտուտակով, խլացուցիչով վերջացրած՝ ասես «Կամազ»-ի գործարանի կոնվեյերից հենց նոր իշած, յուղը վրան, բոլորովին մի նոր բեռնատար ավտոմեքենա: Են դու չէի՞ր, որ վիզդ փոկ արած, բկիցդ բռնած, աղաչաճը էիր անում, որ զա հարած խոտը տեղափոխի: Աշքիդ առաջ չէ՞ր, որ քո մի շաբաթվա հարած խոտդ մի բափք էլ չարավ: Եշի տեղ էիր դրել բեզ, շնկատելուն էիր տալիս, թե ինչու Նորիկը ծիծաղում էր քի տակ, որ կնշանակեր՝ եղ չե՞ս ընդամենը, մեջքդ կկոտրես՝ հարեիր էնքան, որ խոտը նիտալուց հետո բարձած մերենան կարգին տեսք ունենար, սազեր, որ չասեն՝ սա Նորիկի բռնած գործ չի...

Ե՞հ, Սանչո, չերկարացնեմ, առանց էն էլ գլուխ տարա, համը հանեցի: Ուղիղ կեսն է գիշերվա, բայց օձը կծածին քուն կզա՝ ինձ չի զա: Զախ բեւատակիս ծակոցը ջհանդամը, խղճիս խայթն է, որ հանգիստ չի տալիս: Նորիկը երեխաների օգնությամբ ցախը բերել-թա-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

փել էր: Կանչեց իրիկնահացի՝ չգնացի, ասացի՝ լավ չեմ զգում, հավատաց, թեպետ վատ զգալս չեր պատճառը՝ ինչ երեսով գնայի... Նստելու էինք սեղանի շորջը: Բաժակները լցնելու էր, մեկը՝ ինձ, մյուսը՝ իրեն: Բաժակ բաժակի չկնք խփելու... որդիների կորստից հետո, էս էլ քանի տարի, բաժակ չի խփում, լուռ ու մունջ տանում է շորբերին, եղ արանքում տնքոցի պես մրմնջում «Էն խոխոցը հիշատակի...»: Խոսքը փղձուկ է դառնում կոկորդում, թեղերի մեջ հայտնված արցունքը, էն խմած օղու դառն շիթերի պես, որ տեղահան էին արել ներսի ցավը, լցրել աչքերը, կկաթեն էս աշխարհի անմխիթար խիղճ ու խղճմտանքի վրա...

Էհ. Սանչո՞, Սանչո՞...

Սնամ քո՝

**Դռն- Կիխոդ  
2002թ.**

## ՆԱԽԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սիրելի Սանչո, հարգելի բարեկամ. Այս ամսամ, առանց սպասելու նախորդ նամակիս պատասխանիդ, գրում եմ հետեւյալը: Էս աշխարհը որ էդպես տեսնում եմ, ինձ հանգիստ չի տալիս: Երեւի հարցնես՝ քայց ի՞նչ ունես, ե՛, աշխարհի հետ, հերն էլ անհծած, որո նրա ծուռն ու թերին շտկողը չես, թեզնից ի՞նչ է կախված, քո ուժն ինչի՞ կպատի, անունդ Դոն-Կիխոտ է՝ թե հողմաղացի հե՞տ կռվես... Էլ մի ասա, ասում ես, բողնու՞մ: Այսր իմ կոհվեն էն աշխարհի հետ չի: Աշխարհ որ ասում եմ՝ հասկացիր մեր գյուղը, ուրիշ աշխարհների հետ ի՞նչ գործ ունեմ, բող իրենց ճամփով էլ գնան, ուզում են՝ թեկուզ իրար միս ուտեն...

Քայց այստեղ, ախր, ես իմ միսն եմ ուտում, ե՛, չես հասկանում:

Դե՛ պատմեմ լսիր: Ընդհանրապես հազվադեպ եմ գյուղամեջ գնում՝ էդքան ժամանակ ինձ որտեղից: Աչք էլ չունեմ այնտեղ պարապ-սարապ ցեղկացողներին տեսնելու: Հատկապես՝ ջահել-ջիվաններին: Տարեցների դեմ խոսք չունեմ, թող որքան ուզում են պատի տակ նստարան մաշեն, անցած-զնացած օրերի հուշերի պատառիկների մեջ իրար տան ու առնեն, դրանից ոչ օգուտ կա, ոչ վնաս: Հա, էն էի ուզում ասել՝ ծխախոտս վերջացել էր, գնացի դրա հետեւից: Մեր գյուղում էլ հո գիտես, մի խանուր չէ, մի քանիսը, կարծեմ տասը թե տասներկուսը՝ մնձ ու փոքր շինմաշներում, իրար դեմ-դիմաց, շորջկալ: Զահել-ջիվաններն էլ սաղ օրը դրանց առաջ, խումբ-խումբ ասում են, խոսում, ինչի մասին՝ չես հասկանում: Ուրդ կախ գցես ու ականջ ամեն՝ ոչ մի նյուր չես քաղի: Մի խոսքով՝ շարսու թե շարչու քազար: Դե ինձ ընդամենը ծխախոտ էր պետք, էն էլ՝ «Դվին», ուրիշ «մակնիշի» չեմ քաշում: Դրա գինը քաղաքում, գիտես, հարյուր քառասուն դրամ է, շատ-շատ՝ հարյուր վարսուն: Մեզ մոտ մեկում հարյուր վարսուն է, մյուսում՝ հարյուր յոթանասուն, էն մեկում հարյուր ութսուն: Երկու հարյուրով էլ ծախող կա: Մեկը լինի ասի՝ խելքի պտուկ, եթե կողքինդ հարյուր վարսունով է տալիս, որո ի՞նչ ես մտածում, եղ ո՞ր խելապակասը հարեւանիդ էժանը կրողնի,

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

քո թանկն առնի, մանավանդ՝ բոլորն էլ մի զիրի են...

Ցավը, սակայն, դրա մեջ չէ, բողնինք մի կողմ: Ծխախոտն առել ու դուրս էի գալիս խանութից, մտածեցի՝ ոսքս կախ զցեմ, տեսնեմ՝ էլ ջահեմերն ինչ են բրդում: Ի՞նչ էլ ջահեմեր էին՝ կարգին հագուստ-կապուստով, բոյով-բուսաբով, պատերազմից հետո աճած սերունդ, քաղաքավարի, ասես հենց քաղաքից են հայտնվել այստեղ: Ասում էին, խոսում, տար-տար էլ վիճում աշխարհի բան ու զործից, շինամեջը շինած աշխարհի կենտրոն, ինչ իմանամ Եվրախորհրդարանի խորհրդարանական հավաք... Մեկը, ինչ մեկը, է՛, Սիմոնաց Արանի բոռը, շան լակոտն էլ էնքան սիրուն. Երկու աչք փոխ առնես ու նայես...

Հա, էն էլի, Արանի բռո Վովան ոչ տարավ, ոչ ետ բերեց ու թէ՝ արա, չէ է, չէ՛, որոշել եմ ու վերջ, գնում եմ Ռուսաստան: Էստեղ ինչ կա է՛... գնացողը մի քանի ամիս անց տան ու մեքենայի տեր է դառնում, դեռ մի քան էլ ավել՝ ետ զցածից ուղարկում ծնողներին: Բորիկը երր էր, որ գնաց, էն օրը քանի հարյուր դղլար էր ուղարկել մորը: Մեկը, կողքից, կարծեմ, ի՞նչ կարծել, մեր փեսա Արտաշի տղա Արայիկը թէ.

-Ե՛, Վովկա, ամա գնացիր հա՛, հրե՛ն ռուսաստաններից էլ մերնոց քշում են: Բա չե՞ս լսե՛ Կրասնոդարից...

Վովկան շրողեց Արայիկը խոսքն ավարտի, կացնի պես խոսքը կտրեց.

-Ի՞նչ ես ուզում է՛, մնամ ի՞նչ անեմ, էստեղ ապրուստ չկա, անելիք չունեմ, գործ չկա..

Արայիկն էլ՝ կարծես հենց այնպես, կծու.

-Գործ ստեղծում են, հետո անում... էստեղ բաշիր չանողը էնտեղ սկի էլ բաշիր չի անի:

Ի՞նչ ես կարծում, սիրելի իմ Սանչո, Վովան ասածից ե՞տ կանգնեց. ո՞չ, գնաց, հոր ետ զցածն էլ առավ ու գնաց: Ափսո՞ս. էն փողով, որով գնաց, կարելի էր երեք կով առնել, երեքից էլ մի տարում երեք հորք, էղ քեզ վեց: Հաջորդ տարում էլ... ինքդ հաշվիր, թե քանիսը: Ե՛հ, ինչ ուզում ես արա, ամա թե զյուղը մաշկը բոշ մարդու տեղ չի, Արայիկի տեղ է, արայիկների, Արայիկի հոր՝ Արտաշի տեղ է, ար-

տաշների՝ ... գյուղում ապրելս ախր հալվա ուտել չի. օրը գիշեր պիտի անես, գիշերը ցերեկ: Անողը կանի, օրինակի համար՝ Արտաշը, Արտաշ էլ ասում եմ, հն, ազնավոր չի՝ վարսունն անց, մի կաշի է, մի ուկոր, ամա դե իրենից եռանդ ու կորով է հոսում՝ ինչպես Բախչունց քյահրիզը...

Էն տարիմ՝ սրանից մի քանի տարի առաջ, տավարը պահելու իմ ու Արտաշի հերթն էր: Դիլաքանց բաղի ձորի բողազն ի վար նախիրը բաց էինք բողել՝ արտի: Բաղ էլ ասում եմ, որ հիմա բաղ չի, էն առաջներում էր, պապենական ժամանակներում: Կեսօրահացի էինք նստել ձորից վեր բումբի մոխրենու տակ, որ տավարն աչքի առաջ ունենանք: Զորի բողազում մի փոքրիկ բացատ կար, շուրջը՝ մոշուտ ու մացառ: Արտաշը նայեց բացատի կողմն ու թե՝ Դոն Կիխոտ, հրե՛ն էն բացատում բոստան եմ անելու: Ասացի՝ տեսեք, հլա մի տեսեք, էն բոստանն ո՞նն է... Պահ, պահ, պահ, էն ի՞նչ վարունգի բաղեր են, ի՞նչ վարունգ՝ շաղը վրան, ցուրտ-ցուրտ, մի շղարշ ուտես մի բաժակ թթողու վրա, հենց համարես թե՝ օդի չեր խմացդ, գլխին քար զցեցիր... Արտաշն ասաց՝ ծաղը արա, ձեռ առ, հլա կտեսնես, դու սադ՝ եւ էլ սադ...

Անցավ մի աշուն, մի ձմեռ ու մի գարուն: Էդ արանքում Արտաշն իր բանուգործին էր, ես՝ իմ: Ամռանը, եթե չեմ սխալվում՝ հուլիսի կեսերին, մի օր Արտաշը թե՝ Դոն Կիխոտ, վաղը, եթե ժամանակ ունենաս, կզաս Դիլաքանց բաղի ձորի բողազը: Հասկացա՝ աղվեսը պոչից էր երեսում... Գնացի: Բոստանի մուտքին մտավ թես ու տարավ հոլիկ: Զեռաց շինած իշոտնուկ «սեղանի» վրա լոլիկ էր՝ կարմիրկարմիր, կանաչ-կանաչ վարունգ, բարմ կանաչի ու կանաչ սոխ, խաչած կարտոֆիլ, հաց ու պանիր, մի շիշ օդի, կողքին՝ երկու բաժակ: Նստեցրեց իշոտնուկ «աքոռին», ինչ ասում էր՝ գլուխ կախ անում էի: Բաժակները լցրեց՝ մեկն՝ ինձ, մյուսն՝ իրեն: Լուս ու մունց խմեցինք, բայց զգում էի, որ այդ լուսքունը պիտի պայթի: Եվ ինչ՝ շաղը վրան մի վարունգ միջից կիսեց, լափուճը մեկնեց ինձ՝ աչքը խորանանկ կկոցելով ու թե՝ Դոն Կիխոտ, էս էն վարունգն է՝, էն խիյարս... հուա տուր՝ գնա: Տվինք իրար ու բարձր-բարձր ծիծաղեցինք, ի՞նչ ծիծաղ, քուսակի նման քունգատում էինք, ու մեր այդ խրիսինց-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ծիծաղի արձագանքը հնչում էր երկան քարի թերծերում:

Սիրելի իմ Սանչո, կատակը՝ կատակ, ամա մտքովդ շանցնի՝ էս ինչ մանրութերի մեջ եմ քաշում քեզ: Երեւակայել չես կարող, թե ինչ դժոխային գրոծ էր կատարել Արտաշը, էն մոշ ու մացաղից հետք էլ չի մնացել: Ցակատի բերանն է տվել, քլոնգ ու քահի, ետ-ետ արել, ինչպես ինքն էր ասում՝ մինչեւ Վընգեն խազը: Հետո, երբ քլոնիցը վերից վերջին անգամ վար էր բերել, զնացել էր մի երկար ու սալ քարի, շուրջը՝ քաց ու ցեխ: Սի կերպ կրնկահան է արել քարը ու... մնացել շշմած, ջու՞ր, մի՞թե, չի կարող պատահել, քա ասում են՝ Աստված չկա... Խարարն ընկավ զյուղը՝ քա չեք ասի՝ Արտաշն աղբյուր է հայտնաբերել: Զարմացան, ուրախացան, նախանձեցին: Միայն Սիրզիրեկանց Մուրանը գիտեր, որ այդ կողմերում ջուր կա: Սի ժամանակ երկար փնտրել էր, որոնել՝ ապարդյուն: Սի՞թե պասի պատմածն անիրական ավանդություն էր, ըստ որի՝ Դիլլաքանց բաղից վեր՝ մի իհնգ հարյուր ոտնաշափի վրա, ժամանակին մի վարար քյահրիզ կար, ո՞վ իմանա՝ որ դարում, կարող է եւ հերանոսական ժամանակներում: Տափաստանի խաշնարած ցեղերը սար բարձրանալիս կանգ էին առնում այդտեղ, վրաններ խփում ու մնում մոտ մի ամիս, անբարիշ պահելով իրենց, նեղություն էին տալիս տեղացիներին: Ինչ անեն, ինչ չանեն՝ որոշեցին կորացնել աղբյուրը, որ ջուրը զետնի տակ տա ու կորչի... Էդ օրվանից ջրի հետքն էլ կորավ, խաշնարածներն էլ այլեւս չերեւացին մեր կողմերում:

Արտաշը ջրին ընթացք տվեց՝ զետնատակ հենապատերի վրայից մի քանի սալ քար էլ կրնկահան անելով, եւ տեսավ, որ այդ հենապատերը զնալով խորանում են հողի ընդերքը, ներաը՝ մուր, հունն էլ՝ նեղ, որով հնարավոր չեր զնալ դեպի ակունքը, շարունակելն անհմաստ էր: Եվ խկապես միտք չուներ՝ ավելորդ չարչարանք: Չուրը կա, Աստված տվել էր ու վերջ: Դիմացը քսան տոննանոց ջրամբար շինեց: Բոստանի ցանկապատը ետ տարավ, շրջակայրի հողերից նոր տարածքներ կալմեց առավ, նորից ցանկապատեց, գրեթե հազարհազար հինգ հարյուր մետր երկարությամբ ու խաղողի այգի հիմնադրեց: Էդ անծայր ցանկապատի համար քանի՞-քանի էշարեն ցախ կլինի բերած Պերյու սարի լանջերից՝ Տերը կիման:

Խաղորի տիպային այզի՝ մի հեկտարի չափ, երկու տարեկան էլ չկա, տնկիները՝ խնդրդնու տեսակ, բռնել են արդեն, պինդ կառչել հողից ու շոշ են տալիս, ինչպես ինքը՝ Արտաշը, որ այդպես հար-հավիտյան կառչած է մնալու է ասես աշխարհում ոչ մի տեղ նմանը չունեցող այդ հողակտորին... Երրորդ տարում արդեն քերք է տալու: Իսկ մինչ այդ՝ այգու միջշարային տարածքներն օգտագործում է լորու, պոմիլորի, սոխի, կարտոֆիլի, վարունգ ու պղպեղի, ել ինչ ասես՝ ինչերի տակ: Ինչ ուզում ես ցանքի, եղ ջրի տակ Աստված մեկը հազար է անելու: Էս է Արտաշի տեսակը, բայց նաև եղ չի միայն: Սիշից քանի-քանի կես է դառնում, մի կեսը՝ Չոլեն քաղում, մյուսը՝ սեփականաշնորհված իր հողերի վրա ու ցանքի, հնձի ու խոտհարքի, աշնան բաց ու բոնին, ամռան տապի ու ձմռան բքերի մեջ: Եվ դեռ էղքանից հետո էլ Աստծո ոչ մի օր, ոչ մի ժեմաժենքի դատարկ տուն չի դառնում, օրական արած փայտը աջ ու ձախ հակ տված իր անլեզու ուլախին, հորբի համար հակերի արանքում կանաչ խոտ, ինքն էլ մեջը փափուկ նստած, հոգնած-դադրած, կարծես մի բուռ, կեալին զլիսին, մթնժորում հազիկ երեւացող, աշխարհից վերացած, չես էլ ջոկում՝ եղ գլուխը կեալու տա՞կ է, ուսերի վրա՝, թե կեալի հետ ինչ-որ հեռու հեռավոր մի տեղ...

Բա՛, էսպիսի քանն՝ ը, Սանչո: Հոպ լա՝ էսպես կասեր էն տուն-տունիկի հայտնի հեքիաբասացը: Բայց իմ ասածը հեքիաք չէ, իրականություն՝ իրականից էլ իրական: Առայժմ:

Բարին ընդ քեզ:

Հարզանքներով՝

**Գոն Կիհոնը**  
2002թ.

## ՆԱՄԱԿ ՎԵՅԵՐՈՐԴ

Սիրելի Սանչո.

Վստահ եմ՝ ողջ ու առողջ ես: Դրա համար էլ որպիսությունն չեմ հարցնում: Բայց ահա, թե ինչի մասին եմ ուզում հարցնել քեզ. Որ ասում են, երկուշաբթին ծանր օր է, հավատա: Թե այդպես չես կարծում՝ ինձրեմ:

Ես դիմում են Աննային.

-Արտաշն էլի՞ առանց հաց ու ջուր է գնում հանդ...

-Չէ՛ է՛,-բարձր ու զանգակ ծիծաղում է, ու ծիծաղը կավե կուլայից բափկող ջրի պես քըթ-քլթում է,- էն քանի օրն էր. իբր խոռվ էր ու նեղացած, կարծում էր՝ չգիտեի, որ բոստանում կարտոֆիլ էր քանդում, խորովում-ուտում: Արտաշը սովա՛ծ մնա՞-, -ծիծաղի միջից ծոր է տալիս Աննան, եւ թվում է, թե էդ ծիծաղի քըթքոցը վերջ չախտի ունենա:

-Բա էդ ո՞նց եղավ, որ հաշտվեց...

-Արա, մեր հայը քոռ ու արեւ մարդ է, մեկ տեսար՝ անձրեւ, մեկ էլ՝ արեւ: Հիմա հաց ու ջուր է տանում՝ հերիք չէ, հետոն էլ՝ մի շիշ օղի:

-Էն օղո՞ց...

-Հա՞, էն էլի...

Իսկ «էն օղու» պատմությունն այսպես էր, Արտաշը բոստանից եկել էր, էշին երկու հակ արած փայտ, հակերի միջեւ՝ կանաչ խոտ, ինքը՝ մեջը նստած, կա ծմկներին էլ մի քանի երկար ձող: Աննան թե.

-Արա, քամահդ կտրվի է՛, քամահդ, էշին չես խղճում՝ հերիք չի, քե՞զ էլ չես մեղք գալիս...

Արտաշը ձեն ու ծպսում չէր հանել, լուս ու մուսջ գրկի ձողերը շրկիսկոցով բափել էր բակի սալահատակին, իշել, խոտը տարել գոմի ախոռ, եկել փայտը բափել օղերորման կարսայի մոտ, որի տակ կրակը պլայում էր այնպես, որ նայողին կրվար, թե իրենից խոտող կա...

Արտաշն էդ օրը մի քիչ օրով էր եկել, մտածել էր՝ գնամ մի տեսնեմ, թե Արայիկը թի առաջին բափից ինչքան է օղի թորել, մի քանդուրս է եկե՞լ, թե՝ չէ: Մոտեցավ, կրակից քիչ հեռու դրված դույլի կա-

փարիչը ես տարավ, ու համկարծ օձ տեսածի պես ընկրկեց.

-Ես արադն ինչո՞ւ է պղտոր...

Արայիկը՝ որդին, թե՝

-Շատ էր թունդ՝ 90 աստիճանի: Մի քիչ սառը ջուր խառնեցի, որ խմվի...

-Ղալաք ես արել: Արադը փշացրել ես: Աչք հանեմ, հա՝, աչքդ...

-Արա, լեզուր պապանձվի, եղ ի՞նչ ասացիր,-գրեթե ծկլթաց կինը, ու Արտաշը մնաց սառած, հանկարծ հիշելով, որ որդու աչքի մեկը չկա. Կորցրել էր ականի պայյրյունից... Թվաց՝ ջուր մաղեցին զլխին, սառը, սառսուցնող ջուր: Աշխարհը զլխին շուր եկավ, աչքերը մքնեցին, ու ոտքերը հազիկ քարշ տալով՝ կտրեց քակն ու փլվեց տան հակառակ պատի տակ քանի՛ տարվա ընկած գերանին:

Երեկոյան տուն չմտավ, չնստեց իրինահացի: Գերանի վրա ննջեց, մնաց ու երբ ծեզին արթնացավ՝ վրան շաղ էր: Ուսերը թափ տվեց, սարսուաց: Ծեզը ծեզին էշը հանեց գոմից, կապը բռնած, առանց հաց ու ջրի զնաց բռստանը: Բռստանը՝ Զինհազի աղբյուրից ներքեւ, Դիլլաքանց բաղի ձորի բողազում: Էշը օրիգ տվեց բռստանից վեր՝ բացատում, փալանն իջեցրեց, մեջքի վրա զցեց գետնին, որ արեւոտի, ինքն իջավ բռստան ու մտավ քարակապ հոլիկը, մեկնվեց ինքնաշեն քախտին եւ, չփառես ինչո՞ւ տմբաց: Հոլիկը նոր էր շինել: Հինը ծղոտածածակ էր, ուր մի անգամ օձի շվեց լսելով ու նրանից ազատվելու համար՝ հոլիկը հրո ճարակ դարձրեց, համոզված լինելով՝ օձն էլ հետը...

Զեռքը բանի չէր զնում: Թախստին ընկած՝ տեղը տեղ չէր տալիս, մոխսմուխատում էր, աչքերի պեծը խամրել էր, այտերի պտուկները ներքին այրումից՝ հուրիքատում, ինքն իրեն տալիս էր ու առնում՝ էղ ինչպե՞ս եղավ, որ այդ պահին չիշեց, թե մաղարի աչքի մեկը չկա... Լեզուն պապանձվեր, Աննան ճիշտ ասաց, դա դեռ քիչ էր՝ փայտը պիտի առներ ու տար զլխիս... Ծանը ու մռայլ խոհերը վանելու համար փորձեց լավ-լավ բաներ մտածել. Հունան ավարտել էր երկու հեկտարի վրա, մեկը՝ ցորեն, մյուսը՝ գարի: Ցորենի հեկտարից՝ ուր ցենտներ, այսինքն՝ 800կգ, զարուց՝ 12 կամ մի տոննա երկու հարյուր...

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Քիչ էր, բայց Աստված եղածը շատ չհամարի: Հողին ի՞նչ է տվել, որ ստանա. Ոչ պարարտացում, ոչ սնուցում, այս էլ քանի տարի՝ տա՞սը, տասներկու<sup>9</sup>: Եղբանից հետո դեռ դժգոհում էլ ենք նրանից, մերը չմեռնի՛... պակասը կրացնենք օրուց, զինուց: Կարծեմ անցյալ տարի Արայիկը թթից հարյուր լիտր արադ քաշեց, երկու տոննա խաղողից՝ 300... ես տարի՝ չէ-չէ, մի ուրսուն լիտր արադ, անցյալ տարվանից՝ ոչ պակաս զինի:

Զեռքը տարավ, կոշտ ու կոպիտ ափով շոյեց ճակատը, ասես՝ սրբեց ունքամիջի մոայլը, ու դեմքը հետզիետե պայծառացավ, բարակ շորբերի վրա մայիս հայտնվեց, հիշելով, թե ինչպես մի շաբար առաջ աղջիկը՝ Ալիքան, լտոնն շահեց՝ 500 հազար դրամ: Եդ փողով փեսան գնաց ու Նոր շենից մի կով գնեց 110 հազարով, երկու ամսական հորքն էլ տակին: Մնացած փողերով՝ ալյուր, շաքարավազ, շաքար, ձեր, երեխաների համար՝ շոր ու շիրբ: Մի խորով՝ մի ամբողջ տարվա պաշար:

Ել ի՞նչ ես ուզում, Հայրապետյան Արտաշ: Եվ դեռ ասում էիր՝ կոլխոզը քանդեցին, մեր տներն էլ՝ հետք: Եղած-չեղածը թալանեցին-փոշիացրին, հա՛, հա՛, էղպես էր, բա էղպես չէ՛ր... Տունդ չքանդվէ՛ր, Կիրովի անվան կոլխոզ, տարեկան 2000 հա աշճանացան էինք անում, տոննաներով ուղարբենի տալիս, ստանում 4000 տոննա ցորեն, ի՞նչ ցորեն, 500 հեկտար այգուց՝ 7000 տոննա խաղող, 2000 տոննա կաթ, 350 տոննա միս, 3.5 միլիոն հատ ձու, տունդ չքանդվեր հա՛, որ քանդվեց: Ցակատը դրին այգիների վզին ու մորթեցին: Մնաց մատների վրա հաշված մի քանի հեկտար, էն էլ սեփականաշնորհեցին, մարդք՝ 8-10 արիս: Ի՞նչ անեի, թե հարյուր մետրանոց: Այս ես ու Աննան երեք հեկտար էինք մշակում, տարեկան 35-40 տոննա խաղող էինք հանձնում էն անտեր տերությանը, որ հիմի չկա...

Արտաշը տակ էր տալիս, գլուխ ու էլի էն նույն մտքին էր, թե ինչու Արայիկին... Մարդ Աստծո, վեր կաց՝ մտիր բռստան, ախր ոտքի վրա չորանում է: Սոխի մարգերը կծղում են, լրին ձեռից գնաց, կարտոֆիլի ցողունները՝ բառամում, բռնշկում են: Վարունգի քաղերը լեզուները հանած կախ են ընկել հողի կոռճների վրա: Դղմի քաղերը

ելել են չափարն ի վեր ու, բերանները քաց, մի կարիլ անձրեւ են աղերսում: Իսկ երկինքը՝ քաց կապտավուն, ուր արեւի շիկացած գունդը պլթպլռում է, ինչպես եռացող ջուրը եռոտանու վրա: Չե, աջս ծախին չեմ խփի, հավես չկա: Էս անտեր երկուշաքին ծանր օր է... մեջքը կոտրել է այեսք: Օրն իրեն էլ մաշեց, ինձ էլ: Վեր կենամ՝ զնամ, Աննայի հետ հաշտվեմ, Արայիկի հետ էլ, համ էլ... տափարը գալու ժամանակն է, կովերն ո՞վ կրի, Աննա՞ն: Արա, հարսին կքողնե՞ս, որ կով կրի: Եղ մատղաշը մեջք չի՞... Հրե՞ն Հակոս եկել ու երեւի կես ճանապարհին սպասում է, որ առնեմ էշի վրա ու տանեմ տուն...

Դիլլաքանց բաղի ձորի բողազում նստեց իրիկնամուժը: Բոստանը մքննժորում աղոտացավ, ու լորու սարինները երեւացին ստվերների պես: Շիկացած օրվա տապը մնաց մարգերի մեջ, եւ օղը դարձավ խեղդուկ: Արտաշը՝ մքննժորում հազիվ երեւացող ուրվապատկեր, ելավ բոստանից ու դուռը կամաց փակեց: Եշի օշինգն արձակեց, փալանը քաշեց մեջքին ու առաջն արեց: Խոզ ու համը կենդանին առաջին անգամ քայլում էր ականջները ցից, թերեւ ու առանց քենի:

Ես Աննայից հարցնում եմ.

-Արտաշն էլի՞ առանց հաց ու ջուր է գնում...

-Չե՞... է՞,-ծոր է տախս, ապա՝ բարձր ու զիլ-զանգակ ծիծաղում: Ծիծաղը՝ այնպես վարակիչ, կավե կովայից թափվող ջրի պես քլթ քում է, եւ թվում է, թե էղ քլթ քլթոցը վերջ չի ունենա...

Այս էլ այսպես, սիրելի Սանչո: Առայժմ:

**Մնամ քն Գոն Կիխող:**  
**2000ր.**

## ՆԱՄԱԿ ՅՈԹԵՐՈՐԴ

Սիրելի Սանչո:

Բարի օր քեզ: Եվ ահա թե ինչ, վերջերս մտքովս այնպիսի բաներ են անցնում, այնպիսի տարօրինակ բաներ, որոնց մի տեսակ դժվարանում եմ հաղորդակից անել քեզ: Նայում եմ արբունքի հասնող տղայիս ու մտածում. Ի՞նչ պսակվելու ժամանակն է եւ... ինչպիսի հարս կունենամ ես:

Իսկ եքեւ հարս ունենայի՝ անունը Սոնա կլիներ անպայման: Այդ անունը ինձ անշափ դուր է գալիս, անասելի սիրելի է ինձ համար, որովհետեւ այն իմ տատի անունն էր, այն էլ ինչպիսի՝ տատի, ինչպիսի՝ Սոնա... Հարյուր տարին, իր հարյուր տարվա մենուրյան մեջ եւ իր հարյուր տարվա ամենքի հետ, ծալեց, դրեց տակը ու մի օր էլ ասաց.

-Թոռս, անուշա,-իսկ թոռը քառասուն տարեկան էր,-սրանից հետո ինչքան ապրեմ՝ քո հարսի խաթեր, որ պիտի գա...

Դրանից հետո նա ծալեց եւս չորս տարի:

Եքեւ ես հարս ունենայի՝ անունը անպայման Սոնա կլիներ. դժվար ապրուստի այս անծիր ծիրի մեջ ինձ որիշ հարս ձեռ չեր տա: Սոնան, անշուշտ, գեղեցիկ կլիներ. բարդու պես սլացիկ, թխակուն դեմքով ու սեւորակ աչքերով, որոնց սքանչելի գեղեցկուրյան մեջ նստած կլիներ մշտնջենական մի հոգս՝ պարուրված խելացի ու անսպաս համբերությանք: Սոնան լանջն ի վար ծփացող բուխ ու հաստ ծամ կունենար: Ոչ թե նրա համար, որ երբ խելքը զիսին չպահեր, սկեսուրը ձեռքովը տար, այլ գորովանքով առներ ափի մեջ, համբուրեր ու տաներ դեսպի ծոցը... Իսկ Սոնան խելոր չինել չեր կարող: Եքեւ իմ ուզած Սոնան է, նախ՝ իր եղունգները չեր ներկի, մանավան՝ դրանք երկար չեր պահի, որոնց տակ կեղտ նստի, ավելորդ հոգս պատճառի, ժամանակ խլի, առանց այն էլ ժամանակը շատ սուղ է: Գլուխը կկորցներ դժվար ապրուստի այս անծիր ծիրի մեջ...

Սոնայի նշանորեքին ուկե մատանի ու ուկե ականջօղեր կտանեի, ուկեշղթա վզնոց՝ ուկեձույլ խաչով, որ երբ զցեր վզովը՝ խաչը ճառագեր կրծքի վրա, ոչ թե որպես զարդ, այլ որպես այն խաչը, որի վրա ակամայից խաչվում են... Սոնան զոհ ու առինքնող ժպիտով

կընորուներ իմ նվերները, բայց հարս զալոց հետո՝ կհաներ, կդներ զարդատուփի մեջ, կպահեր ապահով մի տեղ, մտածելով՝ թող մնան, չեն խանգարի... Հետազայում հազիվ կիշշեր դրանց մասին, եթե պատահմաճք ժամանակ ունենար դառնալու իր պահուստներին...

Բայց Սոնան ժամանակ որտեղի՞ց կունենար. հարսանիքից անմիջապես հետո, հաջորդ օրը, հարսանեկան շորերը կհաներ, կծալեր-կդներ սնդուկում, տնային խալաք կհագներ, հաստ ծամք կօդակեր գլխի շորջ՝ գլխաշորի տակ, կավլեր բակը՝ աչք ածելով՝ ինչ ինչ տեղ է...կմտներ գոմ, որ մաքրված կլիներ ու ցախավելլ դրված անկյունում: Գոմի տիհած հոտից դեմքը կծամածուեր, անհամարձակ առաջ կգնար. ոտնաձայնից գոմի վերին անկյունում սեւ ու սիրուն հորքուկը վեր կկենա, կմզգա վանդակի միջից՝ օտարոտի նայելով հարսին: Հարսը մի պահ ետ կրաշվեր, ապա ժպտալով կմոտենար, ձեռքը ճաղերի արանով կտաներ, նախ երկչոտ, ապա համարձակ կշոյեր հորքի գլուխն ու խելոք աչքերը եւ դեռ չիմանալով՝ ինչ է հորքի անոնք՝ ինքը նոր անուն կդներ՝ Ցիկ Ամրամ...

Սոնայի համար այնպիսի հագուստ կպատվիրեի, ինչպիսին հնում հագնում էր իմ տատը, գլխին պալի ու ճակատանց, որից մինչեւ հոնքերն էին հասնում արծաթե տասանցները: Բայց իմանա այդպիսի դերձակ որտեղի՞ց: Դե, ինչ արած, թող ինձ հնառն համարեն ու հնադավան, մինչդեռ Սոնան ջահելոց տատի պահվածք կունենար ու կմնար նրա վարք ու բարքին... Ինձ կրվար՝ գոմից դուրս կզար ու անմիջապես կրածրանար տուն, ավելլ թողնելով սանդուղքի տակ: Սակայն, նա կգնար դեպի խոզանոց, դռնակը ետ կտաներ ու կնայեր ներսը: Սերունը պառկած կլիներ թաց հատակին, ու տասնմեկ խոճկորները, ամեն մեկն իր բաժին պտուկն առած, ազահությաճք կծծեին հրելով ու ցնցելով մերունի մարմինը: Այստեղ պիտի հիասթափվեր, մտածելով՝ խոզանո՞ց էլ պիտի մաքրեմ:

Մինչդեռ, հակառակ իմ ենթադրության, կորոշեր՝ խոզանոց էլ կմաքրի, գոմ էլ եւ այդ մտքի վրա կգնա ու կհայտնի շան՝ Լորդի բնի մոտ: Վախվորած ետ կրնկրվի, տեսմելով՝ շունը չի հսչում, վրա չի արձնում, մի ականջը ցից, մյուսը՝ կախ, նայում է իրեն խելացի ու խոնարհաբար, ոհսկ կանի, կմոտենա, որ շան գլուխն էլ շոյի, բայց հանկարծ շուր կզա, կրածրանա տուն ու կվերադառնա մի կտոր հացով՝ շան համար: Շունը հացը ձեռքից կառներ, կուտեր՝ նայելով իրեն որպես յուրայինի:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Սկեսուրը հարսին բան ու գործի չէր դնի, կրողնի իր կամքին, որոշ ժամանակ, գուցե՝ անորոշ։ Հետեւից կնայի՝ ոտից-զլուխ չափելով, ակնդետ հետեւելով, մտածելով՝ ինչ հագուստ-կոպուստով է եկել՝ «հորանց շորերը» փոխել-քողել է հորանց տա՞նը, թէ՞... Տակ կտա, զլուխ կտա, մինչեւ կպարզի ու կիամոզվի, որ մեր տան շորերն է հագին, հետո զլուխը կախ ինքն էլ կզբաղվի իր գործով։ Սկեսրոջ այդ «ստուգարքը» աննկատ չէր մնա, հարսը կնկատի ու չնկատելուն կտա, չմտածելով՝ մի տարի հարսնություն արա, հետո՝ շնորհյուն...»

Սոնան տաշտակը կղներ ծորակի տակ, կեսրայրի շորերը կրափեր մեջը, էն շորերը, որ հազնում էր ու գնում գոմ տափարի տակը մարքելու, առը դրւու տանել-թափելու, անաստմին ջուր ու խոտ տալու։ Կեսրայրի այդ շորերի գրմահոտը ջրահան կաներ, հետո վրան եռացրած ջուր կածեր, կլվար, կոլորեր, մեկ-մեկ կմզեր, քառ կտար լվացքի պարանին, արեւոտի, չորանա, չորանալուց կիավաքեր, կարդուկեր այնպես, ասես կեսրայրը դրանք պիտի հազներ ու էլի ոչ թե գոմ զնալու, այլ՝ տոնախմբության։ Սկեսրոջ շորերն առանձին կլվանար, մի քանի անգամ ջուր կտար, կմզեր-թառ կտար, չորանալուց կիավաքեր, կարդուկեր՝ այնպիսի հոգատարությամբ ու խնամքով, որ երբ սկեսուրը հազներ, կրվար, թե ինքը ոչ թե սկեսուր է, այլ՝ հարս։ Սկեսուրը ինքն իրեն, բայց հարսի հասցեին կշնչա, - մորդ կարը քեզ հալալ, եղ ինչ ծիծ է, որ ծծել ես...»

Սոնան, տունը հավաք-տեղակ անելուց հետո, կանցներ խոհանց, կեփեր-կրխեր, սփոռոցը կփուեր սեղանին, ձեռքի ափով կհարթեր, սեղան կզցեր, շերեփը կառներ ձեռքը, պնակները կլցներ, մեկը կղներ կեսրայրի առաջ, մյուսը՝ սկեսրոջ։ Վերջինս կիսամպիս նայելով հարսի հեզանազ շարժումներին, կմտածեր՝ շերեփն էլ է ձեռքն առել, ինձ էլ ի՞նչ մնաց... սակայն իսեր չէր նայի ու չէր էլ կարծի, թե էղ շերեփ առնելն էն շերեփ առնելն է...»

Օրերը կանցնեն հերթով, կանցնի մեղրամիսը, ու մի օր էլ հոգու մեջ կարքնանա հորանց տան կարոտը, կիիշի հորը, մորը, եղբորը ու նրա կնոջը, եղբոր երեխաներին... Երեսկահատում՝ վարդագույն ու ամորիսած մի ժպիտ, կդառնա սկեսրոջը.

-Այս...»

-Վու՞յ, քոռանա՞մ, եղ ի՞նչ ասացիր, այա՞-, որտեղի՞ց իմացար, թե էս օջախում էղակն է ընդունված... Դն, մեկ էլ ասա...

-Այս...

-Աջան, ի՞նչ, բոյիդ մատաղ, մի քաշվիր, ասա...

Հարսը հազիվ երկյուղած կշշնջա.

-Ասում եմ՝ գնամ հորանց տուն ու էլի եւս գամ...

-Եղ ի՞նչ հարցնելու բան է, ջանս, քեզ նման հարսի համար հորանց տան ճանապարհը միշտ էլ բաց է...

Սոնան կգնար հորանց, բայց էղ գնալը կապված կլիներ ոչ այնքան սրտում կուտակված հորանց կարուտի հետ, որքան վերջին օրերին իրեն անհանգստացնող այն անհասկանալի տագնապի, որ առաջ էր բերել խլրտոցը կրծքի տակ ու սրտխառնութքը...Կյանքում ոչ մի անգամ նման բան չէր պատահել իր հետ: Կգնար մոր հետ, ոչ, ավելի շուտ՝ եղբոր կնոյ մոտ բացատրվելու, որովհետեւ նրա հետ հարմար կլիներ կիսվելը:

Հորանց տնից կվերադառնար պայծառացած, տագնապը լոեցրած, քանի որ եղբոր կինը համբուրել էր իրեն անզուսպ հրճվանքով ու... հասկացրել, թե ինչն ինչոց է...

Հարսի մեջ կատարվող փոփոխությունն աննկատ չէր մնա սկեսրոց աշքից եւ գուցե էղ բանը նախ սկեսուրն էր նկատել, երբ հարսի ձեռքից քնիքանքով առել էր ցախավելը, արգելել գոմ ու խոզանց մտնել, անասունի տակ մաքրել, երկար ու բարակ լվացը, տուն-տեղակ անել:

Սոնայի քայլըն օրեցօր կծանրանար, ինչ-որ հանդիսավիր մի քայլը, իսկ աշքերում մոտալուս մայրության հաճելի մտահոգություն: Կեսրայրի մոտով անցնելիս՝ աշքերը կիսոնարհեր, կիսուսափեր նրա հայացքից: Մի օր էլ սկեսուրը քաղցրահունչ աշք-ունքով անելով՝ կղիմի տղային.

-Տար, որդիս, հարսին ամեն առավոտ կանուխ տար Շաղասարի բացատները, քայլեք մարգագետիններով, հազարանուն ծաղիկների բուրմունքների մեջ: Տար նրան մայրամուտներից առաջ, շուր եկեք Սեծ ու Փոքր նահատակներով, որ գիշերները հանգիստ քնիք, որ երազներն էլ լինեն բարի ու անխռով: Իսկ մի օր էլ իմ հարկի տակ կինչի մանկան այն ճիշը, որ իմձ կրվար, թե այդ իմ նախսապապի ճիշն է՝ այնպես ու այնքան նման տոնհմականչի...

Բա՛, իմ սիրելի Սանչո, այդպիսի բանե՞ր:

Դե ինչ, մնամ քո՝

**Դոմ Կիխոտ  
2001թ.**

## ՆԱՄԱԿ ՈՒԹԵՐՈՐԴ

Իմ սիրելի Սահնո,

Ողջու՞յն... Իմ այս հերթական նամակը կվերնագրեի՝ «Անցյալ կորուսյալ»: Սա մեր մանկության մի ընկերոջ հետ հանդիպման մասին է, անակնկալ մի հանդիպում, որից հետո ես երկար մորմորում էի... Եվ այսպես, ես ու Սիշան դեմ առ դեմ ելանք՝ ճանապարհի կեռմանում, ճամփի ծնկածալի տակ գտնվող իր տնից հազիվ մի քանի քայլի վրա: Ցատկեց էշի վրայից, ու, կապը ձեռքն առնելով, թե.

-Հըմ, բարեւ...

-Եղ ինչի՞ հանկարծ իջար ավանակից:

-Սի տեսակ անհարմար զգացի...

-Ինչ է՝ Քրիստոսը ձի՞ն՝ մտավ Երուսաղեմ...

-Քրիստոսի ժամանակ ձի կա՞ր, կատակի տվեց, ապա-եղ ու՞ր՝ ծեզը-ծեզին...

-Իջնեմ ծխախոտի... թե շտապ տեղ չես գնում, սպասիր, զալիս եմ: Ետղարձին Սիշան տերում եր:

Գնացինք արեւին ընդառաջ, որ դեռ նոր եր ծագում՝ իր ոսկե-դեղին փայլերի մեջ առնելով հայրենի բնաշխարհն ու մեզ: Գնում էինք լուռ ու մունջ, խոր խրկված ինքներս մեր մեջ: Ինքն ինչի մասին էր մտածում հայտնի չէ: Ես՝ «Մանկություն իմ ոսկեծամ, մանկություն իմ, որ անցար...»: մանկության պատի տակ եմ, Սիշայի հորանց տան պատի տակ: Հացի մի փշուր, Աստծո տված մանանայի նման, բռան մեջ, մյուս ձեռքով պահում եր գիրքն ու արտասանում, դեմ ընկած տեղն էլ՝ աշք ածելով գործին. «Ջուն է զալիս փարիլ-փարիլ, հետն էլ՝ անձրեւ կարիլ-կարիլ...»: Եվ, իսկապես, ձյուն եր զալիս, խոշոր, աստղանման փարիլներով նստում մեր ուսերին, պատի ճեղքերում, բակի սալահատակին, բռնի ու ցախանցի վրա: Իսկ երկնըից առկախ ձյունե այդ ցանցկեն ճերմակ, թափանցիկ ու մաքրամաքուր վարագույրից անդին մեզ անհայտ աշխարհ եր եւ... Տատը դեռ հորքն եր փնտրում դաշտի միջին...

-Եղ որտե՞ղ ես, ե՞...

-Հը...,-սթափվում եմ,-մանկության պատի տակ...

-Ու՞մ ես կորցրել այնտեղ:

-Քեզ:

Սիշան ծիծառում է լախ-լախ, ներս ընկած ուսերը ցնցելով: Ասես ուզում էր վրայից բռքափել իր վարչունիհնգ տարիների բեռը:

-Դե, հիմա էլ մանկության պատի տակ ենք, էլի, միայն թե պատը փուլ է գալիս ու մեզ տակովն անում...

-Առանց այլարանությունների, ախսեր, առանց այլարանությունների... Ես քո մաքենատիկայի գրավորներն էի արտագրում, դու` իմ գրականության...

-Հա, եղան էր, բայց ինձ ոչ իմ մաքենատիկան պետք եկալ, ոչ էլ՝ քո գրականությունը... Ա չու,-բգեց էշին:

«Ա չուն» մեզ հասցրեց «Ուխնիլատեղ»: Այստեղ, սովորություն կար՝ մարդ թե անասուն մի պահ կանգ են առնում, կարծես քնազդորեն, շունչ են քաշում, գուցե եւ՝ աղորում, որտեղից էլ՝ «Ուխնիլատեղ»: Սիշան կապը զցեց էշի զլխով ու բաց բողեց: Զիշ անց խոլ ու համր արարածն անհետացավ ցարի քոլոսում: Ընթացքին մացառը էշի վրայից ձգեց խորչին ու քաշեց իր վրա: Նստեցինք հողի միմի ճնքի: Մեր դիմաց՝ Զինհազի տարածքը, որ տապ տարի առաջ կոլտնտեսության խաղողի փարթամ ու ընդարձակ այգիներն էին, որ հասնում էին մինչեւ Երկան քար, մինչեւ Վտածեն ձոր, դեմ առնում Ավունց քարե բանիին: Զինհազի տարածքը ինչպես արծաթափայլ ու արեւահավաք մի հսկայական սինի...

-Միրտդ չի՝ ցավում,-լոռությունը խախտում է Սիշան,-երբ հիմա նայում ես էս անտեր-անտիրական ամայությանը,-եւ, առանց պատասխանի սպասելու, շարունակում-իմը ոչ թե ցավում, այլ ոռնում է այն շան պես, որի ձագերը կենդանի-կենդանի բաղել են...

Դառը խոսքեր՝ միջնակարգ-մասնագիտական կրթությամբ նախկին գյուղատնտեսի ու խաղողագործական բրիգադի բրիգադավարի շուրթերին: Նրա օրոք ու անմիջական դեկավարությամբ վարչունական թվականներին Զինհազի տարածքում 50 հեկտարի վրա հիմնադրեցին այն այգիները, որ հիմա չկան: Այդ տեղամասը տարե-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

կան 1000 տոննա խաղող էր տալիս, էն էլ՝ ի՞նչ խաղող: Տասը տարի առաջ ցաքատը դրին վզին, մորթեցին, ինչպես կասեր Սիշան, պատճառաբանելով՝ դաշտամասի այգիները հերիք են, Զինհազը դարձնեմք արոտավայր: Գյուղամերձ է, թող գյուղի տավարդ, գոմից ելնելուն պես, անմիջապես հայտնվի հանդում... Եվ՝ ի՞նչ: Անցած տասը տարում բերդաշենցիները կորցրին ոչ ավել, ոչ պակաս՝ 10.000 տոննա խաղող: Դաշտամասի այգիների, որ գյուղից 6-7 կիլոմետր հեռու են, պատերազմի ժամանակ կեսը բուրքի կոխսան դարձավ, մնացածը սեփականաշնորհեցին, տունը՝ մի քանի արիս: Զինհազինը հողի երեսից ավեցին, պատճառներից մեկն էլ՝ անջրդի են: Չօքնեց նոյնիսկ «խաղողի արքա» Զահանի գգուշացումը. «Զինհազին ձեռ չտաք, նրան ջուր պետք չէ, ընդերքը՝ ջրամբար, Նուզե ծմակի զիզիլան զովն էլ հետք...»: Չօքնեցին խորհրդից, ոչ էլ Զինհազի տնտեսական առավելություններից, որ քի տակ էր. Տնից դուրս եկ ու անմիջապես հայտնվիր այգում, աչքի առաջ ու սրտի մոտ: Դե, հիմա թոքեղ տալով գնա մինչեւ Դավալու տեղ՝ հետիւտն կամ էշով: Մի գնալ-զալ, էղ արանքում՝ օրը պրծնում է...»

-Է՛...է՛...էհ... վրա բերեց Սիշան, ես ինչ աշխարհ է, չեմ հասկանում... Պատկերացնո՞մ ես՝ մենք ոչնչացրինք մեր իսկ ձեռքերով արարածը եւ դրանով ոչնչացրինք ինքներս մեզ... ախր այստեղ իմ իսկ քառասուն տարվա անցյալն էր, որից բացարձակապես ոչ մի հետք չմնաց: Երեւակայիր, մարդ՝ առանց անցյալի: Ես հիմա հենց այդ մարդն եմ...»

Սիշան լրեց՝ մուայլ ու մոլոր հայացքը նետած անորոշ հեռուներին: Դեմքից աղուն կարում էր, տեսքն էլ՝ կողոպսվածի տեսք: Հակառակ մեր տրամադրության՝ աշխան անամպ, արեւոտ ու պայծառ օր:

Զեռքի մեկնես, կհասցնես շոյել տավարի տափանած սիրտն այն հողերի, որ թեթևակի թեքությամբ բլուրներից իջնում են դեպի Զինհազի աղբյուրը: Աղբյուրից վեր լեն ու բոլ սարայն է՝ մերկ պատերով. Տանիքի շիֆերն ու փայտամածը քանդել-տարել են, ի՞նչ իմանաս՝ ովքեր: Մացառը կոխել էր սարայի շրջակայքը: Մոշ ու փշի արանքներում՝ քանդված ու կոտրատված հենասյուների, մետաղալարերի խճճված կույտեր՝ աճյուններ շիրմաներից հանված: Սարայի տակ՝

քուրուրիի, ծծմբի, դրստի մնացողմներ, տակավին պահած իրենց հոտերով, որ թվում է՝ քամի լինի, փշի մեր կողմը, խտուտ կզային մեր ունգերն այդ ծծմբի, քուրուրի ու դրստի միախառն հոտերից...

-Ես իմաս հաճախ եմ երազներ տեսնում,-դողում է Միշայի ձայնը,-թեայտ արքմնի էլ եմ երազների մեջ... Հերթով զալիս անց են կենում իմ նախկին խաղողագործ հեկտարականները՝ Սիրզարեկանց Մուրանը, Դերքյորանց Աշոտը, որ իմաս չկան, Սուպուրանց Սիրանը, Բյազունց Ժելան, Ուղունց Աշոտն ու Արտաշն իրենց կանացով: Ո՞ր մեկը թվեմ, որ իմաս տուն են ընկել եւ նոր-նոր են զգում, որ իրենց մեջ ցավ կար: Մեկը մրմնացող ձեռքերից է բողոքում, մյուսը՝ տմբրած ծնկներից, մեկելք՝ յարդից, թեայտ չգիտե՝ էլ անտերը մարմնի որ մասում է: Էղ ամենը որտեղից ի հայտ եկավ: Պարզ չէ՝ պարապուրյունից, անգործուրյունից, մարմնի ետաճից... Ասես էղ նրանք չեն՝ տեղովը մեկ կրակ, ուժ ու եռանդ: Կինն ամուսնուց էր պինդ, ամուսինը՝ կնոջից: Տեսնեիր նրանց, տեսնեիր,-իբր չեն տեսել,-մանավանդ աշնանը՝ խաղողաքային, որ նման էր տոնախմբության: Նրանք իրավառվում էին իրենց բերք ու բարիքից: Դա ի՞նչ խաղողաքաղ էր, ի՞նչ բերքահավաք, որ չէր ավարտվում մինչեւ հոկտեմբերի վերջի ցրտերն ընկնելը... Գնաց էղ ամենը, զնաց, դարձավ անցյալ, ու հուշ, պատկերավոր լեզվով՝ անցյալ կորուսյալ...

Ես ե՛մ լսում, ե՛մ չեմ լսում նրան: Զգիտեմ՝ երազի մեջ եմ, թե արքմնի, թեայտ անամապ, արեւոտ ու պայծառ օր է, որ արդեն քրքրվում, իր ծվեճներն է բողնում երթեմնի այգիների սահմանների մացառուտներին, մացառուտներ, որ գրոհում են տափարի տափանած հողերի վրա, սպառնալով իրենց մագիների մեջ առնել նրանց...

Դե՝ ի՞նչ, սիրելի Սանչո, սա էլ էսպես, կիսիր իմ մորմոքները: Առայժմ...

Սնամ քո՝

**Դռն- Կիխոյ**  
2001թ.

## ՆԱՍԱԿ ԻՆՆԵՐՈՐԴ

Ողջու՞յն, սիրելի Սամչո,

Այս անգամ նամակս հովի մի պատառիկ է, որ նպատակ ունի մեզ մի պահ վերադարձնելու մեր հեռավոր պատաճեկության օրերը, սակայն, խնդրում եմ, դրանում քեզ չփնտրես... Ես նկատի չունեմ քեզ, քեպետ կարող է նման մի բան կատարված լինի նաեւ քեզ հետ...

Սեր մանկության ու պատաճեկության տարիներին ինչ խենթություններ ասես, որ չենք կատարել: Հիմա էլ, տարիներ անց, հիշելով՝ շառագունում ենք՝ նրբանկատորեն խուսափելով վերիշել կամ հիշեցնել որեւէ մի անվայելու արարք:

Սիրո հարցում ոչ մի խենթություն ամորալի չեմ գտնում: Ահա թե ինչու ամեն անգամ իմ մանկության ամենամոտիկ ընկերոջը հանդիպելիս՝ հիշում եմ նրա առաջին սերը: Սեր զրույցի ընթացքում այդ մասին ոչինչ չեմ ակնարկում, քեպետ անցյալից զավեշտական բաներ ենք վերիշում, փոխադարձ հրճվանքով իրար պատմում զվարճալի շատ դեպքեր: Բայց նրա առաջին սիրո մասին պատմությունն ինձ հանգիստ չի տալիս, ձեռքերս քոր են գալիս, հազիվ եմ զսպում այդ մասին որեւէ մեկին գրելու գայթակղությունն:

Նա ոտքից մինչեւ գլուխ սիրահարված էր մեր համադասարանցի սլացիկ, գեղեցիկ, թիսադեմ ու թիսածամ մի աղջկա: Ինչպես բոլոր գեղեցիկ աղջկիները, նա էլ նույնական շատ կատ էր սովորում: Նրա սիրուց խենթացած ընկերս, որ առաջադիմ աշակերտի համբավ ուներ, սրբնաց զորովեց անառաջադեմների գիրլը: Տղան չէր համարձակվում առերես իր սերը խոստովանել աղջկան: Ստիպված սիրուց կրավկած նամակներ էր գրում, դնում նրա որեւէ գրքի մեջ, որ տանը, դաս սովորելիս երբ գիրքը բացի, նամակն ընկնի ձեռքն ու կարդա, իր խնդրանքով պատաժան էլ գրի՝ «Այո» կամ «Ոչ»: Սակայն աղջկիը գիրք էր բացում, ո՞ր... Բանը հասավ նրան, որ ինքս հանձնն առա այդ նամակներն անձանք տանել աղջկան: Աղջկիը կարդում էր դրանք, քիչ տակ ժպտում էր միայն ու ոչինչ չէր ասում: Բայց ես պատաժան պիտի տանեի ընկերոջս: Նա անհամբեր սպասում էր: Ստիպված այդ պատաժանն

ինքս էի հորինում. «Թող սպասի, ինչ կա շտապելու, դեռ սովորում ենք»:

-Բայց գոնե նկատեցիր, որ սիրում է ինձ, թե՞ ոչ, - հարցնում է մի անասելի տառապանքով:

-Կսիրի, -ամեն անգամ մի այսպիսի հուսադրական պատասխան էի տալիս:

Սի օր էլ ինձ՝ ութերորդ դասարանցուս, ընկերս ուղարկեց աղջկա մոր մոտ՝ խնամախոսության: Մայրը, որ մի շատ պատկառելի կին էր, հումորի մի հսկայական պաշար փեշի մեջ, բարեհաճրույր ընդունեց ինձ որպես իր աղջկա ընկերոց: Բայց երբ իմացավ իմ առաքելության նպատակը, նրբանկատորեն ժպտաց, քննչարար շոյեց զլուխս, արոռ քաշեց սեղանի մոտ, նստեցրեց, ինքը գնաց խոհանոց: Քիչ հետո սեղանի վրա հայտնվեց թեյ, մոշի մուրաքա, խաղող, տանձ ու կարմիր կարմիր մի քանի խնձոր: Փառանձեմ մորաքույրը նստեց իմ դեմ-դիմաց եւ, արդեն ոչ առաջվա ջերմությամբ, ստիպեց գործի անցնել: Ես միանգամայն բնական համարելով հանդիսավոր այդ ընդունելությունը, հիշեցի, որ խնամախոսները մինչեւ դրական պատասխան չեն ստանում, իրենց նատուցված բարիքներին ձեռք չեն տալիս...

Ես սպասում էի այդ աստվածային պատասխանին: Իսկ մորաքույրն անընդհատ հորդորում էր, որ թեյը խնմեմ, սառչում է, խաղող, տանձ ու խնձոր համտես ամեն, մանավանդ խնձոր, որից, որքան գիտեմ, որպես նախանշան են ուղարկում փեսացուին: Աղջիկը, ինչպես սովորաբար լինում է նման դեպքում, տնից չէր փախել, նստել էր պատի մոտ դրված մահճակալին, խնամքով հարդարված տեղաշորի վրա, շարածճի աչքերն էր խաղացնում վրաս: Վերջապես մայրը, տեղից ենթելով, մոտեցավ ինձ, ձեռքի ափով նորից փաղաքշելով, կարծես երեխայի տեղ դնելով, ասաց.

-Ըստանա՞մ... մեծանու՞մ եք... բայց դեռ ժամանակ շատ կա... Սի շտապեք, ամեն ինչ իր ժամանակն ունի: Սովորեք, առայժմ դեռ սովորում եք:

Դա, ըստ երեւութին, մի յուրովի պատասխան էր, բայց կոնկրետ ոչ մի կարգին «այո» էր, ոչ էլ մի կարգին «ոչ»:

Ես վեր կացա, ուզում էի դրվս գալ: Մորաքույր Փառանձեմը զոռվ երկու կարմիր խնձոր խորեց զրպանս, ճանապարհ դրեց՝ մեց-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

քիս թմբիրմիացնելով: Փողոցում, գրավանիս խնձորները շոշափելով, մտածեցի՝ ինչո՞ւ հատկապես երկուար: Դրանում երկիմաստ ինչ-որ բան զգալով՝ խեղճացա, որքան գիտեմ՝ մեկը պիտի դներ որպես նախանշան փեսացուին...

Սուաբելության արդյունքները չգոհացրին ընկերոջս, ընդհակառակը... Խնձորներից մեկը, որ շնչարմիոցով ուտում էի, մյուսը մեկնեցի նրան: Վերցրեց, բայց չկերավ, դեն նետեց, որ գորովելով, փոշոտվելով ու իր կարմիր գույնը օցած, գնաց, կորավ այգու ցանկապատի մի ճեղքում:

-Ես այլեւս չեմ կարող համբերել, ես... ինքնասպանություն կգործեմ, դառնացած վրա բերեց, գնդակի պես պոկվեց տեղից ու նետվեց տուն:

Մնացի շվարած: Քիչ անց նոյն գնդակի թափով դուրս բռավ տնից, առանց ուշադրություն դարձնելու ինձ վրա, ձեռքի մեկը գրպանում, ուր ինչ-որ բան էր թաքցրել, ճանապարհ ընկավ դեպի Շարքա խոր: Ամեն անգամ, դասերից հետո, մենք այնտեղ էինք գնում թափառելու, երազելու, մեր երազանքները պահ տալու այդ երանելի շաղասարին:

Հանկարծ մի բան չբերի գլուխը՝ մտածեցի ու անմիջապես հետեւեցի նրան: Նա մի այնպիսի արագությամբ էր պահում, ասես հողմ է, կամ հողմի բերան ընկած փուչիկ: Տեղ հասավ, սրբատեղի կաղնու տակ, մատուի առաջ ծնկի եկավ: Ես տեսա, թե ինչպես բաց դանակն ափի մեջ ձեռքը վեր ցցեց եւ ուր որ է պիտի վայր իշեցներ ուղիղ բաց կրծքին: Տեղ հասաւ շնչասպան ու շնչահեղձ կանգ առա: Ձեռքը վայր չէր իշնում, ու ես էլ ոչինչ չի ձեռնարկում: Քիչ անց դանակը վայր զնացած մատուի քարերի մեջ: Ես հանգիստ շունչ առա: Իսկ նա վարից վեր, խեղճացած, ողորմելիորեն նայեց ինձ ու ասաց.

-Բա դու ընկե՞ր ես... դանակն ինչո՞ւ չէիր ձեռքիցս խլում...

Ես հեռացա ու անխոս նստեցի մի քարի: Նայում էի նրան, ու նա իմ խոցող հայացքից խոսափելով, շոտ եկավ դեպի մայրամուտ, որի շառագունած պաստառի վրա խամրում էին առաջին սիրո առասպելները:

Դե՝ ի՞նչ, սիրելի Սամչո, մնամ պատանության ջերմությամբ

**Քո՞ Դու՞-Կիխուդ  
2002թ.**

## ՆԱՄԱԿ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Ողջու՞յն, սիրելի Սանչո,

Այս անգամ քեզ մի շատ տիսուր լուր պիտի հաղորդեմ, մահացավ Բոնդուր Գիրիշը, աշխարհից հեռացավ մի ամբողջ շրեղություն: Գնում էի թաղման թափորի մեջ ու լսում կոռքիս քայլող մարդկանց հազիվ լսելի շշուկները, որ խորը ցավ ու ափսոսանք էին արտահայտում. «Մարդ էր, ժողովրդական մարդ, եւ ի՞նչ վարպետ էր, տեղը թափոր մնաց»: Ես առանձնահատուկ վերաբերմունք ունեի նրա նկատմամբ: Քայլում էի թափորի հետ եւ հիշողության մեջ վերակենդանացնում մի ամբողջ կյանք, որ արդեն անցյալ դարձավ, փակվեց մի լավ գորի վերջին էջը: Եվ այսպես...

...Պատմության ուսուցիչ Շահեն Արշակիչն ասում էր.

-Վա՛ րդիթեր, մի կանգնի՞ր...

Վարդիթերը տեղից ելնում էր կաս-կարմիր կտրած, որովհետեւ դասին լավ չէր պատրաստվել, եւ սիրու ճնճորվի սրտի պիս էր խփում: Ելնում էր, եւ որպեսզի լիքը-լիքը մարմինը անհարմար վիճակ չընկներ նատարանի նեղվածքում, դրու էր գալիս, կանգնում մի կողմ:

-Վարդիթեր, Դիոգենեսն ո՞վ է...

...Լոռություն: Ոչ դասարան, ոչ դաս, ոչ ուսուցիչ:

-Այ աղջիկ, վերջերս քեզ ի՞նչ է պատահել:

Աղջիկը հումորով էր, եւ գիտեր, որ ուսուցիչն էլ զուրկ չէր դրանից, տեղը լիներ՝ կասեր՝ ընկեր Սոլոմոնյան, գլուխս քամի է մտել, ուսուցիչն էլ կկոահեր՝ ինչ «քամի»... «Քամին» Բոնդուր Գիրիշն էր: Հետո ինչ, թե Վարդիթերի մայր Աննան ասել էր.

-Վաստ տղա չի, ամա... մի քիչ Պըլ-Պուտի է: Տասներորդն ես ավարտում՝ ուշքդ-միտքդ դասերիդ պահիր:

Դիոգենես, Դիոգենես... Գիտեր, ախր, գիտեր՝ ով է: Ինչո՞ւ է մոռացել: Գիրիշն ասել է՝ Վարդիթեր, եզրու կզաս պահեստ, ձեր գինին-օղին ստանաս...

Գիրիշը եւ՝ կոլտնտեսության պահեստավետն էր. եւ՝ տակառագրոծը: /«Բոնդուր» մականունն այստեղից էր կաել նրան/:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

-Նստիր, Վարդիթեր: Դիոգենեսից՝ քեզ մի նկատողություն: Հաջորդ անգամ դասը նորմալ սովորած կգաս:

Դասերից հետո Վարդիթերը գնաց պահեստ: Կանգնել էր բաց դրուերի արանքում, նայում էր լիքը-լիքը տակառների անեզրության: Գինու-օղու հոտը բռնել էր շուրջողողը: Բայց Գիրիշը չկար: Անհարմար զգալոց՝ ուզում էր ետ դառնալ, մեկ էլ պահեստի հեռավոր խորքից.

-Կու՛-կու՛ ...

Զայնի վրա գնաց, կիսամթան մեջ դեմ առավ մի դատարկ տակառի: Մեկը գլուխը դուրս հանեց տակառից ու կրկին...

-Կու՛-կու՛ ...

Վարդիթերը ետ ընկրկեց ու հանկարծ հիշեց դասին շիշածը:

-Արա, Դիոգենե՞սն ես... Դե, դուրս արի:

Գիրիշի ետեւից կարմիր խնձոր ուղարկող չի եղել, աներեսի պես ինքն է դուրը բացել, թե՝

-Տեսնում եմ՝ դուք իմ ճամապարհը բացողը չեք...

Նշանածին այցի գնալոց բարձրանում էր հարեւան Սիրանենց տանիքը, կավե կժից շամիչը համում, լցնում գրպանները, որ տա Վարդիթերին:

-Կեր, որ հիշողությունդ տեղը մնա՝ Դիոգենեսին շմոռանաս:

Լավ էլ երգում էր: Սայաթ-Նովայից եւ նոյնիսկ աշուղ Ալեսկերից, որ էն ժամանակ դեռ «քուրք» չէր: Զայնը պահեստում ո՞նց էր հնչում՝ ակուստիկան լավ էր: Երգում էր տակառ նորոգելիս, գինին քամելու ժամանակ, երգի հնչյուններն ասես պարում էին զիթերի հետ՝ տակառից-տակառ լցվելիս: Այդ ամենն ու՞ր մնաց... Անցյալի արեւոտ օրերի մեջ: Տարիները ձյուն դրին Գիրիշի քունքերին, անհոգությունը շվեց հավքի պես, ընտանիք կազմելուց հոգով իմնավորապես նստեց նրա ուսերին: Սկսված Շարժումն էլ պակասը տեղը դրեց:

...Արցախն ալեկոծվել էր: Հանրահավաքներին եկավ Ստեփանակերտ՝ հրապարակում, փետրվարյան թքի մեջ, ժողովուրդը ծովացել էր: Խարույկ վառեց, խորոված արեց ու տվեց մարդկանց՝ ում պատահեր, որքան որ հերիքեր: Թթի օդի էլ էր բերել, հյուրասիրեց, որ չմրսեն, դիմանան, մինչեւ տեսնեն՝ եղ ամենն ինչով է վերջանալու: Ալեկոծվող ամբոխի միջից «Լենին, պարտիա, Գորբաչով» եւ «միացում» կարգախոսները բնդում էին օդում: Ամբոխի միջից ինքն էլ

բոլոնցը վեր ցցեց, առաջին կարգախոսը մի տեսակ սրտովը չէր, ասես՝ բնազդով, թե ինչով, զգում էր, որ դրանից արյան հոտ է փշում, իր շուրթերը միայն «մի-ա-ցու՞ն» էին գոչում:

Արյունն, իրոք հեղվեց: Նախ՝ գրահամեքենաներով օմոնք՝ ոռուսի թեւի տակ, մտավ գյուղ, 15 հոգու գերեվարեց, այդ թվում՝ մորաքրոջ տղային /որ կոլտնտեսության նախագահն էր/ եւ գյուղխորհրդի նախագահին: Տարան Աղդամում տանջահար արին, ապա ֆերմայից մի գիշերում երեք հարյուր ընտիր կրան չքացավ: Հետո՝ ավելի վատ, թուրքերն ուղղակի հարձակվեցին գյուղի վրա: Երեք անգամ լավ ջարդ կերան անքաղ դիակներ թողնելով՝ ետ գնացին, սկսեցին Աղդամից գրադահար անել գյուղը: Ավերվեց հորեղբոր տունը՝ հորեղբոր որդին փլատակների տակ մնաց: Գյուղամիջում պայթած արկին էլ զոհ գնաց աներձագ Վահանը...

Գիրիշն ապաստարան չէր գնում, գնում էր պոստ՝ Էրկան քար, Զրամքարի ձոր, Դավալու տեղ: Գիշերը պահ մտած չեղու ժայռաթեկուրի ետև, ուորթերը ձյան մեջ, ուշըն ու միտքը ներքեւում՝ թուրքերի կողմը, շուրթերին՝ երգի տեղ՝ ուշունց: Չնեղանաս, Վարդիքեր, էլ էն տեղը չի... Բերանս այսին հարամցնեմ: Ու կցում էր՝ ես քը Գորրաշովի կնոջը, քու հոր... Ալեսկերն էլ թուրք է, աշուղ, բայց թուրք է... Ու տրամադրությունը եղած պահին մի Սայաթ էր մնացել իր համար՝ նրանից էր երգում:

Նեսոյի գունդը, թուրքի ձեռից հրո ճարակ եղած մեր այգիների, հանդ ու անդաստանի միջով, Մարզիլուի վրայով թշնամուն քշեց մինչեւ Ուշ Թուփա, թոփերը սարել էր Սիր-բաշիրի վրա՝ ասացին՝ բոլ ա, զինադադար ա...

Տարեցներին պահակակետերից ետ ուղարկեց տուն, ու Գիրիշը դարձավ իր պահեստին ու արհեստանոցին: Մտավ արհեստանոց, աչք ածեց պատից կախ գործիքներին, օճոռքի վրա սարդի հյուսած մանդիլներին, գլուխն օրորեց, հետո գնաց պահեստ, 500 դեկալիտրանոց թափուր տակառների շարամիջով գնաց, գայթեց, չընկնելու համար ձեռքը հենեց տակառին՝ ձեռքի թափից տակառը ձեն հանեց՝ արձագանքը գլորվեց մինչեւ դուռը: Ելավ պահեստից, նստեց մուտքի մոտ ընկած թթենու բնին: Գործերը կուտակվել են, ինչի՞ն սկսի: Ուժերը կիերիքե՞ն, տեսնես:

Աշունը տերուտիրական էր Սպարանց ձորում: Խաղողն աշքի էր

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ըմկել, քուզը՝ հասել: Կոլտնտեսության հինգ հարյուր հեկտար այգիներից տասը հեկտար է մնում գյուղամերձ Զինհազի տարածքում, տասնինգ-քսան օրից բերքը պիտի հավաքելին: «Բոնդուրն» շտապում էր: Տակառներից գլորում էր դազգահի մոտ, նորոգում, հրում մի կողմ: Երբ մուրճով խփեց առաջին պատրաստ տակառի հատակամասին, ավտոպարկի կողմից հնչեց լցավորող Բագրատի ձայնը.

-Դնոցդ անո՛շ, Բոնդուր Գիրիշ...

Աննկատելի արհեստանոց մտավ գյուղապետ դարձած նախագահը.

-Բարի օր...

-Բարով տեսանք, Սիրայել Սիմոնիչ:

Քսանինն ու կես տարի նախագահ եղած հոր՝ Սիմոնի հետ քսանիննուկես տարի աշխատել էր Գիրիշը: Թախիծ իջավ դեմքին՝ ընկերոց անտեղի կորուսոր իջելուց:

Գյուղապետն ասաց.

-Բուտերին առայժմ ձեռք չտաս, փոքրերը նորոգիր, որ հասցնես, մինչեւ տեսնեմք...

-Այսինքն՝ հարաբերական նորոգում...

Սիմոնիչը հանդարտ ժպտաց վարպետի ակնարկի վրա, շուռ եկավ, զնաց:

Օրն իրիկնացել՝ բանքողի ժամն էր արդեն: Էդօրվանը հերիք է: Գոզնոցը հանեց, գործիքները հավաքեց, փաքաքեց գոզնոցի մեջ, դրեց մի կողմ, շորերը թափ տվեց, փակեց արհեստանոցն ու քայլերն ուղղեց մնտակա քգենու կողմը: Սի քանի թուզ ու մի նուռ պոկեց, դրեց պայուսակի մեջ: Վարդիքերի համար...

Իսկ Վարդիքերը, սիրելի Սանչո, այրիացավ: Այդ սիրելի կնոջն այլևս չեմ պատկերացնում առանց Բոնդուր Գիրիշի: Ի՞նչ կարող ես անել՝ մնում է հաշտվել անդառնալի կորստի հետ ու միսիքարվել նրանով, որ նրա հիշատակը դեռ երկար կապրի համագյուղացիների հիշողության մեջ:

Մնամ՝

**Քո՛ Դոմ-Կիյոսը  
1995թ.**

## ՆԱՍԱԿ ՏԱԾՆՄԵԿԵՐՈՐԴ

Սիրելի Սանչո, որջույն:

Վերջերս քիչ ես գրում, ի՞նչ է եղել, հայտնիր՝ իմանամ, ին քեզ հետ բան չի՞ պատահել... Ինչեւէ, այս անգամ նամակս մի քիչ նամակ չի, այլ ցավի մի թեկող, որ այս էլ ահա քանի տարի խրված է մնում մարմնիդ մեջ եւ անընդհատ զգացնել է տալիս: Սա մաքառում է՝ ցավի ու սփոփանքի սահմաններում:

Եվ այսպես...

Շաբաթվա մեջ մեն մի կիրակի է մնում, որ Նորիկը հանգստանա: Բայց ստիպված է զրկել իրեն նաեւ այդ միակ հնարավորությունից. սիրու է, չի դիմանում, ցավից կծկվում է, երբ տեսնում է, թե ինչպես է կինը՝ Լենան, սեւ հազած, այս էլ քանի՝ տարի՝ սպահան շեղած, զիրկը թարմ ծաղիկներով լի: գնում գերեզմանոց: Ամեն անգամ հետեւից նայելիս՝ կսկսում է ինքն իրեն.

-Գնում ես, հա, գնում, Աստծո ամեն կիրակի, ա՞յ թանկ արարած, որ եղքան գնում ես, ինչո՞ գոնե մեկին ե՞տ չես թերում...

Նորիկը, ինչպես ինքը կասեր, իրիսկման լինելու համար, աչքերում՝ լճացած արցունք, փողոնկը՝ կոկորդում, կմտնի գոմ, մինչեւ Լենան իրեն կարգի կրերի գերեզմանոց գնալու: Էշն առաջը կանի, կգնա փայտի, էշի վրայի խուրցինում՝ կացին ու պարան, մի կանիստր շուր, մի քիչ ուտելիք՝ հանդում մի քան բերանը դնելու համար...

Վազուն ձորի ծնակում գեճը չի կտրի, կացնով կտա ոտի վրա չորացած ու հին կոճդի գլխին: Թե կոճդը դեռ պինդ լինի, համառի, նորից կզարկի ու ամեն խփողի հետ տնքա, իրեն էլ թվա, թե կոճդն է ցավից տնքում իր անկման պահին...

Սինչեւ կեսօր կոճդը կոճդի հետեւից կհանի, դուրս կտա քացատ, կկիտի, որ իրիկնադեմին բեռնի էշին ու թերի տուն: Չափ ու քրտինքում, քրտինքի կարիները շեկ ու քավ թեղերի մեջ, խոնավ ու քաց վերնաշապիկը հոգնությունից մրմռացող լանջին կպած՝ մտքովն էլ չի անցնի՝ հանի շապիկը, զցի մի քոլով, արեւոտի: Կնատի կաղնու շվաքում, նստելիս մի «վայ» կանի այնպես, որ կրվա, թե այդ «վայի» մեջ լափուն տվող ցավին տեղյակ կաղնին կարձագանքի թախծոտ խշշոցով...

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Խորհրդավոր մի լուսաբան՝ իշած բացատի վրա ու ծործոր ասվերներ՝ ուրցի բուրմունքով բռնկված: Բերդաշնենցի Ուրութանց Նորիկն ինքն իրեն կտա ու կառնի, հուշի բարակ թելի ծայրն առած՝ կզնա ու՞ր, կզնա ու կանգ կառնի այնտեղ, երբ բուրք օմոնը ռուսների հետ լցված տաճկ ու ԲՏՏ-ի մեջ, դրլողով զալիս էր զյուղի վրա: Առաջինը նկատել էր իր կինը՝ Լենան, երբ հորը ու ոչխարի հետեւից բարձրացել էր Փոքր նահատակի սարք: Հենիկեն վերադարձել էր զյուղ, ոտքի հանել մարդկանց: Տղաներին՝ Նելսոնին, Վիլսոնին, Մարտիկին, Կոմիտասին ու մյուսներին տարել անտառի թափուտները ու պատվիրել՝ մինչեւ «երիժ, երիժ» չկանչի՝ դրւս չգան...

Գյուղից տասնինգ հոգու քշեցին-տարան, տանջահար արին աղդամների ու շահրուաղների բանտերում: Տղաները դրւս եկան անտառի թափուտներից, հավաքվեցին, խելք-խելքի տվին ու որոշեցին՝ ժամանակն է արդեն, օրհասական ժամը, զինվել է պետք: Կոհիվն սկսվեց, ու ինքն իր «ԿՈ-ԱԶ»-ով գենք ու զինամքերը է տանում դիրքերը: Մի օր էլ մեքենան պայթեց ականի վրա: Էդ ո՞նց եղավ, որ իր կործանված մեքենայի բեկորներում ողջ մնաց: Գու՞ցե Աստված խնայել էր իրեն, որպեսզի հետազայում ավելի ծանր ու դաժան փորձությունների ենթարկեր... Եվ փորձությունները հաջորդեցին իրար: Տունը սուզ ու շիվան ընկավ, տասնչորսամյա Վարսիկ աղջկը գրադի զոհ դարձավ 1992թ. օգոստոսի 7-ին: Թրվուն, ծիծաղկոտ ու երազկոտ աղջկա մահը ծնկի բերեց իրեն:

Հետո եկավ երկրորդ դժբախտությունը. որդին, տանկի նշանառու, օպերատոր Վիլսոնը մասնակցելով Ավդալ, Գյուլավլու, Մուղանլու, Կուրոպատկինո, Ամիրանլար զյուղերում տեղակայված քշնամական հենակետերի ոչնչացմանը, 1992թ. դեկտեմբերի 6-ին զոհվեց Մարտունու շրջանի հյուսիսարևելյան հատվածի սահմանային բարձունքի համար մղված անհավասար մարտում: Հաջորդ զոհերը դարձան կնոջ՝ Լենայի եղբայրները: Ազգային հերոս Վովա Մուսայելյանն ընկավ Խոջալուի, Կարեն Մուսայելյանը՝ Բահմանլուի գլուխման համար մղված մարտերում:

Դաժան հարվածներ էին, ահավոր ու անխնա: Դիմանալ էր պետք, դիմանալ՝ զոնե հանուն Լենայի փրկության: Իսկ Լենան... տղամարդուց պակաս չզտնվեց:

Պատերազմն ավարտվեց: Արյամբ նվաճված հաղթանակը սփո-

փանք էր բերում բեկված հոգիներին: Թվաց՝ Աստված իրեն ու Լեռնային պատճառածը քիչ չէր համարի, ուրիշ զոհ չի պահանջի: Բայց, արդյո՞ք, Տերն այդպես էր մտածում... Վերջին դժբախտությունը վրա հասավ 1996թ. դեկտեմբերի 27-ին: Ականազերծման զոհ զնաց կենդանի մնացած միակ որդին՝ Նելսոնը: Շատ չեղա՞վ, Աստված, թե դու լինեիր իմ տեղը՝ ո՞նց կդիմանայիր... Դե ես՝ մի կերպ, դու արի ու դիմացիր Լենայի փոխարեն: Ամա կդիմանայիր, հա՝, Տեր իմ, չէի՞ր դիմանա, հաստատ՝ չէիր դիմանա՝...

Ո՞վ մնաց, ու՞ն թողիր ինձ, Տե՝ իմ, ինքն իրեն կմուխմուխատի Նորիկը: Հա, խնայեցիր Նելլիս՝ միակ աղջկաս իր չորս զավակներով: Պապան քեզ մատաղ, Նելլի, որորքան լինի քո Սիրունին, Նեսոյին, Հակոյին, Նորայրին: Դե, արի, տես դրանց ու փորձիր չդիմանալ, ցավդ ներս մի առ ու մի բանիր գիշեր ու ցերեկ: Լեզուս պապանձվեր՝ չասեի էսքան անասունն ու՞մ համար եմ պահում, էսքան կովեր, խոզեր, ոչխարներ, բաղեր, հավ ու ճիվ... Եղ հենց նրա համար, որ ժամանակ չունենամ ցավին տրվելու, որ Լենան էլ ժամանակ չունենա, դժվար ապրուստի այս անձիր ծիրի մեջ մոռանա մորոքն իր կորուստների...

Հրեն Սիրուն աղջիկ-թռոս գերազանց է սովորում: Նեսոս զնաց առաջին դասարան, Հակոս եկող տարի կզնա, երեք տարեկան Նորայրիկս հետեւցաւ այնպես է պապա կանչում, որ իմ տեղ Բերդաշենի Բերդասարը լիներ՝ հազար տեղից ճաք կտար... Էն օրն էլ նախիրը հանդ տանելիս մեր Վանյան, որ իր երկու տղաներին է զոհ տվել, ասաց.

«Ըստ բաժինը շա՝ տեղավ, Նորիկ Հարությունյան, շատ ու շատ եղավ... Աստված պահի թռոներիդ, սփոփանը լինեն...

Բա ինչ, սփոփանը լինեն: Ի՞նչ անենք, թե կոներս հոգմել են, ցավից նվազում են, քիչ է մնում ուսերիցս թափվեն... Բա Լենան ո՞նց է անում, օրվա քսանչորս ժամից հազիվ չորս ժամ է քնում: Բա նրա կոներն ուսերից չե՞ն թափվում: Ղոչադ է, զալում, ոչ մի տղամարդ չի կարող չափվել նրա հետ:

... Իսկ դու՝ անբուժելի ցավ, մխիթարվե՞ս դու, որ վիրավոր գազանիկի պես չե՞ս լոելու:

Այո, չի լոելու, սիրելի Սամչո, չի՝ լոելու...

**Մնամ քո՝ Գոմ-Կիխոս  
2002թ.**

## ՆԱՄԱԿ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՐՈՐԴ

Ողջու՞յն, սիրելի Սանչո:

Իմ այս նամակը, որ նախատոնական ու ամանօրյա բնույթ կունենա, չգիտեմ ինչից սկսեմ եւ ինչով ավարտեմ, անելիք շատ կա: Ուտքիս մեկը՝ իհն ու անցնող տարվա վերջին հոգեւարքն ապրող կիսաօրվա մեջ, մյուսը մեկնել եմ նոր տարվա սպասվող օրվան, հայտնի չէ՝ ինչքան եմ այսպես շրոած մնալու: Ի՞նչ եմ անելու, ի՞նչ է լինելու, ինչպե՞ս եմ դիմավորելու Ամանորը, բանը բան ցույց կտա: Տարվա տասներկու ամիսների թվով՝ սա իմ տասներկուերորդ նամակն է, որոնցից, կարծեմ, պատասխանել ես երեսի երկուսին, թե երեքին: Ծովյալ մեկը: Հասակի խնդիրն է, թե՝... սառչում ես: Էհ, ինչ ուզում ես՝ արա, ինչպես ուզում ես՝ վարվիր, ես իմ Դոն-Կիխոտյան ձին եմ քշելու... երեսի դու էլ քո ականջները կախ, սանչոյատիպ ավանակը...

Հիմա, այս պահին, 2006 թվականի նախաշեմին եմ, հաշված ժամեր են մնում մինչեւ նրա մուտքը մեր կյանքը: Հուսանք՝ ոտքը բարի կլինի, շառից-շլաղից հեռու: Հինը, ինչ ասեմ՝ եկավ, իր արած-քողածով գնում է հավերժության գիրկը: Նրանից գոհ եմ թերեւս մի բանվ, որ մաքրվել եմ պարտքերից: Եկամուտներս՝ խաղողը, հացահատիկը /միրգն ու բանջարեղենը չհաշված/ ուսերս թերեւացրին հոգաերի բերից, թե տարվա քափ ու քրտինքից հետո, ինչ է նշանակում ունենալ թերեւ ուսեր, խաղաղված հոգի ու լիաբոք շնչող, թրռուն սիրու: Դե, մի քմծիծաղիր ու մի քամահարի, թե՝ դու այդպիսի պահեր չես ունենում, թե՝ դու ոչ պարտք ես տախս, ոչ էլ պարտք ես մնում...

Ինչեւ: Սի կողմ քողնենք մեր այս անհաշտ ու ընդմիշտ հաշտ մտերմությունը՝ անցնենք բան ու գործի: Ասել են, չէ՞, թե ի սկզբանն էր բանը: Ասենք՝ քո բանը մի քիչ ուրիշ է, իմը՝ մի քիչ այլ: Նախ՝ ինչպե՞ս ես դիմավորելու Ամանորը: Զգիտեմ՝ քո զամբյուղը կհերիքի՞ տոնական սեղանիդ... ախր ամեն ինչ պիտի առնես: Սի քիչ դեսից դենից ուղարկում եմ... ին չե՞ս նեղանա: Իմ ամեն ինչը տնական է,

ոչինչի փող չեմ տա, ինզ չե, թե չունեմ, ունենամ էլ՝ չեմ տա, որովհետեւ դրա կարիքը չկա: Գյուղացին աննպատակ փող չի խարջի, կպահի, կլուտակի, ինքն էլ չիմանալով՝ ինչի համար: Դե, ապրել կա, մեռնել կա... վերջին օրվա համար: Նորիկը քեզ օրինակ, գիտես էլի՝ իմ հարեւանը: Քսան տոննա հացահատիկ ամբարեց, հինգ տոննա խաղող, շհանձնեց, բերեց ճմուեց, լցրեց մի ամբողջ ցիստեն, բենզափողի չե, ջրի: Պահեց-պահպանեց, մինչեւ անտառից մի թափք քորով հանեց, բերեց-թափեց ու վերջերս էն ճմուածից օդի բորեց. Երեքհարյուր լիտր: Պատկերացնո՞մ ես, եղ ամբողջը պիտի խմի սաղ տարին, մինչեւ նորը կրորի: Եղ տնաշենը ոտքը զցելու տեղ չունի, բակը լիքը՝ հավ ու ճիվ, բադ ու հնդկահավ, ոչխար ու այծ, իրենց ամլիկ գառ-ովերով, խոզ ու կով՝ սիրուն-սիրուն խոճկոր ու հորթերով: Մի տեսնեմ՝ նոր տարվան երեւի մի հավ կմորթի՞: Լենան Նորիկի մորթած հավի կրծքամսի սալիտակ մի շերտ ետ կցցի ինձ համար, մնացածը կդնի ամուսնու առջեւ: Նորիկը նոր քաշած օղուց մի լիքը բաժակ կառնի կոշտ ու կոպիտ մատների արանքը, կրաքարացնի, հայացքը՝ դեպի վեր, երկնայինին, հազիվ իրեն համար լսելի կշշնջա, «Են խոխոցը հիշատակի...»: Խոսքի շարունակությունը փղձուկի նման կմնա կոկորդում, աչքերում արցունքի ցող կհայտնվի, սիրու կկսկծա՝ ես էլ քանի տարի, մեր ազատանարտի զոհեր, ջահել-ջիվան որդիների համար... չէ՞ որ մեր ամեն մի ուրախության հետ նաև արցունը է խառն...»

Սանչ ջամ, օրն իրիկնանում է: Հին տարվա վերջին օրը հոգեվարքի մեջ է եւ իր քրքրված հանդերձների ծվեններն է քողնում Դուզե ծմակի կաղնուտի գանգուրներին: Ուր որ է՝ Արտաշը հանդից կզա՝ էշին աջ ու ահյակ հակ արած փայտ, մեջը մի խտես չոր խոտ, ինքը վրեն արքայավայել նստած, տավարն առջեւից, կզա ու մեր տան մոտով անցնելիս, իրիկնամուժի մեջ էշի ոտքը մի պահ ետ կգցի՝ «թոքքո՛շ, անտեր, մի կանգ առ» եւ «հըմ» կանի, որ կնշանակի՝ «բարեւ» կամ որպիսությունս հարցնելու պես մի բան: Իրիկնանուտի մեջ զլուխը հակած էշի ծոծրակին, որ կթվա՛ ոչ թե ինձ հետ է խոտում, այլ՝ էշի: Եվ ես շատ պարզ կհասկանամ, թե ինչ է ուզում հասկացնել: Այսինքն՝ իրիկունն անցիր մեզ մոտ, կնստենք, կզրուցենք:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Արա, ես չեմ ձերը, բա քո բացի Աննան ի՞նչ կասի, քո բաջօնի Արայիկը, Մարինեն, խոխեքը: Հետո, գլուխը այդպես՝ դեպի անլեզու արարածի ծոծրակը հակած, «չու» կասի հորեղբորս փեսա Արտաշը, իմ տան ցանկապատի ու Դուզե ծմակի եզրով անցնող ճամփի իրիկնամուժի մեջ կանիետանա տեսադաշտից:

-Հե՛ հեե՛՝ Դոն-Կիխոտ,- ներքեւներից, մեր այգու վրա մքնող օրվա միջով կկանչի Լենան,-Զինան զանգել է, խնորել, որ զա՞ կապվես իր հետ... Հա, լավ՝ ասում եմ պատասխանի պես մի բան, որին, հավանաբար, Լենան չսպասի՝ իրենն ասել էր, վերջ, համոզված, որ ես էլ իմն եմ ասել: Զինան զանգել էր, որ կապվեմ հետը եւ ի՞նչ... Իբր չգիտե՞մ ինչի համար, պարզ չի՝, եղ ե՞ր չեմ նոր տարին դիմավորել քրոջ հարկի տակ, ես էլ տասներեքերորդ անգամ, առանց սպասելու, առանց պայմանավորվածության ու հրավերի՝ հետը պիտի լինեմ, իր օջախում, իր քուփ ու ծուպով, իր որբեայրի հարսի՝ Սվետայի, մեր ազատամարտի զոհ զարմիկին՝ Արտակի կնոջ, նրա որք երեխաների հետ, որի երկվորյակներ Կարենն ու Արենն արդեն համալսարանականներ են եւ, երեխ, քաղաքից եկած կլինեն Ամանորի առիքով: Բա Կարինեն, են քուիծամ ու քիսաշ միամորիկը, որ ոսքի վրա է թիքա անում, միայն, թե պարի, անվերջ, անհոգ, առանց հոգնելու: Ինչպես չլինեմ նրանց հետ, երբ գալու է քրոջ աղջիկը՝ որբեայրի Արենիկը, են անձնազոհ Հովիկի կինը՝ իր զույգ աղջիկներ Անուշով ու Սուրբիկով: Գալու է Արարատը՝ Աստծո ողորմածությամբ, ողջ մնացած զարմիկ ազատամարտիկ՝ իր չորս տղաներով, ու նրբանկատ, ամեն ինչ իր տեղը բերող ու դնող Կատյայի հետ: Նրանք գալու են, այս, գալու են՝ հավաքեն Զանքուց Գիրիշի ու Զինայի հարկի տակ, դիմավորելու նոր տարին, ուրախանալու, ես էլ քանի երբորդ անգամ իրենց ուրախությունը, ցնծությունն արցունքի հետ խառն: Այս, բա էլ ո՞նց, եղ է մեր ճակատագիրը... Նստելու ենք լայն ու բաց, լիբր սեղանի շուրջ, ուտել-խմելու ենք՝ ոչ ուտել-խմելու պես, բաժակ ենք բարձրացնելու մեր որք մեծացածների առողջության ու հաջողությունների համար, որոնց որբությունն այնքան էլ որբություն շնատեց նրանց վրա՝ այդ համերաշխ ու միաձույլ ընտանիքի դիմակայության շնորհիվ...

Սիրելի Սանչո,

Էհ, ինչ ասեմ՝ էս ենք, էս մենք ենք ու մեր խալխը, մենք ենք, մեր զյուղն ու մեր եզերքը՝ սահմանամերձ, հոխորտացող քուրքի նշանառության տակ... բայց, ինչպես ասում եմ՝ հայոց արեւելից կողմանց դարպասն ենք: Դե, չեմ կարծում նաև, թե դու չես այստկերացնում՝ ով ենք, ինչ ենք այս եզերքին կառչած նվիրյալներս, այս հողին պահ տփած զոհերի պահապանները, ուխտավորները, եւ հասկանում ես, թե ինչ խորհուրդ ունի ամեն կիրակի ու տոնի նախօրյակին նրանց շիրհմներին ուխտագնացության ու սգահան լինելու մեր երքը...

Սանչո ջան,

Ախապերս, մանկությունս, պատանությունս եւ էլի ով գիտե՞՝ ինչս... չնեղանաս, թե որ ասեմ՝ ես իման նման եմ էն եզանը, որը գարնան իր հերկը, ամռան կալ ու կալսելն ու աշնան վարուցանքն ավարտել եւ իման եկել է կապվել ձմռան իր ախոռին: Խոտը կա, ծղոտ ու կորմ կա, բող ինչքան քեփը տալիս է՝ խժիք ու թըր...ի: /Իմիջի այլոց, քեզ չի՞ թվում, թե մի քիչ զավզակացել եմ.../: Էդ նրանից է, որ մի անգամ վեր չկացար, չեկար էս անտեր-անտիրական, էս տեր ու տիրական եզերքի համն ու հոտն առնելու, էս խալխի ցավն ու ուրախությունը ներս առնելու, նրանց տրտությ-մրմունց-հոգսերին հակ լինելու, հետո գնայիր, տրվեիր մեծ ու փոքր նահատակների զիլ-զիլ զեվյուններին, անծայր-անծիր երկինքների տակ այս եզերքին իշած դեկտեմբերյան եղյամի միջով քայլեիր, սարսոայիր, երք քամին իր սառն համբույրը ծեփի ճակատիդ, դադրած-քեզարած, քեփոտված, հովի պես մեղմացած-քնքացած գայիր, նստեիր իմ օջախում, մի քանի քաժակ թրողի հուաց տայիր, խումհար լեզուդ քացվեր, ու ես տեսնեի, թե ինչքան ես զավզակալության մեջ գերազանցում ինձ... Էհ, ինչ ասեմ, ասողին էլ լսող է պետք, եղած-չեղածից չլինելու բաներից եմ խոսում, մեկ է՝ ավելորդ է գայի զլխին խրատ կարդալը: Հիմա ինձ միայն մի քան է անհանգստացնում. էս դեկտեմբերը չորային է, խիստ ու ցրտաշունչ, բայց՝ չոր: Այ թե՝ մի ձյուն գար, փափուկ-փափուկ, էն ձյան նման. «Զյուն է գալիս փաքիլ-փաքիլ, հետն էլ՝ անձրեւ կաքիլ-կաքիլ, էդ միջոցին մի պառավ կին հորթն է փնտում դաշտի միջին»... Այ, հենց այդպիսի մի ձյուն գար ու նստեր մեր

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Խալիսի վարուցանքին, կորուսյալ անցյալի չկորուսյալ մեր մանկության ընկերոջ՝ գյուղատնտես Սիշայի՝ Զինհազի տարածքում հիմնադրած խաղողի երբեմնի այզիների այսօրվա ամայի հողերի տավարի տափանած արտի վրա, գար ու փափուկ-փափուկ նատեր, ճերմակ սավանի նման ծածկեր Բոնդուր Գրիշայի տակավին թարմ շրիմաքումբը, լցվեր այրիացած Վարդիքերի ամանորյա տրտունջների, մորմորների, խոռվքի մեջ, որ նոր տարին կղմավորի կամ... չի դիմավորի առանց Բոնդուր Գրիշի:

Ափսո՞ս, հիմա էն ձմեռն ու ձյունը չկա, որ մնաց մեր մանկության մեջ: Էն ձմեռն ու ձյունը գար ու երկար նատեր էս խալիսի տանիքներին, ծածկեր բակ ու առմուտք, որ Սուպուրանց Սիրանը, Ուղունց Աշոտն ու Պայծառը, Թմասանց Թառին, Բյազունց Ժելան, Սիրզաշանանց Մուրադն ու Գոհարը, Հրաշիկը, Վառունց Սեւին ու Լիդան, Սիրզաքանանց Աշոտը, մեր Արտաշը, Աննան, որ կատաղի հեկտարականներ էին, կոլտնտեսության մոլի հարաքաշներ, հիմա դադրած-քեզարած նստեին իրենց տաք ու ապահով օջախների շուրջ, մտովի գնային-սուզվեին անցած օրերի երանությունում եւ վրահաս Նիրվանայում մոռանային, թե իրենց մարմիններում լյարդի, երիկամի, ջղերի եւ էլի ինչ իմանաս ինչերի մեջ ցավ է մնացել էն լարված, անցյալ-կորուսյալ ժամանակների բեռան ծանրությունից... Այս, ձյուն գար, Սանչո, որ Ամանորը Ամանորի նմանվի եւ Սուրբ Ծննդը՝ Սուրբ Ծննդի: Եվ հիմա, Սանչո ջան, թույլ տուր հենց այդ բաղձանքով էլ, ինչպես նաև ամենաբարի մատթանքներով ջերմազին շնորհավորել քո Ամանորն ու Սուրբ Ծննդը:

Դեհ, էսքանը, մեկել երբ եմ գրելու, զիտեմ, հավանաբար՝ չեմ գրելու, որ... վեր կենաս ու մի անգամ գաս:

**Մասմ քո՛ Գոհ -Կիխուր  
2002թ.**

## ԵՆ ՍԵՐՎԱՆՏԵՍԸ

-«Դոն-Կիխոտն» ով է գրել,- հարցնում է Ուրութանց Նորիկն ու աշքերը խորամանկ կլոցում: Խոտ ու շեկ բեղերից կախվում է հումորի մի խոշոր կաթիլ ու թվում է՝ կաթի հողին, հողը կճարի: Աչքերում պողեր են պեծին տալիս ինչպես հեռավոր մի ժամանակ, երբ հոտաղ էինք, եզներն արձակել, աշնան մքնժորի տակ կրակ արել ու, շուրջը նստած, ճիպոտով քչփորում էինք չհանգած խանճողները:

-Հարցնում եմ. «Դոն-Կիխոտն» ո՞վ է գրել:

-Էդ ինչի՞ հանկարծ...

-Մոռացել եմ հեղինակի անունը: Ամա շան որդին գրել է, հա...  
Գրող մարդ ես, գուցե հիշեցնե՞ս ով է գրել:

Էդ «գրողի» մեջ ծաղր կար, ծայրերը սուր-սուր նետեր ունեին, որոնցով ամեն անգամ փորձում էր «խոցել» ինձ, բայց դրանք ես միշտ օդում էի քռնում ու Նորիկը ճպադում էր, երբ նշանակետին չէր խփում...

Մեկը լիներ, ասեր՝ քառասուն տարվա վարորդ ես, քո ինչ գործն է, թե «Դոն-Կիխոտն» ով է գրել, բան ու գործ չունե՞ս: Հա է, միջնակարգը գերազանց էիր ավարտել, մաքեմատիկայից ուսուցիչներին նեղն էիր զցում, գրավորներդ տալիս էիր աղջիկներին արտագրելու: «Ինտելեկտ» ես խաղում, որ ի՞նչ... գնայիր՝ պրոֆեսոր դառնայիր, դոկտոր. Ո՞վ էր խանգարում:

-Չե, խևապես, կատակ չեմ անում,-օդու քաժակը թերեւակի սեղանին խփելով՝ դառնում է կնոջ կողմը՝ Լենային,-աղջի, վարժուիի, գուցե դու՞ ասես...

-Արա, Նորիկ, իսի՞ չես թողնում էր մարդը հաց ուտի:

-Էս մարդը՝ ոչ ուտո՞ղ է, ոչ՝ խմոր: Ձեռք չի քռնում է՝, ձե՞ռք...

-Բա էն ու՞մ ձեռքն էր քռանդ մեջ աղունի վեց փրանց երեսուն հակերը մաշինը նիտալիս...

Լենան՝ ո՞նց էլ ասաց՝ կացնի պես կտրեց: Նորիկը կարկամեց: Թերանը բաց նայում էր կնոցն ու խոսք չէր գտնում ասելու: Իսկ ես

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

իշխեցի, թե էլեկտրաղացում աղունը բեռնաքափելիս, զարմանքի մի հայացք սահեցնելով վրայիցս, Խունարն ինչ փսփսաց Նորիկի ականջի տակ, որ իբր չլսեմ:

-Ուզում ես ասել, թե Էդպես էլ կարող ես,-այսինքն՝ գոռոհի էլ ես բանեցնում: Նորիկը թարս նայեց Խունարին ու թե.

-Լեզվիդ թեր ասա ու ճեղացդ խող տուր. «Դու՝ աղա, ես՝ աղա, քամեր աղունը հու՝ աղ»: - Քիչ հետո, էլեկտրաղացի աղմուկի մեջ, մենք այլեւս իրար չեինք լսում, ու... երեքս էլ ալրափոշու մեջ էինք...

-Վերջը՝ չիմացանք էլի, թե «Դոն Կիխոտն» ով է գրել,-Նորիկը ճեղքն առավ օղոր բաժակը:

-Ի՞նչ ես «Դոն-Կիխոտի» պոչից բռնել՝ քան ունես ասելու, ասա,-կարճ կապեց Լենան:

-Դե որ Էդպես է, չնեղանաք, մենք բոլորս էլ Դոն-Կիխոտ ենք, հասկացա՞ք...

-Բոլորս՝ չգիտեմ,-ասում եմ,-ամա դու իսկական Դոն-Կիխոտ ես...

-Ախալեր, չինի՞ կծում ես...

-Չէ, կծելու քան չես, հենց Ենակես էլի, մի թերեւ խայծում եմ...

-Որ՝ ի՞նչ...

-Որ երեք հեկտար աշնանացան չանես, փող խարջես, սալյարկա առնես վարի հաճար, հնձի ժամանակ էլ՝ հնձավարձ տաս, կոմքայնը տանես արտովի շուր ածես ու վերջում... մի բուր կուտ էլ չբերես տուն:

-Հա՞... Էդպե՞ս: Բա էն երեսուն հակերը, որ տնքալով բունկերն էինք ածում, քո աջի թաթո՞վ էր եկել:

-Են անցյալ տարվանն էր...

-Դե, ես մեղավո՞ր եմ, որ էն վերին կյապուտից էս տարի կաք չկաթեց...

-Թուր էլ չկաթե՞ց... Ինձ թափչի էիր դարձել, վեր հանել ծառերը, թե՝ էս տալին թիսիր, սպասիր, շալի մեջ չի, էն մի տալն էլ մոռացար... Շալի տուտն էլ չէիր բռնում: Աղայի նման ճեղքերդ կանքել էիր կոնքերիդ, ասես Սոնա տատի գործած տնօյավոր ջվալ էիր՝ ցորենվ լիքը...

-Լեզվիդ թեր ասա...

-Լեզում՝ կատու չի... Հինգ տակառ թթից հինգ գրամ օղի էլ չքաշեցիր, թե դուրս չի գալիս, տեղեն արթակ՝ Փաստ, շուր էլի... մքնուր-

տից է, թե ինչ, վերջին տարիներիս արագ չի քաշվում...

Գլուխը հակ արեց կրծքին, կորուկուփ եկավ ու բան չի ասում: Զեռքի կոշտ ափով շոյում էր բաժակի լանջը, զգացի, որ լարվում է, թեման կփոխի ու նախահարձակ կիմի:

-Արա, բնակալներիս ձվերն ես հաշվում, ել չես ասում, թե էս ժողովորդն ինչո՞ւ է ծարավից տոշորվում: Գրիք է, գրիք: Ես ասում եմ, ես՝ սկանում: Հետո ես են դառնում, թե Նորիկը փիս մարդ է. Ես՝ շան տղա, որ ծուռն ա՞չը եմ կոխում... Արա, ջրացանցը հնացե՞լ է, փտե՞լ՝ փոխիք: Նասոսը խարա՞ր է՝ սարքիք: Թե չէ՝ ամսվա վերջում բկիս շորում ես՝ ջրի վարձը տուր: Են օրն էլ տարա հնձավարձը մտցրի, չե-կը վերցրի, բայց կոմբայնը անչեկը տարավ: Բա էս պետության բյու-ջեն մի քոյ կոպե՞կ ալիսի մտնի, թե չէ, այ Դոն-Կիխոտ...

-Ես ո՞վ եմ, որ... շրջվարչակազմի ղեկավա՞ր եմ, թե... վարչա-պես:

-Գրես՝ կկարդան, չի կարող, որ մի բան չանեն: Էն անգամ վար-չապետը մեզ մոտ էր, մեր հոգս ու ցավից խոսեցինք, խոստացավ... աշքիս լավ մարդ է երեւում. Տեսնենք:

-Ինձ հայտնի է, որ ջրտնտեսության ղեկավարին ուղարկել է տե-դում ուսումնասիրելու խնդիրն ու միջոցներ ձեռնարկելու:

-Հա է, անա վրահասու պիտի կենա...

-Որ ուղարկել է, ուրեմն... Կարծում ես վարչապետն ուրիշ բան ու գործ չունի... պիտի գա ձեր լորի՞ն ջրի: Սադ օրը գյուղամիջի նատա-րանն եք մաշում, բամբասում՝ պարապությունից չի՞...

-Ու՞մ ես նկատի առնում, Նորիկի՞ն: Բա ես շինհմաշի մա՞րդ եմ: Ներակ Նորիկի՞ն...

-Ա կոժ, թեզ ասիմ, ա կոլա, տու սկաց...

-Արա, ես իփրմ կյամ, դու նաղլեր ես անում...

... Եկել էի մանկության համ ու բույր առնելու Նորիկից, մինչդեռ «ճենճերահոտ» էր գալիս նրանից: Ել էն չի, փշփշու է դարձել: Ար-ցախյան գոյամարտում երեք զավակների կորուստն ավերել է հո-գին: Դեռ, փառք Աստծո, որ ինքն էլ ողջ է մնացել իր ԿԱՍՍՁ-ով ականի վրա պայթելուց հետո, երբ զինամթերք էր տանում դիրքերը: Հրաշը էր. ԿԱՍՍՁ-ից բան չէր մնացել: Նախիրն իր հերթին արոտի

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

տանելիս զգուշությամբ է քայլում Բերդաշենի հանրանասերով, ինչպես ծին՝ սառույցի վրայով: Հանկարծ չինի թե անտերից դեռ մնում է... Նյարդային է դարձել, դյուրագրգիռ: Ամեն մանրութ ափերից հանում է իրեն: Երբեմն տեղի-անտեղի դիտողություն կանի թոռներին, նույնիսկ հացի ժամանակ:

-Հակոն, շանգալդ կարգին բռնիր: Նեսո՞ւ, վեր կաց սեղանից գնա, ձեռքերդ չես լվացել: Վա՞յ ասուո՞ծ, ախչի Նորայրին ինչի՞ թիսեցիր...

Հիմա նստել ենք դեմ-դիմաց, սեղանի շուրջ: Ուրախությունից սիրտը բացվել, անգամ կատակներ է անում, երբեմն՝ կծում: Տասից մեկին եմ պատասխանում՝ խնայելով իրեն: Լիներ, այնպես իմեր, լիներ առաջվանը՝ մի լավ ձեռքովս տայի...

-Արա, եդ արադից մի կաք կուլ տուր, որ հաց ուտեցնի, միս-մորքի բռնես:

-Քա չե՞ն տեսնում էղքան ուտել-խմելոց կրծքիդ տախտակները միս-մորքու մեջ չեն երեւում...

-Լեզուու լեզու չի է՝, ելմար օձ է, օձ... Դե որ չես խմում ու ոչ էլ ուտում ես, վեր կաց գնանք Վազուն ձորի ծմակուտում մի ճաշին փայտ ունեմ, նիտանք, բերենք:

-Հերքան նմա՞ն... Են որ իմ ցույց տված ճամփով չքշեցիր, կողքդ դեմ տվիր, մերենան տարար, դեմ արիր խանդակի: Քափ ու քրտին-քում կորանք, մինչեւ... Հիմա չեմ կարող, եկա, տեսա ու գնում եմ:

-Քա մեկ էլ ե՞րբ ես գալու:

-Զգիտեմ, թե որ չեկա, Սերվանտեսին եմ ուղարկելու...

-Եդ ո՞վ է:

-Իբր չգիտես, թե՞ ինձ էիր ձեռ առնում... «Դոն-Կիխոտ»...

-Հա՞... հա՞... հա՞-, -քաքար ու լիաքոք ծիծաղում է Ուրուքանց Նորիկը: Եդ ծիծաղը հետզհետե նմանվում է էն առաջվա ծիծաղին, որ... մանկության բույր ուներ:

-Քա դու չե՞ս գալու... էն Սերվանտեսի հետ...

-Ե՞ս... ես երեխ գամ էն ժամանակ, երբ գարին մի-մի ընկույզի շափ դառնա...

Նորիկի ծիծաղն արդեն արցունքոտվում էր...

**2000p**

## ԶՄՈՒՄՆ ՕՐ

Վերջապես եկավ վաղուց սպասված այդ ձյունը, եկավ նոյեմբերյան ու դեկտեմբերյան ցրտաշունչ, չոր, սարսուցուցիչ օրերի միջով, ասես երկար ճանապարհ հարթելով, եկավ ու տեղաց բակի քթենու, սալահատակի, լվացքի պարանի, ձմռան՝ դեռ չմաշառած փայտի անփույք կույտերի վրա, թեփոտեց հավաքուն ու հավերի ջրամանը, շան բնի տանիքը, որի տակ բազնել էր Ջուլբարս՝ առջեւի բաթերն առաջ մեկնած, դրւնչը՝ դրանց վրա, հայացքը՝ բաց դրնակից ակնապիշ նետած դրսին, որևից աստղամանան, խոշոր փարիներ են խցկվում ներս ու նստում շան ակնակապիճների վրա:

Տոնը, որ ամբողջովին ձյունածածկ է, ընկղմնել է մի հոգեապարար անդրդրի մեջ, ձյան բարմ ու միաժամանակ սառն շնչառությամբ, ակամայից տրված ձյան մաքրությանն ու անաղարտությանը: Ներսում, ապակեպատ պատշգամբում, որ վաղուց դարձել էր նախասենյակ, հաճելի տար է: Դրսում քամի չկա, եւ երեսի դրանից ծխնելույզն ամբողջովին դրւու է քաշում վառարանի ծովիը: Սենյակում՝ ոչ մի մոլիս, շնչելը հեշտ ու հանգիստ: Վառարանում կրակն այնքան հանգիստ է, որ բվում է՝ չի այրում, եթե դրա հակառակը չնատներ վառարանի փոքրիկ օդանցքից երեսացող բոցի պլայոցը: Սենյակի կողապատին պահ արած քաղմոցին թիկն է տվել տանտերը, յոթանասունը հազիվ անց, թխավոն, անկնճիռ, խաղաղ դեմքով, մի այնպիսի ծովությամբ, որ հասուկ է ընդհանրապես ձմռան օրվա մեջ առանձնակի հոգս ու մտահոգություն չունեցող մարդուն: Դիմացի պատը կիսով չափ ծածկում է ընկույզափայտից, սրճագույն, խոշոր ու ծանր պահարանը, դարակները՝ ներսից հայելապատ, որոնցում արտացոլված սպասքեղենը երեսում է կրկինակի քանակությամբ եւ դրանից ավելի հարուստ է թվում նայողի աշքին: Պահարանի վրա, պատին դիմիար, սեւերիզ մեծադիր երկու շրջանակ, արանքներում ամռանից մնացած ու հինա խամրած մի ծաղկեփունց: Շրջանակներում՝ տանտիրոց երեսի 25-30 տարեկան ավագ դրդու եւ փեսայի դիմանկարները, ազատամարտիկի համազգեստով, հապատ կեցվածքով, այնպես կենդանի, որ բվում է խոսեցնես, հետդ կիսուն:

Տանտիրոց հայացքը երթեմն դառնում է նկարներին եւ, հինա այնպես անճիգ, որից կարելի է ենթադրել, որ նա իր կորուստների

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

յավ ու կսկիծը վաղոց անքեղել է հոգու հեռավոր մի խորշում, բայց տակավին տաք մոխրի մեջ երբեմն ցոլացող կայծերն առերես չի անում, մանավանդ, երբ ներկա են լինում տանեցիները: Պատշգամբի երկայնքով, վերից վար առկախ ցերեկային ճերմակ ու թափանցիկ վարագույրների միջով պարզ երեւում է տեղացող ձյունը, որ կարծես կրկնակի վարագույր է դրսի կողմից, ուրկից չի կտրում տանտերն իր հայացքը: Դեմքին՝ անվրդով հոգու մի երանություն, որ վերջապես բերել է վաղոց սպասակ այդ ձյունը եւ, հավանաբար, երկար կնստի աշնանավար իր, եւ ոչ միայն իր, այլեւ մյուսների վարուցանքի վրա ու այգիներում, կներծծվի հողի ու վազի կոշտացած երակների մեջ:

Դուռը հանկարծակի բացվեց ու փակվեց: Ներս մտած կինը, գլխաշորին, ինչպես ցանցկեն վարագույրի մի կտոր՝ ձյան բարակ շերտ: Նա բափով ու զղային տեսքով մոտեցավ, ցրտից կապտած ափերը պարզեց վառարանի բովին:

-Հը, մրսե՞լ ես,-տանտերը դարձավ կնոշն առանց դիրքը փոխելու:

-Չէ հա, հավաս բուրի է թխում, դու եղ բազմոցը պինդ պահիր, եղ դիվանը տակիցդ չփախչի, Դիվանագետ:

-Դէ ինչ կա որ, աշխարհը խառն է, դիվանագետներ էլ են պետք,-տանտերը հումորով էր, կատակին տվեց:

-Հա՞ քա չես ասի, Քանրունք արտաքին գործերի նախարարներ շատ են տվել, -խոսքի տակ չմնաց կինը:

-Քանրունց հանգիստ բռո, դու էն ասա, խոզի լավիր տվի՞ր: Են տավարը դեռ միտք չունի՞՛: Ախր ժամանակն է, իմ հաշվով՝ էսօր, էկուց, գուցե նույնակ էս գիշեր, ախր շատ է ծանրացած, շա՞տ:

-Եղ քո ասելով չի, էն որ աշխարհ պիտի զա, զալու է, դու դիվանը պինդ պահիր:

Ամուսինը լախ-լախ ծիծաղեց, ուսերի ցնցումից ցնցվեց նաև բազմոցը, ապա շունչ քաշեց, հանգստացավ, շուրթերին մեղմ մի ժպիտ՝ դարձավ կնոջը.

-Էն աքլորը չմորթե՞նք:

-Սիրտդ էլ ի՞նչ է ուզում,-հեղմեց, ես քաշվեց վառարանից՝ բովին տված ափերն իրար շփելով, հոնքերը կիտած, ասես ունքամիջից աղուն պիտի կաթեր,- տասը հավ ու մի աքլոր, եղ ո՞նց կլինի...

-Դէ, ինձ համար չեմ ասում, էն խոյնոցը...

Կինը մտքի մեջ ընկավ, մտահող նայեց ամուսնուն, մինչեւ վեր-

ջինս նորից կատակի տվեց:

-Պահես՝ ինչ անես, իրե՞ն քոչնազրիալը գալիս է: Աստված չանի՝ շգա: Ողջ Թուրքիան սրբում է...

-Դե հորա՛, հորա՛, - ծոր տվեց կինը մի այնպիսի բաղձանքով, որ եթե էդ քոչնազրիալը իր ուզածով լիներ, ամբողջ Թուրքիան կարբեր երկրի երեսից: Ասա ուշքի գալով.

-Են փայտը չճաշառեցիր, կինա ո՞նց պիտի անես,- նեղվեց կինն ու վարագույրների քղանցքի միջով մի հայացք նետեց անվերջ ու մարմանդ տեղացող ձյանը:-Գոնե հերվա չորը խնայիր, որ էդ գեճի հետ բռնացնեմ..

\*\*\*

Կինը դուրս եկավ, երեխի գնաց հարեւանին: Տիրոջ բարով-խերով տված գործերն արել-քողել էր՝ հավերին կուտ տվել ու ներս արել, շան լափով լիքք լազանը դրել առջեւն ու գնացել գոմ, մաքրել, աղբը դուրս տարել-թափել, մերունին կերակրել, ծանրած տավարի տակ մի կիս հարդ գրել, մտածելով, թե հանկարծ ծնի, հորթը խոնավ ու ցուրտ հատակին չմնա, մրսի մի բան պատահի:

Տանտերը պառկած էր նախկին դիրքում, աչքերը՝ կիսախոտիփ, ոչ ննջելու պես, դեմքի արտահայտությունից կարելի է կռահել, որ մտքերի հետեւն ընկած գնացել էր՝ ով իմանա, թե ուր:

-Դաս՝, -շեղեց տան անդորրը, առանց աչքերը բանալու ու, կարելի էր կռահել, որ այդ «դա»-ի տակ շատ բան կար: Զնոսն այդ օրվա պարապուրյան մեջ ինքը պարապ չեր: Այդ «դա»-ն երեխի անցած տարվա արած-քողածի հանրագումար էր եւ, հավանաբար, այս ձմռան ձյուները վերկենալուն պես, զարնան բացվելուն՝ նոր անելիքների նախահաշվարկ: Անցած տարվա բերք-խաղողը՝ ավելի քան երեսուն տոննա, փակեց ծախսեր ու պարտքեր, տակը մնաց երեք միլիոն պուառու դրամ կամ վեց հազար կանաչ դրամ, որ երեք ընտանիքի՝ որբեւայրի մնացած աղջկա, հարսի, իրենց հինգ երեխաներով, պատերազմից աստծո բարեհաճությամբ կենդանի մնացած կրտսեր որդու, իր կնոց ու չորս երեխաներով հանդերձ, եկամուտն էր, որ բոլորի ընդհանուր համաձայնությամբ դրին որդու ձեռքը, թե գնա՞ երեխանից մի գագել առ ու բեր, ինչ է, թե բուպով-ծուպով բաղաք գնալիս՝ առեւտրի նպատակով, չմնան երբուլու տարսի-գագելի հույսին, քանի որ նույն փողերով կարելի է առնել էն բենզինը, որով սեփական հայարից,

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

սեփական մերենայով, առոր-փառոք գնան քաղաք ու վերադառնան: Խելքի մոտ հաշվարկ էր, իոզ չէ, թե մաքրված-լաստված պիտի գնան նոր բերքի տակ, որ նախատեսվում է անցյալ տարվանից ավելին եւ, թե հաջողություն ու սաղություն եղավ, լեն ու բոլ կհերիքի իրենց երեք ընտանիքին՝ դժվար ապրուսի անձիր-ձիրի մեջ չեն մնա:

- Դաա՝, -այս անգամ աչքերը բացելով՝ նայեց առաստաղին, կարծես այդ «դա»-ի պարունակությունն այնտեղից է կախված: Մինչդեռ տնից դուրս էր, այնտեղ՝ հանդ ու չոլում. գործանն անցել էր այգու շարամիջերով, վազերի տակը փխրեցվելու մնաց: Բայց այ թե ջրի հերքը իրենը լիներ, գնար այս լափուն տվող ձյան հետ խառն ջրեր այցին, կարգին բան կստացվեր, այգին կուշտ ու կուռ կիանար ու չէր վախենա ամռան տապ ու երաշտից: Ամա թե շառը՝ եկավ, բարին հետքը: Աշնան վարուցանքի վրա նստող այս ձյունից արտոք հո վեր կկենա: Ցորեն չէր արել, խանութները՝ լիքը ալյուր, զարի ցանեց, տավարի, խոզի, հավուճիվի կորմ: Հմա ի՞նչ է մնում, հա, հիմիկվանից դեղերի հոգս անել եւ դրանք բերել տալ անպայման Երեւանից: Այնտեղ չեն խարդախում, Ստեփանակերտում անում են ու դրա սրսկումների արդյունքն այն չէ, փորձել է ու փորձով համոզվել: Այնուհետեւ, այնուհետեւ՝ ի՞նչ, հա, հիշեց, դիզվանելիքի, հնձավարձի հոգս անել, հիմիկվանից իր ու կնոջ բռշակները հետ գցել մինչեւ մայիս, իր կարծիքով՝ այդ ծախսերը կծածկի:

\*\*\*

Գոմից տավարի բառա՞չ եկավ, թե՞ իրեն թվաց, բնագդական մի կանչ՝ աղերսի պես ու բափով ելավ բազմոցից, գոմի խալաքն ուսերին առնելով, շտապեց այնտեղ: Տավարը նստած էր, կողքին հորքի նման մի բան, որ դեռեւս հորք չէր, ապուշ, անուղեղ, շվարած, չոված՝ դեռեւս թոյլ ոտքերի վրա, որ կարծես ոտքեր չեն, այլ ծուռումուռ հենակներ:

Տավարը վերկացրեց, տակի աղտեղությունները սրբեց, մաքրեց ու տարավ դուրս բափեց՝ մտածելով, որ լավ է՝ կովը չի կերել, ախր պատահում է չէ՞՝, ուտում են ու սատկում: Վերադարձավ գոմ ու հորքի դեռ ճրճիմ գլուխը զգուշությամբ ափերի մեջ առնելով, դունչը մոտեցրեց մոր պտուկներին, մրմար արեց, ինչպես ինքը կասեր: Հորքը երկար չէր հասկանում, թե ինչ պիտի անի, բայց, ահա պտուկն առավ ու բերանում հաճելի մի համ զգաց, հետո գնաց-գնաց ու փո-

լից հետզհետև նկատելի դարձավ, որ այնտեղ է հոսում մայրական կենարար հյութը:

Տանտերը զննեց հորդի պոչատակը, հետո այնպես ցածրաձայն, իր ու կովի համար լսելի՝ աչքի հանեմ /կարծես երեխայի հետ էր/ էս քո սեռից չէ, իմ ուզածը քո սեռից պիտի լիներ, դմզլղացու, իսկ դու ցուլիկ ես ծնել, հերիք չէ, դանակն էլ, սեւ ճակատագրի պես, վզին, որ ի՞նչ, մեծանալուց մորքե՞՞մ: Չէ, ես արյուն չեմ անի, կմեծանա, կծախեմ ուրիշի, բող ինչ ուզենա՝ անի, միայն թե իմ աչքից հեռու...

Կովը լիզում էր մորն ընտելացող հորդի փալնքոտ ու նվազկոտ լանջը, վիզը, ականջատակերը, պոչն ու պոչատակը, եւ դրանից ասես հորդը գույն էր զցում, մի տեսակ շող ու փայլ էր առնում եւ արդեն իսկապես որ հորդի տեսք: Երբ ամեն ինչ գրեթե կարգի էր զցել, տանտերը դուրս եկավ գոմից ու դուռն ետեւից ամուր փակեց: Այդ պահին բակից լսվեց աքաղաղի մի զիլ ծկլթոց ու անմիջապես մարեց:

Երբ տանտերը բակ մտավ, կինը, դանակը մի ափի մեջ, բունցը-ներով աքլորի թեւերը ձյան մեջ ամուր խրելով՝ դեռ պահում էր, որ շքպրտա, չարնոտի իրեն:

-Այ կնիկ, ես ի՞նչ ես արել:

-Զո ուզածը,-պատախանեց կինը,-վեր կացավ ծնկած տեղից, դանակը բողած աքլորի վրա, կրկնեց,-քո ուզածը...Էն խոխոցը... էն նորելուկ հորդի, ես մարմանդ իշնող ձյան ոսքերի տակ, էն բռչնագրիափի դեմ, որ Ծուրքիայից դուրս չգա...

Տանտերը ծիծաղեց լախ-լախ, իսկ կինը.

-Էն նորելուկը իմ սեռի՞ց է, թե՞ քո...

-Ին, կարճ կապեց ամուսինը:

-Լավ չէ, լավ չէ, իմ սեռից լիներ, ուրիշ բան...

-Հա, ես էլ էլ ի ուզում, ամա ի՞նչ կարող ես անել: Էն որ աշխարհ պիտի գար, ոչ ինքը գիտեր որ սեռից է լինելու, ոչ էլ մենք կարող էինք գուշակել: Երկնայինի կամոք էր:

-Անունը ի՞նչ դնենք...

-Ցիկ Ամրամ,-պատախանեց կինը ժպտալով:

Աքլորն առան ու ներս գնացին: Դրսում, արյամբ ներկված ձյան վրա մնաց մորթվածի դրոշմը, եւ կմնա այնքան, մինչեւ ձյունը կիալչի...

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ

### ՖԵԼԻՔՍԸ

Երբ գրում եմ՝ չեմ փոխում հերոսներիս անունները, կարող են վկայել իրենք: Նրանք միանգամայն իրական մարդիկ են, որոնց հետ շփում են, ապրում ու շնչում: Իսկ ես գրում եմ հատկապես նրանց մասին, որոնց սիրում եմ, ու եթե գրածներիս մեջ երբեմն անխոսափելիորեն թերություններ են բացահայտվում, բոլորովին էլ չեմ անհանգստանում, թե կարող է վիրավորվեն: Հաճեի է, երբ մարդ ներկայացվում է այնպես, ինչպես կա: Հակառակ դեպքում՝ դիմացին հիմար չէ, բավանցում է կեղծիքի մեջ եւ... առնվազն հոգու մի բարուն անկյունում չի համակրում քեզ: Բայց իմ այս վերջին միտքը չի վերաբերում Ֆելիքսին: Իրար աղել ու մաղել ենք, թեփը տվել քամուն, տաշտում մնացել է մաքուր այլուրը...

Երբ տավարը քշելու իր հերթն է գալիս՝ ասես Ելմար օձ է փարաբ-վում վզին.

-Հոգնել եմ,-ասում է,-չգիտես է՝ ոնց եմ հոգնել...

Բայց ելի տավարը քշում է: Թուխ դեմքը մտահոգ, կաշվե լայնեզ-րը գլխին, հազին նոյն թերմաշ վերարկուն, մի ձեռքում՝ մահակ, մյուսում՝ պայտասակի մեջ օրփա ուտելիքը: Զգում ես, որ քայլելիս ու-տինե սապոգները սեղմում են ուորերը: Ինչ անի, թե սեղմում են, քա-որ, աստված չարած, հանկարծ անձրեւ եկավ...

Նայում եմ հետեւից՝ մինչեւ ինքն ու նախիքն անհետանում են իմ աշքից, նայում եմ ու մտսնում. կարծում ես՝ ես չե՞մ հոգնել, Ֆելիքս, ինձ համար էլ դժվար է: Ծեզը-ծեզին վեր կաց, մտիր գոմ ու տավա-րի տակ մաքրիր, քափ ու քրտինքի մեջ կորած աղքը տար ու քափիր, ետ դառ ու կովերի կրծերը լվա, կրիր ու դեռ այդքանից հետո, եթե տավարը քշելու իմ հերթն է՝ նոյն Ելմարը փարաբվում է նաև ինձ...

Ֆելիքսը նախրի մեջ երկու երինջ ունի, մեկը՝ սեւ, մյուսը՝ կարմիր: Սեւը մի տարով փոքր է: Էղ կարմիքն էլ մի ջոկ անասուն է, մի քաշ-ած պատկեր, հանգիստ, խելոք: Նախրից կշռկվի ու իր համար առանձին կարածի, որ մյուսները հարու չտան, չխանգարեն: Երեկո-յան տուն դառնալիս, բավական է հեռվից մի անգամ կանչես՝ եկ,

Նարինջ, եւ կամաց, առանց իր երիշից ընկնելու, կգա ու կխառնվի նախիրին: Ֆելիքսի համբերությունը հատում է.

-Էղ անտերը ե՞րբ է ծանրելու... աչք ջուր կտրեց: Չէ է, չէ, ծախելու եմ, հոգիս ազատե՞մ...

-Ո՞րը,-հարցնում եմ:

-Կարմիրը է՝, կարմիրը:

Ծիծաղում եմ, ինքն էլ է ծիծաղում ու նրա ծիծաղը, որ միշտ աչքերից էր սկսվում, ասես պայրում է որպես իմ ու իր անասունի դեմ մի անարդար բողոք.

-Քեզ ի՞նչ կա է... քոննը ծնել են ու կրում ես: Իսկ ես տակ եմ մարդում, պահում, պաշտում՝ անարդյունք:

- Ինն ամիս էդ ո՞նց ես դիմացել մորդ..., -շաղինքս կու եմ տալիս ու շարունակում,- համբերիր, Ֆելիքս, համբերիր, շուտով Նարինջը բռով կգա, կծանրի, ինն ամիս հետո էլ՝ կծնի, կկրես ու լազարը կիմանաս...

- Այ տարի՞ էլ պիտի սպասեմ...,- ծոր է տալիս,- ափսոս չի՞ն էն ժամանակները. Խանութից կեֆիր, սմետանա էինք առնում, կեֆիրը՝ քասն, սմետանան՝ քառասուն կոպեկով, քիչ ու միշ ուտում էինք, կշտանում, թերատ քանիկան նետում աղբարկդ, չինք է՝ լ ափսոսում...

- Հենց էդ շափսոսալն էր է, որ հիմա էս օրին ենք,- ընդհատում եմ ու շեղ նայում իրեն:

Լռում է, մի պահ մտածում ու թե.

-Հա էլի, էլ մի ասա՝...

Երեկոյան տուն է դառնում նախիրն առաջն արած, մի կապուկ խոտ էլ կոնատակին, հոգնած, դադրած: Նայում է ինձ, երկար տնտղում, ասես առաջն անգամ է տեսնում, ապա նախօրոք մտածածն է արտաքերով.

- Ինչ ուզում ես ասա՝ էս տավար պահելն իմ ու քո գործը չի, մեզ չի սազում...

Աստված ո՞նց է հանդուրժում, երբ ինձ ու քեզ նմանը մահակ է վերցնում ու տավար տանում արտսի... Բա որ համկարծ աշակերտներիցս մեկը տեսնի ինձ տավարի հետեւն ընկած՝ ի՞նչ կմտածի...

- Թե իսելքը գլխին աշակերտ է՝ ոչ մի վատ քան...,-ասում եմ ու շարունակում իր տոնով,- երբ Բորիս Բաղրյանը... ճանաչու՞մ ես, չէ՞,

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

պատահում ենք՝ ինքն անտառից փայտը շալակին գալիս է, ես տավարն եմ հանդ տանում:

-Վաս...  
-Չա՞ն: Գիտե՞ս՝ ինչ ենք անում: Սի պահ նայում ենք իրար, դառն ժպտում, ինքը՝ շալակի տակից, ես՝ ձեռքիս մահակ ու նախիրն առջևս: Ասում է՝ իմ կրակը թեզ է այրում, բռնը՝ ինձ... եղակե՞ս: Ֆելիքսը կարեկցանքով նայում է ինձ ու կապուկը կրնատակին հեռանում:

Նախիրը քշելու իմ հերթն է: Գիշերն անձրեւ էր եկել ու դադարել էր լուսադեմին, բայց երկինքը դեռ սեւակնած էր, չեր բացառված, թե նորից չի տեղալու ու... հանդում բաղնիք չեմ անելու: Ապահովության համար հետո անձրեւանոց վերցրի: Ֆելիքսը երինջներին թերեց, խառնեց նախիրին ու թե.

-Աչքդ կարմիրի վրա պահիր, մի տես եղ անտերը միտքը հո չի փոխում...  
-Կարմիրը քո զգրու միտքը չի էլ փոխելու,-կատակում եմ,-փոխի էլ ի՞նչ օգուտ՝ մեր նախիրում ցոլ չկա...  
-Զգիտեմ, մի կերպ արա... ուրիշ նախիրների հետ խառնիր...  
-Արա, ես թեզ համար ցոլերի կանտորի դիրեկտոր եմ, -ասում եմ՝ իբր բարկացած:

-Հա՞..., հա՞..., հա՞-, ծիծառում է այնքան բարձր ու սրտարուխ, որ աշքերը ջրակալվում են, ծիծառի մեջ էլ ավելացնելով,-տավարը քշի՞ր... դու ինձ համար ամեն ինչ ես:

Հանդը խոնավ էր ու բաց, խոտերը՝ շաղոս: Չորալանջն ի վեր ցրվել էր նախիրը, վինչոցով արածում էր, խոտ էր արածում ու հետոն էլ ցող ըմպում այնպես, որ կեսօրին անասունը ջրելու կարիք չի լինի: Չորի մյուս լանջին փուփել էր Բարսեղի նախիրը: Հանկարծ նրա ցուլը պոկվեց տեղից, բղավոցով եկավ, հատեց ձորն ու գնաց դեպի Ֆելիքսի կարմիրը:

-Եղ ո՞ր, ցոլիկո,-կանչեց Բարսեղը, - հետեւիցդ իրավե՞ր են ուղարկել,-ապա դատնալով դեպի ինձ՝ ասաց,-Պարի օ՞ր...

Ձեռքս օդի մեջ կախում եմ իբրեւ պատասխան եւ ուշադիր հետեւում ցոլիկին, թե ինչ պիտի անի: Մոտեցավ, հոտ քաշեց երինջի պոշատակից, դունչը ցցեց վեր... Գործն ավարտեց, սկսեց կողքին հանգիստ արածել եւ մի այնպիսի բավականությանք էր արածում, որ...

-Գործդ տեսա՞ն, ցուլիկո... մորթե՞մ քեզ, դե եկ,-ասաց Բարսեղն ու կրկին դարձավ իմ կողմը,- ախսպեր, եղ երինջի տիրոջը կասես էգուց մաղարիչն ուղարկի...»

Երբ երեկոյան նախիրը մտավ մեր փողոցը, Ֆելիքսը սպասում էր Էլեկտրական լամպի տակ, մեջքը հենած այունին: Սպասում էր այնպես, ասես սիրտն ինչ որ բան էր գուշակել: Մոտենում եմ, խորհրդավոր ժպտում:

-Հը, չինի, թե հոգնել ես:

-Չէ,-ասում եմ,- եղ իր հերթին, բայց էգուց կես լիտր...

-Ի՞նչ..., -ծառս է լինում՝ հասկացավ,-չեմ հավատում, չի կարող պատահել...

-Արա, եղ կես լիտրն ինձ համար չեմ է ասում, են ցուլի տիրոջ...

-Արա, հա է, հա, բայց հավատալս չի գալիս, թե կարմիրը...

-Էսօր ամսի քանի՞սն է,-հարցնում եմ:

-Մայիսի իննը:

-Դե՛՝ ուրեմն մինչեւ եկող տարվա մարտի ինն էլ սպասիր, թե եղ օրը չծնեց՝ անուն փոխելու եմ:

Ֆելիքսը տաք ափն ուրախությամբ դրեց կարմիրի մեջքին, որ մնտեցել էր տիրոջը, սետուկն էլ ետեւից, ձեռքն անասունի լանջով զնաց, պոզերի արանքով իջավ ճակատն ի վար, խանդադատանքով շոյեց աչքերն ու «հո» արեց՝ զնացին տուն:

Ֆելիքսը պրոֆտեխուստմարանի առաջին փոխտնօրենն է: Որպեսզի աշխատանքից չբացակայի, գործը չտուժի՝ խնդրեց իր հերթը հարմարեցնեն շարաթ, կիրակի օրերին:

Երինջը ծանրեց, կուրծը լցվում էր ու պրկվում: Բայց մի օր, երբ էլի նախիրը քշելու իմ հերթն էր ու տարել էի հանդ, կարմիրն առավոտից քիչ արածեց ու նատեց: Անհաճզիս մնտեցա, ուոքով հրեցի հետույթին, վեր կացավ: Քեփ չուներ, անմիջապես նկատեցի, որ «ունել» էր: Անելիքս գիտեի, գործի անցա՝ կարգի ընկավ: Տունդարձին Ֆելիքսին հարցրի.

-Երեկ երեկոյան կարմիրին ի՞նչ էիր տվել...

-Բա՞ն էր պատահել,-անհանգստացավ:

-Ունել էր...

-Բա ի՞նչ արիր...

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

-Ի՞նչ պիտի անեի, փայտի մի կտոր վերցրի, բերանը բաց արի,  
դրի երկու ծնոտի արանքում, պինդ կապեցի ու սկսեցի դես ու դեն  
քշել: Թակում եմ ու արագ քշում, թակում եմ ու քշում այնքան, մինչեւ  
կարգի ընկապի:

-Վաաա-, -կապտեց,-փորին հո չե՞ս խփել, հանկարծ չփիմի...

-Բացառված է ... հետոուրին էի խփում: Բայց դու են ասա՝ երեկ  
երեկոյան ի՞նչ էիր տվել նրան:

-Ճակնդեղ...

-Ինչքա՞ն:

-Մի դույլ,-ասաց վախվիրած:

-Տնաշեն, սպանելո՞ւ ես: Էլ չտաս, թե տաս էլ՝ մեկ-երկու հաս:

-Լավ,-խստացավ հանգիստ ու թե,- քո կարծիքով երբ կծնի:

Նայեցի երինջի կրծին ու հատկապես՝ պուտուկներին, որոնք դեռ  
չեն պրկվել ու ցցվել: Մտածեցի՝ երեփ մի շարաք էլ տեսի: Միտք  
բարցրի, ասելով՝ իբր բարկացած.

-Ի՞նչ է, ես թեզ համար տատմե՞ր եմ...

-Արա պա հովվը՝ ս,-ձոր տվեց ու գնաց:

Կարմիրը ծնեց: Լավ կոյ դուրս եկավ, լավ էլ կաք է տալիս: Հիմա  
իր հերթին Ֆելիքսը նախիրն արոտի տանելիս, կաշվե պայուսակում  
մի բանկա մածուն էլ է տանում, պանիր էլ: Անձեւոտ այս աշնանն  
էլի նոյն կաշվե լայնեղրն է գլխին, հագին աշնանային նոյն կաշվե  
վերարկուն, ոտքերը ռետինե նոյն սապոգներում, թեպետ նեղ են  
գալիս, սեղմում են: Ի՞նչ կարող է անել՝ անձեւոտ օր, ցեխ, հանդի՛  
շաղոս: Տունդարձին դիմավորում եմ, բազմանշանակ ժպտալով  
հարցնում.

-Հը, էլ ո՞նց ես...

-Ասում եմ՝ սեւուկը ծախեմ...

-Էլի՞, ընկեր մտավորական,-հեգնում եմ,-մեր սոցիալական վի-  
ճակը խորհուրդ չի տալիս... Ուրիշ էլք չունենք՝ տավարը պիտի պա-  
հե՞նք.

-Արա, ինչ ուզում ես ասա, մեկ է,-մահակը տնկում է օրում,-սա  
մեր փեշակը չի է՝, մեր փեշակը չի՝...

**1995թ.**

## ԳԺՎԱՐ ԱՊՐՈՒՄԸ

Գարնան վերջին, երբ դադարել էին հորդառատ անձրեները եւ թվում էր՝ հունիսն անամպ ու արեւոտ կլինի, խոտը հարելիս քոռութաց չի անի՝ հնձածը փտեցնի, Կիման մի էշ առավ: Հլու այդ կենդանին բարձրատն էր, սեւով, երիշը՝ տեղը: Շահումյանի փախստականներից մի ընտանիք, որ մեզ մոտ էր ապրում, մի էշ ուներ: Տերը, որպես մեր լավույթան փոխառուում, փայտ էր բերում մեզ համար: ‘Դժբախտաբար’ էշը գտամած էր, չիմացավ, սատկեց, փալանը ընկած էր մեր ներքնահարկի մի անկյունում: Կիմային կատակով ասացի:

-Մեր տանը մի փալան կա՝ քեզ տամ, էշն ինձ էլ պետք լինի՝ չմերծես...

Շեղ նայեց՝ խորամանկ ժայտն աչքերում: Հումոր ուներ ու տակ մնացող չէր: Անմիջապես վրա բերեց.

-Ի՞նչ փալան, ի՞նչ փստան, էշը գլխիդ դուրբան: Ֆելիքսը քահքան ծիծաղեց ու ծիծաղից սեւորակ աչքերը կորան կոպերի տակ, ասաց.

-Կիմա, տավարը քիչ էր, էշն էլ ավելացրիր...

-Էշի դադիրը հետո կիմանաս,- կարճ կապեց, մի այնպիսի ենթատերսոով, որ կնշանակի, թե այդ «դադիրը» զալու է հենց քո առաջ... Ես, որ Կիմային բավկականին ուսումնասիրել էի՝ գիտեի, որ նրա հաշվարկները հեռուն գնացող հաշվարկներ էին... Ֆելիքսը շարունակում էր խայրել.

-Էշը բերի, էշը ուտի, բա էշատերն ի՞նչ կուտի...

-Էշատերն էլ քո բերածն է ուտելու..., -տակ չէր մնում, Ֆելիքսն էլ չէր վիրավորվում, հեզնանքը չեզորացնում էր իր զարմանալի, փարակիչ ծիծաղով: Անասնատերերը տագնապի մեջ էին: Տարին նահանջ է, խոտը պակաս, ով հասցրեց եղածից մի բան զցել կսուրը՝ անասունը ձմեռահան կանի: Վայը եկել, տարել էր նրան, ով հապաղեց ու, քանի վերահաս ամառը հողի երեսից չէր խանձել եղածը՝ ժամանակից շուտ կծած ու կարճ մնացած խոտը, ձմեռը նրա հերն էլ կանիծի, անասունի հերն էլ: Կիման տենիդի մեջ էր. քափ ու քրտինքի

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

մեջ կորած դես ու դեմ էր լընկնում: Վերջապես Քարաշենից մի ափ խոտհարք պոկեց՝ մեկ երրորդի պայմանով. Ուրիշ ելք չուներ: Գերանդին սրեց ու գործի անցավ: Հօնում էր ու հնձածից ամեն երեկո մի էշաբեռ էլ բերում տուն: Ներքին կարգով էր անում, որ հանկարծ զլիսի չընկնեն:

Թե հաջողվի այդպես շարունակել՝ երեքից՝ ոչ թե մեկը, երկուսը կմնա իրեն:

Տունդարձին հարցնում են.

-Հը, ո՞նց ես... խոտհարքում մի քան կա, թե՞...

-Ի՞նչ քան է... սադ օրը կածուկ եմ ջոկում,-ասում է, ձեռքի ափերը պարզում դեպի ինձ: Ավերում՝ կարմրուկներ են, մատներն ուռած, փրոտած: Ֆելիքսը հերթական գնդակն էր արձակում.

-Եղ որ օրական մի էշաբեռ բերում ես...տափատիրոջն ի՞նչ է մնալու:

-Արա, մի գնա քանիդ՝... հալս քո հալից չի՞:

Ֆելիքսը քիթ ու բերան փակում է ձեռքի ափով, անցնում թիկունք՝ հազիվ զապելով փոթկոցը:

-Արա, քամակ մի մտիր է... Էզուց տավարը քշելու հերթս է, նախին իմ փոխարեն քշիր, ես էս խոսի հոգսը քաշեմ, պրծնեմ:

-Կրշեմ, քա ո՞նց,-խնդրում է Ֆելիքսն իմ թիկունքում,-մի էշաբեռ էլ ինձ համար բերես՝ խի չեմ քշի՞:

Խոտը՝ խորումի մեջ, անձրեւ եկավ: Թոն կարեց Կիմայի հոգս ու տեսդի վրա:

Զանձրույթը նստեց նրա պարապության մեջ, ախոռին կապած էշի կախ ականջների վրա, որ թափուր մնացած զինքն էր թափ տալիս: Եվ պարապության բերած ձանձրույթի՞ց, թե՞ ինչից, Կիման հերսոտվեց, ինքն իրեն ուսում էր ներսից, բռնբորում, բքում էր եղանակի՞՝ թե՞ ինչ որ մեկի վրա, որ իր հերթին նախսիրը պահ տալիս լակուտ-մկուտի, տանում են հանդում դալ անում, իրիկունը սոված բերում տուն: Չե է՞՝ չէ, ինք երկու կով չի՞՝, նախսիրից հանեմ, տամ վարձու պահողի: Օրական տասը լիստը չե՞մ կթում, մեկը ծախեմ՝ վարձը կփակի: Բայց իհմա ո՞վ ուրիշի տավարը կպահի... կետի ժամանակ պոշը ցցի, շամբուտի մեջ տա, կորչի կամ գողանան: Դե եկ, տակից դուրս եկ: Չե, պահող կճարվի, փողու ո՞մ տաս՝ չպահի: Եվ ամեն վիճակից ելնող Կիման գտավ եղ վարձու պահողին, անասունը պահ

տվեց նրա խղճին:

Երկինքն աչք էր բացում թե չէ, Կիման խոտհարք էր շտապում, արեւի ծիկրակին խոտի խորոմներն է պրանում, որ արեւ ու քամուն տա, չորանա, շուտ տուն զցի՝ պրօնի: Խոտի նամահոտը տալիս էր քրին, դեմքը քրվում էր տհաճ մտքից: Էս ի՞նչ դառավ է՛... ափսո՞ն: Նայում էր երկինքին, արեւին՝ կկոցված աչքերով, ի՞նչ արիր՝ արիր, անտեր, քամակդ էլ բաց չանես... Խոտը բերեց, տուն զցեց: Տափատիրոջն ինչ էր մնացել չիմացա: Բողոք չկար, ուրեմն՝ հաշիվը մարուր էր... Երեկոյան, պիջակն ուսերը զցած, ճիպոտն ափերի մեջ ու ձեռքերը՝ քամակին, դուրս եկավ տավարին ընդառաջ: Ասացի.

-Խոտից պրծա՞ր...

-Հա, ախաբեր, պրծա, ամա ջանս էլ հետը պրծավ: Կիման իր ջանի լադիրն իմացողը չի, իր հոգին էլ կիանի, էշի հոգին էլ, միայն թե ապուու ունենա, բռլ-բռլ տա կովերին, երբ իրիկունը հանդից զան, տանի գոմ, կապի, ձեռաց սարքած եռոտանին դնի տակն ու վրան նստի՝ մեջքին ցավ չտա, ծնկներն էլ հանգիստ մնան, կրի հա կրի, կրելիս էլ ժպտա իր մտածածի վրա, որով Ֆելիքսին հանդիպելիս ծնկի բերի.

-Ֆելիքս, կարն ինչի՞ց է էղքան սպիտակ...

Ֆելիքսը պատասխան չունենա՞ր... Ֆելիքսը Ֆելիքս չէր լինի, թե չկուսահեր ու տեղն ու տեղը չմեխսեր.

-Էդ նրանից է, որ բրիքը շատ է սեւ...

-Օձի խայր ունես... Էն որ Մալիքեկուի քարափներում կա,-Կիման կրլթ-կրլթ կծիծաղի, զլուխն օրորելով կզնա, էշն առաջին, պարանն ու կացինը փալանի վրա հանգույց արած: Ֆելիքսը հետեւից կկանչի.

-Էդ իինա էլ ո՞ր ես քշում...

-Գնում եմ փայտի, որ... ձմռանը մրսեն՝ մի խտետ էլ քեզ տամ...

Կիման իիմա էլ ձմռան փայտի հոգս ու տենդի մեջ է, դժվար ապրուստի իր ծիրն է քաշում չզիտես ում կտորը զցած խոսք ու կատակի միջոցով: Օրական երկու էշարեն էր բերում, թափում ով իմանա ում շիլ աչքի մեջ, որ իր սունդարձին նոր էր ճպում, ճպուշկալած կոպերի տակից պլշում. Բերում եմ, բա ի՞նչ, դու մինչեւ կեսօր ճպիր ու պլշիր բերածիս վրա, ասես քո հոր մեջքով եմ բերում: Բան ու գործդ ե՞ս եմ, թե՞ ուրիշ հոգս չունես: Փայտը դարսելիս՝ մեկը մտածկոտ պահում է ձեռքում, կարծես շիմանալով՝ էդ էլ դարսի՞, թե՞ խորի էդ

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

շիլ աչքի բիրի մեջ...

-Գոնե քեզ մի քիչ խնայիր... մազդ երեսիդ չորացել է,-սրտնեղում է կինը:

-Ես... ինձ՝ ի՞նչ, քեզ պիտի խնայեմ, որ ձեռից ընկնեմ մի գրալ ջուր տաս,-դառնում է վերջինիս՝ նոսր քեխերից մի պատառ ժպիտ կախելով:

Հորբերի համար խոտ չունեի: Ամեն օր մի կռնատակ բերում էի, չեր հերիքում. շալակով բերած խոտով հորք պահե՞լ կլինի: Դիմեցի Կիմային մի խեղճ ու կրակ խնդրանքով.

-Էշը տուր, գնամ մի քիչ խոտի:

-Էշը... ի՞նչ՝ էշ, հա՛, կռազ: Ել էշ շասես, իմը՝ կռազ է: Զապրավկա անեմ, եկ տար...

Խոտը բերելիս Ֆելիքսը հանդիպեց ինձ ու քե.

-Տեսնես, որ ես ել խնդրեմ, Կիման էշը մի օրով ել ինձ չի՞ տա...

-Կտա,- ասում եմ ու կծում,- խե չի տա, հղի հո չի: Ամա դու էշի «դադիրն» իմացողը չես, տանես էնքան բարձես, որ...

-Որ՝ ինչ...

-Ի՞նչ իմանամ. ամանար է էլի, էնպես անենք, որ վաղվա համար երեսաւեղ ունենանք...

-Փառք Կիմային, ո՛չ փառք քե՛զ... արա, լավ է էշատերը դու չես,- իմքն էլ ինձ կծեց ու գնաց:

Բեռք բափեցի, էշը տարա Կիմային: Երբ դարպասից ներս մտա՝ նստած էր բակի թթենու տակ դրված նստարանին, ձեռքը դրած փորին, անտրամադիր, դեմքը՝ թեթեւակի գունատ: Մոտեցա:

-Ի՞նչ է եղել,-հարցրի.

-Ի՞նչ ասեմ, ախաղեր,-այդպես էր դիմում ինձ,- էս վիրահատած տեղս ցավում է, վախենամ, թե զոռի տակ եմ զցել...

Ես չգիտեի, կարծում էի՝ պինա ոսկոր է, ոչինչ քար չի անի: Ինքն էլ արած-թողածով, բանուգործով էղ տպավորությունն էր քողնում: Ով կմտածեր...

-Գնա բժշկի,-ասացի,- թող մի սսուգեն:

-Չէ՛,-ծոր տվեց,-կզնամ Երեւան՝ էն պրոֆեսորի մոտ, որ ինձ վիրահատել էր...

Մարդուն ճանաչելու համար՝ պիտի նրա շեմից ներս մտնես: Հարեւան ենք, բայց առաջին անգամ է: Լավ տուն ու տեղ ունի: Ամեն

ինչ՝ տեղը-տեղին, սար-սար խոտը՝ ծածկի տակ, մի ամսում մթերած փայտը՝ երեկվանից մնացածի հետ, որ երկու ձմեռ էլ կհերիքի, դարսած լայն ու երկար պատշգամբի տակ, այուների արանքում, մինչեւ առաստաղ: Նայում ես ու իհանում. ափսոսալ կգա, թե ձեռ տաս ու բերատես՝ ինչքան էլ երկար ու խիստ լինի ձմեռը:

Գնաց Երեւան, գրեթե մի ամիս մնաց ու վերադարձավ: Նկատվում էր, որ պրոֆեսորը հոգ էր տարել, անելիքն արել էր: Ինքն էլ երեւի, ձեռքը քարի տակ չէր պահել... Եկավ, տեսավ տավարը լուսել էր. փողը տվել էր, անասունը՝ բողել վարձով պահողի խիղճ ու խղճանքին: Արդյունքը՝ խնդրեմ: Էքսին անմիջապես անասունը ես քաշեց, բերավ, նորից խառնեց նախիրին ու էլ օրն էլ նախիրը տարավ հանդ: Ասացինք.

-Մենք կտանենք, դու դեռ տանը մի քանի օր մնա, հետո...

-Չե, -կողին ընկավ, -խառնում եմ ու պարտավոր եմ քշել...

Նախիրը երկու օր տարավ արոտի, երկու կով ունի, երկու օր էլ տարավ՝ կարգ է: Ֆելիքսի հերքն է, հետո՝ իմ: Ինքն ամասունի ու ձմռան հոգսերն հոգացել էր, հիմա կարող է հանգիստ մնալ: Ես ու Ֆելիքսը ոչ խոտ ունենք, ոչ փայտ: Մեր օրն ի՞նչ է լինելու՝ զգիտենք, առայժմ՝ զգիտենք: Բայց մեկ է՝ մի քան պիտի անենք: Կիման անհանգստանում էր, ասես վիզը մեր հոգսի տակ պիտի դներ:

-Ի՞նչ եք լրվել: Էսօր-էգուց ծըլրկըրն ընկնելու է:

-Կիմա, -ես ու Ֆելիքս՝ միասին, ասես նախօրոր պայմանավորվել էինք, -էշը տաս զնանք փայտի:

Մեկ ինձ էր նայում, մեկ՝ Ֆելիքսին, սկզբում՝ ապշած, ապա՝ աչքերում հայտնվեց խորամանկ ժպիտը, տնտղեց մեզ՝ ինչպես միամիտների ու հանկարծ բարձր ծիծաղեց.

-Ե՛, ախազերնե՞րս, կռազ-էշ ծախել եմ...

Սպշել-նայում էինք, սառած-մնացած, խոսք չունեինք ասելու... հանկարծ վրա բերեց.

-Ի՞նչ եք մաք մնացել... ես հո ձեր խելքին չեմ. Եշը պահեմ՝ ձմռանն ի՞նչ անեմ, անտեղի խո՞տ տամ... Գարնանը նորը կառնեմ, էն ժամանակ՝ խնդրեմ:

-Ասաց ու զնաց՝ բողնելով մեզ մեր դժվար ապրուստի անծիր ծիրի մեջ...

### ՔԱՐԱՓ

Ֆելիքսին ասում եմ՝ մի բան պատմեմ, չծիծաղես եւ, դեռ խոսք չսկսած՝ ծիծաղում է ու... սառը ջուր մաղում վրաս: Մեկնվել է քարափի գլխի կանաչ գորգի վրա, փափլիկ ու թխավուն թաթերն առել գլխատակ, հայացքը հառել լուրք ու անեզր երկնքին՝ ծիծաղում է ու ծիծաղը վերջ չունի: Թե ինչի վրա՝ չես հասկանում: Բերանից ծիծաղը թափվում է քըլք-քըլքոցով, ինչպես օրվա վերջին տաքացած տափաշշի ջուրը՝ քարափի բացատում արենից շիկացած շիկաքարի վրա: Վերջին քըլքոցին դիմում է ինձ՝ առանց իմ կողմը նայելու.

-Դե պատմիր...

-Բայց ինչի՞ վրա էիր ծիծաղում,-հարցնում եմ, հայացքս չկտրելով Սալիքեկուի ավերակներից, որ քարափի գլխից երեւում են ինչպես ափիդ մեջ:

-Ասե՞մ ինչի վրա,-ծառս եղավ տեղից ու շտկվեց փափուկ նստուկին,-քո երեկով հորինած թուրքերեն քառյակի.

*Մալիքայլու ինդի յոխուր,  
Գաշկրնար յաման չոխուր,  
Բիր բահր էլա, Հեյդար արա,  
Ալիմիզդան գեղիր վարան...*

Քառյակն ավարտեց, կրկին բռնկվեց մի անզուսպ ծիծաղով, ետ ըմկրկեց ու երեխայի պես թափալվեց կանաչի վրա. վայ ամա՞ն, վա՞յ աման...

Վերջապես հանգստացավ, ուղղվեց տեղում ու, դեռ ծիծաղի կայծերը ցոլացող աչքերում, հայացքը սպասողական հառեց վրաս: Նայում էր այնպես, ինչպես՝ երեկ, երբ նույն քարափի վրա, մահակն առել էի կրծքին՝ իբրև սազ, ու ինձ թուրք աշուտի տեղ դրած՝ էղ քառյակն էի հորինում, աշուղական հանգով էլ երգում, իսկ ինքն էլի ծիծաղում էր փորից բռնած ու նրա ծիծաղից թնդում էր քարափը:

-Այնուամենայնիվ՝ են «քանը» պատմելու ե՞ս, թե՞՝ չե՞: Դու միշտ էլ պատմելու մի հետաքրքիր բան ես ունենեում...

-Մտքովս երբեք չէր անցնի,-խոսքս կտուրն եմ գցում,- թե ես ու դու

Էս քարափում անասուն կարածացնենք...

Ֆելիքսը դրան չէր սպասում, զիտեմ, կռահում եմ ինձ հառած իր սպասողական հայացքից: Բայց սպասելիքը մտքի մի անկյունում պինդ մեխելով, որ չմոռանա, հաստատ որոշեց, թե դրան դեռ կվերադառնա՝ ասաց.

-Իմ մտքով էլ չէր անցնի... Մրանք խելք չունեին, -նկատի ուներ Մալիբեկովի բուրքերին, -խելքն իր հերթին, նամուս էլ չունեին, ասեին՝ էս հայերից ի՞նչ ենք ուզում, ի՞նչ ենք տվել, որ չենք կարողանում առնել... Էն է՝ ձեններս կտրենք, վեր ընկնենք ու ապրենք:

-Լավ է՝ ձենները չկտրեցին...

-Ի՞նչ ես ուզում ասել...

-Հեք: Բացատրելու բան չի... -Եվ մինչ այդ «անբացատրելին» ինձնից կկորզեր, հայացքն ընկավ քարափից ներքեւ, խոտով լրված բացատին, ուր նախիրն էր արածում՝ գրեթե գոռաց.

-Կե՞ տը... կե՞ տը... կետը բռնել է տավարին:

Ֆելիքսը խուճապի մեջ ընկավ, վեր ցատկեց, գրեթե պոկվելով՝ մահակն առավ, գլորվեց նեղ կածանով: Նախիրը կետեց՝ Ֆելիքսը հետեւից: Քարափի գլխին մնացի մեն-մենակ, այդպես էլ կմնամ մինչեւ կեսօրանց, մինչեւ տավարը կենտուկաբուկ տալով, կգա դեպի քարափ: Քարափի բարձունքից Մալիբեկովի ավերակներում հայացքով փնտրում եմ զյուղական ակումքի ավերակը. Ահա այն, դպրոցի նույնպես ավերակված շենքից մի հարյուր մետրի վրա: Այնտեղ է տեղի ունեցել «Էն բանը», ինչի մասին պիտի պատմեի Ֆելիքսին...

... Բարվից մի խումք գրողներ էին եկել Ստեփանակերտ: Գետրգը ձեռ ու ոս էր ընկել. Ի՞նչ աներ, պաշտոնի բերումով /գրողների բաժանմունքի քարտուղար էր/ պիտի հյուրանոցում նրանց տեղավորեր, նախաճաշ, ճաշ ու ընթրիք տար, հանդիպում կազմակերպեր ընթերցողների հետ: Ստածում էր՝ ու՞ր տաներ: Հարմար գտավ Մարտակերտը: Բայց հյուրերը թրավան քողարկված քաղաքավարությանը հրաժարվեցին. Իբր հայ ընթերցողին ի՞նչ ունեն ասելու... իրենց չգիտեն, չեն ընթերցել, լավ կլիներ՝ մի աղբքեցանական զյուլ: Կանգ առան Մալիբեկովի վրա, ակնարկելով՝ տեղացի մի երկու գրողների հետ, ինտերնացիոնալ կազմով գնան: Գնացինք: Ակումքը լեփ-լեցուն

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

էր: Հյուրերը հերքով ելույթ էին ունենում, երկար ու բարակ խոսում դեսից-դենից, վերջում՝ մի երկու բանաստեղծություն կարդում: Գետորդը թուրքերեն լավ գիտեր՝ լսում էր նրանց ու հետզհետև մռայլվում, ինչ-որ բանից դժգոհ ու խոցված՝ ներսում եռեփ էր զայիս: Ես ու Գուրգենը քիչ բան էինք հասկանում ու բնազդով էինք միայն կռահում, թե դրանց երաշըներից ինչ հոտ էր փշում... Նրանք իրենց ազգայնական հեռագնա տրամադրություններն էին արտահայտում՝ երբեմն կատակներով, քանի որ մեր ներկայությունն ինչ-որ կերպ զայրում էր նրանց. Մենք եկել ենք մեր տունը, մեր հողը, որի վրա «արադան-քարդան» մեր նախնիներն են ապրել, ամփոփված են մեր պապերի սուրբ գերեզմանները: Եկանք, տեսանք, որ լավ եք ապրում, գյուղը շենացել է, փողոցներում խլրտում են երեխաները, այնքան շատ, ու դեռ էլի պիտի շատանան, զյուղն էլ այնքան պիտի ծավալվի, որ զնա խառնվի մեր երաշը հայերի Ստեփանակերտի հետ: Մեր Շուշին էլ վերենից պիտի ծավալվի, իջնի ու խառնվի... Սի խոսրով՝ բոլորս պիտի խառնվենք. ի՞նչ հայ, ի՞նչ ռուս, ի՞նչ... Դահլիճը հասկանում էր ու ոտքնդաս ծափահարում, ալեկոծված ելնում էր տեղի...

Հանդիպումից հետո ճաշկերույթ էր, ճոխ սեղան: Ի՞նչ բաժակածառե՞ր էին հնչում: Կերան, խմեցին՝ խժուելով այնքան, մինչեւ կատարները տաքացրին, ապա սկսեցին համրույթներ տեղալ իրար, երգել, տեղացի երեւելիները ձայնակցում էին փոխնիփոխ, իրար տալով ու իրարից առնելով, բայց հակառակ երգի ասպարեզում իրենց ազգային ընդունակության՝ երգում էին չափազանց ամշանքիք: Մտածում էի՝ այ թե Գետրօք մի դրանց տեղը դներ իր երգերով ու իրաշալի ձայնով եւ... հորախություն մեզ՝ սկսեց, էն էլ ո՞նց, սկզբում Սայաթ-Նովայից, հետո անցավ իրենց աշուղ Ալեսկերին: Շշմեցրեց: Սինչ այդ՝ մեզ համարյա մոռացել էին, ո՞վ էր սեղանի շուրջ մեր տեղն իմացողը: Կենացներ էր, որ բափում էին Գետրօքի զիսին, մանավանդ՝ Ալեսկերից այնպես էր երգում, ինչպես ոչ ոք իրենցից, նոյնիսկ Բարվի... Քաղցրմեղցը կենացներ էին, շինծու-լպրծուն, թույնով էլ համենված: Գետրօքն ավարտեց մեկ-զրո հաշվով, Գուրգենը սկսեց: Բայց սա երգում էր նրանց ժամանակակից աշուղների նեյնիմներից՝ բնագրերին խառնելով իր սեփականը: Այդ խումհար ոչխարները, գինարբութի մեջ զիսի

չին ընկնում, տերսատից բան չին հասկանում, միայն հմայվում էին հրաշալի ձայնով, մի մեղեդոց-մյուսին նուրբ անցումներով: Ամեն մի երգ Գուրգենն ավարտում էր հետեւյալ կարկատանով.

Յեմենի եյիմ, բեկոն քոքյում,  
Յեմենի եյիմ, բեկոն քոքյում,  
Այ հույյ-հույյ, վայ հույյ-հույյ...

Հյուրերից մեկը, որ մեր լեզվից մի քանի քառ գիտեր, բուրքական առողջանությամբ հայերեն ասաց.

-Գուրգեն մուալիմ, սաղ զիսի ընկա, ամա էդ Հույյ-հույյից բան շհասկացա, -լոեց, սպասում էր՝ աղոյ մի ժայխա շուրբերից կախ:

-Ոչինչ, Սարիր, էդ հույյ-հույյ էլ հետո կհասկանաս,-կարճ կապեց Գուրգենն ու նշանակալից նայեց իմ կողմը, դրանով էդ Սարիրի ուշադրությունը հրավիրեց վրաս ու սա մոլտաց.

-Իսկ դուք չեք երգո՞՞ն, -ինձ էր հարցնում, ու Գեւորգը՝ ելքի վարպետ, թե.

-Աստված հեռու տանի սրա երգածից...Ինքն իր մեջ է երգում, ինչպես գիշերվա մեջ իջնող լալ կարկուտ...

«Հյուրերը» զնացին. Եկել էին մեր կրծքին նստել՝ միրու՞ք էին քանդում... Տարիներ են անցել եւ... հիմա քարափի զիսից Մալիբեկ-լուի ավերակներին նայելիս, մտածում եմ հայ հարայ, հայ, հայ հարայ. ինչ էին ցանում, ինչ հնձեցի՞ն...

Արեւը թերվեց դեպի կեսօրանց, ողողեց քարափը ճակատամասի կողմից, որ ասես ապաշնորի վարպետի շարած պլատ է՝ դուրս պլծնող ու ցից-ցից քարերով, կախված անդունդի վրա այնպես, որ թվում է՝ ահա կառկվեն ու կրափվեն ձորքը: Ներքեւ, բացատի աջակողմյան քավուտում մի զով գեփյուտ խաղաց, ապա դուրս եկավ, ու նրա շնչից ծնկահաս խոտն արտի նման թերվեց, մեղմ ու անշշուկ ալիքվեց: Ֆելիքսը նախիրը բռլուկ արած թերում էր ու, երբ տավարն արդեն խրվել էր քացատի լոված խոտի մեջ, կետից հետո սկսել ազահությամբ ու փնչոցով արածել՝ մահակը ետ տարավ ու թերեց Վաղինի նարնջագույն ու պյուլը կուճուր կովի հետույթին: Կովը, որ միշտ առաջինն էր կետով ընկնում, ցավից մլուլ եկավ ու խրկվեց բռլուկի մեջ, իսկ ինքը կռացավ, մի քու խոտ ճեպրեց, մեկնեց իր կարմիրին, իբր անասունը դրան էր սպասում:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կարմիրն ուշադրություն չլարձրեց ու տերը, խոտի վունջը դեմ գցելով՝ բռնեց դիրքընթաց արահետի սուսոր: Եկավ, նատեղ մոտս՝ կանաչի վրա, հոգնած, քրտնաքոր, ձեռքերը՝ ծնկներից կախ, նայեց ներքեւ, դեպի նախիրը՝ վա՞յ արեց, ու թե քարափը լեզու ունենար, կասեր՝ ջա՞ն:

-Են կովին ինչու՞ խփեցիր,-հարցնում եմ ու ձեռքս դնում ուսին:

-Չատ էլ լավ արի. Տիրոջ խասյաքին է՝ խլորու...

-Ի միջի այլոց,-շրջվեց դեպի ինձ,-քեզ չի՞ թվում, թե ամեն մի անասունի մեջ իր տիրոջից մի բան կա...

-Զարմանալի հայտնություն...

-Չէ՞, լուրջ, մի՛ ծիծաղիր, այ, օրինակ, Վաղիմի կովն իր նման սարսադ է. ճանձ է տրղզում, կարծում է կետ է, ազին ցցում է, խնդկի տալիս ու հետեւից քաշում ամբողջ նախիրը: Կիմայի կովն էլ իր նման թերեւոտն է, միշտ քայլում է նախրի առջեւից, իլա մի քիչ էլ նրանից կտրված, ասես շտապում է՝ փայտի է գնում կամ խոտի: Ասորու կովը փընթ իր տերն է՝ կողանց քայլող: Պողին խփում ես, որ նախրի հետ գնա՞ եզր է ձգում, քիչ է մնում կամուրջն անցնելիս՝ ընկնի գետն ու քեզ խարջի տակ գցի...

-Բա քոնք, է՞, քոնք,-խայթում եմ:

-Իմն էլ ինչ ասեմ, խի՞ չեմ ասի. Իմն էլ իմ կապրիզներն ունի... Հա, իմնա դառնամ քո Նաղաշին: Չէ, Նաղաշը քեզ չի քաշել... , - բա Ֆելիքսը տակ կմնա՞,-Նաղաշը խելոք է, հանգիստ ու խոնարի, մի հանդարտ ծով, մի անգամ Նաղաշ ես ասում, էնպես է նայում, ասես հայացքը խելքով շաղախած, մի լեզու է մնում, որ հետդ խոսի...

-Եղ հո ես ու ես,-կատակին եմ տալիս:

-Դու՞,-նայում է խեթ, շուրբերը ետ են գնում, աչքերը նետեր են արձակում,-արա, գիտե՞ս քո մեջ ինչեր կան...կամ դու, կամ ես քարափը. Մինչեւ քեզնից մի կայծքար եմ պոկում, հոգիս բողազու է հասնում... հա, լավ հիշեցի, բա էն բանի մասին ե՞րբ ես պատմելու:

-Են բանի մասին էլ վաղը, Ֆելիքս, վաղը...,-ասում եմ ու վեր կենում, ուսապարկն ու մահակը առած՝ իշնում քարափից, ինքն էլ իմ հետեւից, լրելով իրիկնամուտ գնացող արեւի ոսկեզույն ցոլքերի մեջ ինքն իր հետ մտորող քարափը...

**1996թ.**

## ՖԵԼԻՔՍԸ, ԴԺՎԱՐ ԱՊՐՈՒՍԻ ԿԻՄԱՆ ՈՒ... ԵՍ

Անհանգիստ զիշեր է, քունը լքել է ինձ ու նետել տազմապների զիրկը: Այդպես է լինում միշտ, երբ նախիրն արոտի տաճելու իմ հերքն է գալիս: Առավոտյան տափառը պիտի քշեմ, բայց դեպի ու՞ր եւ ո՞ր կողմի վրա՝ ինքս էլ չգիտեմ: Մայրենիլուի քարափները նախիրն այնպես է հնձել, կարծես այնտեղ իսկի խոտ էլ չի եղել: Մտածեցի՝ նախիրը կանցկացնեմ քարափներից այն կողմ, դեպի Փրմքու տարածքները: Երեկ Կիման էլ ասաց.

-Միայն այնտեղ, եթե հանդապահ ժորիկի հետ կարողանաս լեզու գտնել,-լուց, մի պահ մտածեց ու թե,- հետդ կես լիտր վերցրու... ամա խոտ եմ ասում է՛, ըհը, մինչեւ էստեղ,-ձեռքով ցույց տվեց ծնկները:

Գետը չհասած՝ փողքերը չեն քշում, մտածեցի, փակեցի աչքերս՝ փորձելով քննել: Հնչեց առաջին արլորականը: Ուրեմն՝ զիշերվա ժամը ուղիղ երեք անց կես է: Հաստատ: Եթե մինչեւ յոքը գոնե մի երկու ժամ չքննեմ՝ վայ իմ օրին: Սակայն քունն այդտեղ էլ մոտ չի գալիս աչքիս: Էս տափառն ո՞վ վկիս կապեց, ո՞վ: Այսր ինձնից ի՞նչ անասուն պահող. Էն գլխից պետք է պահած լինեի, սովորեի, ընտելանայի... Վարչուն տարեկանում վարսավիր կամ մսագործ չե՞ն դառնում:

...Շահումյանից բռնագաղթվածները, տուն ու տեղ, եղած-չեղած քողած, հասցրին միայն մի-մի ուսապարկ ուտելիք վերցնել, մեկել՝ մի-մի ճիպոտ՝ անասունը մինչեւ Ստեփանակերտ քշելու համար: Շանապարհին տափառը գնալով նվազում էր, ջրի գնով մեկ-մեկ ծախում էին... ի՞նչ անեին: Սերոնք Խնձրիստանի տակ չորս կով առան, երեքը՝ հորթերով, մեկը՝ անհորք. Շանապարհին սատկել էր: Եվ ընդունենք ի՞նչ տվինք, ուր հազար ոուրլի՝ իին փողով: Հարեւաններս շշմել էին, սրանք ինչի՞ վրա են էս զուլումին, էս փախափախին... Սեր հոգում եւ՝ տագնապ կար, եւ՝ ահ, եւ՝... հույս, թե գուցե ամեն ինչ կարգի կընկնի: Գյուղից մերոնք՝ քույրս ու խնամոնք, իրենց հարս ու

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

բոռներով, իրեսակոծությունից փախան ու եկան մեր տուն։ Դարձանք երեսուն շունչ եւ հիմա մտածում եմ, թե ո՞նց կլիներ մեր ճարը, եթե էդ կրանք շունենայինք...

...Երբ առաջին անգամ նախիրը հանդ էի քշում, հազիս մի հին շալվար կար, նույնքան էլ հնամաշ մի զույգ կոշիկ, բայց փողկապով էի ու զիլիս էլ լայնեզր զիլսարկ, ուսապարկիս մեջ՝ մի քիչ ուտելիք ու մի տափաշիչ ջուր։ Ֆելիքսն ու Կիման կծու կիսաժպիտով նայեցին ինձ։ Հետո Ֆելիքսը մոտեցավ, ձեռքը խորեց աջ գրանս, կիսահանեց զիրքը, կիսաթերքած կարդաց՝ Բլոկ, ես խորեց, դարձավ ձախին, կիսաչափ հանեց մի ուրիշը՝ Պաստեռնակ ու բարձր ծիծաղեց.

-Հա՛, հա՛, հա... Արա, ես մեծամեծերին ո՞նց ես տանելու հետո, տավարն էլ առաջդ արած։

-Արա, Ֆելիքս, իլս մի գալստուկին նայիր,-մեջ մտավ Կիման,-էդ էծի պոչն ինչի՞ հանար է...

-Ես էլ նրա համար,-տակ շմնացի,-որ ձեզնից որի տավարը կետ անի, զցեմ վզով ու մի քոյից պինդ կապեմ, չկորչի...

-Իրիկունն էլ սոված քերե՞ս, հա՞,- վրա տվեց Ֆելիքսը։

-Էդ արդեն կարեւոր չի,-ասացի,-միայն թե չկորչի ու խարջի տակ զցի...

-Ե՞, հե՞չ, քեզնից տավարած չի ենի,-եզրափակեց Կիման ու Ֆելիքսի հետ, գլուխներն օրորելով, գնացին տուն, իսկ ես նախիրը տար հանի։

Հունիսյան օրն արեւոտ էր ու տաք։ Մալիքեկուի քարափներն արեւի հրից արդեն շիկանում էին։ Քարաճեղքերում ուրցի զգիսիչ քոյր կար, քարածերպերից կախված վայրի ծիրանի կարուկ՝ մանրահատ, դեղին ու պեպենոտ։ Նախիրն արեւ էի կանաչախիտ քացատը, նստել քարափի զիլիս մի ցից քարի, որ անասունն աշքի առաջ ունենամ, եւ Պաստեռնակ ու Բլոկ էի կարդում։ Արեւի տապից, թե քարափներում բռնկված ուրցի բուրմունքից՝ նիճնջը վրա տվեց ու տանում էր նիրվանայի հիասքանչ աշխարհը, երբ ինչ-որ տագնապահը կանչից վեր թռա, անմիջապես աչք ածեցի քացատներին՝ տավար չկար։

-Այ տավարա՞ծ, հե՞յ, տավարը մտել է արտը՞... ա՞յ ես քու...

Հայիոյանքի շարունակությունը դառնությամբ կուլ տալով, ուսապարկն առած, մահակը քարշ տալով, վազեցի կանչի վրա: Ու երբ տեղ հասա, դիմաց կանգնած էր իս վաղեմի ծանրներից մեկը՝ Ժորիկը, Ղարմնտաքսի գործվածքային արտադրությամ նախկինում անուն հանած ենթավարպետը, որ հիմա հանդապահ է, նայեց մի տեսակ մեղավոր ու կոտր ընկած: Ասես հանցանքն ինքն էր գործել:

-Էղ դու ե՞ս... դե լավ, ինչ եղել է, եղել է,-ասաց, շուտ եկավ, զնաց նախիրը դուրս արտից:

Երեկոյան, տունդարձին անասնատերերը եկան նախրին ընդառաջ: Ֆելիքսն ու Կիման, իբրեւ փորձառու աչքով, տնտղեցին նախիրը, մի անթաքույց գրիունակությամբ նայեցին իրար, աչքով արին, որ կնշանակեր՝ ոչինչ, տավարն արածել է... որտեղից իմանային, թե նախիրն ի՞նչ օյին է դրել արտի գլխին: Կիման, Ֆելիքսի հետ ոտքը ետ զցեց, սպասելով, որ «օտարները» զնան, դարձավ ինձ.

-Տնաշեն, մի կրնատակ էլ խոտ քերեիր հորթերի համար...

-Խոտն ի՞նչ է անում,-մեջ ընկավ Ֆելիքսը,-երեւի մի կրնատակ ոտանակոր է քերել...

-Դե, որ էղակն է,-հեզմեց Կիման՝ ոչ այն է Ֆելիքսին, ոչ այն է՝ ինձ,-թող տանի տա՞ հորթերն ուտեն...

...Այդ օրից անցել է ոչ ավելի, քան երեք տարի՝ դժվար ապրուստի մեր անձիր ծիրի մեջ... Եվ հիմա, երբ վերիիշում եմ, թե ինչեր անցան մեր գլխով՝ սիրտս ակամայից կուչ է գալիս, ինչպես Մալիքեկուի քարափներում նախիրը պահելու ժամանակ, երբ երկնքում հանկարծ հայտնվում էր թշնամու ահասփյուռ ոմբակոծիչը, ճերմակ հետազիծ քողմելով՝ շեղակի իշնում քաղաքի վրա, ոումբեր քափում ով իմանա՝ ո՞ր քաղում, անմիջապես ճողովրելով անհետանում լեռներից անդին: Մանավանդ՝ ահավոր էին գիշերային հրետակոծությունները. Նկուղի խոնավ անկյունում կուչ եկած իբր մեր տեղն ապահով էր մտածում էի՝ ո՞ր ընկավ արկը: Եվ այդ ամենից հետո, երբ մտնում էի գոմ ու տեսնում, թե Նաղաշը, Նարինչի ու Խուրման ինչպես են նայում դրան կողմը՝ սկզբում թախծոտ, ապա խելացի մի հայացքով, ասում էի՝ փառք աստծո...

... Անհանգիստ գիշեր է: Աստված հեռու տանի դեկտեմբերյան

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

այս գիշերից, որ վողսանակ վասկի աչքերդ, քուն բերի, թեկուզ մի քիչ մոռացության տա ամեն ինչ, հոգիդ թերեւանա, ընդհակառակը՝ հոգսերի մի զորաբանակով գրոհում է վրադ, խոռվում հոգիդ, տաճաջալից անքնության մատնում: Երեկ էլ Կիման՝ երրորդ անգամ երեսարանք էր տալիս ինձ ու Ֆելիքսին:

-Եղ ինչի՞ վրա եք, չեմ հասկանում... հունիս չի եւ ոչ էլ՝ օգոստոս: Դեկտեմբե՞ր է... փայտ չունեք, խոտ չունեք, մեկ էլ տեսաք՝ քնից արքնացաք եւ հայտնվեցիք բուք ու բորանի բերանում...

-Ե՞, լավ է,-նեղարտեց Ֆելիքսը,-դու էլ հոգիներս հանեցիր... Սի վախենան՝ դուռդ չենք գալու...

-Արա, դրա համար չեմ ասում, է՞, անկեղծ նեղացավ Կիման,- դուս ձեզ փեշքեց...Կրթված եք, գրագետ, ամա՝ լուրջ մարդիկ չե՞ք,լու՞՞՞ջ...

Հետ դառնամ, ասեմ՝ Կիման սխալ է, չէ, ճիշտ է, հազար անգամ ճիշտ, ի՞նչ իրավունք ունենք վիրավորվելու...Անասունի ի՞նչ հոգն է, թե մեքենա չկա, սալյարկա չի ճարվում, ճարածն էլ՝ կրակի գին ու մենք էլ են զցած փող չունենք, որ խոտ առնենք ու բերենք...ծերպ-ծերին հազիվ ենք հասցնում: Հետո՝ ի՞նչ, ձյունը դնի՝ մսուրում քան պիտի լինի, որ էդ անկեզուն շքառաչի ու մղկտա...

Ֆելիքս ինձ ասում է... բայց կարծես ոչ թե ինձ, այլ ինքն իրեն կամ հենց այնպես մի անհայտ մեկի.

-Ա՞յ թե մինչեւ հունվար Էսյես տաք ու արեւ անի, տավարը հանդում յուա տանենք, մինչեւ տեսնենք՝ ինչ ենք անում:

Եվ հիմա, Էս խոր գիշերվա մեջ, որ աչքս խուփ չի գալիս՝ ինքս ինձ տալիս եմ առնում, վիճում, կրվում ինքս ինձ ու Ֆելիքսի հետ: Բա որ տաք ու արեւոտ չեղա՞վ...Սի ամիս ես ու Ֆելիքսը նախիրն արոտի էինք տանում միասին, բաց էինք բողնում քարափներում լրված խոտի մեջ, նստում թեղու շվարում եւ, իր ինտելեկտն ինձ ցուցադրելու նպատակով, Ֆելիքսը «Շահնամե» էր արտասանում, անկեղծ ասած՝ շշմեցնում, հիացնում ինձ: Հետո կեսօրին ուսապարկերից հանում էինք տնից բերած ուտելիքն ու օղու շիշը, սուվրա զցում, ուտում-խմում, հրհուում, ասես քոռնգրտում ու մեր այդ հրհոցի վրա Կարմիր կովը նայում էր մեզ մի այնպիսի հայացրով, ասես ուզում էր հարցնել.

-Եղի ինչի՞ վրա եք...

Դե հիմա եկ ու պատասխան տուր... Քոյերն ընկած ձներեկ էինք քաղում, խնջող էինք քանդում թիկիրը պորտներիս հարելով, մանուշակ էինք քաղում ու նարգիզ, փնջում, իրիկունը բերում, տախս երեխաներին, որ ուրախանան, հրճվեն, մենք էլ իրենց հետ՝ ինչպես երեխա: Չե, մեզ նմաններին տավարած չեն ասի, կասեն՝ սրանք բանաստեղծներ են... Հև որ տեսնեին ահից նախիրն ինչպես ենք դալ ու դոլքուդ արած պահում, որ հանկարծ մեկն ու մեկը չօնկվի, աշը գողանա, հեռանա ու անհետանա: Օրական հարյուր անգամ համրում էինք ու հարյուր անգամ էլ սխալվում էս ինչի՞ քանակը ճիշտ դուրս չեկավ, էս ո՞րն է, որ չկա: Նորից ենք հաշվում ու նորից սխալվում այնքան, մինչեւ քարափի գլխին հանկարծակի հայտնված Բարսեղի ծիծաղն է հնչում ու ծիծաղի միջից էլ.

-Արա, քիչ հաշվեք է՛, քի՛չ, քանակը տեղն է, անհոգ եղեք, նախիրն ի՞նչ եք դալ արել, ցրե՛ք, թողե՛ք էդ անլեզուներն արածեն՝ մե՛ղը են...

Նայում էինք իրաք՝ ես ու Ֆելիքսը ու երեխ նույն բանն էինք մտածում, թե ինչո՞ւ Բարսեղն էլ չի ասում վարժաբեղմեր եք է՛, վարժաբեղմե՞րն...

Վերջին արլորական: Կոպերս արդեն իրենք իրենց փակվում են, երեխ քննեմ ու էդ մտքի վրա էլ զնացի... Կիսարուն էի, թե կիսարուն՝ շիմացա, հավանաբար՝ երազի մեջ հնչեց ինչ-որ տագնապախոռն կանչ.

-Ա՛յ տավարած, հե՛յ, տավարը մտել է արտը...

Վեր թոա, լուսամուտից դուրս նայեցի... ձյուն է իջնում. Բախտս բերեց՝ նախիրը չեմ քշի, բայց...

Ծորերս հազար, դուրս եկա բակ՝ իմ ուսերի, իմ հոգսերի, իմ դժվար ապրուստի անծիր ծիրի մեջ ընդունելու առաջին ձյան ճերմակ ու մաքրամաքուր փարիները:

**1995թ.**

## ԲԱՐՍԵՊԸ

Մալիքեկլուի քարափներում հիմա խոտ չկա: Օգոստոսյան արեւն այնպես է հրկիզել քացատները, որ կարծես այնտեղ մայիսյան կանաչի ծփանքի մեջ անասունը չէր խրվում մինչեւ փորատակ: Քրիզդ ծովին է ելնում, երբ տավարը բողնում է քացատը, տախս շամբուտի մեջ, որ հավաքի թփատակերի խոնավահոտ խաշամն ու տիհաճուրյամբ ծամի: Կիման իր հերթից մի օր առաջ հարցնում է Ֆելիքսին, որն այդ օրը նախիրը տարել էր արոտի:

-Հանդր ո՞նց է, եգուց տավարը ո՞ր կողմի վրա քշեմ...

-Հանդն ահա սա է,-Ֆելիքսը ոտքը խփում է ասֆալտին, եւ Կիման գլուխն օրորելով՝ գնում է տուն:

Մալիքեկլուի քարափները հիմա կորցրել են իրենց հմայքը, եւ այդ հմայքը ոչ միայն համատարած կանաչի, քարածերպերին ծաղկող մասրենիների, շիկաքարերի ձեռքերում բուսած խոռնիխոտի խնկարույրի մեջ էր, այլև քարափի գլխին գլխաբաց, կեալին ձեռքին հանկարծակի հայտնվող Բարսեղի կանչի մեջ /վերից վար նկատել էր, թե ինչպես քացատում արածող նախրից անշատվելով՝ ցուլիկը բղավոցով գնաց դեպի ուրիշ նախիրի/...

-Հո՛, հո՛, հո՛, ցուլիկո, եղ ո՞ր էլի... Սորբեմ քեզ, հա՛... Սորբեմ՝ միադ Անուշն ուտի...

Բարսեղը Շուրիկի կովերը, ոչխարներն ու այծերն էր արածացնում: Բարսեղը, որ Մարադայի եղեռնից մազապուրձ՝ 40-ին մոտ հիվանդ, կիսացնոր աղջկա հետ հասել է Ստեփանակերտ: Հանդիպեց Շուրիկին, որը Մալիքեկլուի կիսավեր տներից մեկը նորոգել էր, մտել մեջը, ցանկապատի մեջ առել մի զգալի հողատարածություն, հանդիպակած կիսավեր տունն էլ սարբել, գոմ եւ անասուն էր պահում: Բարսեղը տակ տվեց, գլուխ տվեց ու վերջում համաձայնեց հացափոր աշխատել Շուրիկի մոտ: Ինըն ու աղջիկը գոնե ծածկ կունենան գլխներից վեր...

-Հո՛, հո՞ն, ցուլիկո, եղ ո՞ր էլի...

Անուշը Շուրիկի համալսարանական ուսանողութիւն աղջիկն է, որին Բարսեղը սիրեց՝ ինչպես հարազատ աղջկան:

-Աղջիկ չի է՝, աղջիկ՝ տղա է,-մեկ չէր ասում, երկու չէր ասում, սեւսաք մազերը կարծ կտրած, բուխ ու սեւ դեմքով, ջինս շալվարը հագին: Ո՞նց էր ծեզը-ծեզին մտնում զոմ, մաքրում, աղբը դուրս տանում թափում, դառնում կովերը կրում, որ հասցնի մինչեւ առավոտյան ժամը ուրբ: Հետո էլ զուգվում-զարդարվում էր ու բրրուալով զնում դասի: Անուշը տեղովը մեկ հիացմունք է՝ մեկ չի ասում, երկու չի ասում Բարսեղը: Դասից գալիս է տուն, շորերը փոխում, վրան քաշում զինսը, օրադն առնում, հո՛պ, նստում էշի մեջքին, խնդիկի տալով զնում հանդ, որ հորքերի համար խոտ քերի:

-Հո՞, հո-հո՞, ցովիկո, ես դառ, անիրավ, մորքելու եմ քեզ է՝, մորքելու, միսդ տամ Անուշն ուտի...

Քարափի գլխից իշնող նեղ կածանով Բարսեղն ասես գլորվում էր դեպի բացատ: Գալիս էր «Պարի օր» ասում, անջրանցիկ թիկնոցը փոռում խոտերի վրա, մահակը դնում մի կողմ, գլուխն ափերի մեջ առած՝ պառկում մեջքի վրա, կեպին՝ ծնկածալին:

-Ցովիկոս զնաց դեպի ճեր նախսիրը: Դե, ոչինչ, երեւի ճեր կովերը նրա կարիքն ունեն....- ասում էր մի տեսակ վերացած, հետո աչքերը փակ խորասուզվում ինքն իր մեջ: Անձանորին կրվար, թե նա քնեց: Նայում ես բուխ դեմքին՝ ոչ մի զառամություն, թեպետ անցել է յոթանասունինզը:

Այսուկրերին մայիսյան արեւի այրուցքներ կան, սրված ու մի քիչ էլ ցից քի տակ վերին շուրբը երիզող բարակ ու նոսր քեխեր: Ծոծրակի ուռած երակն այնքան հանգիստ է խփում, որ կարող ես հեշտությամբ համրելով այդ խփոցները՝ որդշել, թե ինչպես է աշխատում սիրտը: Հնամաշ պիջակի օձիքը ծոծրակի կողմից սեւացել է քրտնափոշու շերտից: Կիսաբաց է նիհար կուրծքը. Շապիկը չի կոճկվում՝ մարերը լայնացել են, կոճակ չեն պահում: Զինվորական վարտիքի փողկերն անփութորեն խցկել է ռետինե սապոգների ճիտքերի մեջ:

Բարսեղը բացում է աչքերը, հայացքը հառում երկնքին: Արտասովոր կապույտ են այդ աչքերը: Մաքուր կապույտ: Ասես չեն տեսել

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

հերկատափի վերածվող Մարադան... Ասես չեն կավծացել Մարադանի հրդեհների ծովս ու մրից: Կնոջ դիակը «գրադի» հեղեղի տակ է հուղարկավորել, թաղել Մարադանի գերեզմանոցում: Երբ քուրքերը ներխուժեցին գյուղ, եւ ինքը կիսացնոր աղջկա հետ փախչում էր, ես շնայեց, որ Ղովտի կնոջ պես չքարանա...»

Լեփ-լեցուն տունը, ամեն պտղով մնխած այգին, հավ ու ճիվն ու անասունը, ներքնատան ամբարի տոննաներով ցորենն ու գարին, թիղոնները լիքը յուղն ու պանիրը մնացին բուրքին: Գինի-օղին կարասների մեջ հորած էր այգում, երեւի չգտնեն: Ամեն ինչ բոլ-բոլ ու չոլ-չոլ էր: Ինքը բրիգադավար է եղել, ֆերմանի վարիչ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ: Բոլորն էլ լավ էին ապրում, Մարադանի բարերեր ու ջրառատ հողերը պահում էին մարդկանց:

Բարսեղը ձեռքերը հանում է զլիստակից, ուղղվում տեղում, նստում թիկնոցի վրա: Գրպանից հանում է բուրունի քասկը, ծխախոտ փարաբում, դնում բարակ շուրթերի արանքում, լուցկի հանում, վառում, ներս քաշում ծովսը, արտաշնչում եւ ունգերից ելնող դառը ծխի միջից նայում Մալիբեկլվի քարափներին:

Այդ օրը Բարսեղը քեֆ չուներ, քիչ էր ասել՝ քեֆ չուներ: Երեսը մազակալած էր, երեւի մի շաբաթ կլիներ, որ չէր բրաշվել: Ունքամիջից աղուն կաթում էր: Մալիբեկլվի քարածերպերից դանդաղ իշնող քաշաբուխայի առաջն ընկած՝ իջավ բացատ, նստեց մի ցից քարի, մահակը դրեց կողքին, հանեց բուրունի քասկը...

-Շորիկի մեջքը կոտրվեց... Զգիտե՞ս, չէ՞: Զգիտե՞ս: Շորիկի գարիկը զոհվեց մի շաբաթ առաջ...

Ծանր, ճնշող լրություն: Քիչ հեռվում արածող ցուլիկը Բարսեղի տնքոցի վրա գլուխը բարձրացրել՝ նայում էր: Բարսեղը խեղճ-խեղճ նայում էր ցուլիկին ու ոչինչ չէր ասում: Ուրիշ անգամ լիներ, Բարսեղը կասեր՝ արածիր է՝, որ չաղանաս: Հը, ի՞նչ ես նայում, մորթեմ քեզ, հա՞յ, որ միսդ Անուշն ուտի: Բայց իիմա լուռ մնաց: Ու մեկ էլ ձեռքը խփեց ծնկանը:

-Ես էլ ո՞նց հաց կտրեմ եղ տանը, հը՝, հայացքը ցուլիկից չկտրելով, ասես նրա հետ էր խոսում,-ասաց Բարսեղը: Տղան ուսատանից գրում է, թէ՝ փողն ուղարկեմ, վեր կաց եկ... Գնա՞մ:- Ոտքը խփեց

գետնին: Էս անտեր հողը բողմեմ՝ գնա՞մ: Մնամ էլ՝ ի՞նչ անեմ... Մարադաս՝ թուրքի ձեռքի՞ն...

Քաշարուխապը հասել էր մեզ, տամուկ նստել մեր ուսերին, նախիրը չէր երեւում, բայց փնչոցով արածում էր: Ծունն անհանգստացավ, ելավ շարժվեց նախրի կողմը: Բարսեղը կանչեց ետեւից.

-Ու՞ր ես գնում, բող հեյվանն արածի, բան չի լինի...

Թաճճը մառպիսուղի մեջ նստած՝ մտածում էր Բարսեղը, եւ տիւրությամբ էին լցվել աչքերը: Գիտեր՝ հո անվերջ հացափոր չի մնալու, մեկ է, մի օր պիտի գնա: Թե ուր՝ ինքն էլ չզիտի, բայց...որ գնաց՝ կովերը, ոչխարներն ու այծերն ո՞վ պիտի պահի: Անու՞շը... Խեղճ աղջիկ: Եղբորը կրոցնելուց հետո մի տեսակ կոտրվել է, ել են բափին չէ: Ցուրտ կլինի, անձրեւ կանի, Անուշը մնա ցրտի մե՞ջ, մրսի, հիվանդանա՞։ Կոտրվեց Ծուրիկի մեջքը, կոտրվեց:

-Արա, բա մարդ ուրիշի ապրանքն էղպես կպահի՞... արա, բա մերնք չեն ամաչո՞ւմ եղ Բարսեղից,-հարցնում է Կիման Ֆելիքսին:

-Մարդ է, մա՞րդ, խիղճ ունի, խղճմտանք ունի... Չէ՛, մերոնց նման... տանեն նախրը սաղ օրը դալ անեն, իրիկունը սոված բերեն տուն...

Անցան օրեր: Օրե՛ր, շաբաթներ: Մերկացել են Մալիբեկլվի քարածերապերի մասրենիները, խամրել է խոռնիստի խնկարույրը: Քարափի գլխին գլխաբաց, կեպին ձեռքին էլ հանկարծակի չի հայտնվում Բարսեղը, որ զիլ ձայնով կանչի.

-Հո՞, հո՞, հո՞ն, ցուլիկո, եղ ուր էլի... Մորքե՞մ քեզ, հա, մորքե՞մ...

**1996p**

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԷՍՔԻՉՆԵՐ

### ԽԶՈՒՄ

Մեր տունն անտառամերձ է: Մեր պատշգամբից՝ գյուղն ինչպես ափիդ մեջ, փոփած է շրջակա չորս բլուրների գրկում ու բլրալանջերին, որոնցից երեքը լերկ են: Ասենք՝ սխալ կլիներ դրանք բլուրներ համարել, կարող են նույնիսկ վիրավորվել, սարեր են ու ոչ այնքան փոքր սարեր, որոնցից այդ երեքը՝ Շարքա խութը, Փոքր նահատակը եւ Մեծ Նահատակը մի ժամանակ, ասում են, պատաժ էին թափուտ անտառներով: Բայց թե այդ երբ էր՝ պապս էլ չէր հիշում: Այդ անտառները վաղուց քաշվել էին, իրենց փեշերը հավաքել ու հիմա նրանցից մնացել է մի շերտ, տատիս կապտա-կանաչ լաշակի նման, քառ տված Շեխուն հարթով, որ ամենից բարձր սարն է: Դե այն երեքը սկի էլ լերկ չեն, եթե հաշվենք, որ նրանք էլ պատաժ են ցախի ոչ խիտ թփուտներով, տեղ-տեղ՝ մոշ ու մացառուտով, որոնցով ոչխարի հոտն անցնելուց հետո տատս ամեն անզամ մի գիրկ բուրդ էր հավաքում:

Մեր տունը հենց Շեխուն հարթի անտառամերձ տունն է, ուր հիմա ոչ ոք չի ապրում, զոնտ առայժմ ոչ ոք: Երբ շաբաթ-վիրակի օրերը գալիս եմ գյուղ, անմիջապես բարձրանում եմ տաճ երկրորդ հարկ, կանգնում պատշգամբում, ապա նրա լայնքով ու երկայնքով զմնում եմ ու գալիս, հետո իշնում եմ այգի, մեկ-մեկ ծառերը շոշափում, մտերմիկ շոյում նրանց, դես ու դեն տնտղում, որ տեսնեմ՝ ոնց են զգացել իրենց իմ բացակայության ժամանակ: Իսկ մերոնք՝ իմ հորեղբորանց խալիս այդ արանքում իրենց բակից նկատում են, որ արդեն եկել եմ:

Եկել եմ, այս, եւ ահա մտադիր եմ իջնել գյուղամեջ,-մտքումս կխոսեմ մերոնց հետ, նայելով նրանց տաճ կողմը: Մեր բակից այնտեղ լավ է երեւում նրանցը, ու ես պարզ կտեսնեմ, թե ինչպես այնտեղ կանգնած հորեղբորս տղան, երեւի կռահելով մտադրությունս, կշտապի իջնել Միրզաքեկանց քուչան, ուր այս անզամ որոշել է վերջապես բակարդ զցել ինձ:

Քիչ հետո մենք կհանդիպենք երես առ երես ու ես, կանխելով  
նրա «բարեւ, բարին տեսանք», անմիջապես նախահարձակ կլինեմ.

-Ես քեզնից նեղացած եմ, Աշո՞ւ:

-Ինչո՞ւ:

-Տղամերիդ գյուղից քշում ես քաղաք:

Աշոտն ինձ լավ կհասկանա. շաբաթ-կիրակի գնալ-գալ կա: Տան  
եղած-չեղածից կտանեն, յուղ կգնան մինչեւ մի կարգին գործի տեր  
դառնան: Որոշ ժամանակ էլ կապրեն վարձով:

-Որոշ չէ, անորոշ ժամանակով:

-Մոքերս կարդո՞ւմ ես,-կիարցնի զարմացած:

-Չէ: Բարձրաձայն էիր մտածում:

-Թեկուզ անորոշ... մի տարի, երկու, երեք: Լավ՝ հինգ: Վերջապես,  
կստանան, չէ՞:

Հոնքերը կբարդվեն աչքերի վրա: Աչքերը կփոքրանան-կփոքրա-  
նան ու կկորչեն մթամած հոնքերի ստվերներում: Կմտնի թես ու  
կքաշի.

-Գնանք: Երկու օր է, լսել եմ, եկել ես ու չես անցնում:

Աշոտի հետ կմտնենք բակ: Նախիրն արդեն կվերադառնա: Խա-  
ղաղ ու կապույտ իրիկնաժամ կլինի: Զգիտեմ ինչու, շնայած ամեն  
անգամ էլ աչքովս եմ տեսնում, էլի ինչ-որ չեմ հավատում, թե գյու-  
ղում իհման նախիր կա եւ պետք է լինի, անհատական կովերի նա-  
խիր, որ որեւէ մեկը նորից կարող է կով պահել, գոմ մաքրել, կով կթել,  
խոտի հոգս անել, ի՞նչ իմանամ, անասուն պահելու հետ կապված  
հազար ու մի բան: Ես նախիր պահել եմ, կոլտնտեսության նախիրը,  
բայց դա տարիներ առաջ էր: Ես նախիրը քառասունական թվա-  
կաններին բողել եմ Խսաղին ծմակի բացատներում եւ հոնի կարմիր  
մահակս խրել Սոյ աղբյուրի մացառուտի մեջ, վերջին անգամ մի  
կուշտ ջուր խմել, քսանամյա հասակս թողած աղբյուրի հայելում,  
հեռացել ու էղ հեռանալն էր: Հինա այդ նախիր վերադարձը մի տե-  
սակ կվերադարձնի ինձ այն հեռավոր ու արդեն հուշ դարձած ժա-  
մանակները:

Աշոտը երկարեւ դարբասի դուռը բաց կպահի, որ անասունները  
ներս մտնեն:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

-Եկ, նարինջ, ի՞նչ ես մաք մնացած նայում, չես ճանաչու՞մ քաղաքից եկած մեր ախաղորը...

Աստղ հասին վերեւից կնկատի մեզ ու բակ կիջնի: Մինչ նա կողագորվի ինձ հետ, Նարինջը ներս կմտնի ու կմովի դեպի մսուրը:

-Իսկ դու ի՞նչ ես խշել, Նաղա՛շ, համեցեք,- Աշոտն այս անգամ էլ երինջին կիրավիրի: Սա էլ ներս կմտնի, որին կիետեւեն մի քանի ոչ-խար:

-Մեկ, երկու, երեք, չորս, հինգ...-կհամրի, դուռը կփակի ու կդառնա մորը...,-Անդրու կին, ես անաստններն աշքիս էսօր մի տեսակ շշկված են երեւում, բան պատահած չինի՞:

-Ոչինչ էլ չի պատահել,-փորձված աչքերով իրը տնտղելով անաստններին,-դարիք մարդ են տեսել՝ դրանից է,-ու կնայեն իրար, կծիծաղեն:

Հայացքս ցուցադրաբար կցցեմ տան երկրորդ հարկի պատշգամբին: Մայր ու տղա կհասկանան, որ դրանով ուզում եմ իմանալ՝ ալեւորը տա՞նն է: Աշոտը այնպես հասկացող-հասկացող կժպտա, որ կնշանակի՝ տանն է, մայրը դրականորեն գլխով կանի անխոս եւ մի այնպիսի աղերսանքով կնայի ինձ, որից ես կհասկանամ, որ ալեւորի հետ իմ հանդիպումն այնքան էլ հեշտ չի ընթանա, որ ծանր խոսքեր, այնուամենայնիվ, կիմեն /ոչ ինձ, ոչ էլ իրենց համար հաճելի/ բայց դե փոքրը ես եմ, պեսք է տանեմ, համբերեմ, չնայած հորեղբորս կտորն եմ, նրա պես իր ասածին, համառ ու կողհաստ: Վերջիվերջո՞ւ պիտի հաշտվե՞նք, թե չէ՞: Այլեւ կա, մեռնել կա, ուրախություն ու դժբախտություն կա, հո ալեւորն ինձնից խռով չպիտի հեռանա այս աշխարհից: Մեր այս լուռ ասել խոսելն իրար հետ ու լուռ հասկանալն իրար կեզրափակի Աստղ հասին:

-Դե՝ գնանք, գնանք վերեւ:

-Դուք բարձրացեք, ես ես ապրանքը բեջարեմ, հետո,-կասի Աշոտը ու ոչխարը կըշի գոմ:

-Ես ուզում եմ Աշոտին օգնել,-կասեմ ու կիետեւեն նրան: Աստղ հասին մի պահ կկանգնի վարանոտ, ապա կրահելով, որ խորամանկում եմ, ուզում եմ ժամանակ տալ, որ այդ արանքում նախապատրաստի ալեւորին ու...նա կբարձրանա վերեւ:

Գոնում, մաքուր սալահատակին, որ դեռ առավոտվանից էր փայլեցված, Աշոտի գրկից մեկ-մեկ ընկնող ծղոտի ցողունները կիսամթան մեջ կկայծելլտան անասելի ճերմակությամբ։ Նա իր գիրկը կլատարկի ախոռների մեջ, եւ ամասուններն այնպես կզրոհեն կերի վրա, որ կարծես հենց նոր չեկան հանդից։ Նարինջն իր «աղջկան»՝ Նաղաշին կպոզահարի մի կողմ, իր համար վայելքի ավելի լայն տարածություն գրավելով։ «Աղջիկը» ասես մի տեսակ դժգոհ, բայց գիշողաբար կնայի մորը, ապա գործի կանցնի մի այնպիսի փնչոցով, որ ռունգերից ելնող շունչը կայրի ոչ այն է՝ իր ներսը, ոչ այն է՝ իր դուրսը։

Զերս կդնեմ երինջի լանջին ու կզգամ, թե ինչպես է ափիս տակ սարսում մաշկը։ Աչքերը կիսշեն թշնամաբար, հետո, ըստ երեւոյթին, հասկանալով, որ ես կարեկցանքի նման մի բան եմ ուզում դրանով հաղորդել իրեն, հանգիստ կծամի ծղոտի արանքից որսած մի բուռ խնձորածաղիկը, որ նրա բերանից կրուրի ամռան արեւի տակ կծηած, բայց տակավին իր մեջ պահած ժլատ բուրմունքով։

Գոմի վերին բունջից, գրտկաչափ բարձր միջնորմից այն կողմ աղերսագին կմրգզա Նարինջի Զանիկ հորթը, երեխայի նման ուրբերը գետնին կխփի, թե ծիծ է ուզում։ Ես կրացեմ փոքրիկ դրնակը, հորթին կարձակեն ու նա, հրճշտելով ինձ, դուրս կմղվի, կմետվի առաջ, կշորի առջեւի ծնկների վրա, մնչով կորսա մոր կուրծքն ու կաթով լի պտուկները։

-Եղ օգնո՞՞մ ես,-կիարցնի Աշոտը մի տեսակ ձեռ առնելու նման։

-Նայած՝ ում,-կպատասխանեմ, իբր չհասկանալով, որ հորթը պիտի արձակեի կիրից հետո միայն։

-Իսկ ես մտածում էի՝ այսօր քեզ բարմ կաքով հյուրասիրել...Ամա խմեցիր, հա~...

-Ես միշտ էլ իմ բերանից...կտրել եմ։

-Չո էդ «հումանիզմը» ինձ միշտ էլ դուր չեր գալիս։ Դու լավ կանեիր, եթե հետեւեիր հորեղբորդ կնոշը եւ ինքդ ընդունեիր հորեղբորդ առաջին հարվածը...»

Բազմանշանակ կնայեմ Աշոտին։ Չի դիմանա հայացքիս ու աչքերը կխոնարհի ցած։ Իրիկնաժամի մութը հետզհետե կխորանա

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

զյուրում եւ մթան մեջ այլեւս անհնարին կդառնա նրա դեմքից կրահել, թե ինչի մասին է մտածում, մինչ շուրթերը մեծ դժվարությամբ կարտարերեն.

-Են խոխան էս տարի ի՞նչ պիտի անի:

Աղջկա մասին է խոսում, Մաղլենի մասին, որ անցյալ տարի չընդունվեց ինստիտուտ, կոնկորսով դուրս մնաց: Նեղացավ ինձնից, խիստ նեղացավ եւ հոր պես գրեթե մի տարի հետո չխոսեց: Բա ես ապրեմ, աշխատեմ քաղաքում ու չօգնեմ աղջկան, որ ընդունվի: Չօգնեմ, հերիք չի, դեռ կոշտ ու կոպիտ վրա բերեմ.

-Թե զիտելիքներ ունի, թող ընդունվի:

-Գիտելիքներով չի,-ասել էր Աշոտը ու բազմանշանակ ծիծաղել:

-Գոնք էս տարի ձեռքդ վրան պահիր, որ անցնի,-մթան մեջ բառերը հատ-հատ կկարեն մի այնպիսի տառապանքով, որ եթե եղ անցնելը ինձնից լինի կախված, հոգիս տամ, ազատվեմ: Բայց էլի Աշոտը մթան մեջ կսպասի, թե ինչ պիտի ասեմ, կսպասի ձեռքը սահեցնելով երինջի մեջքով, պոզերի արանքով անցկացնելով՝ կշոյի ճակատն ու աչքերն այնպես, որ անասունը մեծ բավականությամբ ընդունի այդ փաղաքշանքը:

-Ինձ դրա՝ հանար էիր կանչում ձեր տուն,- մթան մեջ բառերս կհնչեն կրակոցի պես ու ես չեմ իմանա՞ Աշոտը «կենդանի» մնաց, թե...

-Բա էլ ո՞ր օրվա հարազատներ ենք,-կլսվի մի խոլ տնքոց ու միտքս ցավով կդառնա սրտիս.

-Երե ուժս չի պատում, ուրեմն... հարազատնե՞ր չենք:

-Կտրեց չունես, է, կտրե՞չ: Քո էղ գործը, քո գրիշը իմը լիներ... -մթան մեջ կեզրափակի Աշոտը, հոգու մեջ խոր ու խուփ անթեղելով վիրավորանքը: Երեսանց կասի, կխոսի, մտերմություն կխաղա, բայց ես կհասկանամ, որ մերն այլեւս չի ստացվի...

**1980թ.**

## ՀԱԲՍԱԿԻՔ

Գնում եմ զյուղ՝ Կուսաբերդ: Վահանը հրավիրել է ինձ որդու հարսանիքին, Վահանը՝ հորեղբորս տղան ու իմ մանկության ընկերը: Գնում եմ հարսանիք ու նվերի մասին չեմ մտածում: Հիմա նման դեպքերում նվեր չեն տանում: Հարսանքատիրոց բարեկամուհիներից մեկին նստեցնում են աշքի զարնովոյ մի տեղում, մատիս ու տետր դնում ձեռքին, թե գրիր հրավիրվածի անուն-ազգանունը, դիմացը նշիր մուծած գումարը:

Գնում եմ զյուղ, հարսանիքի: Թե խոսք տան, մի բան կասեմ, տեղում կմտածեմ, թե ինչ: Նախօրոք՝ միտք չունի որոշել, թե հատկապես ինչ: Համենայն դեպս, երբ բաժակը ձեռքու առնեմ, Վահանը, բազմանշանակ ժայտը դեմքին, կկանգնի սեղաններից վեր, տան անմիջապես շեմին, հայացքը խոնարհած, մարմանդ ժայտը շուրբերից կախ, կոշտ ու կոպիտ, հազար տեղից ճաք տփած ձեռքերը փորի վրա դարսած, կսպասի, թե ինչ կասեմ: Մայրը՝ Աննան, մի քիչ առաջ կգա, կկանգնի որդու կողղին: Նրանց թիկունքում կհայտնվի Նազիկը, Վահանի կինն ու Աննայի հարսը եւ կստացվի լուսանկարվելու նման մի բան: Հարսնացուն ու փեսացուն, նստած պյատշգամքի դիմաց դրված լեփ-լեցուն սեղանի առաջ, գլուխները կախ, ոչ այն է՝ ամոքիսած, ոչ այն է՝ զարմացած, որ այդքան մարդիկ են հավաքվել վկա լինելու իրենց կյանքի ամենանշանակալից իրադարձությանը, ներքին անհանգստությամբ կսպասեն, թե առանձնապես ինչ պիտի ասեմ ես:

Իմ աշքը կընկնի նրանց սնարին կախված նախշանկար գորգին, որի վրա բամբակով գրված կլինի. «Ռոբերտ եւ Նանար, ձեզ երջանկություն ենք մաղթում»: Ես հենց այդտեղից ել կսկսեմ: Իմ խոսելու ընթացքում Ռոբերտն աշքը կզցի իմ աշքին, որ հանկարծ չշփորվեմ, չասեմ՝ Օքա, Օքիկ, Ռոբերտ, ինչպես սովորաբար դիմում էի նրան, այլև՝ Ռոբերտ, ուղղակի՝ Ռոբերտ: Նա հայացքով կաղերսի, որ չշփորվեմ, ամոք է, ինքն արդեն մեծացել է եւ, ինչպես տեսնում եմ, ամուսնունում է: Տղան բանակից եկել ու ամուսնունում է, կամուսնանա, մի բանի օր կմնան տանը ու Նանարին, զյուղի ամենից սիրուն աղջկան

## ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

կառնի ու կտանի Նալշիկ:

Ողբերտը գիտե, որ ես դրան դեմ եմ, գիտե, որ հայրը՝ Վահանը դեմ է, մայրը՝ Նազիկը նույնպես, տատը՝ Աննան, չի էլ ուզում լսել այդ մասին:

Անհզ մնա, Ողբերտ, ես բաների մասին չեմ խոսի: Եթք բաժակը ձեռքս առնեմ, աշքի պոչով իմաց կտամ, եւ դու կհասկանաս, որ էս պիսի բաներով չեմ մրագնի քո ուրախությունը... Հարսանիքում ընդունված չէ: Նանարի ականջին էլ շշնջա, որ չեմ ասի, քող սիրող վախորած ջրփրտա կրծքի տակ, ինչպես ճնճղուկն էր թփրտում քո ափի մեջ, եթք մի ժամանակ որսում էիր նրանց: Նանարն էլ դեմ է քո Նալշիկ գնալուն: Բայց դե, ինչ կարող է անել, խորքերդ ականջներին ող է արել, ինչպես աղամանդեն այն օղերը, որ որպես ընծա էր տարել մայրդ.

-Չես գա, ուրեմն՝ դու կմնաս, ես՝ կգնամ...

Շառագունել էր Նանարի սիրուն դեմքը, երկար, շիկավուն թարթիչները խոնարհել էր, հուզմունքից կապույտ աշքերը ծփացել էին կապույտ լճակների պես ու խոսք չեր գտել ասելու: Զեռքը տարել էր ուսերն ի վար կրակի պես ալեկոնվող շիկահեր մազերին՝ իրը հարդարելու, որ չմատնի իրեն: Ցավի պես մի բան է ծակել սիրող, որ գնալու է... Մտածել է, թե ինչ է անելու, եթք հիշի սարեն Հարքը, Շարքա խուրը, Մեծ ու Փոքր նահատակները, Զինհազին աղբյուրը, որ գիշերվա մրան քողի տակ կարտասվի իր կարոտից, ինչպես իր սիրող՝ այն նորաբաց ու թարմ մանուշակի համար, որ ամեն գարնան աշխարի կզա կապույտ իր աշքերի երանգներով, սիրող հազար տեղից կխոցվի, եթք ամեն անգամ հիշի մոր խոսքերը.

-Նանար, քո աշքերը մանուշակի թերթեր են...

Գնում եմ գյուղ: Վահանն ապսարել էր.

-Հարսանիքը՝ հարսանիք, բայց դե, եկ մի տես ինչ ես անում, գուց ի՞նքդ համոզես էս տղային, որ չգնա, գուցե լիի թեզ:

Իմ աշքերը այս խոսքերից խոնավացել էին: Թվացել էր, թե այդ խոսքերը ոչ թե հարորդում էին նրա անոնից, այլ հենց ինքն էր ասում դեմս կանգնած, նշանակալից, ազդեցիկ, եւ ասում էր այնպես, որ բառերն իջնում էին սրտիս՝ ինչպես ծյան առաջին սառն ու անրիծ փարիներն իջնեն խոնավ ու թաց հողի վրա:

Իմ աշքերի դեմ պարզորոշ ընդգծում են Վահանի հաղ ուսերն ու

լայն թիկունքը: Զգիտեմ ինչու, թվում է, թե նրանք իիմա ճեղք ու փլվածք են տվել, ինչպես երբեմնի գոմի հին կտորը պատերազմի ժամանակ, երբ հայրը մեկնել էր ճակատ եւ... դեռ ինքը մի մատ երեխա էր: Թվում է՝ ճեղք է տալիս պատը երկհարկանի ու գեղեցիկ մի տան, որ ինքն է որմնադրի իր ձեռքերով կառուցել այն երբեմնի ու փլված գոմի տեղը: Գյուղի ամենից երեւելի տան պատը...

Որդին որոշել է քաղաքում ապրել: Իսկ հոր կարծիքով նշանակում է՝ լրել իրեն, կնոջը, տատին, տունը, գյուղը:

Մինչդեռ ինչ երանությամբ էր մտածում, որ ահա նա շուտով կավարտի ծառայությունն ու կգա: Նախօրյակին վերջին մակնիշի «Ժիգուլի» մերենա էր գնել, մտածելով, որ լնտանյոր հանդերձ, մերենայով կգնան գործի ու կգան:

Արտադրության առաջավոր էր, ճանաչված վարպետ: Նախագահն ընդառաջել էր նրան, մերենան հատկացրել անհերթ: Որդու վերադարձին ճոխ սեղան էր բացել: Մարդիկ եկել էին աշքալուսանքի ու վայելելու յոթը տարվա գինին: Իսկ նախագահը բաժակը բարձրացրել էր ու թե.

-Ու՞մ աչքը լույս, մե՞ր, թե...

Նալշիկից եկած մորաքրոջ տղան, որ արդեն իր գործը տեսել էր Ռուբերտի հետ, ընդհատել էր նախագահին.

-Եսր աչքը լույս... Ես Ռուբերտի համար քաղաքում աշխատանքի տեղ եմ արել... ալրոֆիլակտորիայում:

-Ի՞նչ պրոֆիլակտորիա, ի՞նչ բան... Էն որ ժե՞ժու են թակում, սարքում,-արհամարհանքով ասել էր Աննան ու ձեռքն այնպես է վրա բերել, որ նշանակել է, թե այլեւս այդ մասին ոչ մի խոսք:

Աննան, որ պատերազմում զոհված ամուսնուց հետո երեք որքեր է պահել, մեծացրել: Աննան, խստաբար, ազնիվ վարք ու բարքով, որ ջահել ժամանակ սլացիկ էր ու գեղեցիկ, որ այս հասակում էլ տակավին մնացել է նույնը եւ տեսնողին մի այնպիսի պատկառանք է ներշնչում, ինչպես տիրամոր պատկերը:

Եվ իինա ես պարզ տեսնում եմ այն պահը, երբ Աննան մնտենում է շեմից ներս մտնող թեւանցուկ զույգին՝ Ռուբերտի ու Նանարի ճակատն է համբուրում, ապա դառնալով թոռանք՝ որպես խրատ ու մաղթանք, ասում.

-Ես այս տունը քո մորք հարս եմ բերել ու իմ հարսից լիացել: Թող

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

քո մայրն էլ բարով-խերով իր հարսից լիանա...

Նազիկն էլ կմոտենա, Աննայի գովական հարսը, Ո-որերտի մայրն ու Վահանի կինը, կմոտենա, կհամբուրի զույգին, Նանարի ճառագած մատներին մի մատանի էլ կհազցնի ու հազիկ կշշնջա.

-Մի բարձի ծերանաք,-բայց այնպես կշշնջա, որ կթվա, թե խեղդում է հոգու տվայտանքը, որպեսզի հանկարծ չպոռքա.

-Էս հարսանիքն ինձ համար մի երազ կդառնա, երբ դուք գնաք...

Նորահարսն ափերի մեջ կառնի ջահել սկեսրոջ ձեռքը, կտանի ու կհպի շուրբերին այնպես, որ կարծես դրանով կուգեր ասել.

-Մամա, իմ կողմանի հոգուդ մեղք չանես...

Իսկ Վահանը... Դե, Վահանին ինչ, տղանարդ է, չի մատնի հոգու խոռվքը: Հարսանիք է, իր առաջնեկի ուրախությունը, մարդիկ հավաքել են ուտել-խմելու եւ քեֆ անելու համար, հոնքեր հո չի՝ կիտելու: Կշտկի մեջքը, ուրախ-ուրախ հրահանգներ կտա, կնայի սեղաններին՝ ինչ է պակաս, ով ինչ պահանջ ունի, կրավարարի, օգնողներին կհորդորի այնպես անել, որ ամեն ինչ տեղը-տեղին լինի, որ եթե հարկ լինի անգամ՝ ձեւացնել, թե չի լսել մեծ հորեղբոր խոսքերը.

-Մեր էս Ո-որերտը հանկարծ չկոտրի՝ հոր մեջքը...

\*\*\*

Գնում եմ զյուլ: Գիտեմ, առաջինը ընդառաջ է զալու մեր մեծ հորեղբոր տղան՝ Աշոտը: Զեռքս կսեղմի պինդ ու այնպես հուզ կտա, որ աչքերից կայծեր ցայտեն: Հետո, դեմքին մի խորամանկ ժայխ խաղացնելով կասի.

-Ինձ էիր ասում, թե տղաներիդ զյուլից քշում ես... բա սրան /մատնացույց անելով Վահանին/, ի՞նչ կասես:

Դե, ես ինչ պիտի անեմ, իրեն էլ լավ գիտեմ, Վահանին էլ: Վահանը մնում է Վահան: Միտքս կրահելով Աշոտը խոսք շուր կտա ուրիշ կողմ:

-Զինհազին աղբյուրը նոր տեսե՞լ ես... Թե չես տեսել, գնա հարսանիքից առաջ այդ ջրից խմիր:

Ակնարկը քափանցիկ լիինի... իսկ ես, իրոք, աղբյուրը նոր տեսել էի եւ Աշոտը կուգեր, որ անպայման տեսած լինեմ: Վահանը կուրացող աղբյուրը մաքրել էր, գետնի տակով մաքրելով գնացել էր մինչեւ ակնը, ինչպես ինքը կասեր: Զրամբարի ձորի քարահանքից հանել էր կարծը ու պինդ կարմաքար, որից մի այնպիսի գուռ էր սարքել

աղբյուրի համար, որ տեսնողները շշմել են: Գուտի մի թեկի վրա տիեզերանավ է հարթաքանդակել, մյուս թեկի վրա՝ սկաֆանդր՝ կարծես ցանկանալով դրանով աղբյուրին ժամանակակից հնչեղություն տալ: Գուտից վեր շուր է անում նրա ձեռքով հղկված մի ուրիշ կարմաքար, որի վրա գրել էր. «Ես, որդի Տիրանի, Վահան Գրիգորյան շինեցի Գուտն այս այնպես, որ հավիտյան հավիտյան չկուրանա աղբյուրս...1980թ.»:

Երբ թերվել եմ գուտի վրա ու շուրթերս սուզել սառն ջրի մեջ, ինձ թվացել է, թե գուտից նավի մեջ ցայտող ջրաշիթերը մեղեղիացած շշնջացել են շուրթերիս տակ.

-Որ հավիտյանս-հավիտյան չկուրանա աղբյուրս...

Ջրի պարզկա հայելու մեջ արտացոլված մազերիս ճերմակությունը մատնել է առաջացած տարիքս եւ... ինձ այնպես էր թվացել, թե իմ աչքերից ինձ էին նայում իմ ապուպապը, իմ պապը, հայրս, որ իմաս չկա, իմ Տիրան հորեղբայրը, որ դարձալ չկա, մեր մեծ հորեղբայրը, որ դեռ ապրում է, մեր Աննան, Վահանը, Նազիկը, Ռոբերտը, Նանարը...Այս, ես այդ պարզ հայելու մեջ տեսա նրանց, ջրի սառն շիթերի հետ այնպես երկար-երկար ընպեցի, որ ներծծվեն մեջս ու հավիտյանս-հավիտյան մնան:

Հետո բարձրացել էի, համբուրել դիմհար քարի վրա «Կիրվածքը», ինչպես Աննան կասեր, երանորդյան մեջ շշնջալով.

-Դու մեր տոհմի, հորի ու ջրի ամենից լավ ջիղն ես, Վահան...

Ստովի աշքիս առաջն է գալիս Ռոբերտը, իսկ եւ իսկ Վահանի տղան է, քայլ նա ավելի շատ իր Տիրան պապին է հիշեցնում: Ավելի ճիշտ՝ քանի մեծանա, այնքան ավելի կմոտենա պապին ու այնքան ավելի շատ կիշեցնի նրան. Հոնքերը քարմատից ձգվում են դեպի աջ ու ձախ՝ ծիծեռնակի գույզ թեւերի պես: Իսկ աչքերը...

Հիմա զիտեմ, թե որ գնամ, ինչ պիտի անեմ կամ ինչո՞ւ հատկապես ես պետք է մի քան անեմ, որ Ռոբերտը զնա: Կարծես զիտե, որ այդ հարցով մի անգամ չեմ որդու հետ խոսել, փորձել հետ պահել սխալ քայլից: Իսկ որդին ոչ տարել է, ոչ բերել ու թե.

-Ամի, եղ գյուղում ապրելը, որ էղքան լավ է, դու ինչի՞ ես քաղաքում մնում...

Ոնց էլ բռնեցրել է: Լեզուս կապ էր ընկել: Հիմար էլ չի, թե ասեմ հիմար է: Արժե՞՞ր, որ հատկապես ես այդ թեմայով խոսեի նրա հետ,

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Երբ իմ օրինակն այնքան էլ վարակիչ չէր: Հետո տեսել էր, որ լավ բան չստացվեց, փորձել էր ելք գտնել, ինձ հանել իմ ընկճված վիճակից:

-Դե քո ժամանակներն ուրիշ էին... Ամի,- խորամանկ-խորամանկ ժպտացել է աչքի մեկը կկոցելով,- գուցե՞՞ վերադառնաս:

-Հիմա իմ վերադառնալուց գյուղին հ՞նչ օգուտ: Էն ժամանակ ուրիշ էր. եթե հիմիկվա խելքս լինե՞ր...-ասել եմ միանգամայն անկեղծ եւ, ըստ երեւութին, աչքերս տամկացել էին, ու, նա զգացված, հայացքը փախցրել էր ինձնից:

\*\*\*

Գնում եմ գյուղ, Կուսաբերդ: Ինչ խոսք, գյուղ եմ գնում հաճելի առիթով՝ հարսանիք: «Հարսանիքը՝ հարսանիք, բայց դե՛ եկ, մի տես՝ ինչ ես անում...» Վահանի ապսպարանքը ասես մի տեսակ սառը ջուր է լցնում ուրախությանս վրա, գնայի առանց որեւէ մտահոգության, հոգս ու պարտականության, գնայի ուրախանայի իմ այդ հազարտների ուրախությամբ, անհոգ ու անկաշկանդ...

Լսել եմ, թե վերջերս էլի հայր ու որդի վիճել եմ.

-Սերենան հետս տանելու եմ,-ասել է տղան:

-Ամա տարաք, հա՞...

-Մի տասնիմակ հազար էլ կտաս, որ այնտեղ տուն առնեմ:

-Վարձով կապրես,-հեգնել է հայրը,-որ իմ էս պալատները չես հավանում, այնտեղ վարձով կապրես: Չմոռանաս էնտեղից մի Ոռերտու ու Նանար ուղարկել, որ նրանք էլ իմ տանը... անվա՞րձ ապրեն:

Նրանց վեճը՝ վեճ, բայց վերջին խոսքն, ըստ Վահանի, ինձ է պատկանում: Հույս ունի... Ես կգնամ ու մի անգամ էլ կփորձեմ Ոռերտին ետ պահել իր սխալ բայլից: Տա Աստված, որ գոնե այս անգամ նա ինձ լսի: Կլսի՞՝, արդյոք, չգիտեմ, բայց հարսանիքը՝ հարսանիքը կլինի: Եվ ի՞նչ հարսանիքը:

**1970թ.**

ՀՈԴՅԱԱՆՆԵՐ  
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱԱՆԻՍՅԱՆԻ  
ՄԱՍԻՆ

Հրանիք Ալեքսանյան

## ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՅԱԼ, ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՎԱՅՐ

«Ապաշխարան» այսպես է կոչվում բանասրեղծ Արմեն Հովհաննիսյանի գիրը, որ կազմվել ու հրապարակվել է որպես ամփոփում նրա սրեղծագործական հունձքի, որի տեր նաև դարձել է իր 75-ամյա ճանապարհին:

2007-ին լույս տեսած այդ ժողովածում վկայում է Ա. Հովհաննիսյանի բանաստեղծական անկեղծ կերպարի, ընդգծված շնորհքի, սեփական ձեռագրի հանդեպ հավատարմության, գրական իր հավատածքի եւ որոշ այլ իրողությունների մասին, ակնհայտ թե շարշված, չափածոյի քմայքներով: Գործ ունենք իր լիալուսինն ապրող բանաստեղծի հետ, որի սեղմ, բայց ներքին արձակությամբ հատկանշվող խոսքը բացում է մտքի ու զգացմունքի մի գրավիչ տարածություն, ուր հեղինակային ու ընթերցողական «եսերը» մեկտեղված շարժվում են նվիրական խորհուրդների ու հույզերի հանգրվաններով: Իրավ, բանաստեղծի նախանձախնդրությամբ Ա. Հովհաննիսյանն իր հոգու ու ոզու, երկրի ու ժամանակի, ազգային ու համամարդկային ոգորումների տարեգիրն ու մունետիկն է, հազվադեպ մնալով դժնիակ մտքերի ու զգացումների բավկաներում, գերազանցապես հուսադրող խոկումների երգիչն է նա: Թեպետ հաճախ են ցավագին հարցականներ հնչում նրա տողերում, այնուհանդերձ, նա տիսրության, տվայտանքի ու կասկածանքի տիրություններից առավել հաճախակի դուրս է գալիս ապրեցնող խոսքի լուսակիր հրթիռով: Ահա՝

Ո՞վ է ցանկալի, ո՞վ անանձկալի,  
Ո՞վ է խոցողը, ո՞վ սպեղանի,-  
Երբեք չեմ զալու անակնկալի,  
Երե կանչեն էլ զոհասեղանի...

Մեղքի խնդիրը հաճախ է արծարծում բանաստեղծը՝ անցնելով սեփական քավարանի պարունակներով՝ ե՛ւ խոստովանյալ, ե՛ւ խոստովանահայր որպես: Սեղըն ամենուր է սեփական վարքից սկսած մինչեւ տիեզերական անհաս անկյունները, եւ այդ մուժի դեմ պայքարի լավագույն միջոց է ստեղծագործումը, այս դեպքում բանաստեղծումը, որ մաքրագործող ուժով կարգի է քերում, հարազատացնում անցյալ ու ներկա, հեռավորներին ու մերձիմոսու դեզերողներին, անգամ շարյաց սեւավորներին: Ծիտակ խոստովանանքի քարտուղարն է Ա. Հովհաննիսյանը, որ արծար բառեր է հանում սրտի խորքերից եւ մատուցում իբրեւ վերահաս նշխար:

Սույն գրքում բանաստեղծը հաճախ է հետահայաց սույումներով փորձում իր գտածի ու կորցրածի իրական արժեքը ճշտել, շատ բան անցյալում է այլեւս տեսնում: Սակայն ներկան ու ապագան նրա համար երիցս դառնում են հույժ կարեւոր, երբ իր անդրադարձներն աղերսվում են սիրուն ու հայրենի երկրին, նրանց տեսիլքը շարունակարար ցոլում է հեղինակի մտապատկերում ու տեսադաշտում՝ հայոց հին առասպելներից հղված կերպար-դրվագների պես: Տագնապի ու կասկածի մատնված սիրու եւ հայրենիքի համար անվերջ դողնուում են բանաստեղծի հոգու զանգերը որպես փրկության անխար զանգակատուն:

Առանձնակի պատասխանատվությամբ է բանաստեղծը բացահայտում իր ժամանակի հոգեւոր-քարոյական թնջուկները, ծգոտում հանգուցալուծել դրանք սեփական կենսագործով ու աշխարհայացքով, չորվելով սոցիալ-քաղաքական կամ անձնական պատեհապաշտությանը: Անկեղծ տիրոջ անհանգստությունն է ալեբախվում Ա. Հովհաննիսյանի բանաստեղծական ժամանակագրությունում: Նա հակված չէ հատակ պատասխանների, գրողի համար նույնապես անհասկանալի երեւույթների պակաս չկա, եւ նա տագնապում է շարունակ, վիճարում ապահովության արժանապատիվ ափ, ուր տոն կտան բարին ու գեղեցիկը:

*Ժամանակն ինչ-որ բաներ է հերքում,  
Փակում հաշիվն իր մեր անցյալի հեր,  
Իսկ մենք էլ արդեռ երես ենք քերում*

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Սեր նկասարացման դարիներից հեզ...*

Բայց այստեղ հոգեկան դրաման չի ավարտվում, այն պետք է վերածվի նոր սկզբի, ինչի ազդանշանը կրկին տրվում է խոստովանանքի գորեղ ուժով:

*Եվ ի այս մեղք է, որ երև առ երև,  
Սեր դեմքին անլուր նախարինք առած,-  
Չգուշավոր ենք դառնում այզու պես,  
Վաղ զարևանային ցրտերից առաջ...*

Տիպիկ քնարերգու է Արմեն Հովհաննիսյանն՝ իր չափ ու տարածքի մեջ, ոգումի իր զորությամբ, ու թեև հայ բանաստեղծության արարատները չի նվաճել, սակայն հաստատորեն գրավել է ստեղծագործական այն բարձունքները, որոնց հայտնաբերողը հենց ինքը եղավ նախորդ քերթողների նվիրական շեշտերի յուրացմամբ, արցախյան զարմի զույնով ու տոնայնությամբ: Հուսալի է նրա հոգեւոր կերպարը, վստահություն ներշնչող՝ նրա բանաստեղծական ձայնը, այն առավելս մեղմ ու մտերմիկ է շատերին հոգեւոր մտահոգությունների եւ ուրախությունների արտահայտիչ:

*Ծիծեռնակարին ու սար իրիկուն,  
Անհայդին միկած հայացք հանցապարտ...  
Նեղիր ուսերին՝ նկաղ ու նկուն,  
Վերջին աղորքին ծվենները պատ...*

Ամրողական գիրը է «Ապաշխարանը», որը բանաստեղծություն առ բանաստեղծություն, շարք առ շարք վկայություններ են տրվում գրողական մի նկարագրի մասին, որ Արմեն Հովհաննիսյան անունով է կնքված, եւ այն տեղին հիշատակելի է մերօրյա քերթության անդաստանում: Հատորների կարիք չունեցավ բանաստեղծական «Եսը» անխարար ու լիովին ցուցանելու համար, ծաղկաբաղն էլ բավ էր՝ վերահաստատելու եւ ճանաչելի դարձնելու իր հոգեւոր ավազանը:

Եվ իր անվերջ լրումը Ա. Հովհաննիսյանն ի կատար է ածում ոչ միայն սեփական ստեղծագործություններով: Նա միաժամանակ հմուտ ու գնահատելի թարգմանիչ է, որի տքնանքով են նաև «հայացվել» ոռու դասական բանաստեղծության այնպիսի դեմքեր, որ-

պիսիք են՝ Ն.Գումիլյովը, Օ.Մանդելտամը, Բ.Պաստեռնակը,  
Մ.Յվետանեան, Արեգից՝ Ա.Վոզնեսենսկին, Օսիպ Մանդելտամը,  
այլոք: Թարգմանության հանդեպ եւս ակնածալից նույն վերաբեր-  
մունքն ունի, ուստի «Ապաշխարանում» պատշաճ տեղ է հատկաց-  
րել նաև թարգմանական խոստովանություններին: Ու թեեւ գրել է  
ուրիշ առիթով, Ա.Հովհաննիսյանի ներքորերյալ տողերը կիրառելի  
են գրեթե յուրաքանչյուր փոխարարերության առիթով, թե՝

*Տառապանը ու ցալ փոխանցեք իրար,  
Ես կապաշխարեմ նաև չեր պեղակ...  
Ապաշխարենք բանաստեղծի հետ:  
Նրա գիրը մեզ դրան է մղում:*

«Ակունք»  
2007թ.

Նվարդ Ալեքսանյան

**ԱՐՁԱԿԻ ՄԵԶ ԷԼ՝  
ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ**

Ուրիշ մեկը թե Դոն Կիխոտ ստորագրությամբ Սանչոյին ուղղված նամակներ հրապարակ հաներ, գուցե այսքան լրջորեն չընդունվեր, որքան «Զարափ» արձակ պատումների ժողովածովի հետինակը: Անձանոք անուն չէ: Անվանի բանաստեղծ Արմեն Հովհաննիսյանն է, ով «մի տանիքի տակ» է առել տարբեր տարիների գրված արձակ գործերը, որոնք որքան ել ուզում ես ծալծել մեկ հայացքում ամփոփելու համար, ի հայտ են գալիս տողերի նոր ծալքեր: Ովքեր նրան գիտեն ոչ միայն որպես բանաստեղծի, այլև՝ մեր կողքին ապրող մարդու, քաղաքացու, ապա Դոն Կիխոտի կերպարը, երեխ, տեսել են Արմեն Հովհաննիսյանին զուգահեռ: Այս, իհարկե, ոչ թե «վշտակերպ ասպետի» հողմաղացների դեմ կոյիվը նկատի առնելով, այլ իր աշխարհում մշտապես այլ աշխարհ տեսնելու եւ այդ աշխարհի հավաստի բնակիչը լինելու համար:

Ինձ համար զարմանալին կոմունիստ եւ աստվածապաշտ բանաստեղծ լինելն է: Տարակուսանքս հայտնել եմ տարիներ առաջ, եւ ստացել եմ ոչ պակաս զարմանալի պատասխան: Իր պատկերացմամբ՝ իսկական կոմունիստը աստվածապաշտ մարդն է, ով առաջնորդվում է սրբազն պատվիրաններով: Հետագայում ավելի լավ ծանոթանալով Արմեն Հովհաննիսյանի բանաստեղծական աշխարհին, նրա մարդկային զուլալ էությանը, տարակուսանքի հետք անգամ չի մնացել, քանզի երիցս համոզվել եմ ասածի ճշմարտացիության մեջ: Ինըն իբրեւ բանաստեղծ հենց այն եզակիների շարքում է, ում կոմունիստական գաղափարախոսությունը ոչ թե հեռացրել, այլ մերձ է պահել Աստծո պատվիրաններին, քանզի կոմունիստի բարոյական կողեքսը փոխառվել է Աստվածաշնչից: Ուրեմն՝ դրանք մեկտեղվել են նրա հոգում, եւ իր ժամանակը, որը կոմունիստական զա-

լավիարախոսության ծաղկուն ժամանակն էր, նա ապրել է նաև մեկ այլ ժամանակում: Իսկ եւ իսկ՝ Դոն Կիխոտ:

Արձակ պատումներում էլ հավատարիմ է մնացել ինքն իրեն:

Քանաստեղծություններից հառնող մորմորը, ինքնաքրքրումը եւ այն հավատը, որ դրանից աշխարհը կդառնա ավելի անչար՝ փոխադրել է արձակ, հոգուց վանել անձուկ մտքերը եւ ինքն իրեն կատարյալ տեսնելու փափազը հրաշրով տարածել ողջ հողագնդի վրա: Սա է Արմեն Հովհաննիսյան արվեստագետի ընտրած ուղին:

Նրա տողերում մարդկային կյանքն է հոսում, հաճախ հիշեցնելով մարածման ահեղ մարտերը, ուր սեփական պարտությունը հազար երկնքի փլուզում է: Ինքնափրկությունը՝ դրացուն, հարազատին, նույնիսկ մեկ օրվա ծանրթին օգնելու ցանկությունն է, մարդկային կարեկցանքը, հայրենի հողի պատկերն ամեն օր նորովի ընկալելը: Այս ամենն ունենալու եւ կյանքի դժվարին բաղիներում չկորցնելու համար տիրոջը մշտապես փառաքանելու շնորհքը պետք է նրան տաներ Դոն Կիխոտի ու Սանչոյի երազային աշխարհը: Որովհետեւ իրեն պիտի զարնացներ ոչ միայն իր հոգու ուժը, դժվարություններին դիմակայելու ունակությունը, այլ ավելի շատ ուրիշների ցավը տեսնելու եւ նրանց սփոփելու իր մեծ տառապանքը այդպես գորովանքով պահելու համար: Իսկ կորցնելու դեպքում կփլուզվեր իր աշխարհը պահող երկնակամարը, ուր արեւագալները լինում են միայն ցավի լճերում լոտոսանալուց հետո: Եվ ուրիշների կերպարների հետագծով էլ ինքն իր համար կպարզեր, որ մի ողջ կյանք ապրելուց հետո էլ դեռ լավ չի ճանաչում իրեն: Ու իմաս էլ ինքնաճանաշողությամբ՝ սեփական ցավը հոգում անբեղած պիտի քայլեր դիմացին ընդառաջ: Դրանից էլ բանաստեղծություններին զուգահեռ արձակ պատումներ գրվեցին՝ հենց իր հոգու տրտմությունը, կսկիծը, ուրախությունը երեւացնելու համար: Իր ստեղծած աշխարհում այնքան պիտի ներկա լինեն ուրիշները, որ ինքը նրանց գունեղ բազմության մեջ հազիվ նշմարելի դառնա: Ինքը հենց դա է ուզում, այլապես սեփական մտքերի հետ մենակ մնալու սարսափը նույնիսկ իրենց հրաշք երեւակայությամբ՝ Դոն Կիխոտն ու Սանչոն չեն կարող մեղմել: Եվ եթե Սերվանտեսի ոռմանտիկ հերոսը, չնայած իրականու-

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

թյան հետ դաժան բախումներին, բարեբախտաբար, քիչ ուներ սրափության պահեր, ապա Արմեն Հովհաննիսյանի պարագայում դռն-կիխոտությունը խարսխված է մշտատե ողջախոհությանը: Սա էլ երեսի արցախյան դռնիխոտության տեսակն է, եւ դատապարտված ենք թե մեր երազում, թե երազանքում սրափ լինել:

Կարաբաղյան բարբառը նուրբ փայլով է երեւում գրքում եւ երիցս հաստատում, որ միշտ կենսատու ավիշ է մայր լեզվի համար: Սեր խոսվածքի գոհարներն իրենցով դառնում են խլրտուն մտքի մխրճումը ճապաղ ու նույնաղեմ օրամսխելի մեր բառապաշարի մեջ, եւ տողերն ավելի են տրվում ինքնասուզանքին:

Կարծում եմ՝ զիրքը կշահեր, եթե տարբեր տարիների արարված զրույցները պահեին իրենց թվագրությունը, դրանով էլ ժամանակի հետագծում ավելի հստակ կերեւար անցածը, որն այդպես էլ անցյալ չի դառնում:

«Երբ գրում եմ՝ չեմ փոխում հերոսներիս անունները, կարող են վկայել իրենք: Նրանք միանգամայն իրական մարդիկ են, որոնց հետ շփում եմ, ապրում ու շնչում: Իսկ ես գրում եմ հատկապես նրանց մասին, որոնց սիրում եմ, ու եթե գրածներիս մեջ երբեմն անխուսափելի իրենք թերություններ են բացահայտվում, բոլորովին էլ չեմ անհանգստանում, թե կարող է վիրավորվեն: Հաճելի է, երբ մարդ ներկայացվում է այնպես, ինչպես կա: Հակառակ դեպքում՝ դիմացինդ հիմար չէ, բափանցում է կեղծիքի մեջ եւ... առնվազն հոգու մի բաքուն անկյունում չի համակրում քեզ», - կարդում ենք «Պատերազմը եւ մարդիկ» խորագրի առաջին պատումում:

Ասել է թե՝ ասելիքը հատու է, եւ չնայած հաճախ արցունքն է շողում այնտեղ, սակայն իրական եւ ուժեղ իր հերոսներով քարափի պես պինդ է ու անկոտրում: Չէ որ բոլոր դարերի համար է ասել մեր մեծ աշուղը. «Բունիածն ավագ չինանաս, քարափ է, քար ու կրեն է...»:

«Հզար Արցախ»  
2 ապրիլ, 2011թ.

Վահրամ Արանիսյան

**«ՏԱՐԱԺԱՄԻ» ԶԱՆԳԵՐԻ ՑԱՎԻ  
ԵՎ ՀՈՒՅՍԻ ՍԱՀՄԱՆԵՐԻՑ**

Երբ ես ապրում էի Ալժիրում, ձմռանը միշտ գոտեալդվում էի հույսով, որովհետեւ զիտեի՝ մի անգամ զիշերով Կոնսուլների հովտում կծաղկի նշենին: Եվ հետո զարմանում էի՝ ինչպե՞ս է այդ փխրուն, ձյունաքույր շղարշը դիմանալու անձրեւի եւ ծովից փշող քամիների տակ: Եվ, այնուամենայնիվ, ամեն տարի նա դիմանում էր ճիշտ այնքան, որքան հարկավոր էր, որ պտղվի:

Սեր՝ հանկարծակի «գերիմաստնացած» (ինձ թույլ եմ տալիս մի փոքր շրջանել Վահան Տերյանի հանրահայտ միտքը) գրական աշխարհում՝ 80-ական թվականների վերջերից, երբ վրա էր հասնում ինն արժեքների ճգնաժամը, մաքուր երգի երակն առհավետ կորցրած լինելու տագնապը երեւ շարժանազրվեց՝ «մեղքը» ժամանակինն էր հանրային ու անձնական վերակողմնորոշման, ինքնավերլուծության, քաղաքական ու ազգային վերածննդի այդ ամբողջ հակասականությունը՝ խոսքարվեստի անդաստանում պատեհապաշտությունը հանդուժած լինելու ատիքներ պարունակում էր: Բայց գրականությունն ինքը, հանրային ինքնազիտակցում լինելով, չէր կարող «վեցերորդ զգայարանով», - այն, ինչ այլ առիթներով բնագր են համարում, - շըմբուտանալ դրա դեմ: Խոսքը հենց այդ ներքին լարման ուժն է, որ նախ եւ առաջ իրեն է մոխրացնում, ապա միայն՝ սկզբը դատնում նորին: ‘Դա ցավի, երբ աշխարհն ու իրեն հնարավոր է դառնում զգալ բաց նյարդերով՝ ասես կյանքի կոչված հանճարեղ երաժիշտը քեզից ուզում է մի հոգեցունց-սարսազրու համանվագ ու հենց քեզ է երգեհոն ընտրած՝ հնչեցնում, -ուժն է: Տառապանքը: Կյանքի հարցականը: Գոյության առեղծվածը, որ մարդ ի սկզբանե կրում է: Որպես գուտ տիեզերական-արարչական նյութ եւ՝ ոգի: Առարկայական-աղամական գոյության սարսափը եւ ոգու ճախրը բախսի եւ գեհենի, արարման եւ սորոմզուրի սահմաններում:

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Այս զգացումը շուրջ երեք տարի է՝ չի լրում ինձ: Հաճախ եմ ինքս ինձ փորձել, հեռու եմ պահել առաջին պահի կախարդանքը. վիճել եմ հեղինակի հետ (երբեմն՝ սուկ մի բառի շորջ), որպեսզի ստուգած լինեմ՝ չե՞մ սխալվում, չափազանցություն չէր, արդյո՞ք, զգացած: Դիմել եմ ուրիշների, - որ երբեմն անթաքույց կասկածանքով են վերաբերվել «մոլորվածիս» օգնությանը նույնապես: Տառապել եմ ու տագնապել, բայց հանկարծահաս ու անպարտադիր այդ վերաբերմունքը անփոփոխ է մնացել. մեր աշքի առաջ, մեր կողքին ծնվում է մարուր երգ: Անպարտուպահանջ, բայց մոլեզին, նվաճող պոեզիա:

Ցավի ու հույսի մի սքանչելի համանվագ է Արմեն Հովհաննիսյանի «Տարաժամի զանգեր» (Ստեփանակերտ, 1997թ.) ժողովածուն: Համանվագ՝ կառուցվածքով, որովհետեւ հեղինակը մի ընդիհանուր կտորի տակ է հավաքել 1990-1997թ.թ. գրած բամսատեղծություններն՝ առանց գրողական միջամտության, որ «թեմատիկ միասնություն» կամ «զաղափարական միտում» անունն ունի արհեստավարժ քննադասի լեզվով: Համանվագ՝ պատրանքի եւ իրականության, մահվան եւ կյանքի, չափի եւ բարու, իհասթափության եւ հույսի, վրեմի եւ ներման, ամեծքի եւ աղորքի, ինչպես կյանք կոչվածն ինքն է ու մարդ՝ սատանա ու հրեշտակ, առաջյալ եւ հանճարասպան: Հույս եւ Քրիստոս:

«Սատանան անկյալ հրեշտակն է», - Լեւ Տոլստոյն է, եթե չեմ սխալվում, այս հանճարեղ ընդիհանրացման հեղինակը: Ու եթե փոքր-ինչ խորանանք՝ պիտի ասենք, որ մարդն ապրում ու տառապում է մի հարաբերական սահմանի վրա, որից այս ու այն կողմ Սատանան ու Հրեշտակն են:

Նյութեղեն մարդը սատանայական է, ոգին՝ հրեշտակածին: Նյութը կախված է մարդու ոտքերից, քաշում է դեպի առօրյայի մեղսուտ խորխորատները՝ մոռացման, սնափառության, հացկատակ գոյաքարշության, իսկ ցավն աստվածացնում է.

...Թե ուրիշներին խիեն մի անգամ,  
Ինձ լրացնապարիկ խիիր եւ քունքի՝ և...  
Ոչ նրա համար, որ պարժին այնքան,  
Որքան որ դառն է ցավը ամորիչ,-  
ինքնախարազանումի այս ազնիվ կավից է հունցված «Տարաժամի

զանգերն» ամբողջությամբ։ Քաղաքացիական նախանձելի՝ իսկախում, քանզի բանաստեղծն իրեն պատասխանատու եւ պարտավորված է զգում երկրի, ժողովրդի ու մարդու ճակատագրի համար։ Եվ՝ այլող տառապանքը։

... Անգամ վերուսպ ինձ դրված այս հողն է,

Ոչ զուն է դառնում, ոչ զննամերծ է։

Ու նաեւ՝

Բայց անհնար է ապրելն առանց քեզ,

Այնպեղ, որդեռ քո բախսրը վրհակից՝

Աշխարհ եկա ես...

Հայրենիքի հետ այսպես հարաբերվել կարող է միայն անմնացորդ սերը, այն, որ ոռու հանճարն է սահմանել «Տարօրինակ սիրո» ցավի երգ և Ա. Հովհաննիսյանի հայրենաբաղձությունը, որի ընդգրկուն համապատերը «Արցախ» (Պոլ Էլյուարի նմանությամբ՝ ես զրում եմ անունը քո...) բանաստեղծությունն է։ Վստահաբար կարող եմ ասել, որ հայրենականչի այդ բացառիկ սիմֆոնիայով Արմեն Հովհաննիսյանը մերձենում է Տերյանի «Երկիր Նախրի» շարքին, Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ի «բարձր լարման» դաշտին, երբ ասում է։

Արցունըներիս վրա բուռ-բուռ.

Սորմոքներիս վրա գնճող.

Կրծքիս վրա՝ վշպերի բուն.-

Ես զրում եմ անունը քո...

Եվ ավարտում՝

Մարդկայնության պաղապանքով,

Կործանարար այս աշխարհի

Անմիհրար իսկա վրա

Ես զրում եմ անունը քո...

Սա արդեն ցավի միջուկն է, բուն տվայտանքը, որին հասու չէ ադամական մարդք կամ՝ որն իրենից հեռու է վանում մահկանացուն։ Արմեն Հովհաննիսյանն ակնհայտորեն տառապանքի էռոքյուն է, այլ ոչ՝ տարեզիք, որովհետեւ վերջինս (Պարույր Սեւակի ասած՝ Աստծո քարտուղարը) կրավորական է, նույնիսկ՝ եթե Աստծո համեստ, մինչդեռ երբ մեր հեղինակն ասում է՝

Եղ Վիյոնիմ մի օր հարցրի,  
-Ո՞րև է դրախտի ճամփան լուսի,  
Նա ցույց տվեց մղացրիվ՝  
Կախականի օղակը սեւ...,-

ուրեմն գիտի, որ Աստված էլ անզոր է փրկել բանաստեղծությունը եւ բանաստեղծին, որին խաչ ելնելոց զատ այս աշխարհում այլ ճակատագիր նախանշված չէ: Անպաշտպան է երգը, նրա առաքելությունն՝ անզոր, ինչպես մարդու առաջին ըմբոստությունը, որի մոխիրների վրա քանի՛ սերունդ գուր արցունք է թափում.

Ես կուլ եմ զալիս հեկեկանքներից  
Մի խուլ նրանցքի կիսամքան մեջ,-  
Ուր մեռե՞լ է անապական սերը, թէ՞  
որտեղ Կայենն սպանել է Աբելին...ինչ-որ քան բոլոր դեպքերում,  
կորսվել է երազ, սպասում, հույս: Իսկ աշխարհը կա.

Անտոն անցավ.  
Եղ աշնան դրբում մշուշների մեջ  
Մի ափսոսանք է միտու իմ սրտում,  
Մի անարջազանք սեր ու տվայլանք:

Ներկա բացակա այս աշխարհի պատրանքն է իրենից հայտնագործում բանաստեղծը, մի հրաշք հեքիաթ, առանց որի գոյությունն իրոք այնքան է իմաստավորվում, որ իր առարկայնությամբ անիմաստ է դառնում այլեւս, որպես կեցության վիճակների սուկական հերթագայություն՝ ծնունդ-մահ, մահ-ծնունդ: Իր բանաստեղծական (ախտի ասեի՛ աշխարհակառուցման) փիլիսոփայությամբ Արմեն Հովհաննիսյանը հասնում է արտուրի սահմանին. ցավի եւ հույսի միջեւ երկփեղկաֆա՝ նրա մտահայեցողությունը կարծես հավասարության նշան է դնում գոյի եւ անզոյի, երեսույթի ու երեսույթականության միջեւ՝ հաստատելու, թե ամեն ինչի սկիզբը վախճան է, իսկ վախճանը՝ սկիզբ.

...Միայն թէ՝ ყուր ինձ այնպիսի հնար  
Կամ թէ՝ զաղպնիքդ այդպես իսաշվելու,  
Այդպես հարություն առնելու համար:

Իմաստությունն ասում է՝ եթե չմեռնես հարություն չես առնի, որ պիտի հասկանալ՝ ամեն ինչի սկիզբը վերջն է: Արմեն Հովհաննիս-

յանը ցավի գիրը է ստեղծել: Ցավ՝ վասն մարդու եւ հայրենիքի: Դա ավարտն է մեր երեկվա անպատասխանառու չգոյության եւ սկիզբը մեծագույն մաքառումի: Ասեմ, թե ոչ՝ խորաթափանց ընթերցողն այս գրքում տեսնելու է բանաստեղծի խոստովանաց դառնությունը, որ մերն է նաև, բոլորին: Անցյալը մեզ հետ է, պատասխանատվությունը՝ նույնպես, ինչպես ներկան ու ապագան:

Հարկավ, բանաստեղծի խնդիր չէ, թե ինչո՞ւ պոեզիան «մուրացկան» է դարձել: Նա ստեղծում է իր իմացած աշխարհի պատրանքը, աշխարհ, ուր ինքը տիրակալ է: Բանաստեղծի հավերժական ոգորում, որով իմաստափորվում է փրկության խարկանքը: Արմեն Հովհաննիսյանն, ահա, «Տարածման գանգերով» առարկայական (Վահան Տերյանն ասում էր՝ ուտիլիտար) պոեզիայի սահմանն է ուսնելու մտնում է արվեստի պայմանականության աշխարհը: Գուցե թե իր կամքին իսկ հակառակ, բայց նա արդեն սավառնում է աշխարհի մտակառուցման ոլորտներում, ստեղծում է այն: Այս մեղավոր երկրի վրա քայլում է աղամական նյութը, իսկ ոգին ամեն ինչի ու իրեն էլ նայում է խոսքի անմատույց բարձրից: Եվ մեֆիստոֆելյան մի ժպիտ է թրռում Արմեն Հովհաննիսյանի շուրթերին.

...Ու մրգարափի կանին ինձ,

Տերեւարափի ամիսնա,

Կողոցին բուն իին

Ու էլ ոչինչ չի մնա,-

Ժաղը՝ հանդեպ նյութապաշտ աշխարհի եւ գրական հացկատակների, որ պոեզիան ապրուստ են կարծում եւ բանաստեղծին՝ մահկանացու: Ա. Հովհաննիսյանն արդեն այդ ամենին անտարբեր, անհիշար է, կարծես ասելիս լինի՝ ես եմ սկիզբն ու վախճանը:

Թվում է՝ ցավի եւ հույսի՝ իմաստնացած այս պոեզիան երբեք խոտորվելու չափ հավակնոտ չի լինելու, եւ հեղինակն իր բանաստեղծական աշխարհի պատրանքը մերային անելու տառապանքի մեջ ինքնայրումի նոր էջեր է պարգևելու՝ որպես գալիք երգի շոայլ սերմնացան:

«ԼՂ համրապելություն»

28 հոկտեմբեր, 1997թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՂ ՇՐՋԱՆ**

Երգը.....	6
Օրն իրիկնանում.....	7
Տուր ինձ բույրերդ արքշիռ.....	7
Այգիներ թափուր ու մերկ.....	8
Տուր արեսի մեն մի շող.....	8
Պատվեր.....	9
Հայրենի դաշտ.....	10
Քեզնից հետո.....	13
Ինչ ինանաս.....	13
Դու բաց նամակներ հղիր ինձ հեռվից.....	14
Վաղ առավոտյան.....	15
Հեռացումի երգ.....	16
Ինչ էլ ամեն.....	18
Կա՞ մի մոլորակ.....	19
Հայտնություն.....	20
Քո ձեռնագործ թաշկինակը.....	21
Խոհ.....	22
Սիրահարված ենք մենք այս աշխարհին.....	24
Բալլադ անմահության.....	26
Բալլադ սիրո մասին.....	28
Ինչպես ճամփորդին.....	29
Քեզ համար բնավ դժվար չի՝ եղել.....	29
Այն օրից.....	30
Հիշողության դաշտ.....	30
Նախաստեղծ սեր եր.....	31
Իմ հղացումը.....	32
Քեզ հետ.....	32
Ես դատարկվել եմ կապույտներից.....	33
Ապաշխարանքի խոսքեր անսուտ.....	33
Ունկնդիր վերջին տերեւարափին.....	34
Երբ աշնան վերջին.....	34

---

Ես խոցված էի.....	35
Անընդունելի վեճեր ու վճիռ.....	35
Կարեկցանք.....	36
Նվիրումն.....	37
Պաստեռնակ.....	39
Սահյանական.....	40
Քո ցավի առաջ.....	41
Քողարկում էր լույսի.....	42
Մանկության փողոցում.....	42
Ես այնտեղ եմ.....	43
Ես հիմա ուրիշ տեսակ եմ նայում.....	44
Հոգնած ու նկուն.....	45
Ոչ ամպրոպ, ոչ ամպ.....	45
Երկիր.....	46
Ես անձիր ցավի գալարման մեջ եմ.....	47
Վահան Տերյանին.....	48
Ժամանակները սահեցին արազ.....	49
Ահա երեկոն իջավ դալկաղեմ.....	50
Հետաղաբարձ հայացք.....	51
Մայրամուտի դրոյ ու սարսուն կեչու.....	52
Օ՛, ձեր աչքերը.....	52
Նվիրումի երգ.....	53
Վեր կենամ գնամ.....	54
Տար ինձ.....	55
Սիրոս փոլ եկավ.....	56
Դասեր առա.....	57
Եվ երազ է թվում.....	58
Չորում.....	59
Հասկի մահը.....	60
Միրհավի երամ.....	61
Արշալույսի շեմին.....	62
Նստեմ հոգով դառնացած.....	63
Հոլիկի տրտմություն.....	64
Իշնեմ աղբյուր.....	64
Թոն է կարում.....	65
Բայց ոնց լրեմ.....	65

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

---

Իրիկնամուտ.....	66
Որոնում.....	67
Ցավի նահանջ.....	68
Իմ ձեռքերը.....	69
Հարատեղության խորհրդանիշը.....	70
Միակ միսիքարանքը.....	71
Զյուն է մաղում մեղմաբար.....	71
Ես մնում եմ այստեղ.....	72
Ես խոտ լինեի.....	72
Թվաց՝ կանչեցին ու.....	73
Էլ դու այս զիժ հովիկը չես.....	73
Կանչեին հեռու-հեռվից.....	74
Պատրանք մայրական.....	75

## **ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ՆԻԿՈԼԱՅ ԳՈՒՄԻՆՅԱՎ**

Պոետին.....	78
Այնպես երկար է սիրոս մաքառել.....	79
Ես ելել էի կյանքի ճեղքածքից.....	80
Դրախտ.....	81
Երբ որ անդունդից կյանքի մթամած.....	83
Չրադաշտի երգը.....	84
Վեցերորդ զգայարան.....	85
Ես միջանցքներով քայլեցի երկար.....	86
Ապաստարանը իմ այս գեղեցիկ.....	87
Նա.....	88
Հարավ.....	89
Ես եւ դուք.....	90
Ես՝ լավագույնը պոետների մեջ.....	91
Փղիկ.....	92
Խոսքը.....	93
Երազում տեսա.....	94
Երեկո.....	95
Ընձուղտը.....	96
Դեռ մի անգամ չե.....	97
Նիրիել է հոգին.....	98

Ինձ մոտ ծաղիկներ չեն աճում քնավ.....	99
Կայենի սերունդները.....	100
Կասկածանք.....	101
Դա պատահել է ոչ թե մի անգամ.....	102
Երկու վարդ.....	103
Հեռախոս.....	104
Երազ.....	105
Կախարդուիի.....	106
Դու շիասցրիք կամ չցանկացար.....	107
Անջնջելի է բախտիս վրայից.....	108
Չքոսանք.....	109
Շամիրամ.....	110
Հինավորց նվաճողը.....	111
Պարսկական խճանկար.....	112
Հարբած դերվիշը.....	114
Քարտաշների աղոթքը.....	115
Յասամանի մի ամքողջական վնշից.....	116
Հավանաբար ես նախընթաց կյանքում.....	117
Credo.....	118
Մարգարեները.....	120
Խաչը.....	121
Հոգու այգիները.....	122
Մանլի.....	123
Կայսրին.....	124
Երբ ուժասպան եմ տառապաներից.....	125
Դու դատարկ խոսքեր արտաքեցիր.....	126
Արմավի պուրակ.....	127

**ՕՄԻՊ ՄԱՆԵԼԾԱՄ**

Ծովահարսեր.....	128
Սափոր.....	128
Ծառերից պոկվող պտղի.....	129
Նրբաթերթ ոսկով են վառվում.....	129
Կարդալ միմիայն մանկական զրքեր.....	130
Քնքանից քնքուշ.....	131
Կա մի խորիմաստ կախարդանք.....	132

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

---

Անարտահայտիչ թախիծը խոլ.....	133
Ինչ դանդաղ են հեռանում ձիերը.....	134
«Լեռների ներսում չի գործում կուոքը...».....	135
 <b>ԲՈՐԻՄ ՊԱՍՏԵՌՆԱԿ</b>	
Անգլերենի դասերը.....	136
Համետ.....	137
Մարտ.....	138
Նրանք պետք է որ ծաղկեն գարնանը.....	139
Այդ դերը.....	140
 <b>ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ</b>	
Նամակներ Հայաստանից.....	141
Արարատից վեր.....	142
Սարսափն ու սուտն են.....	143
Հիշողությանս հետ.....	144
 <b>ԼԵՍՅԱ ՈՒԿՐԱԻՆԿԱ</b>	
Հուսալով անզամ.....	146
 <b>ԷՇՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՄ</b>	
Սպոկալիպտիկ երկխոսություն.....	148
 <b>ՈՒՍԱ ԿԱԶԱԿՈՎԱ</b>	
Բարիկադների վրա սիրո.....	151
 <b>ԱՆԱՏՈԼԻ ԿՐԱՍՆՈՎ</b>	
Ի՞նչ առավոտ է.....	152
Նա մեռավ արդեն.....	153
Չեռքերը.....	154
 <b>ԱՆԴՐԵՅ ՎՈՁՆԵՍԵՆՍԿԻ</b>	
Մայր.....	155
Մենք հարուստ էինք քեզ հետ միասին.....	158
Յածրաձայն, կամաց.....	158
Բաժանորդագրություն.....	159

Ընթերցողութիւն օրինակելին.....	161
Բացիկ.....	162

**ԱՆՆԱ ԱԽՍԱՏՈՎԱ**

Դու մուրացկանի համար աղոթիք.....	163
Ես հազվադեպ եմ հիշում քո մասին.....	164
Ես սովորել եմ իմաստուն ապրել.....	165
Սիրելին այնքա՞ն խնդրամքներ ունի.....	166
Այնպես է թվում.....	167
Այն, ինչ անում եմ.....	168
Երբ որ մեկմեկու խոցում, ապանում.....	169
Ներս ընկած շողին աղոթում եմ ես.....	170

**ՄԱՐԻՆԱ ՑՎԵՏԱԵՎԱ**

Օ՛, լացի մուսս.....	171
Մահացու գրքերում հաստափոր.....	172
Իմ քննչությունը անսահման – նրանց.....	173
Չեմ խորում.....	174
Ալյային.....	175
Ոչ ոքի համար հաճելի չլինել.....	176
Դե արի՛, դե եկ, իմ ձայնը՝ համառ.....	178
Աստված անջատվեց ծամբ հոգսերից.....	179
Դրախտում.....	180
Առաջին արեգակ.....	181
Սիրելի ընկեր.....	182
Ախոյան դու իմ.....	183
Իմ ինչին է պետք ամպ ու տափաստան.....	184

**ԴՄԵՏՐԻ ԶԻՍՅԱԿ**

Ծովահարսի երեկոյան գետախորշ.....	185
Իմ լռակյաց ընկերը.....	186
Մոտիվ.....	187
Վերադարձ.....	187
Խաղողի վազը.....	188
Դու նորից կվերադառնաս սիրելի այգին.....	188
Երեկոն՝ խաղաղ ու անուշ.....	189

## **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

### **ԵԼԵՆԱ ԻՍԱՄԵՎԱ**

Դու ինձ հիբավի կարող ես պատմել.....	190
Ոնց պատասխան տամ ես այդ դարձվածքին.....	190
Մոռացած բոլոր իրողություններն.....	191
Կանգնել եմ, ահա.....	192
Պատանի էի ու անհարկավոր.....	192
Ես մոռացել եմ հնչյուններն իսպառ.....	193
Չեմ փորձում բնավ նայել իմ բախտին.....	194

### **ՎԱՌԼԱՍՄ ՇԱԼԱՍՄՈՎ**

Քարանձավային փոշով.....	195
Ես միայնակ եմ.....	196
Դու մի դատիք մեզ այդքան խստաբար.....	197
Կըրեն վերջին ձյունաբքերը.....	198
Լուսինը.....	198
Դու պահպանվում ես.....	199
Ես եղանակն եմ մոռացել մանկութ.....	200
Է՞ յ, գեղեցկուիի.....	201
Ոտնահետքերդ.....	202
Տան հոտն առնելով.....	203
Դու կարձակես շիկ եղջերուներին.....	204
Ես պահպանում եմ ոնց այրված կտավ.....	204

### **ՔԱՐԱՓ**

#### **ՆԱՄԱԿԱՆԵՐ ԳՐԱՂԻԳ**

Նամակ առաջին.....	206
Նամակ երկրորդ.....	210
Նամակ երրորդ.....	214
Նամակ չորրորդ.....	218
Նամակ հինգերորդ.....	223
Նամակ վեցերորդ.....	228
Նամակ յոթերորդ.....	232
Նամակ ութերորդ.....	236
Նամակ իններորդ.....	240
Նամակ տասներորդ.....	243
Նամակ տասնմեկերորդ.....	247

Նամակ տասներկուերորդ.....	250
Էն Սերվանտեսը.....	255
Զնուան օր.....	259
<b>Պատերազմը եւ մարդիկ</b>	
Ֆելիքսը.....	264
Դժվար ապրուստ.....	269
Քարափ.....	274
Ֆելիքսը, դժվար ապրուստի Կիման ու... ես.....	279
Բարսեղը.....	284
<b>Գյուղական էսքիզներ</b>	
Խզում.....	288
Հարսանիք.....	293

**ՀՈԴՎԱԾՆԵՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

<b>Հրանդ Ալեքսանյան</b>	
Եվ խոստովանյալ, եւ խոստովանահայր.....	300
<b>Նվարդ Ալեքսանյան</b>	
Արձակի մեջ էլ՝ ինքն իրեն հավատարիմ.....	304
<b>Վահրամ Արամենյան</b>	
«Տարածամի» զանգեր՝ ցավի եւ հույսի սահմաններից.....	307

## ԱՐՄԵՆ ԽԱՂԱՏՈՒԹԻՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱՑՈՒ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Սրբագրիչ՝	Արիս Գրիգորյան
Յամակարգչային	
շարվածքը՝	Նանար Իշխանյանի
Եջադրումը՝	Լուսինե Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 20 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պյուս» իրատարակչության տպարանում  
Ք. Հակոբյան, 25  
Ստեփանակերտ 2012